ԱՀՄԵԴ ԽՈԴԱԴԱԴԵ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԲԱԽՏԸ

Հ.Ս.Խ.Հ.
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1936

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

891.55

ԱՀՄԵԴ ԽՈԴԱԴԱԴԵ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԲԱԽՏԸ

ՎԵՊ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Վ. Տարդովի ռուսերեն
թարգմանությունից թարգմ.
Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

A 38693

ՀԽՍՀ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբ.՝ Ա. Վեսունի
Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչներ՝ Հ. Դոլուխանյան, Հ. Մանուկյան
Շապկի նկարը Ս. Ալեքսանյանի

Գլավլիտի լիազոր Ա. 1104, Պատվեր 883,
Հրատ. 3779, Տիրաժ 1000
Պետհրատի տպարան
Երևան, 2-րդ Գնունի, 4

Հանձնված է արտադրության հուլիսի 8-ին 1936 թ.
Ստորագրված է տպելու օգոստոսի 31-ին 1936 թ.

АХМЕД ХОДАДАДЕ
СУДЬБА КРЕСТЬЯНИНА
ГИЗ ССР Армении, Ереван, 1937 г.

ՌՈՒՍԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Յոթ տարի է անցել այն օրից, երբ Իրանում լույս տեսավ «Բուռզ—Ե ժիյանե— Կարգեր» գիրքը և չորս տարի՝ էլ այն օրից, երբ Մոսկվայում հրատարակվեց նրա ռուսերեն թարգմանությունը—«Գյուղացու բախտը»— իրանական գյուղական վեպը։

Գիրքն անսովոր արագությամբ սպառվեց, մանավանդ նրա ռուսերեն թարգմանությունը։ Եվ դա զարմանալի չէ։

«Գյուղացու բախտը» հետաքրքրական է ոչ միայն արևելագետների՝ այլև խորհրդային ընթերցողների լայն շրջանների համար։

Համաշխարհային գրականության պատմությանը հայտնի են մի շարք վեպեր, որոնք նկարագրում են գյուղացիության կյանքը, նրա ծանր վիճակը։

Այդպիսիներից են—Էրկման Շատրիանի «Մի գյուղացու պատմություն»-ը, Գրիգորովիչի «Անտոն Գորեմիկա»-ն, բայց Ահմեդ Թողզողեի «Գյուղացու բախտը» նրանցից խստորեն տարբերվում է ամենից առաջ նրանով, որ դա սոսկ մի վեպ չէ, որը հեղինակը շարադրել է գյուղացիների մասին՝ հեռուից դիտելով նրանց կյանքը, այլ դա գյուղական մի վեպ է, մի հիշատակարան—վեպ, որի հեղինակը որպես նախկին «ռայաթ» նվիրել է գյուղացի աշխատավոր դասակարգին։ Միաժամանակ այդ գիրքը մի փաստաթուղթ—վեպ է, որը ֆեոդալիզմի քայքայման շրջանի մանր գյուղացիության դասակարգային գիտակցության անմիջական արդյունք է հանդիսանում։ Ընթերցողի հետ խոսում է ինքը դասակարգը, որն իրեն հակադրում է գյուղացիությանը շահագործող դասակարգին։ Գյուղի կյանքն արտացոլված է իր տեսակի մեջ մի հատիկը հանդիսացող այս վեպի ընթերցանության մեջ խորասուզվելով՝ ընթերցողը կարծես նստում է Ուելսի «Ժամանակի մեքենան» ոչ թե նրա համար, որ թռչի դեպի հեռավոր ապագան, երբ վերանորոգված երկրի վրա ապրելու է վերանորոգված մարդկությունը, որն արդեն մոռացել է իր «նախապատմության» սարսափները։ Ոչ, «մեքենայի» ընթացքը դառնում է դեպի ետ, և այդ «մեքենան» ընթերցողին տանում է դեպի անցյալը, հակառակ ուղղությամբ, հասարակական հին ֆորմացիաների ձևավորումների շերտերի միջով դեպի ֆեոդալիզմի աշխարհը, ֆեոդալական գյուղը։

Ընթերցողը Թողզողեի հերոսների հետ միասին ապրում է ստրկացած գյուղացիության ողջ կյանքը, ճանաչում է ֆեոդալական հասարակա-

կան հարաբերությունների մասին «առանձնահատկությունը»։ Ինչ վոր նա տեսնում է, այդ բոլորը նրան թվում է վայրագ, և հետևաբար, անհնարին բան։ Ընթերցողը շրջապատող աշխարհը չի ճանաչում և կորցնում է ժամանակի կողմնորոշումը։ Նրան թվում է, թե Խողազադեն նկարագրում է շատ հին ու հեռավոր ժամանակներ, վոր նրա գրվածքը մի «պատմական» վեպ է։

— «Միջին դարերն են, դա XIII դարն է»,— ասում է ինքն իրեն ընթերցողը, բայց հենց իսկույն գրքի մեջ բերված թվականներից իմանում է, վոր նկարագրություններն ու փաստերը միջին դարերին չեն վերաբերում, այլ ուղղակի նկարագրում է յերեկվա որը։

Ճիշտ է, վեպի մեջ նկարագրվող դեպքերի սկիզբը վերաբերում է XIX դարի վերջերին, բայց նրանց զարգացումը տեղի յե ունենում արդեն իրանական հեղափոխության և համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում և վերջանում 1925—26 թվականներին։

Խորհրդային յերկրի յերիտասարդությունը, և առհասարակ նրանք, ովքեր ծնվել են համաշխարհային պատերազմի ժամանակ և մեծացել են Հոկտեմբերյան Հեղափոխության արևի տակ, այսինքն, նրանք, ովքեր քաղաքապահ վոստիկանի յերես չեն տեսել, Խողազադեյի պատմածները կթվան վայրենի և անհեթեթ բաներ, մղձավանջային քուն, իրականության հետ վոչ մի առնչություն չունեցող բան։ Բայց մեր ավագ սերունդը նույն վեպի մեջ կհանդիպի ծանոթ պատկերների։ Այդ սերունդը կհիշի կամ լսելով կիմանա XIX դարի ռուսական գյուղը, այն առանձնահատուկ աշխարհը, վորտեղ ֆեոդալիզմի վերացումը ձգձգվեց տասնյակ տարիներ ու մնաց գյուղացիների ճորտացման և աշխատանքահատուցման մի աշխարհ, վորի նկարագրությունն ու բնութագիրը տալիս է Լենինն իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» և «Հողային հարցը» գրվածքների մեջ։

Խողազադեյի նկարագրած գյուղում—Իրանում—ստրկագրումն ու աշխատանքավճարումն այժմ էլ գոյություն ունի։ Ֆեոդալիզմի վերացումն այստեղ առաջ է գնում ավելի դանդաղ և հիվանդագին կերպով՝ քան XIX դարի Ռուսաստանում։

Կարդալով Խողազադեյի գիրքը, դուք ակներևորեն կհասկանաք ու կճանաչեք իմպերիալիզմի մասին «խորհրդավոր գաղտնիքը»։

Կարդալով այդ գիրքը, դուք ակնհայտնի կերպով տեսնում եք կապիտալիստական Յեվրոպայի տիրակալության հետևանքներն Արևելքում, տեսնում եք մարդկային հասարակությունների քայքայումը, վորոնք ավերվել են իմպերիալիզմի կողմից և նետվել աղքատության ու չքավորության անդունդի մեջ, տեսնում եք ամբողջ յերկրներ, վորոնք կանգ են առել իրենց զարգացման ընթացքի մեջ և յետ են մնացել մի քանի դարերով։ Տեսնում եք միլիոնավոր անտեսություններ կողոպտված, միլիոնավոր հոծ բազմություններ չքավորության մատնված։ Այդ հոծ բազմությունները վաշխառության ճիրաններում հոգևարք են ապրում։ Նրանց կախյալ վիճակը մղում է նրանց դեպի հազար ու մի ստորացումներ և այդ ստորացուցիչ վիճակն էլ իր հերթին պահում է աշխատավոր այդ զանգվածները խավարի ու գռեհկության «գյուղական կյանքի ապշության» մեջ։

«Գյուղացու բախտը» գրքի ռուսերեն յերկրորդ հրատարակությունը լույս է տեսել Տաշկենտում։

Ծաղադադեյի նկարագրած կյանքը հիշեցնում է իրանց շատ մոտիկ անցյալի ցարական Միջին Ասիայի կյանքը։ Այն գյուղը, վորտեղ ապրել ու տառապել են Բախտիարն ու իր քույր Շիրինը, վորպես ջրի յերկու նման կաթիլներ, նման են ցարական ժամանակվա «Թուրքեստանի» «դշլաղներին», «աուլներին», վորոնք վոչ այլ ինչ եյին, բայց յեթե ռուսական կապիտալիզմի «հումույթային մի հավելված», վորտեղ գաղութային սանձարձակ կողոպուտն ու թալանը հյուսված եր եմիրների ու խաների ֆեոդալական շահագործման հետ, մի շահագործություն, վորն որհնվում եր չալմավոր «իշխանների» և պաշտպանվում ցարական վոստիկանության կողմից։ «Թուրքեստանի» գյուղեր, վորտեղ մեռնում և կոտորվում եր վաշխառուներից կողոպտված գյուղացիությունը։ Դանդաղ մահով մեռնում եյին բազմազան ժողովուրդները, վորոնք փակված եյին բոլորի համար էլ միատեսակ բանտում, և վորոնց հորջորջում եյին «տեղացիներ»։

«Գյուղացու բախտ»-ի պատկերները հատկապես մոտ ու հասկանալի յեն նախկին «Լեռնային Բուխարայի» աշխատավորությանը, վորտեղ անանցանելի լեռնաշղթաներում, ձորերում, լեռնահովիտներում, Հարմա.ի սավերի տակ թաղնված եր մնում աշխարհից ամենամռայլ միջնադարականությունը։

Ծաղադադեյի հերոսների բախտն ու վիճակը հար և նման է յերեկ այդ Լեռնային Բուխարայի—եմիրների, խաների ու բայերի դշլաղների գյուղացության բախտին ու վիճակին։ Այդ վեպի բովանդակությունն այնքան նման է այդ դշլաղների գյուղացոց մոտիկ անցյալի կյանքին։ Մի տաջիկ գյուղացի կարդալով այդ վեպը՝ աշխարհագրական անունները միայն փոփոխելով՝ իրեն կթվի, թե նա տաջիկ գյուղացիների մասին գրած մի վեպ է կարդում։

Դժբախտ կյանքի պատկերները, վոր աշտապես ու անջնջելի կերպով տպավորվել են Բախտիարի հիշողության մեջ,—որինակ դաշտային ծանր աշխատանքը, բերքի «բաշխումը», մարաշիրին կերակրելը, կովի սատկելը, նյութական քայքայումը, կալվածատիրոջ ճնշումները, վաշխառուների և կալվածատիրոջ ծառաների կողոպուտը, մոլլաների խարեբայությունները, մտրակի հարվածները—այս բոլորը Միջին Ասիայի նախահեղափոխական կենցաղի պատկերներ են։

Միջին Ասիայի աշխատավորությանն ավելի քան հասկանալի յեն Ծաղադադեյի վերջին տողերը—վոտանավորով գրած տողերը—իրանական գյուղացիության մասին, նրա կոչը—վոտքի յելնել և հատուցում պահանջել ձրիակերներից ու շահագործողներից, և այնուհետև նրա հիասթափության աղաղակը, վորն ասում է՝

—«Ո՜հ, բավ է, յերազող ու խելացնոր Ահմեդ։

Միևնույն է, Իրանի գյուղացուն փրկություն չկա»։

Հոկտեմբերը Միջին Ասիայի ժողովուրդների բախտը միանգամայն փոխեց։

Լենին—Ստալինի ազգային քաղաքականությունը բաց արեց այդ ժողովուրդների առաջ զարգացման հսկայական հեռանկարներ՝ տանելով նրանց շատ

հեռու այն համբարաժան կետից, որտեղ միասին, մեկտեղ, մոտիկ անցյալում կանգնած էին իրանական Բախտիարի հետ։ Մեր շուրջը յեռում է նոր ու չըտեսնված վերակառուցող աշխատանք, յերբ արթնացել են մայր հողի և աշխատավոր զանգվածների բովանդակ ուժերը և կյանքի յեն կոչվել բոլոր ժողովրդները, յերբ անցյալում անմատչելի լեռնային հովիտներում ու ձորերում այժմ փռվում են էլեկտրոկայանների կրակները, գործարանների ու զավոդների լուսամուտները, իսկ լեռների և ժայռերի լանջերով, որ առաջ միակ ճանապարհները կածաններն էին, այժմ ավտոմեքենայի հարթ ու ողորկ խըճուղիներն են գցված, յերբ վոռոգման նոր սիստեմի հսկայական ջրանցքներն առատ ջուր են մատակարարում դաշտերին, որտեղ մշակվում է յեգիպտական բամբակը, յերբ վերածնվում և արագ թափով ծաղկում է առաջ անուշադրության մատնված մետաքսագործությունը, յերբ կառուցվում են դպրոցներ, հիվանդանոցներ և հարյուրավոր նոր հիմնարկներ, յերբ խավարի մեջ թմրած ու բթացած առաջվա գյուղերում այժմ ծաղկում ու զարգանում են կոլտնտեսությունների ստեղծագործությունները—ահա այդ օրերում «Գյուղացու բախտ»-ի ընթերցողը հասկանալու կգա և կտեսնի մեր և Իրանի գյուղացության վիճակի հսկա տարբերությունը և այս կարող է գնահատել Լենինյան—Ստալինյան ուսմունքի բարձր նշանակությունը Արևելքի գաղութային և կիսագաղութային յերկրների հեղափոխությունների ուղիների և կոմունիստական կուսակցության հողային ու ազգային քաղաքականության վերաբերմամբ։ Դրա հետ միաժամանակ այդ ընթերցողը ել ավելի ուժեղ չափով հարգանք ու համակրանք կզգա սահմանի այն կողմն ապրող Բախտիարների նկատմամբ։

Կգա ժամանակ, յերբ նրանք ել հետադարձ հայացքով կնայեն իրենց անցյալի վրա տարակուսանքով ու սարսափով՝ Ֆեոդալիզմի վերացման տառապալից տարիները կերևան նրանց ցնորքների կամ առասպելների մի շարան՝ նման այն մեռելների քարավանին, վորը գնում եր Միջագետքի տենդոտ ճահիճներով, վորի իրական ու վառ նկարագրությունը տալիս է իր գրքի մեջ Ահմեդ Խոդադա'դեն։

Ա. ՇՆՀՐԻ

14/X—34 թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Վիպասանները, բանաստեղծներն ու պատմագիրներն սովորաբար իրենց գրվածներն սկսում են ձոներով և գրքի առաջին էջը զարդարում են թագավորների, նախարարների, իշխանների և կամ նրանց նմանների անուններով։ Սակավ է պատահում, որ նրանք շեղվեն այդ ընդհանուր կանոնից։

Չքավորներին և առհասարակ աշխատավորներին ոչ ոք չի հիշում։

Իսկ ես, անարժանս, հասարակ ծագման տեր, Դինավերցի քուրդ—ձեր խոնարհ ծառա Ահմեդս, չհետևելով ուրիշ հեղինակներին, որոշեցի գրքիս ճակատը զարդարել գյուղացի դասակարգի և ամբողջ աշխատավորության անունով։ Ես նվիրում եմ այս գիրքը չքավոր զանգվածներին, որոնք ուժասպառ են լինում Իրանի դաշտերում ծանր աշխատանքի և կիզիչ արևի ճառագայթների տակ։

Ես նվիրում եմ այս գիրքը նաև նրանց, ովքեր կերակրում են ողջ աշխարհը, իսկ իրենք քաղցած են, հագցնում են բոլորին, իսկ իրենք մերկ են ու բոկոտն։

Այլև նրանց, որոնց աշխատանքով կառուցվում են պալատներն ու ապարանքները, բայց իրենք գեգերում են նեղ ու խոնավ, գերեզմանանման հյուղակներում և չգիտեն կյանքում ոչ մի ուրախություն, ոչինչ չգիտեն բացի իրենց ծանր աշխատանքից ու մի զույգ յեզից։

Գետինը նրանց մահիճն է, յերկինքը՝ վերմակ և սակայն նրանց մոտ են գտնում «ազնվատոհմ» ձրիակերներն իրանց գանձարանը, իսկ դերվիշներն ու այդ տեսակի թափառաշրջիկներն իրենց սեղանատունն և խոհանոցը։

Ծանր ու անտանելի յե այդ աշխատավորների վիճակը։ Դառն ե նրանց ճակատագիրն ամենուրեք, բայց ամենից շատ դառն ե նա Իրանում։

Աշխարհում չկան ավելի խեղճ ու կրակ և վողորմելի մարդիկ՝ քան իրանական գյուղացիներն են։ Նրանք ամենուրեք յենթակա յեն արհամարհանքի։ Նրանց վրա նայում են ինչպես անասունների վրա։

Ամեն վոք իմանալով, վոր նա գյուղացի յե, և աստված վոչ անի, յեթե նա քուրդ գյուղացի յե, պատրաստ են նրան անարգել ու ստորացնել։

Ճակատագրի հաճությամբ յես ինքս ել նույնպիսի անբախտ ու խեղճ մի չքավոր եմ. ծագել եմ հին և անվանի քուրդ ժողովրդից։ Կրթություն ստացել եմ մի խուլ, յետ ընկած մի տեղում, անկիրթ ու գռեհիկ մոլլաների մոտ, և թող ինձ ներեն, յեթե իմ խոսքը և լեզուն թվա անհարթ, դարձվածքներս անկապ, անճոռնի և լի սխալներով։

Յես ընթերցողիս պիտի ասեմ, վոր այս գիրքը միայն ձևով ե վեպ, սակայն ըստ եյության նա փաստերի արձանագրություն ե, մեկ ճշմարտություն։

Հարգելի ընթերցողիս տարորինակ չի՞ թվա արդյոք, վոր այն ժամանակ, յերբ հարուստների, թագավորների, նախարարների, գեներալների և կապիտալիստների մասին հազարավոր հատորներով գրքեր կան գրված իրանց սուտ ու զորդ բաներով, մինչ դեռ մինչև հիմա չկա մի գիրք, վոր պատկերացներ ու վերարտադրեր գյուղացիության կյանքն ու կենցաղը։ Իմ նպատակն ե գրել այդպիսի մի գիրք։ Յես պատմություն չեմ գրել։ Յեվ յեթե իմ գրքում համառոտակի շարադրվում են մի շարք պատմական դեպքեր ու անցուդարձեր, այդ ել այն պատճառով, վոր այդ դեպքերը շոշափել են գյուղացիների կյանքը, վորի նկարագրությունն ել յես տալիս եմ, և հետևաբար հնարավոր չեր այդ պատմական դեպքերի վրայով լռությամբ անցնել և չհիշատակել։

Թող ուրեմն, այս՝ 14 գլխից ու մի «յեզրակացությունից» բաղկացած գիրքը մարդկանց մի վորևե ոգուտ տա։ Յես յերջանիկ կլինեմ, յեթե գիրքս ապագա սերնդին սովորեցնի հասկանալ ու ըմբռնել իր դժբախտ յեղբայրներին և ապա ուրեմն չնայել գյուղացիների վրա արհամարհանքով, ովքեր ել լինեն այդ գյուղացիները—պարսիկներ, թուրքեր կամ քրդեր։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔՐԴՍՏԱՆՈՒՄ

Այսպես է պատմում իր մասին Բախտիարը. հայրս՝ Ալլադադը, Ջհան մայրս, Շիրին քույրս և ես քրդական ծագում ունենք։ Ապրում էինք Իրանի արևմտյան գավառներից մեկի —Քրդստանի— գյուղերից մեկում։

Ընդհանուր անգրագիտության պատճառով իմ ծննդյան տարեթիվը մնացել է անհայտ ու անորոշ։ Հետագայում մայրս ինձ ասում էր, որ ես իբր թե ծնվել եմ այն թվականին, երբ մեզ մոտ շատ ձյուն է եկել. այդ տարվա Կուրբան ամսին։

Հայրս ավելի ճիշտ էր որոշում ծննդյանս տարեթիվը։ Նրա տեղեկությամբ ես՝ ես ծնվել եմ Սենենդեջի նահանգապետի հրաժարման տարին։

Դժբախտաբար մեր դասակարգի մարդկանց կյանքի բոլոր դեպքերը — ծննդյան և մահվան թվականները, նշանակվում կամ որոշվում են նման բնական պատահարներով ու խոշոր անցուդարձերով։

Ծնողներիս խոսքերից այժմ ես եզրակացնում եմ, որ ես ծնված պիտի լինեմ Հիջրայի 1300 թվականին, այսինքն՝ 1882 թվին։

Ես պարզ ու մեկին պատկերացնում եմ իմ անցկացրած ամբողջ կյանքը, մի կյանք, որ լիքն է եղել չարքաշությամբ ու զրկանքներով։ Չեմ կարող վոչինչ մոռանալ այդ

կյանքից, վորովհետև վշտերը յերբեք չեն մոռացվում, ուրախություններն են, վոր արագորեն ջնջվում են հիշողությունից, իսկ ուրախություն յես շատ քիչ եմ տեսել, և գրեթե՝ չեմ տեսել։

Մեր գյուղական տունը բաղկացած եր մի բնակելի տնակից՝ չորս զար[1]) յերկարությամբ, յերկու զար լայնությամբ և յերկու զար ել բարձրությամբ։

Տան կողքին գտնվում եր գոմը, վորտեղ ապրում եյին մեր մի զույգ յեզը, մի եշ և ութ այծեր։ Այծերը յեզներից բաժանված եյին տախտակե բարձր միջնորմով։ Տան մի կողմում գտնվում եր աթարանոցը, իսկ մյուս կողմում՝ մարագը, վորտեղ տեղավորում եյինք մեր անասունների դարմանը։

Տան և հարակից շենքերի առաջ՝ բակն եր, վորը շրջապատված եր բազմանկյունի պարսպով։ Այդպես են կառուցում գյուղացիք իրանց բնակարաններն ու բակերը, վորովհետև մշտապես յերկյուղ են կրում ավազակներից։

Տան մեջտեղում շինված եր թոնիրը, վորտեղ մայրս մեզ համար ամեն որ հաց եր թխում։ Ձմեռը թոնրան վրա քուրսի եյինք դնում։ Քուրսին ծածկում եյինք տանը գործած բրդե փալասներով ու կարպետներով, շուրջն ել փռում եյինք հաստ քեչաներ։ Ձմեռները մենք բոլորս ել քնում եյինք քուրսու տակ։

Համեմատած մյուս գյուղացիների հետ՝ մենք վատ չեյինք ապրում, կարելի յե ասել—միջակ ապրուստ ունեյինք, միայն մեր դժվարությունն այն եր, վոր յերբեմն հայրս չեր կարողանում դաշտի աշխատանքները յոլա տանել մի զույգ յեզով։ Հաճախ նա մորս ասում եր.

— Յեթե Բախտիարը շուտ մեծանա և ինձ սկսի ոգնել, մեր բանը շատ կթեթևանա, յես ստիպված չեմ լինի տարվա մեջ մի քանի ամսով կողմնակի աշխատող վարձել։

Մեր գյուղը ուներ «քեթխուդա», այսինքն՝ գյուղապետ, անունը Ալմաս։ Գյուղապետի կոչում նրան տվել եր մեր կալվածատեր աղան։ Քեթխուդի պարտականությունն եր ընդունել կալվածատիրոջը, նրա գործակատարին, պատրաստել տալ նրանց հյուրասիրության համար այնպիսի ուտելիքներ կամ

---

1) Զարը=105 սմ․

կերակուրները, որ խակի քեթխուդան իր կյանքում ոչ տեսել էր, ոչ կերել էր և ոչ էլ գիտեր նույնիսկ հյուրասիրելիք ուտելիքների անունները։

Կալվածատիրոջ գյուղ գալու առթիվ ստիպողաբար հավաքում էին բոլոր գյուղացիներին։ Նրանք բոլորն էլ պիտի ոտքի վրա լինեյին, քանի դեռ աղան գյուղումն էր գտնվում։ Ինձ էլ էին կանչում, չնայած յես դեռ հազիվ 15—16 տարեկան լինեյի։ Հարկավոր էր նայել աղայի[1]) ձիյերին և ընդհանրապես սպասավորություն անել։ Հյուրասիրության համար քեթխուդան գյուղացիներից «ոժանդակություն» էր պահանջում, և գյուղացիք ստիպված տալիս էին մեկական հավ կամ մի քանի հատ ձու։ Իսկ գիշերները — ամառը թե ձմեռվա սառնամանիքին—գյուղացիք պարտավոր էին աղայի քնարանի շուրջը հերթապահություն անել, որպեսզի նա կարողանա հանգիստ ու անվրդով քնել։ Յեվ յեթե պատահմամբ կորչեր նրա ձիաներից մեկի սանձը կամ մի ուրիշ սարք, առավոտյան, հայհոյանքների տարափի տակ գյուղացիներից պահանջում էին յուրաքանչյուր կորած առարկայի արժեքի տասնապատիկի չափ տուգանք վճարել. օրինակ—մեկ ղրանի[2]) փոխարեն վճարել մեկ թումանի[3])։ Յերբ գյուղով անցնում էր մի որևէ զինվորական պաշտոնյա կամ նահանգապետի մարդկանցից մեկնումեկը, կրկնվում էր միևնույն պատմությունը։

Բացի դրանից, քեթխուդի պարտականությունն էր գարնան և աշնան սկզբներին հողաբաշխում կատարել գյուղացիների մեջ ըստ... ո՛չ, ոչ ըստ արդարության, այլ ըստ հայեցողության ու ցանկության։ Ավելի լավ և հարմար հողերը նա վերցնում էր իրեն և իր մարդկանց համար, իսկ մնացած հասարակ և մեծ մասամբ անբերրի հողերը բաժանում էր գյուղացիներին։ Հայտնի յե ուրեմն, թե ինչպիսի դրություն պիտի ունե-

---

1) Աղա—պարոն։ Այս արտահայտությունը պարսիկները մշտապես գործ են ածում միմյանց դիմելով, ինչպես ֆրանսիացիք mousieur, բայց հատկապես գործ է ածվում барин իմաստով կամ հողատեր անձի իմաստով։

2) Ղրանը—մոտ 20 կոպեկ։

3) Թուման=10 ղրան։

նային գյուղացիք։ Նույն այդ դրությունն էր տիրում նաև ամբողջ Իրանում։ Իրենց նախնիքների նման նրանք հողը վարում են հասարակ, նահապետական արորով, ամբողջ օրն աշխատելով ամառվա կիզիչ արևի տակ, ցանում են. մի քանի բաթման[1]) հացահատիկ, նայելով թե հողաբաժինը վորտեղ է գտնվում և վորքան հողաբաժին ունի գյուղացին։

Ցանելուց հետո գյուղացին մի քանի անգամ ջրում է արտը, այնուհետև ցորենը հասնելիս՝ հնձում է—ամառվա ամենաշոգ ժամանակը—հնձածը կրում է կալը, կալսում է, քամահարում է, վորից հետո գալիս է աղա կալվածատերը կամ նրա գործակատարը և վերցնում է կալվածատիրոջը հասանելիք բաժինը՝ մեկ հինգերորդը, մեկ քառորդը, մեկ յերրորդը կամ կեսը։ Պետք է ասել, վոր Իրանում այդ առթիվ վոչ մի հաստատ օրենք չկա. յուրաքանչյուր գավառում, և մինչև իսկ ամեն մի գյուղում, գոյություն ունի առանձին սովորություն դարձած օրենք. մի տեղ կալվածատերը հնգից մեկն է վերցնում, մի այլ տեղ բերքն ուղղակի կես է անում։

Բացի դրանից, գյուղացիները տալիս են նույնպես «զաբետանե[2])», նայելով տեղին, քսան բաթմանից մինչև մեկ խալվար. այնուհետև տասը բաթման «պաքարի[3])», տասը բաթման «միրաբի[4])», մի քանի բաթման՝ բերքը ճնճղուկներից պահպանելու և «այլ կարիքների» համար, ըստ վորում այլ կարիքներ ասելով պիտի հասկանալ աղբահանություն, կալվածատիրոջ ընդունելություն[5]) և այլն. բայց թե վորքան պիտի տա գյուղա-

1) Բաթմանը մոտ 7,5 ֆունտ է։ 100 բաթմանը մեկ խալվար է։ Մի քանի վայրերում և մի քանի ապրանքների համար կիրառվում է այսպես կոչված «շահի բաթմանը», վորը հավասար է 15 ֆնտի։

2) Զաբետանե—բերքի մի մասը՝ հօգուտ «զաբիթի» այսինքն կալվածատիրոջ հարկահավաքի

3) «Պաքարի» տուրքը գանձվում է հօգուտ «պաքարի», վորը համարվում է տեխնիկական բաշխիչ և ոչխատանքի ղեկավար խոշոր գյուղերում։

4) «Միրաբին» մի տուրք է, վորը գանձվում է հօգուտ միրաբի, վորն արհեստական վոռոգման ցանցի վարիչն է։ Այդ տուրքը վճարվում է կալվածատիրոջը կամ պետությանը՝ օգտագործած ջրի համար։

5). Դա կոչվում է «թե—բյասաթ»—կալվածատիրոջ ոթեանելու իրավունքը գյուղացիների մոտ։ Իսկ այդ ոթեանելու կամ գյուղում իջևանելու հետ կապված ծախսերը կատարվում էյին գյուղացիների հաշվին։

ցին այլ կարիքների համար, այդ էլ արդեն կախված է այդ կալվածատիրոջ արտադրությունից և նրա բարեհաջողությունից։

Այս բոլորից զատ, մի փոքր հողաշերտի վրա ցանք անող գյուղացին կալվածատիրոջը պիտի տա հինգ թուման կանխիկ փող, մեկ թուման յուղ, յերկու բեռ վառելափայտ, յերկու բեռ խոտ, չորս բեռ դարման, յերկու բեռ աթար, յերկու բեռ փուշ, յերկու բաթման ճրագլույսի յուղ, չորս հավ, քսան ձու, մի այծ կամ վոչխար և յերկու նոխազ։

Դա համարվում է կալվածատիրոջ սրբազան իրավունքը։ Բացի դրանից, հարկավոր է հնարավորության չափ աղայի մերձավորների խաթրները առնել, նրանց սիրտը քաղցրացնել, այսինքն՝ մեկին տալ յուղ, մյուսին՝ պանիր, յերրորդին հավ, այլապես, աչքդ բացին տեսնի, մեկ էլ տեսար աղային մի բան խաբար տվին, այն ժամանակ մնաս բարև և՛ պատիվ, և՛ կարողություն։

Հայրս ընդունակ և աշխատասեր մարդ եր։ Ամենից շատ ինքը կլծեր յեզները և կերթար հանդը, իսկ հանդից կվերադառնար ամենավերջինը։ Ցորենը պիտի ջրվեր, թե աղբը դուրս տարվեր, լոբի պիտի ցանվեր կամ բամբակ, այդ բոլոր աշխատանքների մեջ նա հմուտ եր, ջանասեր և հոգատար։ Հաճախ նա մինչև իսկ գիշերները տուն չեր գալիս. զբաղված եր լինում կամ արտը ջրելով կամ հողի կրկնավարով։

Մայրս նույնպես օջախ-պուճախի կին եր, վերին աստիճանի աշխատասեր ու տնարար։

Հիշում եմ թե ինչպես մի անգամ նա ինձ ուղարկեց գյուղի տներից ճարել զանազան հին շորեր, անպետք, փրթված շորի ու պարանի կտորներ և այլ նման հնոտիներ. խոստանալով դրա փոխարեն ինձ համար սև չամիչ առնել։ Չամիչ ուտելու հույսով, պատահում եր, վոր շրջում եյի վոչ միայն մեր գյուղի տները, այլև գնում եյի հարևան գյուղը և չեյի վերադառնում, մինչև վոր չեյի ճարում ու հավաքում մորս ուզած հնոտիները։

Այդ շորերի կտորներն ու փալաս-փուլասները մայրս իսկույն մաքրում եր, լավ լվանում եր պետքական կտորները

պահում էր կարկատանի համար, իսկ մնացածները լցնում էր մթելների մեջ և նրանցից բարձեր էր շինում։ Բեչայի կտորտանքներն ու պարանի կտորտանքները մայրս իր մատներով գզգզում էր և բրիկի օգնությամբ, վորին մենք «նոկ» ենք ասում, փալասների համար մանվածք էր պատրաստում։ Հայրս բամբակ էլ էր ցանում, և ինչ վոր մնում էր տանը բամբակի բերքից, մայրս ձեռքի «չարխով» մաքրում էր և թել էր մանում։ Ձմեռը, յերբ հայրս ազատ էր լինում դրսի աշխատանքից, բամբակի թելից կտորեղեն էր գործում մեր հագուստների համար։

Գարուն, ամառ, մինչև աշուն, մենք սնվում եյինք ցորենի, գարու կամ յեգիպտացորենի հացով և մեր այծերի կաթով։ Մածուն կամ կարագ շատ սակավ եյինք ուտում։ Մեզ շատ յերջանիկ եյինք զգում, յերբ մայրս քսան օրը մեկ անգամ մի քիչ մածուն կամ կարագ էր տալիս մեզ ուտելու։ Ամիսը մեկ անգամ, կամ յերկու ամիսը մեկ անգամ, հայրս քառորդ բաթման միս էր առնում, յեթե բախտը բերեր, գյուղի մսագործը պատահմամբ մի պառավ յեզ կամ վոչխար մորթած լիներ։ Այդ օրը յերեկոյան մենք ուտում եյին «աբհուշտ», այսինքն սիսեռով մի տեսակ ապուր, և դրանով մեզ համարում եյինք մարդկանց մեջ ամենայերջանիկը։ Ինչպես մեզ յերջանիկ չհամարեյինք, յերբ կային ընտանիքներ, վորոնք վոչ մի կթան չունեյին կամ ամենաշատը ունեյին մեկ հատ կով և անպայման մեզնից շատ ավելի վատ եյին ապրում։ Ընտանիքներ կային, վորոնք ապահոված չեյին մեր ամենօրյա, սովորական սնունդով։ Նույնիսկ կաթը նրանց համար հազվագյուտ բան էր, էլ ուր մնաց միսը, վորը մեզ այնուամենայնիվ սակավ անգամ գոնե վիճակվում էր ուտել։ Ապա էլ ինչպես չասեմ, վոր մենք ապրում եյինք շատ փառավոր ու փարթամ կերպով։

Ձմեռը մենք ուտում եյինք զանազան «աշիներ», այսինքն թանձր ապուրներ կամ ինչպես ասում են, «թերխինե», վորը պատրաստվում է չորացրած թանից և բանջարից։ Բացի դրանից, ուտում եյինք շաղկամի ապուր, վոսպախալու, ձավարով շիլա և այլն։ Տոն օրերին—Նովրուզ-բայրամին և

Ռամազանին[1]) բրինձ եյինք ճարում և փլավ պատրաստում։ Յերբեմն մենք մեր յեփած փլավից ուղարկում եյինք նույնպես մեր կարիքավոր ու կարոտյալ հարևաններին։

Յերբ արդեն յես յոթ տարեկան եյի, հայրս մի օր ասաց ինձ.

— Վերցրու եշը և քուռակը արտից կրիր կալը։

— Հայրիկ,- ասացի յես,—ախր յես պիտի այծերն արածացնեմ, դու գիտես, վոր յեթե այծերից մեկը մտնի մեկն ու մեկի արտը, հանդապահը կամ այծը կմորթի կամ մեզնից յերկու ղրան տուգանք կառնի։

— Վոչինչ,—ասաց հայրս,—այծերը յես կհանձնեմ չոբանին արածացնելու։

Այդպես էլ արեցի։ Փոքրիկ յոթ տարեկան մի տղա, վոտաբոբիկ, գլխաբաց, մի հատիկ շապիկով, սկսեցի եշով քուռակ կրել կալը։ Նկարագրել չի կարելի, թե վո՛րքան ծանր ու դժվար եր դա ինձ համար։ Առածն ասում ե—«լսելը քիչ ե, պետք ե տեսնել»։ Իմիջի այլոց, տեսնելն քիչ ե, պետք ե անձամբ աշխատել, ապա ըմբռնել չարքաշ աշխատանքի դառնությունը։

Թեև վոտներս բոբիկ եյին, գլուխս բաց, մյուս կողմից էլ հուլիսի շոգն անտանելի յեր ինձ համար, այնուամենայնիվ, յերբ յես տեսնում եյի, թե ինչպես ե աշխատում հայրս և ինչպես ե նա կուզ ու պարզ անում իր մանգաղով և քրտինքն ինչպես ե ծլլում նրա դեմքով, ու ամբողջ մարմնով, և թե ինչպես են սուր փշերը ծակոտում նրա վոտի մատները ու նա ցավից ինչպես տնքում ե, և գրպանից հանելով ասեղը, ջանի մեջ մտած փշերը քչփորելով դուրս ե հանում, յես մոռանում եյի իմ տանջանքները։

Այդպիսի րոպեներին գլուխս պտույտ եր գալիս, աչքերս սևանում եյին, և յես վայր ընկնելով յերեսիս վրա՝ յերկար ու դառն կերպով լաց եյի լինում։

---

1) Նովրուզը պարսիկների նոր տարին ե, վորն սկսվում ե մարտի 21-22-ին, այսինքն գարնան գիշերահավասարի րոպեյին։ Ռամազանը մահմեդականների պասից ամիսն ե, վորի ընթացքում պատվիրվում ե վոչինչ չուտել, չխմել, չծխել ամբողջ ցերեկը։ Սնունդ ընդունել թույլատրվում ե միայն արևը մտնելուց հետո մինչև նրա ծագելը։

Տասն որ յես ոգնեցի հորս, սակայն, աչքերս սաստիկ ցավեցին, և մեր դաշտի աշխատանքները դանդաղեցին։ Ինձ փոխարինեց մայրս։ Տան գործերը թողեց յերեսի վրա, ինձ ու քրոջս թողեց տանն ու ինքը շարունակեց քուլաշը կրել կալը, մինչև վոր վերջացրեց։

Խեղճ մայրս յերեկոները վերադառնում եր տուն և նախքան տան գործի կպչելը, ընկնում եր դես ու դեն, հարևաններից աչքի դեղ եր ճարում ինձ համար, կամ խորհուրդ հարցնում սրանից-նրանից։ Ամեն մեկն իր գիտցած դեղն եր խորհուրդ տալիս ու հանձնարարում—վորը շաքար, վորը պղինձի արջասպ, վորը «կարմիր թթվուտ», իսկ մի քանիսն էլ խորհուրդ եյին տալիս ծեծած շաքարն ու արջասպն իրար հետ խառնել և ապա գործածել։ Այդ նյութերից մենք տանը չունեինք, բայց մայրս ճարում եր ու առնում կամ քեթխուդայից, կամ գյուղ մտնող չարչի առևտրականներից։ Մի քանի որից հետո աչքերս առողջացան, սակայն աչքիս մեկի վրա սպիտակ հատ մնաց, վորը մինչև հիմա էլ բոլորովին չի անցել։

Հայրս քուն ու դադար չուներ, մինչև վոր ամբողջ քուլաշը կրեցինք կալը։ Այնուհետև սկսվեց կալսոցը։ Յես կամ եյի քշում, վորը մեզնում կոչվում ե «չան», իսկ ինքը շուռեշուռ եր տալիս ցորենի կալը, ջոկում ու դեն եր շպրտում մեծ-մեծ կոշտերն ու քարերը։ Այդպես մենք աշխատում եյինք գիշեր ու ցերեկ, մինչև վոր ամբողջովին ծեծեցինք ամբողջ քուլաշը։ Մի քանի որ տևեց երնելը։ Յերբ քամին անբարենպաստ եր, այսինքն յերբ նա փչում եր զանազան կողմից, փոշին ու դարմանի մղմեղը լցվում եյին մեր քթերն ու ականջները, և թվում եր նույնիսկ, վոր մղմեղն ու փոշին թափանցում եյին մեր ուղեղները։

Վերջապես քեթխուդան լուր տվեց կալվածատիրոջը, վոր գյուղացիք վերջացրել են կալսոցը։ Կալվածատերն անմիջապես ուղարկեց իր գործակատարին։ Բոլոր գյուղացիք գնացին դիմավորելու կալվածատիրոջ ծառային, մի քանիսը նույնիսկ ընծաներով։

Գործակատարի գալստյան նախընթաց որը հայրս ասաց մորս.

— Յես ուզում եմ աղայի գործակատարին մի այծ կամ մի բաթման յուղ տանել փեշքեշ։

— Յուղը տուրքը հավաքելիս պետի տանք աղային,— ասաց մայրս,— այծերից էլ մնացել են հինգը։ Նրանցից յերկուսը էգ են, պետի ծնեն։ Վորձերից մեկը պետի տանք չոբանին վորպես աշխատավարձ, մյուսը պետի տանք աղային, իսկ յերրորդը պետի թողնել մեզ համար ուտելու։

Հայրս սկսեց խոսել։

— Յես վախենում եմ,— ասաց նա,— մի օյին խաղան գըլխըներիս և ավելի վատ լինի մեզ համար։ Բայց մայրս առարկեց.

— Ո՞վ պետի մեր գլխին օյին խաղա։ Միթե մենք վորևե վատ բան ենք արել։ Գողությո՞ւն ենք արել, Ուրիշների ունեցվածքը խլե՞լ ենք ձեռքներից, կամ կալվածատիրոջ կոռն ու բեգյարը չե՞նք տվել, Աղային կամ նրա հարկահավաքին վատ վերաբերմո՞ւնք ենք ցույց տվել, չե՞նք հարգել քեթխուդին կամ աղայի ձիապանին։ Այդպիսով մայրս վոչ մի կերպ չեր համաձայնում տալ փեշքեշ կամ ընծա։

Մի քանի որից հետո, յերբ ամբողջ հացահատիկը երնեցինք, աղայի գործակատարը դուրս յեկավ կալերը և սկսեց ընդունել կալսած ցորենները։ Նա սկզբից վերցրեց կալվածատիրոջ բաժինը, հետո տուրքը, պաքարան, միրաբին, ճնճղուկների տուրքը և այլ տուրքեր, և այսպիսով վերցրեց բերքի մեկ հինգերորդի փոխարեն՝ կեսից ավելին։

Յերբ հերթը հասավ մեր ցորենին, գործակատարը կանգնեց ցորենի տականքի կույտի առաջ, վոտքով խփեց և բարկացած հարցրեց հորս.

— Վորտեղից է քեզ այսքան աղբ։ Թացից գողացել ես, չորից գողացել ես, կալից ամեն որ կրել ես տուն, իսկ հիմա տականքի մեծ կիտուկ ես կազմել դիտմամբ և ցորենից թեզը փոքրացրել ես, ինչ ես ուզում հասկացնե՞լ դրանով։ Թագցնե՞լ ես ուզում ցորենը։

Հայրս ձեռքերը կրծքին դրած, գլուխը խոնհար, հարգանքով ասաց.

— Աղա, յերդվում եմ գլխովդ, վոր յես թույլ չեմ տա ինձ խայտառակել և իմ սան բարիքը ապականել։ Այն, ինչ վոր դուք տականք եք ասում, թույլ տվեք այս բոպեյիս ձեր աչքի առաջ մաղեմ, և դուք տեսեք...

Հորս այդ խոսքերի վրա գործակատարն ավելի ևս բարկացավ ու կատաղեց։ Նա սկսեց հայհոյել և փայտով խփել հորս գլխին, բայց քեթխուդան բռնեց նրա ձեռքից և չթողեց շարունակի ծեծը։

Քեթխուդան այս գործի մեջ միջամտեց վորպես միջնորդ։ Վճռեցին, վոր համենայն դեպս գործակատարն ընդունի ցորենը և հորս ների այն պայմանով, վոր սահմանված տուրքից մեկ խալվար ցորեն ավել ստանա հորից։ Հասանելիքը վերցրին։ Մնացած ցորենի և գարու մի մասը հայրս ծախեց, վորպեսզի կալվածատիրոջ հասանելիք տուրքը մուծի կանխիկ դրամով։ Այդ բոլորից հետո մեզ ուտելու և ցանելու համար մնաց յերկու խալվար ցորեն և մի խալվար գարի։

Այդ յերեկո հայրս բարկացած յեկավ տուն և մի լավ կռվեց մորս հետ։

— Այդ բոլորի պատճառը դու յես,— ասաց նա,— յեթե դու չխառնվեյիր իմ գործերին, յես, ինչպես մտադրվել եյի, այնպես էլ կանեյի, նվեր կտանեյի գործակատարին, և ամեն բան լավ կանցներ։ Ավելորդ տեղը չեյին տանի տանս բարիքը և իզուր տեղն էլ չեյի խայտառակվի։

Մայրս պատասխանեց.

— Յես ի՞նչ իմանայի, վոր դրանք այդպիսի շներ են... Առանձնապես դեռ մի բան չի պատահել, դեռևս ուշ չի։ Գնա աղայի մոտ, գանգատվիր, նա գործակատարից յետ կառնի ցորենը և կվերադարձնի քեզ։

— Ի՞նչ ես յերևակայում քեզ,— ասաց հայրս,— կալվածատերը գյուղացիների դա՞րդը պիտի քաշի։ Նա այնքան գյուղեր ունի, վոր ինքը նրանց հաշիվն էլ չգիտե. ամեն գյուղում էլ նա մարդիկ ունի, և բոլոր գյուղերում էլ այդ մարդիկ թալանում են գյուղացիներին, աղան իսկի չգիտե, թե ինձ նման չքավոր ու աղքատ գյուղացիներից ինքը վորքան պիտի ստանա։ Բացի դրանից, յես աղայի մոտ գնալու հնարավորություն չունեմ. վորտեղից է ինձ ճանապարհածախս, վոր գնամ հասնեմ քաղաք։

— Վոչինչ,— ասաց մայրս,— հավերից յերկուսը կծախեմ, փողը կտամ քեզ, ճամբիդ համար հաց կթխեմ. գնա գանգատվիր աղային մեր դրության մասին, չարժե կանգնել մանր-մունր

ծախսերի առաջ, յերբ մանր ծախսի դիմաց մեծ օգուտ եմ ունենալու։

Վերջիվերջո հայրս համաձայնեց գնալ Սենենդեջ՝ աղա կալվածատիրոջ մոտ։ Յերեկոյան հորս ճանապարհի պատրաստությունը քաշեցինք, իսկ առավոտյան հայրս գնաց քաղաք իր գանգատն անելու գործակատարի դեմ։

Մի քանի օրից հետո հայրս վերադարձավ քաղաքից և պատմեց մորս հետևյալը — Գնացի հասա քաղաք և անմիջապես ուղևորվեցի դեպի աղայի ապարանքը։ Հասա դռներին, տեսա դռների մոտ կանգնած են ծառաները՝ դեմքերը լուրջ և բարկացկոտ։ Ինձ ներս չթողին։ Մտածեցի, թե ինչ անեմ։ Վորոշեցի գրավոր խնդիր կազմել տամ, և յերբ աղան տնից դուրս գա, անձամբ խնդիրը տամ իրան։

Գնացի բազար, խնդիր գրող գտա։ Պատվիրեցի մի լավ խնդիր գրել ինձ համար։ Տասը շահի էլ խնդրագրին տվեցի։ Թուղթն առա և յեկա աղայի տան դռների մոտ սպասեցի, մինչև վոր նա դուրս կգա։ Շատ յերկար սպասեցի։ Յերեկոյան դեմ աղան դուրս յեկավ։ Յես սիրտ առա, յերեք անգամ գլուխ տըվեցի և ապա յերկու ձեռքով խնդրագիրս նրան մեկնեցի։ Նա թեթևակի նայեց խնդրիս վրա և հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում։

— Յես հայտնում եմ, թե այն մարդուն, վորին դուք բարեհաճել եք ուղարկել գյուղերը, ինձնից ապորինի կերպով մի խալվար ցորեն ավելի վերցրեց։ Այդ մարդը ձեր ծառային մեծ տանջանք պատճառեց։ Խնդրում եմ պաշտպանեք ինձ նրա դեմ։ Յետ առեք իմ արդար քրտինքի վաստակը և վերադարձրեք ինձ։

Այս իմ խոսքերից հետո՝ տեսնեմ աղան կատաղեց, փըրփըրեց և ամպի պես վորոտաց.

— Ա՜խ, դու, — ասում է, — այրված հոր զավակ, ուրեմն իմ ծառան բռնացել է. դու իմ մարդկանց բռնություններից ու ճընշումների մեջ ես մեղադրում։ Տվեք դրա վզակոթին, եդ շուն շան վորդուն, եդ հիմարին։

Ու սկսեցին գլխիս փայտի հարվածներ տեղալ գլխիս, ու միայն գլխիս... Հետո էլ վռնդեցին ինձ դռներից անգամ հեռու։ Աշխարհը գլխիս մթնեց, էլ չիմացա, ինչ անեմ։

Հայրս վերջացրեց յուր պատմությունը։ Նա բարկացած էր մորս վրա, ուստի մի լավ ծեծեց նրան այդ օրը։

Ի՞նչ աներ խեղճը։ Անարդարությունը մարդկանց խելքից հանում, խելագարեցնում է։

Մոտավորապես նույն օրերին քեթխուդան հայտնեց գյուղացիներին, վոր միևնույն մարդը յեկել է գյուղը կալվածատիրոջ կողմից, վորին հանձնարարված է բաց թողնել գյուղացիներին ամբարից անցյալ տարվա ցորենը՝ խալվարը տասը թումանով։ Ցորենի արժեքը դրամով գարնանը գյուղացիք վճարելու յեն աղային։

Քեթխուդայի տանը հավաքված գյուղացիները առարկում էին.

— Ախար ցորենի խալվարն այժմ արժե հինգ թուման, ինչո՞ւ մենք վերցնենք խալվարը տասը թումանով։

— Աղայի հրամանը յերկնային հայտնություն է. այդ հրամանը փոխվել չի կարելի,—պատասխանում էր քեթխուդան կարճ ու կտրուկ։

Ցերեկոյան հայրս վերադարձավ տուն և այս մասին մորս հետ սկսեց խորհրդակցել։

— Քանի՜ տարի յե արդեն, վոր մենք ապրում ենք այս գյուղում,—ասաց հայրս,—ու վոչ մի լավ բան չենք տեսել՝ բացի բռնությունից ու ճնշումից։ Այս տարի էլ, ավելի վատ, համարյա առանց հացի մնացինք։ Վորպեսզի այդ ցորենի արժեքը վճարեմ աղային, գարնանը պիտի ծախեմ մեր յերկու յեզը։ Հետո ի՞նչպես ապրենք։ Ավելի լավ է, որ փախչենք այս գյուղից և փոխադրվենք Կոլյայի գյուղը։ Այնտեղ ավելի լավ կլինի։ Բայց տես, կնիկ, այս մասին վորևե մեկին բան չասես, թե չէ վոչ միայն մեր ունեցածից կզրկվենք, այլ և մեր կյանքից։ Յեթե աղան կամ Ասատուլլա խանը իմանան, մեզ անմիջապես կկալանավորեն և բանտ կնստեցնեն։ Հիշում ես ինչպես Ամանուլլան և Քրդաստանի ջոջերը կալվածատիրոջ տան յետևը շատերին հողի մեջ սաղ-սաղ թաղեցին։ Դրանք այդպես են, վոչ վոքի չեն նայի, վոչ վոքից էլ չեն վախենա կամ քաշվի։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԱԼԼԱԴԱԴՆ ԻՐ ԸՆՏԱՆԻՔՈՎ ՓԱԽՉՈՒՄ Է ԿՈԼՅԱՑԻ ԽԱՆԻ ԿԱԼՎԱԾՔԸ

Այդ փախուստը տեղի ունեցավ Աղրաքա ամսի օրերից մեկում—մի մութ գիշեր, յերբ յերկինքը ծածկված էր ամպերի միապաղաղ ծածկույթով, և խավարը գրկել էր յերկիրը բոլոր կողմերից։ Սառը քամին անապատի սուր փշերի պես ծակում էր մեր մարմինը։ Թվում էր, թե բնությունն էլ խոսք մեկ արած մեզ տանջող մարդկանց հետ, ուզում էր մեզ՝ դժբախտներիս հոշոտել։

Մեզ հետ էր փախչում նաև Մահմուդ անունով մեկը, վորը մի գեղեցիկ կին ուներ։ Ասադուլլա խանը մարդ էր ուղարկել այդ կնոջ մոտ, վոր նրան փողով հրապուրեն և տանեն իրա մոտ։ Ինչ անել էյին, կինը չեր համաձայնել այդպիսի բան անել ու յեղելության մասին պատմել էր մարդուն։ Մահմուդն էլ անպատվությունից ազատվելու համար վճռել էր փախչել։ Այդպիսով նա էլ յեկավ ու միացավ մեզ, վոր միասին փախչենք։

Կես գիշերին մոտ՝ գյուղում անցուդարձը դադարեց։ Բոլորը քնեցին։ Մենք սկսեցինք մեր պատրաստությունը տեսնել։ Շտապով փաթաթեցինք յեզների ու այծերի դնչերը, վոր ձեն-ձուն չհանեն։ Շալակներս առանք մեր աղքատիկ, կիսամաշ քիլիմները[1]), իսկ կավե ամանները ու մնացած տան իրեղենները բարձեցինք էշին մի բեռ ալյուրի հետ ու ընկանք ճամբա՝ դեպի Մանսուր—Լեշկեր[2]) Կոլյայի։

Մեր իրերից շատ բան թողինք տանը։ Այնտեղ թողինք քուրսին, զանազան կճուճներ ու կժեր, ցորեն, գարի և այլն, իսկ հետո էլ սիրտ չարինք նորից գալ ու մնացածներն տեղափոխել։

Լավ էր, թե վատ մենք տեղավորվեցինք այս նոր գյուղում՝ Քեթխուդան գյուղի ծայրին յերկու կիսավեր խրճիթ հատկացրեց մեզ, այնտեղ էլ մնացինք։ Հենց իրանից էլ ցորեն վերցրինք

---

1) Քիլիմ նույնն է, ինչ վոր փալասը—հասարակ գորգ, մլզար։

2) Մանսուր-Լեշկեր—անուղոս է «հաղթական իմաստով»։

փոխարինաբար ու անցանք վարուցանքի։ Հայրս ու մայրս մի քանի որ ցեխ բռնեցին ու նորոգեցին մեր կիսավեր խրճիթները։ Հայրս իր աշխատանքին սկսեց, իսկ մայրս դես ու դեն ընկավ, տան համար պակասպռատ բաներ ձեռք բերեց—ամաններ, կճուճներ, թթխմոր, ալրաման և այլն, ու մի կերպ մեր տան տնտեսությունը կարգի գցեց։ Հույս ունեյինք, որ ձմեռը կարող ենք հանգիստ ապրել։

Որքան ուժս պատում էր, յես օգնում եյի հորս.—հող վարում, արտն եյի ջրում և այլն։ Ձմեռն յեկավ։ Խոր ձյունն իր սպիտակ սավանը փռեց և ծածկեց գետինը։ Մի զար հաստությամբ ձյուն եր նստած գետնի վրա։ Գյուղացու բոլոր աշխատանքները կանգ առան, վրա հասան անգործության որերը։

Այդ որերից մեկում մի ձիավոր յեկավ քեթխուդի մոտ և ասաց նրան.

— Այսոր խանը գալու յե ձեզ մոտ քարայծ վորսալու։ Տեղեկացրեք բոլորին։ Խանը կանգ ե առնելու դաշտում, իսկ գյուղացիք պիտի բարձրանան սարերը, վոտքի հանեն վորսի կենդանիներին և քշեն դեպի խանի կողմը, վոր նա կարողանա կրակել նրանց վրա։

Հայհոյանքներով ու աքացիներով դուրս հանեցին գյուղի բոլոր տղամարդկանց իրենց տներեց և քշեցին դեպի ձյունապատ սարերը։

Ի՞նչ խոսք, վոր հայրս էլ մյուս գյուղացիների հետ գնաց այդ պարտադիր ծառայությունն անելու խանին։ Առաջուց նա գլուխը փաթաթեց դաստախանով, վոտներին հագավ իր նորոգած «գիվեները»[1], մի քանի կտոր հաց դրեց գրպանն ու գնաց։ Նա վերադարձավ միայն արևածագին։ Հայրս պատմեց, վոր խանն իր շքախմբով տեղավորվել եր սարի ստորոտում, կիրճի մոտերքին, իսկ գյուղացիները բարձրացել եյին սարերը։ Նրանք խրտնեցնում եյին վայրի այծերին ու քշում եյին դեպի վորսորդները։ Գյուղացիներից մի քանիսն էլ վառելիք եյին հավաքում ու խարույկներ եյին վառում աղաների համար։ Գյուղացիներից

---

1) Գիվե—կլոսակոշիկ. տուֆլի, վորոնց յերեսները պատրաստում են հաստ չթեղենից, իսկ տակերը՝ հատուկ ձևով մամլած շորակտորներից։ Սա Իրանում սովորական վոտնաման ե։

շատերը թաղվեցին ձյունակույտերի մեջ։ Մեծ դժվարությամբ եյինք թաղվածներին դուրս հանում ձյունակույտերի միջից։ Գյուղացիներից մեկն էլ բարձրացել էր սարի ամենաբարձր տեղը։ Նրա վոտքի տակի քարը հանկարծ սայթաքեց, ինքն էլ գլորվեց ցած ու կորավ ձյան հյուսքերում։ Աղան այդ որը չորս այծ սպանեց։ Սպանված վորսերը տվեցին գյուղացոց շալակը և հրամայեցին հասցնել աղայի դալան[1])։ Գիշերը համարյա թե ցրտահար եղանք ու հազիվ մեզ դցեցինք գյուղը։

Մայրս անմիջապես հորս տարավ գոմը ու նրա ձեռներն ու վոտներն թաղեց տաք աղբի մեջ և մի քանի ժամի չափ այդպես թողեց։ Հետո հորս նստեցրեց քրսու տակ, այնուհետև չոր թանից ապուր պատրաստեց ու նրանով հորս ձեռքերն ու վոտները փաթաթեց։ Այդ «բժշկությունից» հետո հորս ձախ ձեռքի երկու մատների և աջ վոտքի հինգ մատների մսերը թափվեցին։ Բայց մայրս շատ փորձված կին էր բժշկական արվեստի մեջ, այնպես վոր նա վերջիվերջո հորս բժշկեց։ Մյուս գյուղացիների վոտները երկար ժամանակ թուլացած եյին ցրտահարությունից։

Դժվար ամսի կեսերին, երբ դեռևս երկիրը ծածկված էր խոր ձյունի տակ և լեռնանցքերը լցված եյին ձյունով, մենք տեղեկացանք, վոր Քիրմանշահի նահանգապետը նշանակված է Սինենդեջի նահանգապետ։ Նահանգապետը Սեննեի ու Բիջարի վրայով պիտի ուղևորվեր իր նոր պաշտոնատեղին—Քրդըստան։ Հրաման եկավ Սեններ, վոր կալվածատերերն իրանց գյուղացիներին պիտի հավաքեն և ուղարկեն Ղրդկանի լեռնանցքի ձյունը մաքրելու, վորպեսզի պարոն նահանգապետն իր բարձր շքախմբով կարողանա առանց նեղության անցնել այդ լեռնանցքը։ Մեզ մոտ էլ եկավ «մամուր»[2]) ու բոլոր գյուղացիներին էլ քաշ տվեց աշխատանքի։ Բոլորն էլ այնպես եյին խոսում, վոր այդ հրամանը քանի վոր իրեն նահանգապետի հրամանն է, ուստի չի կարելի փոխել կամ թողնել անկատար, անպայման պետք է գնալ և աշխատել, ինչպես ասված է հրամանի մեջ։

---

[1]) Դալա—բերդ կամ ամրոց

[2]) Մամուր—լիազոր, գործուղված։

Գյուղացիներից մեկի ձեռքերն այնպես եյին մղկտում ցրտից, որ չէր կարողանում աշխատել։ Նահանգապետի Ֆառաշը[1]) մի քանի անգամ փայտով խփեց խեղճ մարդուն։ Գյուղացին միամտություն ունեցավ զայրանալ ու բղավել։

— Թող քո նահանգապետն էլ, իր ամբողջ վարչությունն էլ ջհանդամը գնան, ինձ ձեռ ու ոտ է մնացել, որ աշխատեմ։

Ֆառաշը կատաղեց և այս անգամ խիստ ծեծեց այդ գյուղացուն։ Այդ դեռ բավական չէր։ Գյուղացու ասածները ընկան նահանգապետի ականջը։ Սա անմիջապես հրամայեց պատժել հանդուգն գյուղացուն։

Մի փոս փորեցին, գյուղացուն գլխիվայր կախեցին այդ փոսի մեջ մինչև կուրծքը, այնպես որ ոտները միայն մնացին դեպի վեր ցցված։ Փոսը լցրին քարերով ու հողով, իսկ հետո էլ թաղեցին դուրս ցցված ոտները։ Այդ մարդը մեռավ և մնաց հենց այնտեղ—լեռնանցքում, որպես նահանգապետի «արդարադատության» հուշարձան։

Այդ ձմեռ մենք աղալին տվեցինք յերկու հավ՝ բազեների համար կերակուր՝ յերկու բեռ աթար, յերկու բեռ էլ վառելափայտ, որին անձամբ հայրս տարավ խանի գյուղն ու հանձնեց։

Յերբ որ վրա հասավ շահի նովրուզը[2]), քեթխուդան հավաքեց գյուղացիներին ու բոլորին էլ անխտիր տուրքադրեց դրամով՝ տոնի առթիվ աղալին յերկու ոչխար ընծա տանելու համար։ Այդ տուրքից հորս բաժին ընկավ յերեք ու կես ղռան։ Այծերից յերկուսը ծախեցինք և մեր բաժին փողը տվեցինք։ Փողը տվինք, բայց ինչ հյուրասիրություն։ Այդ էր պակաս, որ աղան գյուղացիներին հյուրասիրեր ճաշով կամ ընթրիքով։

---

1) Ֆառաշ—բառացի նշանակում է «գորգ փռող»։
Այդպես են կոչվում նահանգապետների և այլ պաշտոնատար անձանց բարձր կարգի ծառաները, որոնք համարվում են սուրհանդակներ կամ նայելով տեղին՝ պահակներ։

2) Գյուղացիները յերբեմն նովրուզը շահի կամ թագավորական են անվանում, որովհետև այդ օրը՝ հին ժամանակներում շահերն ընդհանուր ընդունելություն եյին կազմակերպում, որտեղ ներկա եյին լինում նաև գյուղացիները։

Աղայի գործը չեր դա։ Աղան այդ տեսակ բաներից բարձր եր կանգնած։ Քեթխուդան պիտի հյուրասիրեր գյուղացիներին։

Հայրս մյուս գյուղացիների հետ պիտի գնար խանի գյուղը տոնակատարությանը մասնակցելու։ Զվարճության համար ինձ էլ հետը վերցրեց։ Ես տեսա կալվածատեր աղայի մեծ ու հոյակապ տունը՝ ընդարձակ բակի մեջ՝ շրջապատված կավաշեն բարձր պարսպներով։ Այդ ամրոցի դարպասների առաջ յերկշարք կանգնել եյին գյուղացիները։ Մեր քեթխուդան բերած վոչխարները տարավ, հանձնեց աղայի գործակատարին։ Գործակատարն յերկար ժամանակ տնտղում ու զննում եր վոչխարներին՝ իմանալու, թե վորքան նրանք փարթամ ու գեր են, ապա հավաստիանալով, վոր նրանք լավն են, նոր միայն բարեհաճեց ընդունել ընծաները։ Նա քեթխուդին առաջնորդեց աղայի մոտ և արժանացրեց նրա լուսապայծառ հայացքին։ Աղան բարեհաճեց հարցնել քեթխուդայի առողջության մասին։ Քեթխուդան վերադարձավ աղայի մոտից շատ բարձր տրամադրությամբ։

Այդ նույն որը մի ուրիշ գյուղի քեթխուդա նույնպես յերկու վոչխար եր բերել աղայի ընծա։ Վոչխարներից մեկը շատ նիհար եր, իսկ մյուսը թեև մի քիչ չաղ, բայց մի աչքից շիլ եր։ Դուրս յեկավ նույն գործակատարը, տնտղեց վոչխարներին և մի լավ հայհոյելով քեթխուդային և նրա հետ յեկած համագյուղացիներին, մերժեց ընդունել բերած ընծան։ Հետո այդ մասին զեկուցեց աղային։

— Այդ քեթխուդան ծիծաղում ե մեզ վրա,— ասաց գործակատարն աղային,— բերած յերկու վոչխարներից մեկը շիլ ե, իսկ մյուսը՝ կատարյալ կմախք։ Ի՞նչ կհրամայեք անել։

Աղան հրամայեց՝ իրեն չհարգելու պատճառով քեթխուդին ծեծել և իրանից ու համագյուղացիներից բռնագանձել հիսուն թուման՝ վորպես տուգանք։ Քեթխուդի վոտներն անմիջապես դեպի յերկինք բարձրացան, այսինքն նրա վոտները դրին ֆալախկայի մեջ և մի լավ հարվածեցին փայտերով։ Նույն տեսակ ծեծի յենթարկեցին նաև գյուղացիներին։ Այդ բոլորից հետո խանի մարդկանցից յերկու հոգու ուղարկեցին գյուղը՝ նշանակված տուգանքը բռնագանձելու։

Յերևակայեցեք, վոր բոլորն ել ծիծաղում եյին այս բանի վրա փոխանակ հուզվելու։ Այդպես ե իրանական վարք ու բարքը․ ուրիշի ստորացման հանդեպ մենք անտարբեր ենք լինում։

Յերեկոյան դեմ մեր քեթխուդան գնաց աղայի մոտ և տուն վերադառնալու թույլտվություն խնդրեց։

Այնուհետև մենք վերադարձանք տուն։

Այդ նույն տարվա գարնանը Իրանում տարածվեց անասունների մեջ «տավարի ցավ» հիվանդությունը։ Շրջակա գյուղերից այդ հիվանդությունը յեկավ, հասավ նաև մեր գյուղը։ Մեր յերկու յեզներն ել գետնով դիպան—հիվանդացան։ Հիշում եմ, թե ինչպես լալիս տնքում ու ախ եյին քաշում հայրս ու մայրս։ Հասկանալի յե, վոր յես ու քույրս ել ձայնակցում եյինք մեր ծնողներին։ Մայրս բռնեց քրոջս ձեռները, փաթաթեց յեզան վզովը և ինքն ել գրկեց յեզին։ Հայրս գլուխը հպելով յեզան դնչին ասում եր յեզանը։

— Մի սատկիր, ապրիր, ավելի լավ ե, թող յես մեռնեմ։ Ախար իմ տան հացը դու յես տալիս, դու յես մեր կյանքն ու ապավենը։ Հայրս ու մայրս խելքները կորցրածի պես եյին։ Ամենքից ոգնություն եյին աղերսում, վորևե դեղ ու դարման եյին խնդրում յեզների համար։

Վոմանք ասում եյին, թե յեզներին ջուր մի տվեք, իսկ մի քանիսն ել ասում եյին, թե խմելու համար տաք ջուր տըվեք։ Մենք ել անում եյինք այն բոլորը, ինչ վոր խորհուրդ եյին տալիս կամ հանձնարարում եյին «անասնաբուժները»։

Վերջի վերջո, յեզներից մեկը սատկեց, իսկ մյուսն առողջացավ։ Իսկ յեզան սատկելուց առաջ մեր հարևանն յեկավ և հորս ասաց, վոր միևնույնն ե, յեզը սատկելու յե, ինչու մինչև սատկելը չես մորթում։

Ճիշտն ասած, լավ և բարի խորհուրդ եր․ հայրս համաձայնեց յեզը մորթել։

Հարևանը կաշին վերցրեց։ Յերկու բդերը մենք վերցրինք ուտելու համար, իսկ մնացածը տվեցինք հարևաններին։

Սարսափելի բան ե գյուղացու համար կովի կամ յեզան սատկելը։ Դա մի պատուհաս ե, վոր շատ ու շատ մարդկանց ե թողնում առանց կտոր հացի, չոր տափի վրա։

Ցեղան գլխակաշուց հայրս ինձ համար մի զույգ չարուխ կարեց, վոր մեզ մոտ կոչվում ե «քելեշ», քելե բառից, վոր նշանակում ե գլխակաշի։ Այդ իմ առաջին զույգ վոտնամանն եր։

Այնուհետեւ մենք մի յեզով եյինք աշխատում։ Բայց դե մի յեզով ինչ կարելի յեր անել։ Ընկերացանք մի ուրիշ գյուղացու հետ, վորը նույնպես մի յեզ ուներ։ Այդ յերկու յեզով յերկու տան աշխատանքն եյինք անում, այդ պատճառով ել քուլաշի կրելն ու կալակուտն ուշացավ։

Մի անգամ դաշտային աշխատանքի ժամանակ, հարավային կողմից սարերի վրա, յերևաց սև ամպի մի կտոր։ Հայրս ու մի քանի գյուղացիներ այդ բանը վատ նշան համարեցին։ Սև ամպը մի տեսակ սև ահ գցեց նրանց սիրտը։ Յեվ իսկապես, ամպն արագորեն մեծացավ և բռնեց ամբողջ հորիզոնը։ Ամպը վորոտաց, կայծակը փայլատակեց, մի քանի կաթիլ անձրև թափվեց, և հանկարծ անձրևից հետո կարկուտ տեղաց։

Կարկո՜ւտ, ինչ կարկուտ... աղավնու ձվի չափ. հարվածեց հողը, և արտերը ծածկվեցին սառցային շերտով ու մեկ յերկու ժամվա ընթացքում գյուղի բոլոր ցանքերը վոչնչացան։

Կարկուտն ու փոթորիկը փչացրին ու ավերեցին քեթխուդի վերնատունը։ Գյուղացիները հավաքվեցին ու մի քանի որվա ընթացքում նորոգեցին այն։

Քեթխուդան մեզ փոխարինաբար ցորեն եր տվել։ Ցանքերը վոր կարկուտից վոչնչացան, այժմ նա ցորենի արժեքը դրամով եր պահանջում, այն ել ժամկետից յերեք ամիս առաջ։ Հայրս ուզում եր ապացուցել, վոր քեթխուդի պահանջը ճիշտ չե և արդարացի չե, բայց քեթխուդան լսել չեր ուզում նման առարկություն։ Ճար չկար, ստիպված ծախեցինք ունեցած այծերից չորսը, վորպեսզի այդ պարտքը տանք։

Գյուղացիներից մեկը—Քյալբալա Հասանը[1]—միշտ գանգատվում եր հորս իր դրության մասին։ Հաճախ նա ասում եր.

---

[1] Քյալբալա կոչվում ե այն մարդը, վորն այցելում ե Քյալբալա—Միջագետքում, Բաղդադի մոտ, յերկրպագելու գլխավոր սուրբ իմամ Հասանի գերեզմանին։ Իմամ Հասանը համարվում ե շիա դավանության հերոսն ու մարտիրոսը։ Պարսիկները պատկանում են շիա դավանության։

— Քանի տարի է ապրում եմ այս գյուղում, յես մի լավ օր չեմ տեսել։ Անհաջողություն և միշտ անհաջողություն, և որեցոր էլ դրությունս վատանում է։ Չեմ էլ կարողանում փախչել, վորովհետև վախենում եմ։

Սակայն մի անգամ, մի փոթորկոտ գիշեր, յերբ գյուղում բոլորը քնած եյին, քեթխուդի տան կտուրից մեկը բարձր ձայնով բղավում ու կանչում էր գյուղացիներին։ Բոլորն էլ թափվեցին քեթխուդի տունը իմանալու, թե բանն ինչումն է։

Քեթխուդան շատ հուզված էր։ Նա հենց մի գլուխ գյուղացիներին ասում էր.

— Քյալբալա Հասանն ընտանիքով փախել է։ Ցրվեցեք բոլոր կողմերը, ընկեք նրա հետևից, գտեք նրան, բռնեք ու յետ բերեք։ Աղոթեք աստծուն, վոր հանդիպեք ու բռնեք, թե չէ եգուց վոր խանն իմանա, մեզ բոլորիս էլ կկոտորի։

Գյուղացիք ցրվում են դեսուդեն, ամբողջ շրջակայքը։ Շուտով հանդիպում են Հասանին։ Մահվան յերկյուղի մեջ Հասանը թողնում է ճանապարհին իր հետ վերցրած ունեցվածքը, կնոջն ու յերեխաներին առնում, թաքնվում է խոտերի մեջ։ Գյուղացիք նրա ունեցվածքը վերցնում, բերում հանձնում են քեթխուդին։ Քեթխուդան իմաց է տալիս խանին։ Խանի ծառաներից մեկը գալիս է գյուղը, ընդունում է քեթխուդից Հասանի լքված գույքը և իր հերթին ուղարկում է խանին։

Վերջը մենք իմացանք, վոր Քյալբալա Հասանը կնոջ ու յերեխաների հետ գնում է Սեննոր նահանգապետին գանգատվելու։ Սեննորում Հասանը խնդիր է գրել տալիս, բերում, հանձնում է փառաշ բաշուն մի գլուխ շաքարի հետ։ Խնդիրը հանձնըվում է նահանգապետին։ Գավառապետը ձիավոր է ուղարկում Մանսուր-Լեշքյոր հարցմունքով, թե նա ինչ առարկություն ունի գյուղացի Քյալբալա-Հասանի գանգատի դեմ։

Մանսուր-Լեշքյորն ուղարկած ձիավորին նախ տալիս է յերկու թուման փող. սա իր հերթին արձանագրություն է կազմում, գրավոր ցուցմունքներ է վերցնում գյուղացիներից, վորոնց համաձայն դուրս է գալիս, վոր իբր թե Քյալբալա-Հասանը իր գանգատի մեջ սխալ ցուցմունք է տվել, և ընդհակառակը, Հասանը Մանսուր-Լեշքյորին փող է պարտ և ուզում է փախչել

իր պարտքից։ Բացի դրանից էլ, Մանսուր-Լեշքյորը նահան-գապետին ուղարկում է յերկու բեռ սեխ ու ձմերուկ, հետն էլ նամակ է գրում՝ որ իբրև թե Գյալբալա Հասանը այս չափ գումարի փող է պարտ, և որ նրա փախուստը գրգռում է մյուս գյուղացիներին ես փախուստի և առհասարակ անհնազանդու-թյան, «ուստի և,—գրում է Մանսուր-Լեշքյորը,—յես որպես ձեր խոնարհ ծառան, խնդրում եմ պատժել Հասանին, որով պարտավորեցրած կլինեք ձեր խոնարհ ծառային»։

Նահանգապետի ձիավորն վերցնում է սեխն ու ձմերուկը և խանի նամակը, բերում հանձնում է իր կազմած արձանա-գրության հետ միասին նահանգապետի բարեհայացողության։

Գործն ուրիշ կերպարանք է ընդունում։ Ֆառաշ են ուղար-կում Գյալբալա-Հասանին նահանգապետի մոտ կանչելու։

Բերում են խեղճ Հասանին։

— Ախ դու, երվածի զավակ,—ասում է նահանգապետը,—քնձռոտի մեկը, ուրիշի գույքը գողանում ես ու փախչում և հետո—զանգմոտ ես անում։

— Աղա,—ասում է Գյալբալա-Հասանը,—ճշմարիտ եմ ասում, հարցրեք ում ուզում եք, բոլորն էլ ինձ ճանաչում են, յես լավ գյուղացի չեմ, հալալ աշխատանքով ապրող մարդ եմ յեղել, ոչ ոքից գույք չեմ գողացել, չեմ յուրացրել որևէ մեկի սեփականությունը։

Նահանգապետը ոչինչ լսել չի ուզում։ Գյալբալա Հա-սանին նախ մի լավ ծեծում են և հետո բանտ նստեցնում։ Մի որոշ ժամանակից հետո, յերբ համոզվում են, որ այլևս նա ոչինչ չունի, ոչ գույք և ոչ էլ դրամ, և նրանից որևէ բան չի կարելի կորզել, կտրում են նրա ականջները և այդ դրությամբ ման են ածում Սենհորի շուկայում, ժողովրդից փող են հավաքում իրանց գրպանի օգտին և ապա արձա-կում են։

Գյալբալա Հասանի հետ պատահած այս դեպքը մեր շըր-ջանի գյուղացիների վրա շատ վատ տպավորություն թողեց։ Բոլորն էլ համոզվեցին, որ ինքը նահանգապետն էլ չի հա-մարձակվում դիմադրել խանին հնազանդվելու օրենքին և կամայականություններին։ Հայրս, որ մինչ այդ ինքն էլ եր

ուզում փախչել, իմանալով Հասանի գլխի յեկածները, սուս ա-
րեց, տեղը նստեց, հաշտվեց իր վիճակի հետ և շարունակեց իր սովորական աշխատանքը։

Այդ ժամանակամիջոցում յես սովորում եյի մոլլա Մոհամմեդի մոտ, վորի մոտ սովորում եր նաև քեթխուդի տղան։ Ցես ուսումը շատ եյի սիրում։ Չորս ամսից հետո յես վերջացրրի ղուրանը, արդեն կարդում եյի «Գազելը յեվ ֆառսակը» գիրքը և կարողանում եյի առոգանել «պարտիզպանի սոխակները» քիչ ել վարժվեցի գրության մեջ։

Մի անգամ, յերբ հայրս յեզները լծեց և գնաց դաշտ, իսկ յես պատրաստվում եյի գնալ դպրոց, գյուղում հայտնվեց կեղտոտ, գզգզված մազերով ու պատառոտած շորերով մի դերվիշ։ Նրա մազերի յերկար հյուսքերը խճճված եյին և փշերով լիքը։ Ուսերին գցած եր քարայծի մորթի։ Նա անցնում եր տնից-տուն և վողորմություն եր խնդրում։

Մենք սովոր ենք դերվիշներին։ Ամեն տեղ լիքն ե այդ տեսակի մարդկանցով։ Կոպիտ, գռեհիկ, ագահ ու ծրիակեր այդ մարդիկ ձանձրացնում են գյուղացիներին իրենց ամենօրյա այցելություններով։ Սակայն այս մեկն արդեն չափազանց աներես եր, թեև «աստված» բառը միշտ ու ամեն րոպե նրա շրթունքներին եր։

— Հախ, հախ,—լսվում եր նրա կտրուկ ձայնը վողջ գյուղում։

Վերջապես նա մոտեցավ մեր դռներին և, իր չանգռոտած կուրծքը բացեց և սկսեց ծոր տալով վոռնալ.

— Մարգարեյի վողորմությունը տվե՛ք, իսկ ով վոր չտա, վայ նրան և անեծք։ Դե՜հ, մորաքույր, շո՛ւտ արա, տո՛ւր տիրոջ վողորմությունը։

Այդ ժամանակ մայրս կտրանը շալիկս եր փռում։ Դերվիշն իր գավազանով այնպես ամուր զարկեց դռանը, վոր փեղկերից մեկը կոտրվեց։ Մայրս կտուրից իջավ։

— Տիրոջ ծառա, ալյուր կա, հաց կա, ցորեն կա, այս րոպեյիս կբերեմ, մի քիչ համբերիր։

Դերվիշն այդ բաներից հրաժարվեց։ Նա պահանջում եր թեյ, շաքար, յուղ, թիրյաք[1]) և այլ նման բաներ։ Վորքան ել

---

1 Թիրյաք—ափիոն։

մայրս յերդվում եր, թե այդ բաներից մենք չունենք տանը, նա չեր հավատում։ Ձեր էլ ուզում լսել։ Տվեք վոր տվեք, ասում եր։ Նա նորից բարձրացրեց իր գավազանը և այնպես զարկեց դռանը, վոր մյուս փեղկն էլ ջարդեց։

Մայրս ասաց.—վազիր հորդ կանչիր։

Գնացի հորս բերեցի։ Թեև հայրս տեսավ ջարդված դուռը, բայց դերվիշին վոչինչ չասաց, աշխատեց քաղաքավարի և փափուկ վարվել նրա հետ։

Հայրս միայն ասաց.

— Յերդվում եմ քո փիր[1]) Ալիի անունով, վոր հենց դու ինքդ էլ նրան չես հավատում։ Յեթե մենք թեյ, շաքար, յուղ ունենայինք, առանց խոսելու կտայինք, ինչու ենք մերժում։ Վոր չկա, չկա էլի՛։

Դերվիշը հանկարծ բղավեց.

— Անիծված քաֆուր[2]), անաստված, ուրեմն տիրոջ վողորմությունը չես տալիս, մերժում ես։

Այս ասելով, բարձրացրեց գավազանը և այնպես զարկեց հորս, վոր նրա ուսն էլ ջարդեց։ Հայրս բարկացավ և բռունցքով խփեց նրա վզակոթին։ Տուր ու դմփոցն սկսվեց։ Դերվիշը գրպանից հանեց դանակը և ուզեց խրել հորս փորը, բայց գյուղացիք վրա հասան և կռիվը դադարեցրին։

Կատաղությունից դերվիշն ատամները կրճտացնում եր։ Հանկարծ դանակով ինքն իրան խփեց գլխից։ Արյունն սկսեց շռալ։

Հետո վերկացավ ու գնաց։

Հետևյալ որը Սեննորից մի «ղուլամ»[3]) յեկավ մեր գյուղը՝ հորս գավառապետի մոտ տանելու։ Դերվիշը գանգատ եր արել հորս դեմ։

Նախ և առաջ ղուլամը փայտի զորությամբ մեզնից կորզեց յերկու հավ և տեղն ու տեղը վիզները կտրեց։ Բացի դրանից նրա համար ճարեցինք թեյ, շաքար և թիրյաք։

---

1) Փիր — Սուրբ, ուսուցիչ։ Դերվիշական աղանդի պետը։ Շիա դավանության հիմնադիր Իմամ Ալին բոլոր դերվիշների և բոլոր շիաների փիրն է։

2) Քյաֆյուր—անհավատ, վոչ մուսուլման։

3) Ղուլամ—ծառա։

Թեև հայրս պատրաստ էր անմիջապես Սեննոր գնալու, բայց գործուղված ղուլամը ամբողջ յերկու որ մնաց մեզ մոտ։ Այդ յերկու որվա ընթացքում նա մեզնից վորպես «բարեկամական փոփոխություն» յերկու թուման փող, բացի դրանից էլ, նրան հյուրասիրելու համար պահանջվեց 2-3 թուման ևս։ Այնուհետև նոր ղուլամը հորս առաջն արեց, տարավ Սեննոր։

Հորս ներկայացնում են գավառապետին, վորն ասում է.

— Դու ես այս Ալլադադը։ Այդ ի՞նչ ես արել, երվածի ղավմկ։ Բանդ շատ վատ է։ Տիրոջ ծառայի հետ կռիվ ես սարքել, նրա գլուխը պատռել ես։

Հայրս պատմել է, թե ինչպես է տեղի ունեցել բանը։ Պատմել է նույնպես, թե ինչ վոր դերվիշը պահանջել է տալ, այդ բաները մենք չենք ունեցել տալու։

— Երվածի ղավմկ,— ասում է գավառապետը,— մի՞թե այդ բոլորը դու ձրի էյիր տալու։ Չէ՞ վոր աղքատներին տված վողորմությունը գնալու յեր հորդ հոգու փրկության համար։ Տիրոջ վողորմությունը դու պարտավոր էյիր տալ։

Այնուհետև հրամայում է կալանավորել հորս, բռնագանձել նրանից տասը թուման վորպես տուգանք։

Հորս քաշ են տալիս բանտ։ Այնտեղ նրան շղթայում են։ Վոտները դնում են փայտե մամուլի մեջ, շլնքին հագցնում են յերկաթե ծանր վզնոցը։

Ահա քեզ արդարություն և օրենք։

Ցեվ շողոքորթներն ու կեղծավորները միշտ պատրաստ են մարդկային արարքները մեկնաբանել իրանց շահերի համաձայն, յերբ այդ պետք է իրենց իսկ նպատակների համար։ Գավառապետի այդ տմարդի վարմունքը գովաբանում են, դրվատում են նրա արդարադատությունը։ Համարում են նրան ամենալավ մուսուլմանը, մի ճշմարիտ «մյուրիդ»[1]) Ալու ցեղից ու չարամիտ ու դառն ծիծաղով ասում են.

— Համա լավ արեցին Ալլադադին հա՜։ Յերբ հորս բանտարկության մասին լսեց մայրս՝ գլխին տվեց ու լաց յեղավ։ Քրոջս ու տան խնամքը հանձնեցինք հարևաններին, մայրս ու յես գնացինք Սիննոր հորս հավարին։

---

1) Մյուրիդ—աշակերտ, հետևորդ։

Հասանք քաղաք և անմիջապես գնացինք մոլլաներից մեկի մոտ։ Մայրս ընկավ մոլլի վոտները, աղաչեց, պաղատեց նրան, վոր սա մի կերպ հորս ազատի։

Աղա մոլլան հանդիմանեց մորս ու ասաց.

— Ե՛, մարդդ մեծ մեղք ե գործել, իսկ դու սկսել ես գանգատվել, վոր դուք չքավոր եք, վոչինչ չունեք։ Դե վոր այդպես ե, թող քո ամուսինն ել բանտում մեռնի։

Մայրս ահաբեկված՝ մատնացույց արեց մեր եշը։

— Հրամայեց ծախել այն եշը, աղա մոլլան,—ասաց նա,— փողը տվեք ում ճանաչում եք և վորքան հարկավոր ե, իսկ մնացածը յետ տվեք մեզ, խեղճ են յերեխաներս։

Աղա մոլլան բարկացավ։

— Տե՛ս, սրան մի տես, ինչ մեծ բան ե կարծում իր եշը։ Եշդ այնքան գին կհանի՞, վոր համ հաքիմի ու նրա մարդկանց խաթրն առնես, համ ել ինձ մի բանով բավարարես։

Ել ուրիշ ճար չկար։ Վորքան ել մորս համար ծանր եր, այնուամենայնիվ նա եշն ամբողջովին տրամադրեց մոլլային, միայն թե նա ազատել տա հորս։ Մոլլան դեռ ելի կոտրատվում եր և չեմուչում եր անում, բայց վերջիվերջո գնաց գավառապետի մոտ և ազատեց հորս կալանքից։

Մենք վերադարձանք տուն։

Այս դեպքերի առթիվ մենք բավականաչափ պարտքի տակ ընկանք։ Մի քանի թուման գյուղացիներին եյինք պարտ, վոր գոյացել եր գավառապետի ծառային հյուրասիրելու պատճառով. յերկու թուման ել մեկից առել, տվել եյինք նույն ծառային վորպես «փոխարինություն»։ Տանը մնացած հացահատիկն ու այծերը ծախեցինք և մի կերպ պարտքներս տվինք։ Այծերը ծախելուց հետո՝ մեր սնունդն ավելի վատացավ։ Հացի հետ այծի կաթը մեր գլխավոր սնունդն եր, իսկ հիմա մնացինք չոր հացի հույսով։

Այդ ժամանակներում եր, վոր լուր տարածվեց, թե Բիրմանշահում գյուղացիք ապստամբվել են Ջիա-Եդ-Դովլե շահզադեյի[1]) դեմ։ Ապստամբները նրա տան վրա քարեր են շպրտել։

[1]) Շահզադե—շահի սերունդից, գահաժառանգ. տիտղոս ե և շատ հաճախակի յե Իրանում։

Շահզադեն իր հերթին հեռացրել է Քրդստանի և Քիրմանշահի նահանգապետ Էմիր-Նիզամ-Գերուսիին։

Այս նահանգապետը մոտ օրերս պիտի գար, անցներ Քիրմանշահ մեր գյուղով։

Մինչ այդ էլ, մենք արդեն զրկվել էինք ամեն ինչից. մնացել էր միայն մի յեզ։ Հայրս մտորում էր այն մասին, թե ինչպես անի՝ մի կերպ քոչի այստեղից դեպի Զոմ-Զոմուլ։ Ահա քոչելու առիթը ներկայացավ։ Հայրս ուզում էր նահանգապետի գալու և անցնելու հետ հարմարեցնի մեր քոչը, որովհետև այդպես հեշտ կլիներ դուրս պրծնել մեր տեղից։

Այդպես էլ եղավ։ Մի անգամ մեր գյուղն եկավ Էմիր-Նիզամի «շաթիրը» կամ առաջընթաց սուրհանդակը, հագած կարմիր «սերդարի», սպիտակ գտակով՝ փաթաթված մետաքսյա բազմագույն թաշկինակով, վոտներն էլ տոլաղներ։ Նա բարձրագոչ հայտարարեց գյուղում.

— Նորին գերազանցությունը գալիս է, գնացեք դիմավորելու, մատաղացու յեզ տարեք։

Շաթիրն ասած, «բարի լուր» հաղորդելու համար ստացավ քեթխուդից մի թուման փող և շտապով անցավ հաջորդ գյուղը։

Գյուղացիները հավաքվեցին, մի յեզ վերցրին և քեթխուդի առաջնորդությամբ գնացին ճանապարհի վրա սպասելու նահանգապետին։

Նրանց հետ յես էլ գնացի։

Մեր առաջով սկզբից անցան յեսավուլները արծաթապատ գավազաններով, հետո զանազան թափառական ցեղերից հավաքած ձիավորները, այնուհետև «բարկության իշխանը» նստած մի բեռ ուռի և թեղու ճիպոտների վրա։ Ամենից վերջը յերևաց յերկու հսկա ջորիների վրա պատրաստած պատգարակում ինքը՝ Էմիր-Նիզամը։ Քեթխուդան այդ րոպեյին հրաման տվեց յեզը մորթել։ Գյուղացիք յեզանը գետին գլորեցին, վոր մորթեն, բայց ձիավորներից մեկը մոտեցավ և արգելեց մորթել յեզը, վոր իբր թե նորին գերազանցությունը բարեհաճեց խնայել։

Ինչպես սովորեցրել էին, այնպես էլ կանգնել էին գյուղացիք —վոտներն իրար կպցրած, գլուխները խոնարհ և ձեռները կրծքներին դրած։ Հենց վոր նորին գերազանցության պատգարակը հավա-

տարվեց գյուղացոց առաջին շարքերին, բոլորն էլ միասին «ընծություն արտահայտեցին», յերեք անգամ աղոթք արտասանեցին և նահանգապետին վողջություն ու առողջություն մաղթեցին։ Ցերթն անցավ, գնաց։

Յասավուլներից մեկը վերադարձավ և քեթխուդից մատաղի փոխարենը պահանջեց տասը թուման։ Այս սովորությունը բոլորին էլ լավ ծանոթ էր, ուստի վոչ վոք նրա դեմ չառարկեց, միայն բոլորն էլ աղաչեցին, խնդրեցին, վոր յասավուլը քիչ պահանջի, տասը թուման վճարելը ծանր էր նրանց համար։ Համաձայնեցին հինգ թումանով բանը վերջացնել։ Քեթխուդան այդ հինգ թումանն իր փողերից վճարեց յասավուլին, իսկ յերբ գյուղ վերադարձանք, քեթխուդան գյուղացիներից հավաքեց վեց թուման։ Մի թուման ավել հավաքեց իր ոգտին։ Հորս հինգ ղռան բաժին ընկավ։ Այդքան էլ վճարեց։

Գիշերը մենք հավաքեցինք մեր ունեցած-չունեցածը, գյուղից թաքուն դուրս յեկանք և միացանք Եմիր-Նիզամի մարդկանց։ Մեզ վոչ վոք չհետապնդեց։

Առավոտյան մենք նահանգապետի մարդկանց առաջը տը-վինք և ուղևորվեցինք Զոմ-Զոմալի Բերնաջ գյուղը։ Այդտեղ տեսնվեցինք, քեթխուդի հետ և պայմանավորվեցինք, վոր մենք իրան տարեկան յերկու թուման վճարենք, իսկ ինքը մեզ բնակարան տա։ Քեթխուդան գյուղի ծայրին մեզ յերկու փոքրիկ յեղեգաշեն տնակներ հատկացրեց։ Այդպիսի տները Իրանում կոչվում են «քյափար»։

Քեթխուդան տան նորոգությունը գցեց մեզ վրա։ Ստիպված դրան էլ համաձայնեցինք և տեղավորվեցինք մեր նոր տանը՝ բնակություն հաստատելով Բերնաջ գյուղում։

Հոգեկան շատ ծանր ապրումներով հայրս ծախեց մեր միակ յեզը, վորի փողով գնեցինք ցորեն, սիմենդր, տան համար մի քանի անհրաժեշտ իրեղեններ և յերկու հատ էլ այծ։

Շուտով լուր առանք, վոր Եմիր-Նիզամը յեկել է Քիրմանշահ։ Այնտեղ նա կալանավորել էր քեթխուդա Ասադին. հրամայել էր կապել թնդանոթի բերանին ու կրակել։ Այդպես էլ արել էին։ Ասադի մարմնի կտորները թռել էին դեսուդեն, իսկ փորոտիքը թափվել էր ճամբով անցնող մի կնոջ առաջ, վորը վախից վիժել էր իր յերեխան։

Հայրս չէր կարողանում անգործ նստել տանը։ Վորոշեցինք յերկուսով ել գնալ Քիրմանշահ որավարձով աշխատելու։ Հետևյալ որը հրաժեշտ տվինք մորս ու քրոջս, վերցրինք մի քանի բոքոն հաց, մի քանի ղռան դրամ ճանապարհ ընկանք։ Հասնելով Քիրմանշահ՝ մենք անմիջապես ուղևորվեցինք շուկայի հրապարակը, վորտեղ որավարձով մշակներ են վարձվում։ Մենք ել վարձվեցինք հողային աշխատանք կատարելու մի տեղ։ Հորս նշանակեցին որական մի ղռան, իսկ ինձ՝ տասը շահի։ Մենք սկսեցինք աշխատել։

Յեղանակները տաք եյին, այդ պատճառով ել կարիք չեյինք զգում վոչ բնակարանի և վոչ ել վառելիքի։ Մենք որական տասը շահուց ավել չեյինք ծախսում, բայց մյուս կողմից, ուժասպառ եյինք լինում, վորովհետև ֆիզիքական ծանր աշխատանք եյինք կատարում և կենցաղային պայմանները բնավ նախանձելի չեյին։

Ուրբաթ որերը մենք աշխատանքից ազատ եյինք լինում, բայց յես անգործ չեյի կարողանում մնալ. գնում եյի մոլլայի մոտ սովորելու։

Այդ ժամանակ լուր տարածվեց հանկարծ, վոր Թեհրանի մոտերքին — Հազարաթ — Ե — Աբդուլ — Ազիմ գերեզմանատանը Միրզա-Ռիզա Քերմանին սպանել ե Նասր-Եդդին շահին։ Ամբողջ նահանգին հուզմունք տիրեց։ Հարուստներն սկսեցին թաքցնել իրենց կարողությունը։ Մենք վոչինչ չունեյինք, այդ պատճառով ել բնավ չեյինք անհանգստանում։

Մի քանի որից հետո «Նիգարե-խանեն»[1] ազդարարեց, վոր գահ ե բարձրացել Մուզաֆֆեր Եդդին շահը։

Նահանգապետները հեռագրով կարգադրություն եյին ստացել մնալ իրենց տեղերում։

Քիրմանշահում մենք չորս ամիս աշխատեցինք և այդ ժամանակամիջոցում տնտեսեցինք մոտ իննը թուման փող։

---

[1] Նեգարե-Խանե—նահանգապետի տան կտուրին կամ շուկայի մոտ բարձր տեղում կառուցած այն նստարան ե, վորտեղից թմբկահարները վորևե կարևոր լուր են ազդարարում ժողովրդին։

ԳԼՈՒԽ ՑԵՐՐՈՐԴ

ԱԼԼԱԴԱԴԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Դժբախտաբար հայրս հիվանդացավ, և յես ստիպված եյի խնամել նրան։ Որեցոր հիվանդությունը ծանրանում եր։ Յես չեյի իմանում ինչ անեմ, ինչպես բժշկեմ նրան։ Շնորհակալ եմ ուստա Ալուց, ողորմի նրա հորը, յերբեմն-յերբեմն նա գեր այցելում հիվանդ հորս։ Մի անգամ նա իր աշակերտի հետ յեկավ մեզ մոտ, նայեց հորս և նրանից պարզվեց, վոր հայրս փորահարինք ունի, արյուն եր գնում։

Ուստա Ալին ասաց.

— Հորդ բանը լավ չե։ Ել մի ուշացրու, վերցրու և տար հեքիմ Նասիրի մոտ, գուցե նա բժշկի։

Այդպես ել արի։

Նասրի բուժարանը լիքն եր տղամարդկանցով ու կանանցով, վորոնք յեկել եյին բժշկական օգնություն ստանալու Նասիրից։

Հեքիմ Նասիրն իսկի նրանց չեր ել քննում, միայն դեղատոմսեր եր գրում, տալիս եր հիվանդների ձեռքը և դուրս ճամբում։

Յերկու ժամ սպասեցինք, մինչև հերթը հասավ մեզ։ Վերջապես հեքիմն ընդունեց հորս և հարցրեց, թե ինչ հիվանդություն ունի։ Հորս փոխարեն յես պատասխանեցի։ Նասիրը պատվիրեց «ասածու ծառի» տերև յեփացնել և ջուրը խմեցնել հիվանդին։

Գնացի աթթարի[1]) խանութը և հեքիմի պատվիրած դեղը գնեցի, հետո ինչպես պատվիրել եր, տերևաջուրը պատրաստեցի և խմեցրի հորս։ Մեկ խմեցրի, յերկու, յերեք, այնուամենայնիվ հիվանդությունը չեր անցնում. ամեն որ փող եյի ծախսում. կամ հեքիմին եյի տալիս, կամ դեղորայք եյի առնում և կամ հիվանդի համար ուտելիք եյի գնում, բայցևայնպես հորս հիվանդությունը մազաչափ անգամ չեր թեթևանում։ Վերջապես այն օրը հասավ, վոր հայրս ուշքը կորցրեց։ Մեն-մենակ, անտեր-անօգնական, ընկած

---

1) Աթթար—դեղաբույսերի, համեմունքների և դեղորայքի առևտրական։

էինք յերկուսով էլ մի այգու պատի տակ։ Անճարությունից սկսեցի դառն կերպով լաց լինել խեղճ հորս վրա։

Հենց այդ միջոցին մեր կշտով անցնում եր մի ֆռանգ[1]) իր յերկու ծառաների հետ։ Ինչպես յերեւում ե, այդ մարդը խղճաց մեզ, վոր այնպես ընկած եյինք պատի տակ՝ մենակ, անտեր, վողորմելի դրության մեջ։ Իսկույն հրամայեց խարակավոր (НОСИЛЩИК) կանչել և հորս փոխադրել իր այգին։ Խարակավորն յեկավ, հորս շալակն առավ և տարավ։ Յես էլ միացա նրանց ու գնացի հետները։ Մեզ սենյակ ու տեղաշոր հատկացրին և ամեն օր էլ կերակուր ու դեղորայք եյին ուղարկում։

Տասն որից հետո հայրս առողջացավ։

Նա ինձ ասաց.

— Բախտիար, այդ ֆռանգը մեր ալեմների կարծիքով կեղտոտ գյավուր ե, բայց չե՞ վոր նա մեզ փրկեց, մինչդեռ մեր մուսուլմաններից և վոչ մեկն ամբողջ քաղաքում մեզ չօգնեց։ Իմ կարծիքով անհարմար բան կլինի, յեթե մենք նրան մի բան չտանք վորպես վարձատրություն։ Դեռևս մենք մի քանի թուման փող ունենք, վերցրու յերկու թուման և տար իրան տուր և խնդրիր, վոր ավելին չպահանջի, վորովհետև մեր միջոցները չեն ներում ավելին վճարել։ Ե՛հ, բան ե, ֆռանգը յերկու թումանով չբավարարվի, կարելի յե մի քիչ էլ ավելացնել։ Համենայն դեպս նա հեքիմ Նասիրից վատ չե, իսկ Նասիրն իր ունեցածից մի կոպեկ էլ չի զոհի մեզ համար։

Յես վերցրի յերկու թուման և գնացի ֆռանգ—«սահաբի»[2]) սենյակը համբուրեցի նրա ձեռքը, դրամը դրեցի սեղանին և ասացի։

— Հայրս աղքատ մարդ ե... մենք վոչինչ չունենք... վողորմած յեղեք... ընդունեցեք միայն այսքանը...

Նա ժպտաց։ Նա չհասկացավ, թե յես ինչ ասացի։ Յես էլ նրան չհասկացա։ Ծառաներից մեկը սենյակումն եր. նա թարգմանաբար հաղորդեց սահաբին իմ խոսքերը, հետո էլ նրա խոսքերը հաղորդեց ինձ։ Սահաբն հրամայեց ինձ փեշս բռնել։ Նա փեշս լցրեց մի բուռ

---

1) Ֆռանգ—յեվրոպացի։

2) Սահաբ—տեր։

անանուխի կանֆետ, յերկու Թումանս վերադարձրեց ինձ և բացի դրանից, տվեց ինձ մի վոսկե լիրա[1])։

— Այդ տալիս եմ քեզ հագուստի համար,— ասաց նա։ Այդ բոլորը տարա, տվեցի հորս։ Հայրս բարկացավ վրաս և սկսեց փնթփնթալ։

— Այ քեզ բա՜ն,— ասում եր նա,— այդ ֆռանգը չի ուզում փող վերցնել, այդ դեռ բավական չի, մեզ լիրա ել ե նվիրում։ Լսվա՞ծ բան ե, վոր դյավուրն այդպես բարի բան անի։ Չե՛, այստեղ մի բան կա. անշուշտ նա մեր դեմ մի չար դիտավորություն ունի։ Ի հարկե ունի։

Այդ պահին պարտիզով անցնում եր սահաբի թարգմանը։ Հայրս մոտեցավ նրան և ասաց.

— Ինչու՞ յե սահաբը մեզ փող տվել։ Ի՞նչ ե ուզում նա մեզանից։

Թարգմանը մեզ բացատրեց, վոր սահաբը մեզնից վոչինչ չի ուզում. նա փող ե տվել մեզ նրա համար, վոր մեզ ոգնած լինի, ուրիշ վոչինչ։

— Գնա՛ և հանգիստ կաց։ Վոչնչի մասին մի մտածի,— ասաց թարգմանը։

Սահաբի այգում ելի ուրիշ մարդիկ կային, մենք միասին բարով արեցինք նրանց հետ, դուրս յեկանք այգուց և ուղևորվեցինք քաղաք ու սկսեցինք պատրաստություն տեսնել տուն ճանապարհվելու համար։

Ամենից առաջ գնացինք հնավաճառի խանութը և մի քանի հին շորեր գնեցինք մորս, քրոջս, և ինձ համար։ Այդ բոլորը մեզ վրա նստեց յերեք թուման։ Վորովհետև քաղաքից դուրս լիրան մենք չեյինք կարող մանրացնել, ուստի տվեցինք հնավաճառին, վոր նա մանրացնի։ Հնավաճառը մեծ ուշադրությամբ նայեց լիրային, աչք ածեց մեզ վոտից գլուխ և հարցրեց.

— Վորտեղ եք գտել այս լիրան, կամ ումից եք ստացել։

Մենք պատասխանեցինք, վոր այդ լիրան մեզ մի մարդ ե տվել վորպես վողորմություն։

---

1) Լիրա Իրանում կոչվում ե անգլիական վոսկեդրամը, վորը հավասար ե 1 · ստերլինգի։

Հնավաճառը բարձրացավ իր տեղից, դուրս յեկավ իր «դուքանից»՝ հետն էլ տանելով մեր լիրան։

Ո՞ւր էր գնում նա, մենք չիմացանք, միայն նա մեզ ասաց,—սպասեցեք... հիմա կմանրացնեմ։

Մի քանի րոպեյից հետո նա վերադարձավ, կանչեց մեզ և տարավ շուկայի վերակացուի գրասենյակը։

Մտնելով գրասենյակ, մենք գլուխ տվինք և բարևեցինք վերակացուին։

— Վո՞րտեղից է այս լիրան,—հարցրեց վերակացուն հորս,—վո՞րտեղից ես գտել, ո՞ւր են մնացածները. բոլորը քանի՞ հատ էյին։ Տես, յեթե չխոստովանես ճիշտը, ծեծելով կստիպեմ քեզ խոստովանել։ Դե՛, շուտ, ասա։

— Յռանդն է տվել ինձ այդ լիրան,—ասաց հայրս,—հենց այդ մեկն է վոր կա, էլ ուրիշը չունեմ։

— Ե՛, չի կարելի այս շան վորդուց մի բան իմանալ այսպիսի միջոցներով, հաստատակողի յի, չի ուզում խոստովանել,—ասաց վերակացուն և հրամայեց հորս բանտ տանել և այնքան չարչարել, մինչև վոր խոստովանի իսկությունը։

Յես տեսա, վոր հենց այնտեղ, վորտեղ վերակացուն նըստում էր, մի դուռ կար, այդ դռնով էլ հորս վոչխարի պես ներս հրեցին և դուռը հետևից փակեցին։ Ինձ չբանտարկեցին, վորովհետև յես անչափահաս էյի։

Այս մասին վերակացուն տեղեկացրեց ֆառաշբաշուն, սա էլ իր հերթին՝ փոխ—նահանգապետին, և շուտով յերկու ֆառաշ յեկան և մեզ տարան ֆառաշբաշու մոտ։

Ճանապարհին ֆառաշներն այնպես էյին խոսում, վոր իբր թե մեզ շատ են ափսոսում ու խղճում։

— Խե՛ղճ մարդիկ,—ասում էյին նրանք,—իսկապես մեծ անբախտություն է։ Հիմա աղոթենք աստծուն, վոր նահանգապետը ձեր գլուխը կտրել չտա։ Իսկապես բանն այնպես է, վոր յեթե հրամայի կտրել միայն ձեր ձեռները, կնշանակի մեծ բարություն է արել ձեզ։ Ինչ վոր ճիշտն է ասեք, մի՛ թագցրեք վոչինչ։ Ուրիշ ճար չկա, ձեր փրկությունը միայն դա յէ։ Հույս դրեք միայն նրա վողորմածության վրա։

Յես կյանքումս յերբեք այդպիսի բան վոչ լսել էյի և վոչ

էլ տեսել, այդ պատճառով սոսկացի, յերբ ֆառաշներից նման բան լսեցի։

Յես լալիս էի, հայրս աղոթում էր, լալիս էր և միշտ յերդվում ամեն ինչով ու շարունակ կրկնում էր.

— Այդ լիրան ինձ ֆռանգն է տվել։

Վերջապես մենք յեկանք ֆառաշբաշու մոտ։

— Դե, ասա ճշմարտությունը, ինչպես վոր յեղել է,— ասաց Ֆառաշբաշին՝ նոթերը կիտած, ու հետո ավելացրեց,—ինչ վոր կա բոլորը հավասար կես կանենք, միայն թե ճիշտն ասա։

Հայրս միևնույն պատասխանը տվեց։

Ֆառաշբաշին ձեռքը տարավ-բերեց և այնպես խփեց հորս քիթ ու բերանին, վոր նա իսկույն վայր ընկավ գետնին։ Յես լաց յեղա, դես ու դեն ընկա, աղիողորմ լացով սրան-նրան դիմեցի, վոր օգնեն մեզ, պաշտպանություն ցույց տան հորս։ Բայց ինչպես յերևում էր այդ պաշտոնատանը հավաքած ամեն կարգի յերևելիները—աղաները, սեյիդները, մոլլաները և դրանց նման շատ-շատերը՝ սիրտները քարացած, խիղճները կորցրած՝ չպատասխանեցին ինձ վոչ մի բառով և չօգնեցին մեզ վոչ մի բանով։

Վերջիվերջո մեզ տարան Եմիր-Նիզամի օգնականի մոտ։ Նորից սկսեց նույն հարցուփորձը, և հայրս տվեց նույն պատասխանը։

Փոխնահանգապետը բարկացավ։

Տեսեք պարոններ,—ասաց նա՝ դառնալով այդ պահին այդտեղ ներկա յեղող քաղաքի յերևելիներին,—թե ինչ շանվորդիք են այս գյուղացիները. անպայման դրանք ուզում են, վոր մարդ դիմի ծեծի և ստիպողական միջոցների։

Հետո նա դարձավ հորս.

— Ի՞նչ է, առանց ծեծի ճշմարտությունն ասել չե՞ս կարող։ Չե՞ս ցանկանում պատվով տալ այն, ինչ վոր քեզնից պահանջում են և ստանալ օրենքով քո հասանելիք բաժինը։

Ներկաները հավանություն տվեցին.

— Ճշմարտությունն եք բարեհաճում խոսել,—ասացին նրանք կեղծավորաբար և շողոքորթորեն։

Այնուհետև հայհոյանքի տարափ տեղաց հորս գլխին, իսկ հայրս առաջվա պես տալիս էր կարճ պատասխանը։

Փոխնահանգապետը ձայն տվեց ու կանչեց Ֆառաշբաշուն։

— Կալանավորեք այս էրվածի զավակին,—ասաց նա,— հարկադրեցեք ծեծի միջոցով խոստովանել, իսկ տղային ազատ թողեք։

Ֆառաշները հորս ծեծելով քաշ տվին բանտ, իսկ ես խելքս կորցրածի պես, վազեցի ֆռանգի տունը։ Լացով պատմեցի նրան լիրայի պատմությունը և այն բոլորը, ինչ որ մենք քաշեցինք այդ լիրայի պատճառով։

Ֆռանգը կանչեց իր մոտ յուր խոհարարին։ Նա էլ ֆռանգ էր և պարսկերեն լավ խոսել գիտեր։ Սահաբը նրան մի բան ասաց՝ թե ինչ ասաց, ես չհասկացա, և ինձ էլ հրամայեց նրա հետ գնալ։

Մենք հասանք շուկայի վերակացուի գրասենյակը։ Ես կանգնեցրի խոհարարին ու ասացի.

— Ահա սա մեզ կալանավորեց. խոսեք սրա հետ, կարող է դա մի բան անի։

Խոհարարն ուշադրություն չդարձրեց ասածիս վրա և ինձ առաջ տարավ։

Հասանք ֆառաշբաշու գրասենյակը։ Ես նորից ասացի։

— Ահա այստեղ է ֆառաշբաշին։ Ամենամեծը սա է. ամեն ինչ սրա ձեռքին է։ Խոսեք դրա հետ մեր մասին։

Խոհարար Ֆռանգը դարձյալ ոչ մի ուշադրություն չդարձրեց իմ խոսքերին։ Ես արդեն հուսահատվում էի, իսկ ֆռանգը շարունակ ինձ առաջ էր քաշ տալիս։ Անցկացավ նույնիսկ և փոխնահանգապետի գրասենյակը։ Ես սարսափեցի։ «Ո՞ւր է տանում այս մարդը ինձ», մտածում էի ես։ Իսկ խոհարարը ձեռքս ամուր բռնած՝ տարավ ուղիղ Էմիր Նիզամի ընդունարանը։ Քիչ էր մնում սարսափից խելագարվեի։

Ով զարմանք... մեկ էլ տեսնեմ, խոհարարը գլխարկը վերցրեց, բարևեց և շատ հանգիստ կերպով նստեց Էմիր Նիզամի աջ կողքին։ Նա էլ մեծ հարգանքով վերաբերվեց խոհարարին։

Խոհարարն ասաց.

— Կոնսուլն ուղարկում է ձեզ իր վողջույնը և ասում է,— յես ընծա յեմ տվել այս յերեխային մեկ վոսկի լիրա, իսկ ձեր մարդիկը նրա ձեռքից խլել են և բացի դրանից, նրա հորն էլ քաշ են տվել դատարան։ Կոնսուլն ինձ ուղարկել է ձեզ մոտ խնդրելու, վոր դուք շտապ կերպով քննեք այդ գործը, պատժեք շուկայի վերակացուին, փառաշբաշուն և ձեր ոգնականին, այլապես դուք այդ բանի համար անձնապես պատասխանատու կլինեք։

Յես զարմանքից քարացա՝ տեսնելով փռանգ խոհարարի այդ աստիճան հանդգնությունը։ Յես այդ րոպեյին մկան ծակը հազար թումանով կառնեյի, միայն թե փախչեյի այդտեղից, կամ թևեր առնեյի. թռչեյի այդ մարդկանցից հեռու, հեռու...

Յես կարծում եյի, թե Եմիր Նիզամը հիմա կբարկանա և անմիջապես կհրամայի փռանգին, ինձ ու հորս կապել թնդանոթի բերանին ու կրակել, ինչպես կրակել տվեց քեթխուդա Ասադին։ Բայց վո՛չ, Եմիր Նիզամն ասում եր իր ծառային.

— Գնա, այստեղ կանչիր շուկայի հսկիչին, փառաշբաշուն, փոխնահանգապետին և նույնպես այս տղայի հորը—Ալլադադին —բանտից բերեք այստեղ։

Մի քանի րոպեյից հետո բոլորն էլ ներկայացան նահանգապետին։

Ամենից առաջ քննեցին շուկայի վերակացուին։ Նա վոչինչ չկարողացավ պատասխանել, խելքը գլխին մի բան չասաց ու ամբողջ մեղքն աշխատեց գցել հնավաճառի վրա։ Անմիջապես փառաշ ուղարկեցին հնավաճառին կանչելու։

Հնավաճառն յեկավ։

Եմիր Նիզամը պահանջեց նկարագրել գործի բոլոր մանրամասնությունները։

— Դա իմ պարտականությունն եր. հայտնել ուր հարկն է,— ասաց հնավաճառը,— յեթե չհայտնեյի, ինքս պիտի պատասխանատվության կանչվեյի իշխանության կողմից։

Մինչդեռ սրանք աղմկում եյին, բացատրվում ու վիճում, փռանգ խոհարարը վոտքը գետին զարկեց և բոլորին էլ հայհոյեց։

Այդ ժամանակ Եմիր Նիզամն արձակեց իր հրամանը։

— Հնավաճառին և շուկայի վերակացուին փայտի հարվածներ տալ, ֆառաշբաշուն տուգանել և յենթարկել տնային կալանքի, իսկ փոխնահանգապետին պաշտոնանկ անել։

Այնուհետև նահանգապետը ներողություն խնդրեց ֆռանգից, հորս հինգ ղռան վոսկեդրամ տվեց և ավելացրեց,— յեթե ցանկանում եք, կարող եք ձեր յերեխային ել թողնել ինձ մոտ. յես նրան լավ դաստիարակություն կտամ։

Հայրս պատասխանեց, վոր յերկու-յերեք որից հետո ինձ կբերի և կհանձնի նորին գերազանցության խնամքին։

Այսպես ուրեմն մենք ֆռանգի վողորմածությամբ ազատվեցինք և անմիջապես սկսեցինք պատրաստություն տեսնել տուն վերադառնալու համար։ Գնումներ արինք, տան համար ինչ վոր պետքն եր առանք պատրաստեցինք։ Հայրս շտապում եր, վոր գնանք ու շուտ վերադառնանք. վորպեսզի ինձ բերի Եմիր Նիզամի մոտ նոքարության[1]) տա։ Ճանապարհվելուց առաջ գնացինք ուստա Ալուն մնաս բարով անելու։

Յերբ արդեն Ալու մոտն եյինք, հայրս պատմեց նրան իր մտադրության մասին և հարցրեց նրա խորհուրդը։

Որհնվի նրա հերը, լավ մարդ եր, շատ շնորհակալ եմ նրանից։ Յերբ հորս մտադրության մասին լսեց, ասաց.

— Դե Եմիր Նիզամի մոտ սիրուն տղաներ շատ կան։ Նա այդ բանում հայտնի յե։ Տղաներ շատ ե սիրում։ Ձեր տղան թեև աչքի վրա հատ ունի, բայց և այնպես գեղեցիկ ե, այնպես վոր յեթե ձեր վորդու համար անպատվություն եք ցանկանում, այդ ել ձեր բանն ե, թե չե...

Հայրս, կարծես, տեղն ու տեղը քարացավ։ Մեր քուրդ ժողովրդի հասկացողությամբ անպատվությունն ավելի վատ ու ծանր բան ե քան հացից ու ապրուստից իսպառ զրկվելը։ Հայրս ձեռք քաշեց այդ մտքից։ Մենք անմիջապես ճանապարհվեցինք դեպի Զոմ-Զոմալ։

Յերբ մենք մոտեցանք ուղեկալին, մաքսատան ծառայողը նայեց մեր իրերը և հին շորերի ու վերմակի համար պահանջեց մեկ ղռան մաքս։ Հայրս տվեց։ Ղարասուի կամուրջի մոտ

1) Նոքար—ծառա։

ինչ վոր մարդիկ փակել էյին մեր ճանապարհը և պահանջում էյին ուղեհարկ. հայրս տվեց ելի մեկ ղռան։

Սիախ-բիդ գյուղաքաղաքի մոտերքում մեզ կանգնեցրին յերկու զինված մարդիկ։

— Ճանապարհի պահպանության համար տուրք վճարեք՝ մենք «ղարասուրաններ ենք»—սուրաժնիկներ,— ասացին նրանք։

Ստիպված նրանց էլ մի ղռան տվինք։

Յերեկոյան մենք իջևանեցինք Հաջիաբադում։ Հայրս հոգնել եր, ուզեց քնի։ Նույն ղարասուրանները հորս գլխատակից թռցրել էյին գիշերը մի զույգ տուֆլի։

Առավոտյան պահանջեցինք, վոր նրանք վերադարձնեն տուֆլիները, բայց տուֆլիների փոխարեն մեզ հայհոյեցին և վզակոթներիս մի լավ տվին։ Մի բան էլ մենք մնացինք պարտք։ Ստիպված էյինք ձեռք քաշել տուֆլիներից։

Մենք անցանք Բիսհիթունով։ Այնտեղ էլ կամուրջի մոտ մի ղռան վճարեցինք ղարասուրաններին։

Այսպես թե այնպես տուն հասանք։ Տուն բերինք, հասցրինք չորս թուման փող, մի քանի կտոր հնամաշ հագուստներ և մի կիսամաշ վերմակ։ Հարևանները հավաքվեցին մեր շուրջը. նայում էյին նախանձով մեր բերած իրերին. զարմանում էյին մեր հաջողության և ճարպիկության վրա։

Մեզ ասացին, վոր մեր գյուղացիներից շատերն էյին գնացել մշակություն անելու, բայց նրանց բոլոր աշխատանքը ժուլիկներն են տակով արել կամ ձեռքներից խլել են տեղի կառավարիչներն ու «բժիշկ»—հեքիմները։

Յեկավ նույնպես քեթխուդան, բարևեց և նստեց։ Հայրս նրա համար դանակ ու մի թաշկինակ եր առել նվեր։ Տվեց նրան և պատմեց մեզ հետ պատահած արկածների մասին։

Քեթխուդան ասաց.

— Բախտդ բանում ե ախպեր։ Համ փռանգը քեզ պրծացրել ե նեղ տեղից, համ էլ սաղ սալամաթ տուն ես վերադարձել։ Բայց ամենագլխավորն այն ե, վոր դու այս ժամանակամիջոցում այստեղ չեյիր, դու շատ գոհ պիտի լինես։ Քո բացակայության ժամանակ մեզ մոտ հյուրեր յեկան։ Մի անգամ Եմիր Նիզամի ողան յեկավ, մի անգամ աղջիկը յեկավ իր մարդու հետ,

մի քանի անգամ էլ նրա սպաներն յեկան։ Զբոսանք սարքեցին։ Դրանց գալուց առաջ, ամեն անգամ հայտնվում էր շաթիր Աբդլլան և լուր էր տալիս նրանց գալու մասին։ Գյուղում էլ հավ չթողին, բոլորը մորթեցին, բացի դրանից, դեռ սուրսաթ[1]) էլ պահանջեցին՝ վորից կանխիկ դրամով, վորից հացահատիկով, իսկ մատաղացու յեզան փողն էլ են գլխից բռնագանձեցին Այստեղից հյուրերը գնացին Դինավեր—այնտեղի խաների մոտ։ Հետո լսեցինք, վոր այդ գյուղում բոլորին էլ ծեծել են մեծից սկսած մինչև փոքրը։ Գյուղում վոչինչ չեն թողել. վոչ վոչխար, վոչ հավ, վոչ յուղ։ Ինչպես պատմում են, իբր թե գյուղացիք իրանց պատրաստած ու հրամցրած ճաշերի հետ փող էլ են նվիրել հյուրերին, վորպեսզի հյուրերը բարեհաճեն պատվել գյուղացիների աղուհացը, ուրիշ խոսքով, գյուղացիք մի տեսակ «դիշ-քիրասի»—«ատամի վարձ» են տվել աղաներին։ Վորպեսզի աղան դժգոհ չլինի, գյուղացիք նվիրել են մի հատ ձի։ Սովորությունից շեղվել չի կարելի, հոգիս։ Ապա փորձիր շեղվել, կամ տուգանք կտաս, կամ մորակ կուտես, և կամ թե չէ, բանտ կընստես։

Այդ յերկու որը մեր գյուղն յեկավ մի անծանոթ Մոլլա, վորին մեր քեթխուդան վարձեց իր տղայի համար ուսուցիչ Յես էլ խնդրեցի հորս, վոր թույլ տա սովորեմ նույն մոլլայի մոտ։ Վորքան էլ այս բանը դժվար էր հորս համար, այնուամենայնիվ նա թույլ տվեց։

Նովրուզի տոնից մի քանի որ առաջ մեզ մոտ յեկավ գավառապետի զուլամը «լրագրային փող» գանձելու հրամանով։ Այդպիսի տուրք մեր Քրդստանում էլ գանձում էյին, բայց յես միշտ էլ չեմ կարողացել հասկանալ, թե դա իրոք ինչ տուրք է և ինչ նպատակով է գանձվում։ Այս հարցն ինձ համար պարզելու համար դիմեցի ուսուցչիս—մոլլային։

Մոլլան վորպես փորձված և «գիտակ» մարդ, այսպես բացատրեց մեզ՝ աշակերտներիս։

— Յերեխաներ,—ասաց նա,—«լրագրային տուրք» է կոչ-

1) Սուրսաթ—արտակարգ տուրք է այն անցնող—դարձնող անձանցպահպանության համար, վորոնք պետության խնամքի տակ են գընըվում։

վում այդ զանձվող տուրքն այն պատճառով, որ մեզնում կառավարական մի լրագիր կա «Իրան» անունով, որի մեջ շատ ու շատ լավ բաներ են գրվում։ Օրինակ—գրում են, թե ինչպես է շահը գնացել Զադ-րուդ վորսի և վորքան վորս է սպանել, վո՛ր նահանգապետին է պաշտոնանկ արել և ում է նշանակել նրա փոխարեն, ի՞նչ նոր կին է առել, կամ ինչպիսի նոր պալատ է շինել տվել իր համար։ Այդ լրագրում տպագըրվում են «բանաստեղծների իշխան» Մելիք-Օշ-Շոհարի գովասանական վոտանավորներն ու պատմվածքները Զիլ-Ոս-Սուլթանի, Թագաժառանգի և Թագավորազների գործերի մասին, վորպեսզի բոլոր մուսուլմանները միասին իմանան, թե ինչպիսի քաջագործություններ են կատարել նրանք։ Այդ թերթն ուղարկում են բոլոր նահանգապետներին՝ ստանալով նրանցից յուրաքանչյուր օրինակի համար հինգ ղռան։ Դե նահանգապետներն էլ հո չեն եկել իրենց նահանգում մեղքեր քավելու, իրենցից ստացածը նրանք ժողովրդից են պահանջում։ Հենց վոր նոր տարին սկսվում է, մեր նահանգապետը մարդ է ուղարկում լրագրի դրամները ստանալու գավառապետից ու խանից։ Խանն ու գավառապետն էլ պահանջում են իրենց յենթակա քեթխուդաներից, իսկ սրանք էլ՝ գյուղացիներից։ Յուրաքանչյուր գյուղ այդ տուրքը վճարում է իր շնչերի թվի համեմատ։

Յես նոր միայն հասկացա բանի էյությունը։ Յեվ իրոք այդ ղուլամն իջեւանեց քեթխուդի տունը և պիտի մնար մի քանի որ, մինչև վոր ավարտեր իր գործը։

Այդ ղուլամի ընդունելության ծախսերը, լրագրի վճարը, նույն ղուլամի աշխատավարձը քեթխուդան անշուշտ բարդեց գյուղացիների վրա։ Այդ բոլորի համար մեր գյուղից ստացվելիք գումարից հորս բաժին ընկավ հինգ ղռան։

Անցավ սրանից մի քանի որ, այս անգամ էլ գյուղն յեկավ Թոփչի—Թնդանոթաձիգ զինվոր՝ առյուծի ու արեգակի փայլուն զինանշանը գլխարկին ու զինվորական համազգեստով։ Համազգեստն այնքան հին էր ու խունացած, վոր չէր կարելի վորոշել, թե ինչ կտորից է կարած նա։ Մաշված, տրորված չաքմաները հագին, նշենու դագանակը ձեռքին՝ նա մոտեցավ քեթխուդի դռներին, դուռը ծեծեց և պահանջեց «խանվարին»։

Ինչպես միշտ, այս անգամ էլ հետաքրքրությունս շարժ-

վեց, և յես նորից կպա մոլլայի ոձեքից, վոր նա ինձ բացատրի, թե ինչ բան է «խանվարի»-ն։

—Ա՛յ պատիկ,—ասաց Մոլլան,—դու վոչինչ չես հասկանում։ Ինչ արած... վոր այդպես է, այդ էլ կբացատրեմ։

«Խանվարին» այնպեսի մի տուրք չի, վոր պաշտոնական ձևով գանձվի, և այդպիսի տուրք պետական մատյաններում կամ ցուցակներում նշանակված էլ չի, միայն վճարելը պարտադիր է։ Վորպեսզի Թոփչիները տոներին քաղաքում նահանգապետին գլխացավանք չպատճառեն իրանց բաժինը պահանջելով, նա էլ հրամայում է տոնական նվիրատվություն հավաքել գյուղերում Թոփչիների օգտին, վորքան վոր կարող են։ Ահա քեզ «խանվարի»։ Շատ պարզ բան։ Այս Թոփչին այսոր յեկել է մեր գյուղը Նովրուզի տոնի առթիվ իր «խանվարին» հավաքելու։

Քեթխուդան հյուրասիրեց Թոփչուն, յերեք ղռան փող տվեց և ճանապարհ դրեց։ Խեղճ հորս բաժին ընկավ դարձյալ յերեք ղռան։

Այսպես թե այնպես, վրա հասան Նովրուզի տոները։ Այդ օրը մենք փլավ յեփեցինք։ Փլավը գյուղացոց համար միակ բավականությունն է։

Տոնի հետևյալ օրը նահանգապետի ղուլամն յեկավ. թե «ճնճղուկի տուրքը» տվեք։ Ավելի ճիշտն ասած՝ նա «Թռչունների տուրք» ասաց։ Յես դարձյալ բան չհասկացա, թե ինչ ասել է ճնճղուկի կամ թռչունների տուրք, ուստի նորից գնացի մոլլայի մոտ։

— Այդ տուրքը պատմական ծագում ունի,—ասաց մոլլան։ —Յերբ Նահատակ շահը[1]) գնաց արտասահման, նա այնտեղ տեղեկացավ, վոր արտասահմանյան փադիշահներն իրանց հպատակներին արգելում են գարնանը թռչուններ սպանել, վորովհետև այդ ժամանակ թռչունները ձագեր են հանում, կերակրում, մեծացնում նրանց։ Յերբ շահը վերադարձավ Իրան, նա հրամայեց, վոր նահանգապետներն ամեն տեղ սուրհանդակ ուղարկեն հայտարարելու գյուղացիներին և առհասարակ պետության

1) Նահատակ-շահ կառավարական շրջաններում անվանում են սպանված Նասր-Եդ-Դին շահին։

ամեն կարգի հպատակներին, վոր ընդհանուրի շահն ու բարիքն ի նկատի ունենալով՝ արգելվում է թռչունների գարնան վորսը։ Յեվ այն օրից դես՝ ամեն գարնան սկզբին նահանգապետները սրբությամբ կատարում են նորին մեծության—շահի—հրամանը։ Սուրհանդակները գնում են գյուղերն այդ բանը հայտարարելու, և գյուղացիք էլ պարտավոր են այդ սուրհանդակների ծախսերը հոգալ։

Այս անգամ էլ հայրս վճարեց յերեք ղռան։

ԳԼՈՒԽ ՋՈՐՐՈՐԴ

ՔՈՉՎՈՐՆԵՐԻ ՄՈՏ

Նախ համառոտակի պատմեմ, թե ինչպես էյինք ապրում Զոմ-Զոմալուում։ Ինչպես արդեն ասացի, այս գյուղում մեզ հատկացրին յերկու խրճիթանման տնակներ, վորոնց «քյաֆար» էյին ասում։ Այդ խրճիթների հատակը մի ամբողջ զար ցածր էր գետնի մակերևույթից. վորպեսզի փոսի պատերից հողը ներս չթափվի, չորս կողմից՝ մինչև գետին պատերը շարված էյին քարով։ Փոսի անկյուններում դիմհար սյուներ էյին տնկված, վորոնց վրա ձողեր էյին դրված։ Կտուրները ծածկված էյին մարթակներով, իսկ պատերը հյուսված էյին յեղեգով ու խոտով։ Հեռվից մեր խրճիթները հիշեցնում էյին քոչվորների «սև վրաններ»։ Խրճիթներից մեկում մենք էյինք ապրում, իսկ մյուսը ծառայեցնում էյինք վորպես վառելիքի պահեստ։

Այժմ մենք տավար չունեյինք, վոր նրանց աղբից ձմեռվա համար վառելիք պատրաստեյինք, դրա համար էլ մայրս գնում էր հարևանների բակերը մաքրում էր, քերում էր նրանց գոմերը, նրանց տավարի աղբից աթար էր թխում, վոր ձմեռը վառելիք ունենանք։ Թխած աթարի ցերկու յերրորդը տալիս էր տավարատիրոջը, իսկ մի յերրորդը բերում էր տուն։

Հայրս պարապ նստել չեր սիրում։ Վորպեսզի համ ապրուստ հոգա, համ էլ մի բանով զբաղվի, ձմեռվա ընթացքում, ամեն օր գնում էր մերձակա սարը և օրական մի շալակ փայտ էր բե-

րում ու դարսում բակում։ Յերբ բավականաչափ փայտ էր կուտակվում, հայրս խարույկ էր անում, փայտածուխ էր պատրաստում, հետո ծախում էր սրան-նրան և այդպիսով օրական յերկու յերեք դրան փող էր վաստակում։

Մայրս միաժամանակ աշխատում էր նաև քեթխուդի տանը, այնտեղից նա ստանում էր օրական մի աման պանրի շինճուկ կամ մածնաթան։

Տան թոնիրը հաճախակի վառում էյինք, և հենց վոր խրճիթը մի քիչ տաքանում էր, պատերի արանքներում ու ճեղքերում բույն դրած ոձերն ու թունավոր միջատները հարձակվում էյին մեզ վրա։ Ստիպված էյինք ահագին պայքար մղել նրանց դեմ։ Կամ մի բանով վախեցնում էյինք, կամ ուղղակի՝ սպանում։ Այդ ձևով էյինք պահպանում մեր գոյությունը. և կարծես մենք վոչ թե տան մեջ էյինք ապրում, այլ պատսպարված էյինք քարանձավներում կամ թաքնված էյինք գազանների վորջերում։

Բանն այն է, վոր այստեղ էլ մեզ հանգիստ չէյին տալիս։ Խեղճ հորս ամեն որ քաշ էյին տալիս այս ու այնտեղ՝ աղա--կալվածատիրոջ համար ձրի աշխատելու։

Վորքան էլ ծանր էր մեր ընտանիքի կյանքն ու դրությունը, այնուամենայնիվ յես դասերս չէյի թողնում, ընդհակառակը, ուշադիր կերպով հետևում էյի դասերիս և արագ առաջադիմում էյի։ Արդեն գրում և կարդում էյի։ Սովորեցի նույնպես հաշվել։

Մոլլա վարժապետս ասում էր, վոր շուտով կսկսեմ կարդալ Հաֆըզի և Սաադի[1]) գրքերը։

Այդ որերին էր, վոր մեր գյուղով անցնում էյին «ջեմհուր»

---

1) Շեմսեդդին Մոհամմեդ Հաֆըզ—նշանավոր լիրիկ բանաստեղծ, վորն ապրել է 1300—1389 թվականը։ Բազմաթիվ «Գազելների» հեղինակ, վորոնք համաշխարհային հռչակ են ստացել։ Այդ գազելներից շատերը յերգվում են Իրանում դերվիշների կողմից։ Համարյա յուրաքանչյուր հազիվ գրագետ պարսիկ անգիր գիտե այդ գազելները։

Մյուսը—Շեյխ Մուսլիհեդդին Սաադին, նույնպես ականավոր պարսիկ բանաստեղծ է, վորն ապրել է 1195—1226 թվականը գրել, է բազմաթիվ վոտանավորներ և մի մեծ Դիդակտիկ պոեմ՝ «Գյուլիստան» անունով, վորի մեջ արտացոլված է պարսիկ ժողովրդի իմաստությունը։ Այդ պոեմի առանձին հատվածները կամ քառյակները կրկնվում ու գործ են ածվում Իրանում առածներին համազոր։

և «գուլի» ցեղերի քոչվորները։ Դրանք ամեն տարի աշնանը սարից իջնում են դաշտ—այսինքն ամառանոցից գնում են իրենց ձմեռանոցները։ Ուրեմն, այդ քոչվորներն եյին, վոր իրենց ամառային կայանից—Համադանի հանդիպակած լեռնային շրջանից գալիս-անցնում եյին Բյալլուր ու Սենջար։ Քոչվորներից մեկը մոտիկ ծանոթ եր մեզ։ Նա շատ խնդրեց հորս՝ թույլ տալ ինձ միանալ իրենց քոչին վորպես չոբան՝ խոստանալով տարեկան տասը թուման փող, հագուստ և սնունդ։

Հորս համար դժվար եր այդ բանը։ Չե՞վոր միակ տղան եյի յես։ Նա յերկար ժամանակ տատանվում եր, չեր իմանում՝ համաձայնվի՝ թե վոչ։ Մայրս ավելի շատ եր դեմ ընկնում։ Նա ավելի լավ եր համարում մեռնել, քան թե բաժանվել ինձանից։ Բայց չքավորությունն ու կարիքը ստիպում են մարդկանց շատ բան անել իրանց կամքին հակառակ։ Այդ մեր ծանոթ քոչվորն ու հայրս համաձայնության յեկան, վոր յես մնամ նրանց մոտ և վորպես չոբան ծառայեմ ութ ամիս։ Այդ ժամանակամիջոցում հորս վճարելու եյին վեց թուման։ Յես ստանալու եյի սնունդ և հագուստ։

Պայմանավորվելուց հետո՝ հայրս ու մայրս լաց ու կոծով ինձ ճանապարհ դրին։ Սակայն այդ ժամանակ մի հաջող պատահականություն տեղի ունեցավ։ Իմ վարժապետ-մոլլան չուզեց այլևս մնալ մեր գյուղի քեթխուդի մոտ, այլ վարձվեց քոչվորների քեթխուդի կողմից ու միացավ մեզ՝ ցանկություն ունենալով գնալ «Գյարմսըր» այսինքն՝ տաք յերկիր։

Ուրախությանս չափ չկար։ Կարծես հորս էլ մորս էլ մոռացա։

Այսպիսով յես էլ դարձա քոչվոր, վորոնց կյանքն ավելի վատ եր՝ քան մեր գյուղացիների կյանքը։ Ամեն ինչ բարձել եյին իրենց յեզներին, եշերին ու մատակ ձիաներին, առաջներն արած վոչխարի սուրուներն ու տավարի նախիրները, աշնանային անձրևի տակ նրանք ճամբա եյին անցնում՝ կտրելով որական յերկու յերեք փարսախ տարածություն։ Յերեկոյան դեմ նրանք բաց եյին անում իրենց սև վրանները, կրակ եյին անում և կերակուր եյին պատրաստում։ Վրանի կեսը լցված եյին լինում շներով, թույլ հորթերով, նորածին գառներով և քուռակներով։

իսկ մյուս կեսում՝ խարույկի շուրջը հավաքվում եյին տղամարդիկ, կանայք ու յերեխաները։ Տղամարդիկ, միաժամանակ, մինչև արևածագ, ամբողջ գիշերը հերթապահություն եյին անում, վոր չլինի թե գողեր մոտենան վոչխարներին կամ հավերին։

Քոչվորների հետ ձմեռանոց եր գնում նույնպես Համադանի խանի — Եմիր Ավղանի — ծառան՝ վորպես խանի ներկայացուցիչ, քանի վոր խանն այդ ցեղերն առել եր իր հպատակության և հովանավորության տակ։ Խանի այս ծառան կատարում եր «ելխանի», այսինքն ցեղապետի պարտականությունները և հերթով հյուր եր գնում ցեղի տոհմերի և նրանց գերդաստանների մոտ։ Ամեն մի գերդաստան ուներ իր քեթխուդան, վորի վրանումն ել ապրում և հյուրասիրվում եր խանի ծառա «ելխան»-ը։ Ապրելով մեկի մոտ տասն որ, մյուսի մոտ ել ավելի, մինչև իսկ մի ամիս, այնուհետև անցնում եր մի ուրիշ գերդաստանի մոտ։ Այսպիսով բոլորից ել ընդունում եր «հյուրասիրություն»։ Նրա ապրուստի կամ պահպանության ծախսը քեթխուդան բարդում եր բոլորի վրա։ Դա համարվում եր մի տեսակ լրացուցիչ վճար այն վարձատրության, վորն այդ մարդը սովորաբար ստանում եր ի պաշտոնե։

Վերջապես յերբ մոտեցանք Քիրմանշահի մերձակա կամուրջին, ֆինանսական վարչության և նահանգապետի ձիավորները մեր ճանապարհը փակեցին։ Դրանց միացան նույնպես կարասուրաններն ու մաքսատան ծառայողները։ Դրանք բոլորն ել մեզնից փող եյին պահանջում։ Դեռ լավ եր, վոր այդ ժամանակ Քիրմանշահի նահանգապետը Հեսամ-Ոլ-Մոլքն եր[1], այնպես վոր մեր ճամբան կտրողները չկարողացան քոչվորներին շատ նեղել։

Ֆինանսական վարչությունը բռնագանձեց յուրաքանչյուր նախիրից յերեքական թուման փող և մեկական վոչխար։ Ցեղերի համար առանձին վճար պահանջեցին։

Վճարեցինք նույնպես մաքսատնը և կարասուրաններին։ Իսկ նահանգապետի ֆառաշին ել առանձին գումար տվինք, վորպես գործուղման վճար։

---

1) Հավանորեն քոչվոր ցեղերից մեկի խանը։

Այս բոլորից հետո՝ վերջապես առաջ շարժվեցինք։ Իմ տանտեր Մուրադը գիշերը պատմում էր կնոջը, վոր ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վոչխարի համար վճարել է մեկական ղռան զանազան տուրքեր։

Քիրմանշահն էլ անցանք և այնուհետև առաջ էինք գնում կայանե կայան հանգիստ առնելով։ Յեվ ամեն անգամ մեզ հանդիպողներին քոչվորներն բավարարում էին մեկին վոչխարով, մյուսին չորթանով, յերրորդին պանրով, չորրորդին բրդով կամ դմակով։ Այս ձևով վերջապես մենք հասանք մեր վորոշած տեղը—Քյալխոտի Դավուդ խանի հողը։ Հետո ինձ համար պարզվեց, վոր այս հողը, վորտեղ մենք էինք գտնվում, առաջներումը յեղել է «Ղոռուղ», այսինքն՝ ոգտագործությունից դուրս գտնվող արոտատեղի, բայց վերջին ժամանակներում այդ հողերն էլ անցել են պետական ոգտագործելի հողերի ցուցակի մեջ։ Այստեղ հողեր են ունեցել նաև մասնավոր մարդիկ։ Սակայն Դավուդ խանն ուժի միջոցով այս բոլոր հողերը զանազան ժամանակ ու զանազան պատրվակներով գրավել է և դարձրել է իր սեփական յուրդը, այսինքն իր ցեղի քոչատեղը, և այժմ քոչվորներն այդտեղ անասուն արածացնելու համար պիտի կապալադրամ վճարեն իրեն՝ Դավուդ խանին։ Յերբ մենք յեկանք Դավուդ խանի «Ղոռուղը», քոչվորների տանուտերները հավաքվեցին խորհուրդի. մի քանի վոչխար ու մի ջորի առան և գնացին նրան տեսության։ Յերեկոյան գնացողները վերադարձան և պատմեցին, վոր Դավուդ խանը խոստացավ մարդ ուղարկել քոչվորների մոտ Ղոռուղի կապալավարձի խնդիրը հարթելու։ Յեվ իսկապես, առավոտյան մեզ մոտ մի խումբ ձիավորներ յեկան։ Նրանք ամբողջ Ղոռուղը բաժանեցին ցեղի գերդաստանների միջև՝ նշանակելով կապալավարձ մեկական ղռան յուրաքանչյուր անասունից Դավուդ խանի ոգտին, տասնական շահի իր վորդու ոգտին, հընգական շահի իր վեզիրի և մունշու ոգտին և մեկական վոչխար էլ յուրաքանչյուր սուրույից խանի մնացած մարդկանց ոգտին։

Հասկանալի յե, վոր խանի կողմից յեկած ձիավորները պիտի աշխատեին իրանց ոգտին էլ մի բան գզել մեզնից, ուստի և սկսվեց մի իսկական թալան։

Ի՞նչ արած, հարկավոր էր հնազանդվել։ Եթե ցեղը հրաժարվեր վորևե բան տալ այդ ձիավորներին, ավելի վատ կվարվեյին։ Ժամանակն էլ վատ էր։

Քիրմանշահից լուր յեկավ, վոր նահանգապետին պաշտոնանկ են արել և նրա տեղ նշանակված է Քաշանից՝ Եկբալ-Եդ-Դովլեն։ Այս նոր նշանակված նահանգապետը մի շարք տիտղոսներ ուներ․ նա համարվում էր Քիրմանշահի կառավարիչ, յերկու Իրաքների[1]) սահմանների պաշտպան ու հովանավոր և այլն։

Նոր նահանգապետն արդեն յեկել էր իր պաշտոնատեղին։ Դավուդ խանի սրտումը դող ընկավ։—Նա պիտի մեծարժեք ընծաներով նոր նահանգապետի աչքը քաղցրացներ իր վրա։ Իր ցեղից յերեք հազար թուման փող վերցրեց, տասը ջորի և ուղարկեց Եկբալ-Եդ-Դովլեյին՝ վորպես ընծա։ Դրանով նահանգապետի ագահությունը չմեղմացավ։ Նա իրար հետևից հրամաններ էր ուղարկում և պահանջում էր, վոր Դավուդ խանն ինքն անձամբ գնա Քիրմանշահ և ներկայանա նահանգապետին։ Դավուդ խանը խուսափում էր այդ բանից։ Նա պատճառաբանում էր, ինքն այժմ քոչվոր է, և քոչվորի համար ամոթ է, վոր գնա քաղաք և նստի չորս պատի մեջ։ Միևնույնն է, ինքն ամբողջովին յենթարկվում է կառավարությանը և պատրաստ է վճարելու բոլոր հարկերը, այլևս ի՞նչ կարիք ունի քաղաք գնալու և նահանգական կառավարիչին ներկայանալու։

Այդ պատճառաբանությունն էլ չոգնեց։ Հենց այդ ձմեռ Եկբալ-Եդ-Դովլեն ինքն յեկավ «Գյարմսըր»—ձմեռանոց իր խուզարկու վորսի շներով, բազեներով, ծառաներով և այլն։ Նահանգապետն յեկել էր ձմեռանոց համ զվարճանալու, համ էլ փող հավաքելու, ավելի շուտ՝ փող գջլելու։

Դավուդ խանն իմացավ այդ մասին։ Իր մարդկանց յուր-

---

[1]) Իրաք—Արաբի կամ Արաբական Իրաքը՝ դա նախկին Միջագետքն է, վոր մինչև համաշխարհային պատերազմը պատկանում էր Թյուրքիային, իսկ այժմ պատկանում է Անգլիային. յենթակա Արաբական Իրաքին։ Միջագետքի մյուս մասը կոչվում է Իրաք Աջեմի, այսինքն՝ իրանական Իրաք, վորը Իրանի արևմտյան նահանգներից մեկն է՝ Սուլթանաբադ գլխավոր քաղաքով։

դից դուրս քաշեց, փոխադրեց ավելի ամրացված տեղեր, ապա սկսեց նահանգապետերի հետ բանակցել։ Սակայն վերջիվերջո Դավութ խանը զիջման ճանապարհը բացեց. իրեն յենթակա ցեղի քոչվորներից վերցրեց մի քանի հազար թուման և գնաց Եկբալ-Եդ-Դովլեյի մոտ, վորպեսզի մեղմացնի նրա բարկությունն և ագահությունը, դրանից. բացի իր տուրքերի ապառքները թողնել տա անվճար։

Ո՜, Եկբալ-Եդ-Դովլեն մեծ վարպետ եր ինտրիգներ սարքելու մեջ։ Նա ճարպիկությամբ կարողացավ ցեղերի մեջ տարաձայնություն ու կռիվ առաջ բերել։ Ամբողջ Բյալխոռում ել գերդաստան չմնաց, վորտեղ յեղբայրը յեղբոր, վորդին հոր դեմ դուրս չգար։ Նրա կառավարչության յերեք տարում բազմաթիվ ընտանիքներ քայքայվեցին ու վոչնչացան։ Շատերի կարողությունը կորավ ու վոտնատակ գնաց՝ նրա ճնշման քաղաքականության հետևանքով։

Խոշոր մոլլաները, աղաները և մուշտեյիդները իրենց հակասական հրամաններով ու դատական վորոշումներով նույնպես բավականաչափ նպաստեցին և ուժ տվեցին Եկբալ-Եդ-Դովլեյի վարած քաղաքականությանը։ Այդ բոլորի հետևանքն այն յեղավ, վոր հողային տուրքի ապառքներն ու նոր հարկերը վճարեցին Եկբալ-Եդ-Դովլեյին, և նա բավականին մեծ գումար դիզեց ու հետը տարավ, ի հարկե, այս բոլորը ընծաների, նվերների անվան տակ։

* * *

Ձմեռանոցում յեղած ժամանակ՝ յես յերեկոները գնում եյի մոլլայի մոտ և դաս եյի առնում։ Առավոտյան վոչխարը արոտ եյի տանում. ամբողջ որը վոչխարների հետ թափառում եյի սարալանջերում, նրանց հսկողությունը հանձնում եյի հավատարիմ շներին, ինքս նստում եյի մի ստվերոտ տեղ, հանում եյի գիրքս, սկսում եյի կարդալ և դասերս կրկնել։ Յես սիրում եյի ուսումը և միշտ ցանկանում եյի վոր դասերս անգիր իմանամ, ուստի գիրքս ձեռքիցս վայր չեյի դնում, անընդհատ կարդում եյի և սովորած դասերս շարունակ կրկնում։

Սարերի մեջ ընկած ցածրադիր տեղերում ճահիճներ կային գոյացած, վորտեղ լավ յեղեգ է աճում. այդ յեղեգներից լավերը կտրում եյի և ինձ համար գրիչներ եյի պատրաստում։ Յերկու կապոց գրիչ եյի շինել. մի կապոցը նվիրեցի մոլլա-վարժապետին, վորը դրա փոխարեն ինձ նվիրեց իր հին գրչաբունը։

* * *

Չորս ամիս աննկատելի կերպով անցավ։ Ամառը մոտեցավ։ Արեգակն անխնա այրում եր։ Արոտատեղերի խոտերն արդեն դեղնում եյին։ հարկավոր եր շարժվել դեպի յայլաղները —ամառանոցները։ Մենք ել նույն կարգով շարժվեցինք առաջ և որական մի քանի փարսախ ճանապարհ անցնելով՝ մեր յեկած ճանապարհով նորից յետ գնացինք դեպի սարերը։ Հասանք առաջին կայանին, իջևանելու տեղը ընտրեցինք և սկսեցինք անասուններին արածացնել։ Կարասուրանները դարձյալ առաջվա կարգով ամեն տեղ վերցնում եյին մեզնից նահանգապետի ոգտին նույն տուրքերը, և վոր ամենագարշելին եր, կրկին բռնագանձում եյին արոտատեղի կապալավարձը։

Յեթե մի լավ հաշվապահ հաշվեր, թե մենք վորքան փող եյինք վճարում զանազան առիթներով ու զանազան նպատակներով, դուրս կգար մի հսկայական գումար։

Ղարասուի կամուրջի մոտ կրկնվեց աշունքվա պատմությունը։ Սուրաթում մի քանի որ կանգ առանք, մինչև վոր անասուններին հաշվեցին և ցուցակներ կազմեցին։

Սարը բարձրանալու ճանապարհին, Սիահբիզում անսպասելի կերպով պատահեցի հորս։ Նա չեր համբերել, մինչև մենք տեղ հասնենք. ինքն շտապել եր դիմավորել քոչվորներին, վորպեսզի հանդիպի ինձ։ Նա վազեց դեպի ինձ, գրկեց ու համբուրեց, իսկ յես էլ համբուրեցի նրա ձեռքը։ Թեև յես չորանավարի եյի հագնված, բայց հայրս նկատեց մի տեսակ փոփոխություն իմ մեջ դեպի լավը։ Յես առաջ եյի գնացել ուսմանս մեջ և մտավորապես զարգացել եյի։ Նա մուրադին յերկու բաթման բրինձ եր բերել նվեր։

Հայրս այսպիսով միացավ մեզ և մենք միասին առաջ

շարժվեցինք ու շուտով հասանք Զոմ-Զոմալ։ Ծառայությանս ժամկետը լրացավ։ Մուրադը ռոճիկս վճարեց հորս, բացի դրանից բուրդ տվեց, կովի յուղ տվեց, վորից հետո հրաժեշտ տվինք միմյանց. Նա շարունակեց ճանապարհը քոչի հետ, իսկ մենք վերադարձանք տուն։

Թե ինչպես իմ վերադարձով ուրախացան մայրս ու քույրս, թե ինչպես եյին նրանք պտույտ գալիս իմ շուրջը, ինչպես եյին ուրախությունից թռչկոտում, նկարագրել չեմ կարող։

Սակայն տանը մի բան շատ զարմացրեց ինձ։ Մերոնք հիմա ապրում եյին ուրիշ գյուղում և այժմվա տունն էլ ուրիշ կառուցվածք ուներ քան նախկինը։ Սա իսկական քարաշեն տուն եր, գերաններով ծածկված։ Ունեյինք նույնպես գոմ, վորտեղ կապվում եյին մեր կովն ու չորս վոչխարները։ Յես ապշած եյի մնացել, թե սա ինչպես պատահեց։ Կպա հորս ու հարցրի, թե ով է այս բոլորը նվիրել իրեն, վորտեղից է այս ահագին գույքը։

Հայրս մի յերկար պատմություն արեց։

— Դա գաղտնիք է, վորդիս,—ասաց նա,—բայց քանի վոր դու հետաքրքրվում ես, կասեմ քեզ։ Քո գնալուց հետո մեր տունը ազի մեջ ընկավ։ Առանց քեզ մեզ համար շատ ծանր եր։ Յես չեյի կարողանում հանգստանալ։ Վորպեսզի դրությունս մի քիչ թեթևացնեմ և ձմեռն էլ անգործ չնստեմ, վորոշեցի մեր քեթխուդի հետ մի ընկերովի թեյարան սարքել ճանապարհի վրա։ Թեյի պարագաները—թեյամանը, բաժակները, թիթեղե ինքնայեռը քեթխուդան տվեց, իսկ աշխատանքն էլ ինձանից։ Բացի դրանից, յես ու քեթխուդան մեկական թուման ել դրամագլուխ դրինք։ Յերևակայիր վոր բանները հաջող գնաց։ Այս տարի շատ ուխտավորներ են անցնում մեր գյուղի ճանապարհով։ Համարյա թե ամեն ժամ հինած մորուքով չավուշը[1]) դրոշակը ձեռքին՝ յերևում է գյուղի մեջ և իմաց է տալիս այդ ուխտավորների գալստյան մասին։

Յես էլ խորամանկություն եմ բանեցնում։ Մոտենում եմ նրան քաղաքավարի ու հարգանքով, մի-յերկու բաժակ տաք տաք թեյ եմ մատուցանում և ապա խնդրում եմ.

---

1) Զավուշ—ուխտավորների առաջնորդը։

— Թույլ տվեք,— ասում եմ յես,— ձեր ուխտավորները կանգ առնեն այստեղ և թեյ խմեն։

Զավուշն էլ տեսնում է, վոր յես իրան հարգանք եմ ցույց տալիս և մարդավարի չեմ շարժվում, խնդիրս չի մերժում, իսկույն կարգադրում է ուխտավորներին կանգ առնել, հանգըստանալ և թեյ խմել, վորովհետև սրանից էլ լավ տեղ չեն գտնի թեյ խմելու համար։

Այսպիսով. մի կարճ ժամանակից հետո յես բավականին փող հավաքեցի։ Ցեթե մի քանի անգամ ուրիշներն ինձ մնասներ հասցրած չլինեյին, բանս էլ ավելի լավ կլիներ։

Մի անգամ տաճիկ ուխտավորներ յեկան։ Նրանցից ամեն մեկը յերկու-յիրեք բաժակ թեյ խմեց։ Հետո այս տաճիկները բաժակները դրպանները դրին, ձիերը հեծան ու մնաս բարով... գնացին։

Ցես նրանց հետևից ձայն տվեցի՝

— Հե՜յ, քյալբալայնե՛ր, չէ՞ վոր դուք ուխտավորներ եք, ինչո՞ւ յեք հափշտակում ուրիշի սեփականությունը։ Իմամ Հյուսեյինը ձեր վզին ծանր նզովք կկարդի, Աբուլ ֆազըլը չի թույլ տա վողջ-առողջ վերադառնաք ձեր տները։

Իսկի ուշադրություն էլ չդարձրին վրաս, միայն հասկացա, վոր իրանց լեզվով ինձ անվանեցին շանվորդի ու ձիերը քշեցին։

Մի ուրիշ անգամ Եկբալ-Եդ Դովլեյի մարդիկը յեկան։ Ցես նրանց թեյ ու հաց տվեցի։ Ձու ուզեցին, ձու էլ տվի։ Կերան, խմեցին ու առանց փող վճարելու նստեցին ձիերը, վոր գնան։ Ցես մոտեցա նրանց և խնդրեցի, վոր փողը վճարեն. փողը վճարելու փոխարեն նրանցից մեկը մտրակով խփեց ինձ։ Հետո իջան ձիաներից, ձեռքերս կապոտեցին հետևիս ու ասացին։

— Դե՛, երվածի զավակ, կամ հինգ թուման տուր, կամ մեզ հետ յեկ քաղաք, քո հաշիվն այնտեղ կտեսնենք, դու վիրավորեցիր Եկբալ-Եդ-Դովլեյին։

Ցերբ Քիրմանշահի անունը տվին, և յես հիշեցի նորից, թե ինչ ասել է նահանգապետի վարչատուն, ջանս դող ընկավ։ Մանավանդ յերբ մտաբերեցի թե Ֆռանգն այլևս այստեղ չէ. յեթե մի բան պատահի, ո՞վ պիտի ինձ տիրություն անի և պաշտպանի ինձ։ Իսկույն նրանց տվեցի այդ որվա աշխատած-

ներս—չորեք թուման և յոթեք ղրան։ Դրանով չբավականացան նահանգապետի մարդիկը, վրայից կարան[1]) էլ վերցրին և ելի փող էյին պահանջում, վոր լրանա իրենց պահանջած հինգ թումանը։

Վորքան էլ համոզեցի, թե այլևս յես վոչինչ չունեմ մոտս, ավել բան վճարել չեմ կարող, նրանք չհավատացին։ Կատաղությունից մի քանի բաժակ կոտրեցին, ինձ էլ մի լավ ծեծեցին և ապա հեռացան։

Յես նորից ամանեղեն ճարեցի և շարունակեցի աշխատել։ Աշխատեցի համարյա մինչև Նովրուզի տոները։ Այդ գործում յես ու քեթխուդան տասնյակ թուման փող աշխատեցինք։

Այդ դեռ վոչինչ։ Իմ փող աշխատելու իսկական գաղտնիքը վորդիս, յեթե կուզես, ահա թե ինչումն է։ Առհասարակ յես գործի գնում էյի վաղ, այնպես վոր դեռ ճանապարհներին վոչ վոք չէր յերևում։ Մի որ էլ տնից շատ վաղ դուրս յեկա և ճանապարհով գնում էյի։ Հանկարծ տեսնեմ ճանապարհին մի կապոց է ընկած։ Կապոցը վերցրի և բերի թեյարան, բաց արի, տեսնեմ մեջը յերեսուն թուման փող։ Այդտեղ անկյունում մի փոս փորեցի և փողերը թաղեցի հողի մեջ։ Յերկար ժամանակ ձեռք չէյի տալիս։ Յես այսպես էյի մտածում. հանկարծ դուրս գա, վոր այդ փողերը մի դժբախտ ուխտավորի փողեր են, կամ Եկբալ-Եդ-Դովլեյի մարդկանց փողերն են, աստված վոչ անի, կգան և ամբողջ գյուղը հողին կհավասարեցնեն։ Միշտ այդպես մտածելով՝ թաղած փողերին ձեռք չէյի տալիս։ Վերջապես յես համոզվեցի, վոր բախտն է ուղարկել այդ փողերը մեզ։ Բախտն ուզում է, վոր մեր կյանքը նորից բարվոքվի։ Հանեցի այդ փողերը և նրանցով մեզ համար էժան գնով մի կով առա։ Ճիշտ է, կովը նիհար էր, բայց յես ու մայրդ լավ խնամեցինք, գիշեր-ցերեկ հետևեցինք, և հիմա շատ լավ կով է դառել։

***

Այդ որերին քեթխուդան հորս հետ կռվեց. վերցրեց իր թեյի պարագաները, թեյարանը խափանեց, մեզ էլ իրանց

---

[1]) *Կաբա—վրայի հագուստ, վոր հագնում են Իրանում գյուղացիները արհեստավորները և այլն։*

գյուղից վռնդեց։ Մենք փոխադրվեցինք ուրիշ գյուղ։ Վորովհետև մենք հիմա կով ունեյինք, մեզ թույլ տվին ապրել այդ նոր գյուղում ու մի փոքր տուն էլ հատկացրին մեզ։ Բայց գոմ չունեյինք. վորտեղ պիտի պատսպարեյինք կովը ու վոչխարները։ Էլ չուշացրինք. հորս հետ գործի կպանք։ Ցեխ հողը փորեցի, հայրս ցեխ բռնեց, կավ հունցեց, մայրս թոնիր շինեց, զանազան աքաշներ, կժեր, խմորի համար տաշտակներ պատրաստեց։ Առավոտից մինչև յերեկո մրջյունի պես աշխատում եյինք։

Ցերեկոները յես պարապում եյի իմ դասերով։ Ամեն որ հանդից մի շալակ փուշ եյի բերում. յերբ մթնում եր, այդ փշից քիչ-քիչ գցում եյի կրակի վրա և փշի բոցի լույսի տակ կարդում եյի գրքերս։

Այսպես ապրում եյինք մեզ համար։

Մի անգամ քեթխուդան բոլոր գյուղացիներին հավաքեց, մի նամակ տվեց ձեռս և հրամայեց բարձր ձայնով կարդալ։

Նամակը աղան եր գրել։ Այնտեղ գրված եր. «Քեթխուդա Սեյֆուլլա, յերկար ժամանակ ե, վոր յես վոչ մի տեղ չեմ գնացել։ Այժմս վորոշել եմ իմ մի քանի ազգականներիս հետ գալ գյուղ։ Ձեր գյուղում մի քանի որ կանգ կառնենք՝ վորս անելու և մյուս գյուղերը շրջագայելու համար։ Մեր այս նամակը կարդացեք բոլոր գյուղացիների ներկայությամբ, վորպեսզի բոլորն էլ ուրախանան մեր վողորմած ուշադրությամբ»

Ստորագրված եր՝ Շահվեթ միրզա։

Հենց վոր նամակի ընթերցումը վերջացրի, քեթխուդան անհանգստությամբ ասաց.

— Պետք ե հոգս քաշել պատրաստության մասին։ Ինչ վոր հարկավոր ե, պետք ե հավաքել, առնել պատրաստել։ Նորին բարձրություն շահզադեն[1]) գայլի վարք ու բարք ունի, վոր բարկացավ, բոլորին էլ հենց փայտով կջարդի։

Քեթխուդան իսկույն մի կլոր գումար վորոշեց, բաշխեց բոլոր գյուղացիների վրա և նշանակեց յուրաքանչյուրի տալիք բաժինը, ով ինչով կարող եր՝ հացով, յուղով, հավով, աղով, սո-

---

1) Շահզադե—շահի սերունդից, գահաժառանգ, իշխան և այլն։

խով և այլն։ Մի ձիավոր էլ ուղարկեց քաղաք՝ թեյ, շաքար, մոմ, բրինձ, կերակրի զանազան համեմունքներ գնելու, իսկ ինքն էլ սկսեց մնացած պատրաստությունները տեսնել։

Ցերեկը որ գյուղացիներին կտրեց իրենց սովոր․ կան աշխատանքից․ ստիպեց «սաքու» պատրաստել․ հյուրերի համար, գոմ կառուցել աղայի ձիերն տեղավորելու։ Գերաններով, սյուներով, ծառի ճյուղերով լավ տաղավար պատրաստեցինք հյուրերի համար, մի չարդախ էլ շինեցինք ձիերին կապելու։ Ջրի համար էլ նոր առու անցկացրինք։

Հազիվ էյինք աշխատանքները վերջացրել, մեկ էլ տեսանք, հյուրերն արդեն գալիս են։ Քեթխուդան գյուղացիների հետ մատաղացու յեզ տարավ հյուրերի առաջ։ Ինչպես առաջ Եմիր Նիզամը, այս անգամ էլ շահզադեն թույլ չտվեց յեզը մորթել, իսկ նրա ախոռապետը վերցրեց «յեզան գին» յերկու թուման փողը։ Բայց յերբ շահզադեն տաղավարի առաջ ձիուց իջավ, նրա առաջ վոչխար մորթեցին։ Սովորության համաձայն մորթած անասունի ամբողջ միսը պատկանում է աղայի ձիապանին։ Աղային մատաղ արած վոչխարի միսն ամբողջովին վերցրեց ձիապանը։

Շահզադե-աղայի ավագ խոհարարը յեկավ։ Մեր գնած մթերքը նրան հանձնեցինք ու միաժամանակ խոստացանք էլի բերել յուղ, չորացրած պանիր, մածուն և ամեն բան, ինչ վոր կպահանջի և վորքան կպահանջի։

Տաղավարից քիչ հեռու պատրաստել էյինք աղայի խոհանոցը, վորտեղ անմիջապես դրվեցին ամեն տեսակ պղինձեղեն ու կերակրամաններ։ Ծուխն արագ կեպով սկսեց վեր բարձրանալ խոհանոցից։ Խոհարարն շտապում եր յերկու տեսակ խորոված ու սոուս պատրաստել։ Հորս փոխարեն յես եյի սպասավորում խոհանոցում։ Այդ անհրաժեշտ եր ինձ համար․ յես ուզում եյի ուսումնասիրել աղայական սովորությունները և նրանց նիստ ու կացը, վորպեսզի հետո պատմեյի մերոնց։ Վոչինչ չեյի փախցնում աչքից։ Յես իմացա, վոր պատրաստվող ուտելիքը դեռևս ընթրիք չէ, այլ ընթրիքի առաջաբանն է, այսպես ասած՝ «եսնարե» կամ նախընթրիք։ Յես իմացա նույնպես, թե ով է «աբդարբաշին» և ինչ է նրա պաշտոնը։ Այդ մարդն էլ թեյն

էր պատրաստում, կարգի էր բերում ճրագները՝ աղայի օթեվանը լուսավորելու համար։

Թեյը պատրաստեց, մատուցեց հյուրերին, միրգ բաժանեց, խորովածի համեմունքները մատուցեց և հետո ճրագները վառեց։

Գյուղացիներից մի քանիսն էլ շարունակ ման էին գալիս գյուղի մեջ՝ շահզադեյի ու նրա շքախմբի անդորրը պահպանելու համար։ Յես շարունակ պատրաստ էի պահում ղալյանի կրակը, իսկ «աբդար-բաշին» իր մատուցարանով դես ու դեն էր վազվզում՝ հյուրերի համար կերակուր կամ խմիչք մատակարարելով։ Խորովածը մատուցին, հյուրերն սկսեցին ուտել։ Հնչեց թառը, ղավալը դողանջեց, հյուրերը յերգեցին ու սկսեցին պարել։

Նախընթրիքից հետո անմիջապես՝ սկսվեց իսկական ընթրիքը։ Հազար ու մի տեսակ կերակրեղեն մատուցվեց սեղանի վրա։

Թագավորների ընթրիք... Այդ համադամ խորտիկներն այնքան բազմազան էին, վոր յես նրանցից շատերի անուններն անգամ չգիտեյի։ Ընթրիքն էլ վերջացավ։ Բաց արին իրենց ճանապարհորդական մահճակալները, տեղերը փռեցին և պառկեցին քնելու։

Յես մտացի, վոր խոհանոցում հերթապահություն անեմ։ Վորոշեցի գիշերն աչքս չփակել։ Ո՞վ է իմանում, հանկարծ մի բան պատահեր խոհանոցում, դե արի աղային պատասխան տուր։

Կես գիշերին մեր հյուրերը զարթնեցին, սկսեցին զրույց անել, իսկ քիչ հետո զրույցը փոխվեց իրարանցման, հայհոյանքի ու վերջացավ տուր ու դմփոցով։

Չորս «զահաժառանգներն» էլ շապկանց կիսամերկ, տալիս էին իրար ու ծեծում, ջարդում։ Ինչ ընկնում էր ձեռքներն իրար գլխով էին տալիս—էլ մութաքա, էլ բարձ, կոշիկ և այլն, ու հետն էլ սոսկալի հայհոյանքներ էին գործ ածում։ Նրանց խաղաղացրեց միայն քնից զարթնող «միրզա-խոր-բաշին»։ Խաղաղվեցին ու նորից պառկեցին քնելու։

Հյուրերը զարթնեցին, յերբ արդեն արեգակը բավական

բարձրացել էր։ Վաղուց էյինք պատրաստել ջուր, սապոն ու յերեսսրբիչ։ Ուրախ-ուրախ լվացվեցին։ Յես նրանց մեջ փոխադարձ անհաշտություն կամ թշնամական չարակամություն չընկատեցի, և կարծես նրանք չէյին, վոր մի քանի ժամ առաջ, ով է իմանում, մի չնչին բանի համար իրար այնպես հայհոյում ու ծեծում էյին։ Նրանք ուրախ զրուցում էյին միմյանց հետ ու քրքջում։ Լվացվեցին պրծան, գնացին քեթխուդի տունը նախաճաշելու։ Այնտեղ հյուրերին մատուցին մածուն, պանիր, յուղ, կաթ, ձու։

Շոհվեթ միրզայի առաջ դրված էր մի աման հրաշալի կարագ-յուղ։ Հանկարծ նա յուղի մեջ նկատեց բրդի մի քանի մազիկներ, խիստ բարկացավ և հրամայեց կանչել քեթխուդին։

— Այս ինչ բան է,—ցույց տալով յուղը՝ հարցրեց շահզադե—աղան։

Հազիվ էր բերանը բաց արել քեթխուդան վոր խոսի, վոտները դաղեցին ճիպոտի հարվածներով։ Յեվ մինչև վոր ճիպոտները չջարդվեցին քեթխուդի ջանին, ներկաներից վոչ վոք չհամարձակվեց հարցնել, թե ինչումն է քեթխուդի մեղքը։ Վերջապես ելի Արդար-բաշին միջամտեց, վորից հետո շահզադեն դադարեցնել տվեց ծեծը։ Աղան ծեծը դադարեցնել տվեց, բայց քեթխուդին տուգանեց վաթսուն թումանով, վորից հիսունն իր ոգտին, իսկ տասը «Արդար բաշուն»։

Արդար-բաշին իր փողերից վճարեց աղային հիսուն թուման, վոր հետո ինքն ստանա քեթխուդից։ Բայց քեթխուդան այդքան մեծ գումար վճարելու ուժ չուներ, վորտեղ պիտի վճարեր այդ փողը, ուստի խնդրեց Արդար-բաշուն, վոր իրեն պաշտպանի և բարեխոսի աղայի առաջ։

— Արդար-բաշի ջան,—ասաց քեթխուդան,—յես քեզ տասը թումանի փոխարեն տասնհինգ թուման կվճարեմ, միայն հասկացրեք աղային, վոր այդ բանը գյուղացիներն են արել դիտմամբ, վորպեսզի ինձ վնասեն. Նրանք են յուղի մեջ բրդի մազ խառնել, իսկ շահզադեն ինձ վրա յե բարկանում։ Գուցե աղան բարեհաճի համաձայնել, վոր տուգանքի մի մասը գյուղացիները վճարեն։

Այս մասին Արդար-բաշին զեկուցեց աղային։ Աղան կանչեց, այս անգամ կարգադրեց, վոր հիսուն թումանից յոթանասունը վճարեն գյուղացիները, իսկ մնացածը քեթխուդան։ Ձիապաններից մեկին հանձնարարեցին հավաքել փողերը։ Այդ անխիղճ ձիապանն էլ մտավ գյուղը և վոչ վոքի չխնայեց։ Աջ ու ձախ ծեծում էր ու պահանջում։ Զինգիլ խանի պես վրա ընկավ գյուղին ու բռնագանձեց յոթանասուն թումանը։ Հորս վրա այդ տուգանքը նստեց յերեք թուման։

Յերեկոյան դեմ հյուրերը դարձյալ նախընթրիք արին և խրախճանք սարքեցին։ Նորից խմեցին, յերգեցին ու պարեցին, իսկ գիշերը նորից կռվեցին, բայց այս անգամ վոչ միայն Արդար-բաշին, այլ միրախորն անգամ չկարողացավ նրանց հաշտեցնել ու խաղաղացնել, նրան էլ ծեծեցին։

Առավոտյան շահզադեն իր շքախմբով գնաց մի ուրիշ գյուղ, իսկ մենք անցանք մեր գյուղական սովորական աշխատանքներին։

* * *

Այժմ մայրս տանը շատ էր զբաղված։ Մեր այծերը ծնել եյին։ Մի տեղից վոչխարի մորթի ճարեց, կաղնու կեղևով դաբաղից ու մորթուց տիկ պատրաստեց խնոցի հարելու համար։ Առավոտներն այծերի մածունն ածում էր այդ տկի մեջ և խնոցի յեր հարում։ Յուղն առանձին էր տեղավորում, իսկ թանից բռնվածք էր պատրաստում, լցնում էր աքաշները, ձմեռը բռնված թանից թանապուր էր պատրաստում, վորը մեր սովորական ու հարգի կերակուրներից մեկն է։

Հիմա արդեն մենք լավ եյինք ապրում և մի առանձին մտահոգություն չունեյինք։ Մի բանն էր միայն վատ՝ դա մեր ապրած տեղի ոդը և ջուրն էր։ Յերեկը վատառողջ ջուր եյինք խմում, իսկ գիշերը մեզ հանգիստ չեյին տալիս մոծակները, վորոնք կարիճի չափ խայթոցներ ունեյին։ Տեղացիների համար այս աննպաստ պայմաններն այնքան էլ տանջալից չեյին, վորովհետև սովոր եյին այդ պայմաններին, իսկ մենք տանջվում եյինք այդ պայմաններում։ Մենք սովոր եյինք

յայլաղներին—սարի օդին ու ջրին։ Թեև մեզ համար անտանելի եյին այստեղի պայմանները, բայց ի՞նչ արած, պիտի հաշտվեյինք այդ դրության հետ. պիտի գոհ լինեյինք, վոր գոնե մի կերպ ապրում եյինք։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԱԽՏԻԱՐԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՐՄԱՆՇԱՀ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Հենց այդ գարուն մեր գյուղացիք հանձնարարեցին ինձ շահզադեյի համար քաղաք տանել մի բեռ յուղ ու բռնած թան։ Եշը բարձեցի ու ընկա ճամբա։ Մի քանի որում հասա քաղաք։ Պաշարեղենը հանձնեցի ում վոր պետք եր, ապա դուրս յեկա քաղաքը ման գալու և տեսնելու, վորովհետև վաղուց եր, վոր Քիրմանշահում չեյի յեղել։

Քաղաքում շատ բան եր փոխվել։ Բոլոր փողոցները, տըներն ու խանութները նորոգված եյին։ «Թնդանոթի հրապարակը», վորի չորս կողմում մանր-մունր խանութներ եյին, հնավաճառների տաղավարներ, կանաչեղեն ծախողների ու չոր մրգավաճառների խանութներ, վորտեղ անկարգ կերպով թափթըփված եյին թեյավաճառների սեղանները, թախտերն ու աթոռները, այժմ, այդ ամբողջ հրապարակը մաքրված եր։ Այդ բոլորի փոխարեն այժմ հրապարակում դրված եյին թնդանոթներ։

Հրապարակի մեջտեղն առանձնացրած եր մյուս մասերից, այնտեղ—ավազանի մոտերքին դրված եր յերկու մեծ թնդանոթ։ Առավոտյան և յերեկոյան զինվորները հրապարակում զինավարժություններ եյին կատարում։ Այդ նույն հրապարակն եյին գալիս զինվորական համազգեստով բազմաթիվ պատանիներ՝ նույնպես վարժություններ անելու։

Մի պատահական մարդու հարցրի, թե ինչու յեն յերեխաներ'ն բերում հրապարակ, վորտեղ նահանգապետարանն ե գտնվում, արդյոք նրա համար չե՞, վոր նահանգապետը զվարճանա յերեխաներով։ Չե՞ վոր նրա մասին ասում են, վոր նա արվամոլ ե, յերեխաներ շատ ե սիրում։

Այդ մարդը բարկացավ վրաս ու ինձ անվանեց «վայրենի քուրդ»։

—Այժմ Քիրմանշահի նահանգապետը պարոն Ալա-Եդ-Դովլին է,— ասաց նա։— Սա Քաշանի Եկբալ-Եդ-Դովլեն կամ Եմիր Նիզամը չէ։ Սա մեր միջնակարգ դպրոցների աշակերտներին նոր ձևի ուսում ու կրթություն է տալիս։ Սա բոլորովին ուրիշ մարդ է։ Թեև նա դուրսը ֆառաշներով ու յասավուլներով չի ման գալիս և իրան զոռող չի պահում, ինչպես սովորաբար անում էին նախկին նահանգապետները, բայց բոլորն էլ սրանից վախենում են ու քաշվում։ Այ օրինակ, Դավուդ խանը, յերդվել էր, վոր յերբեք քաղաք չի գալու, բայց սա վերջիվերջո Դավուդին քաղաք քաշ տվեց և քսան հազար թուման էլ փող բռնագանձեց նրանից։ Այդպիսի բաներ էլ չխոսես, աստված վոչ անի վոր իմանան, տունդ կքանդես, քեզ կկործանես, Ալա-Եդ-Դովլեն շատ լրտեսներ ունի։

Քաղաքում մի քիչ թուղթ ու թանաք առա, Սաադիի գիրքը գնեցի, յեկա եշս փալանեցի և ճանապարհ ընկա դեպի տուն։ Ճանապարհներին վոչ մի տեղ յես չհանդիպեցի կարավանների և ռահզարների։ Ինձ բացատրեցին, վոր Ալա-Եդ-Դովլեն հրամայել է, վոր վոչ վոքից ճանապարհներին փող չվերցնեն։ Ընդհանրապես այդ յերեք օրվա ճանապարհորդությունս շատ խաղաղ անցավ, և յես տուն վերադարձա ուրախ տրամադրությամբ ու ահագին նորություններով։ Մանրամասնորեն սկսեցի պատմել իմ տեսածի ու լսածի մասին թե կնոջս և թե գյուղացիներին, թե ինչպես է կառավարում նահանգը Ալա-Եդ-Դովլեն։

***

Յես կանոնավորապես հաճախում էի գյուղի մոլլայի մոտ ուսումս շարունակելու։ Գյուղացիք բոլորն էլ զարմանում էին, վոր յես առհասարակ բացատրած բանը շատ շուտ եմ հասկանում և ըմբռնում։ Վորոշ համագյուղացիներ այս մասին խոսում էին մի տեսակ հպարտությամբ, իսկ վոմանք էլ չէին թագցնում իրենց նախանձը։ Յես արդեն գյուղացիների համար ստացականներ ու հաշիվներ էի գրում։ Յես այնպես էի սի-

րում ուսումը, ինչպես հայրս սիրում եր իր ռանջպարությունը։

Յերբ մենք տեղափոխվեցինք այս գյուղը, քեթխուդան հորս բացատրեց գյուղի սովորությունները և գյուղացու պարտավորությունները։ Քեթխուդի բացատրությունից յերևում եր, վոր ով մի զույգ յեզն ունի, նրանից առնում են տարեկան մի թումանի փող, չորս հավ, մի բեռ վառելափայտ և բացի դրանից, յեզատերը պարտավոր ե մի քանի որ ել ձրի աշխատել ընդհանուրի համար։

Հայրս վոչինչ չառարկեց այդ սովորության դեմ, քանի վոր այդ բոլորն ել շատ թեթև բաներ եյին համեմատած այն բանի հետ, ինչ վոր մենք անում եյինք կամ տալիս եյինք մեր Քրդստանում կամ Կոլլայում։

Գարունը բացվելուն պես՝ հայրս գյուղացիների հետ զբաղվեց վոռոգման առուները մաքրելով, իսկ յես գնում եյի հանդը՝ արտերը վարելու։ Այդ գյուղում բրինձ ցանելու սովորություն կար։ Մենք ել վորոշեցինք այդ տարի բրինձ ցանել։

Ամբողջ որերով հայրս անց եր կացնում իր ժամանակը բրնձի արտերում՝ մինչև ծնկները ջրի ու ցեխի մեջ կանգնած։ Այդտեղ ոդը գաղջ եր ու խեղդող, իսկ ջուրը ծարավ չեր կոտրում և ավելի շատ սիրտ եյի խառնում։

Բրինձը դեռ չհասած՝ հայրս հիվանդացավ։ Միաժամանակ քույրս ել աչքացավով պառկեց։ Հերթը հասավ նաև ինձ։ Հիվանդության յերկրորդ որը չե՝ վրա յերրորդ որը սաստիկ ջերմ բռնեց ինձ։ Գյուղում ասացին, վոր նոր հեքիմ ե յեկել մեր շրջանը, ինքն ել շատ փորձված բժիշկ ե։ Այսոր մեր հարևան գյուղն ե գալու,—ասացին—հրավիրիր ձեր տուն, թող հորդ ել, ձեզ ել բժշկի։

Տենդով բռնված՝ դողդողալով գնացի նորեկ «բժշկին» գտնելու։ Վերջապես նրան գտա մի գյուղացու տանը, շրջապատված դեղի սրվակներով։ Այս մարդը մի պայուսակ ուներ, վորը լիքն եր բուժական պարագաներով։ Կողքին ել դրված եյին մի քանի հաստ գրքեր։ Ինքն ել մի տեսակ թաց, արտասունքոտ մարդ եր, ու կարծես այդ հանգամանքն ել ապացույց եր, վոր սա իբր թե փորձված բժիշկ պիտի լինի։

Համեստորեն բարևեցի նրան։ Նա քաղաքավարի պատասխանեց բարևիս, որից հետո սկսեցի նկարագրել հորս ու քրոջս հիվանդությունը։

— Դուք շատ խելոք բան եք արել, որ եկել եք ինձ մոտ,— ասաց նա,— ձեր խոնարհ ծառան, որ ժամանակիս լոխմանն է — բժշկապետը — նրա հմտության և փորձառության առաջ ոչ մի հիվանդություն չի դիմանա։ Ես անպայման կբժշկեմ հորդ ու քրոջդ։

Քիչ հետո խոսելու տոնը փոխելով՝ հարցրեց.

— Իսկ այցելությանս համար ի՞նչ եք բերել։

Ես ասացի, որ յերկու ղռան փող կա մոտս և ավելացրի, որ դրանից ավելին չունեմ, բայց յեթե ինքը շնորհ բերի մեր գյուղը, այնտեղ այնքան հիվանդներ կան, որ յեթե նըրանց բոլորին բժշկի, շատ փող կարող է աշխատել։ Ես «բժըշկին» այնպիսի աղաչանքով խնդրեցի, որ համաձայնեց գալ։

Սրվակները դրեց պայուսակի մեջ, գրքերը մի առանձին կապոց արեց, այդ բոլորը շալակս տվեց, ինքն առաջ անցավ, յես էլ նրա յետևից՝ ճամբա ընկանք դեպի մեր տունը։

Հորս դրությունը ավելի վատացել էր։ Խեղճ քույրս էլ ցավից լալիս էր։ Հենց որ տեղ հասանք, ինքս էլ ինձ վատ զգացի, քաշվեցի մի անկյուն և պառկեցի։ Սաստիկ դողացնում էր։ Միայն մայրս էր ոտքի վրա և խեղճն ստիպված էր բոլորիս էլ խնամել։ Պայմանավորվեցինք հեքիմին տալ մի բաթման յուղ և մի թուման փող, որ նա մեզ բժշկի։

Շուտով հարևան տներից բազմաթիվ հիվանդներ բերեցին մեզ մոտ։ Մեր տունը դարձավ իսկական հիվանդանոց։

«Բժիշկը» մեկից վերցնում էր մի թուման, մյուսից՝ հինգ թուման և այդ տարբեր տեսակի բազմաթիվ հիվանդներին էլ տալիս էր յերկուական հաբ, այդ հաբերին «Սուլթանի հաբ» անունն էր տալիս։ Նա ասում էր, որ այդ հաբերը պատրաստված են ոսկեփոշու խառնուրդից և այնպիսի զորություն ունեն, որ ամեն տեսակ ցավ ու հիվանդություն բժշկում են։

— Հրաշալի միջոց է այս հաբերի գործածությունը,— ասում էր նա,— ազատող ու կապող, տաքացնող ու զովացնող։ Լավ միջոց է լեզու զարգացման և ավշային հիվանդության

դեմ։ Մարդու ուժերն ամրացնում է։ Մեղմացնում է արյան հուզմունքն ու գրգիռը։ Ներքին և արտաքին հիվանդությունների դեմ հիանալի միջոց է։

«Բժիշկն» այդ հաբերից տվեց հորս, որ արյուն էր թքում, տվեց քրոջս, որի աչքերն էյին ցավում, ինձ տվեց, որ ջերմում էի, տվեց նաև մյուս բոլոր հիվանդներին, որոնք տառապում էյին ամենաբազմատեսակ հիվանդություններով։ Մի խոսքով, բոլորին էլ «բժշկապետը» բուժում էր այդ «հրաշագործ» հաբերով։

Այդ ձևով «բժիշկը» մի մեծ տուփ հաբ սաղացրեց։

Մայրս վերջում հարցրեց, թե ինչպիսի սնունդ կարելի յե տալ հիվանդներին։

Բժիշկը խորհուրդ տվեց բուխարական սալորից կերակուր տալ հիվանդներին։

— Մենք բուխարական սալոր չունենք,— ասաց մայրս։

— Այն ժամանակ դոշաբից պատրաստեցեք կերակուրը։

— Դոշաբ էլ չունենք,— պատասխանեց մայրս։

— Պատրաստեք բրնձով շիլա,— պատվիրեց «բժիշկը»։

— Չունենք,— պնդեց մայրս։

— Դե որ այդ էլ չունեք, պատրաստեցեք նուշի կիսել,— համառորեն պատվիրեց «բժշկապետը»։

— Մենք նուշ էլ չունենք, վերջապես ասաց մայրս։

Այսպիսով բոլոր կերակուրների անունները հիշատակվեցին։

«Բժշկապետն» այնպիսի կերակուրների անուններ էր տալիս, որոնց նյութերը գյուղացին ոչ մի տեղ չէր կարող ճարել, թեկուզ նրա հիվանդը մերձիմահ լիներ, և նրա կյանքն ամբողջովին կախված լիներ այդ կերակուրներից։

Վերջապես «բժշկապետն» առաջարկեց հաց ու կովի կաթ։ Մենք սիմինդի հաց ունեյինք։ Դրանով էլ սնվում էյինք հիվանդներս։

«Բժիշկը մեզ մոտ մնաց յերկու օր։ Սաղացնելով իր հաբերի մեծ մասը, ի վերջո նա հայտնեց, որ յեթե իրեն վճարենք յերկու թուման, ապա ինքը կհամաձայնի էլի մնալ և խընամել հիվանդներին, այլապես գնալու յե ուրիշ տեղ։ Մեր

աղաչանքներն ու պաղատանքներն չօգնեցին, մյուս կողմից, փող էլ չկար վճարելու, դրա համար էլ «բժիշկը» թողեց հիվանդներին ու գնաց։

Բարեբախտաբար այնպես չեղավ, որ հաբերի ընդունելությունից հետո հորս լուծը դադարեց, և նա առողջացավ։ Մյուս հիվանդները մնացին նույն դրության մեջ, նույնիսկ երկու հիվանդներից սկսեց արյուն հոսել։ Կարծես թե տեղական-տնային միջոցներով հաջողվում էր նրանց բուժել, բայց վատ սնունդի—վարունգի և թթու թանի գործածության պատճառով մի քանի օրից հետո այդ հիվանդները մեռան։

Մենք «հարուստ» եյինք, տանը յուղ, բրինձ, ձու, պանիր ունեյինք։ Հայրս դրանցով լավ սնվեց, շուտով ապաքինվեց և նորից անցավ բրնձի մշակության աշխատանքներին։

Ամենից առաջ մենք պիտի ցորենն ու գարին հավաքեյինք։ Յես ու հայրս մենակ հնձեցինք արտերը։ Ուղղակի տառապեցինք Զոմ-Զոմալի կիզիչ արեգակի տակ։ Հետո խուրձը կրեցինք կալը, կալսեցինք, քամեցինք, հացահատիկը թեղեցինք, կառավարիչն յեկավ և բերքը բաժին արեց։ Մեկ չորրորդը վերցրեց կալվածատիրոջ համար։ Դրանից հետո նա բաժին հանեց «միրաբին» և առանձնացրեց տուրքաբաժինը։ Այդ բոլորից հետո մեզ այնքան մնաց, որքան մնում էր Քրդստանում կամ Կոլյայում։

Գյուղացու տալիքն այնտեղ ուրիշ անուն ուներ, այստեղ՝ ուրիշ. բայց թե՛ այնտեղ և թե՛ այստեղ միևնույն բանն էր։

— Իսկական թալան և ուրիշ ոչինչ։ Թալան գյուղացու աշխատանքի, նրա արյուն քրտինքի։

Այսպես թե այնպես, մեզ մնաց մոտ մեկ խալվար հացահատիկ, որը տարանք տուն ու տեղավորեցինք։

* * *

Դրանից հետո վրա հասավ մրգահավաքի ժամանակը։ Մեր աղայի կալվածքներում բոլոր մրգերը կապալով եյին տրված։ Այն առևտրական-կապալառուն, որին կապալով էր տրվում միրգը, լիակատար տեր-տիրական էր դառնում բոլոր մրգերի։

Նա էլ վաճառում էր միրգն այնպես, ինչպես իրա քեֆն էր տալիս: Կապալառուն պայմանավորված էր լինում կալվածատիրոջ հետ, որ ուրիշ որևէ առևտրական իրավունք չպիտի ունենա այդ գյուղում միրգ վաճառելու իրենից բացի, գյուղացիք էլ իրենց հերթին, իրավունք չպիտի ունենան ուրիշ որևէ մեկից միրգ առնելու բացի կապալառու-առևտրականից:

Մեր ցորենից յերեսուն բաթման գնաց մրգավաճառին: Դրանից հետո հայտնվեց դերվիշները, աղքատները, թափառաշրջիկ մուրացիկների ամբոխը, որոնք անհամբեր սպասում էր գյուղացու հնձին և կալ ու կուտին:

Հնարավորություն էլ չկար նրանց մերժելու: Չե՞ որ մի անգամ հայրս լավ դաս էր առել դերվիշից Խոյյայում յեղած ժամանակ: Այդ մուրացկանների ամբոխին գոհացնելու համար անհրաժեշտ էր զոհել քսան բաթման ցորեն: Մեզ ընդամենը հիսուն բաթման ցորեն մնաց, այն էլ հայրս շտապեց աղալ, որպեսզի այդ խղճուկ մնացածն էլ զանազան պատրվակների բաժին-բաժին չլինի այլ տեսակի պատահական թալանչիներին:

Այդ բոլորից հետո մենք մեզ մխիթարում եյինք նրանով, որ գոնե բրինձ ունենք: Բրնձով կարող ենք ամբողջ ձմեռվա համար ցորեն և սերմացու առնել: Արդեն ժամանակն էր: Հորս հետ միասին սկսեցինք և մյուսներից էլ շուտ վերջացրինք բրնձի հունձը: Գնացինք կառավարիչի մոտ կալսելու թույլտվություն խնդրելու: Կառավարիչը ժպտաց և զարմացած հարցրեց.

— Ի՞նչ է, դուք լուսնի՞ց եք իջել յերկրի վրա: Չե՞ք իմանում կալսելու և բերքի բաժանման կարգը: Այդ բերքը ցորեն լինի, թե գարի կամ բրինձ, միևնույնն է, բոլորը միասին կալսում, պատրաստում են միաժամանակ, հետո գալիս է կալվածատերը կամ նրա կառավարիչը՝ վերցնում է որքան որ հարկավոր է վերցնել: Կալվածատերը հո չի կարող այսօր մեկի, վաղը մյուսի հետ գլուխ ցավացնել:

Հայրս ասաց.

— Այդ յես հասկանում եմ, բայց բանն այն է, որ ձմեռը մոտենում է, արդեն Քոսա ամսի մեկն է, որերը ցրտում

են։ Ցրտերին չի կարելի գիշեր-ցերեկ նստել և պահպանել կալը, այդ պատճառով է, վոր խնդրում եմ ընդունել իմ կալսած բրինձը։

Մորաշիր—կառավարիչը բարկացավ։

— Դու ուզում ես խարդախություն անել, ուրիշ վոչինչ,— ասաց նա,— դու ուզում ես խուսափել ընդհանուր ծախսերից։ Վո՛չ, յես չեմ կարող բերքն ընդունել, մինչև վոր բոլորինը պատրաստ չլինի։

Հայրս սրտնեղած ու ջղայնացած վերադարձավ տուն։ Ստիպված եյինք սպասել, մինչև բոլոր չալթուկատերերը կալսեն և կշռեն բրինձը։

Վերջապես կալսելու ժամանակը հասավ։ Գյուղացիք մի տեղից վարձով վրան վերցրին կառավարիչի համար, բաց արին, ամրացրին դաշտի մեջտեղում, ջեջիմներով ծածկեցին ու հանձնեցին նրան։ Իրենք ել, իրենց հացահատիկի կողքին իրենց համար ցողունածածկ քոլիկներ շինեցին ու մտան մեջը։ Հայրս ել մի այդպիսի քոլիկ պատրաստեց մեզ համար։

Հետևյալ առավոտ նշանակված եր ընդհանուր կալը։

Ցերեկոյան քեթխուդան հավաքեց գյուղացիներին խորհրդակցելու, թե ինչպես պիտի հոգան կառավարիչի ապրուստի ծախսերը կամ ինչպես պիտի հայթայթեն նրա ուտելիքն ու խմիչքը։ Վորոշեցին, վոր չալթուկատեր գյուղացիներից ամեն մեկը մի որ հոգա կառավարիչի ծախսերը։ Վիճակ գցեցին, մեր հերթն ընկավ հինգերորդ որը։

Առավոտյան բոլորը հավաքվեցին դաշտը և սկսեցին բրնձի կալը։

Այսպես եյին կալսում։

Յուրաքանչյուրն իր չալթուկի հաշանը փռում եր կալի մեջ և զույգ-զույգ իրար կապված յեզներով տրորել տալիս։ Յեզները տրորում եյին հաշանը, բայց միաժամանակ նրանք բավականաչափ բրինձ եյին փշրում վոտներով։ Այս ձևի կալսելը ճիշտն ասած՝ հորս դուրը չեր գալիս, բայց ինչ արած, առարկել չի կարելի, թեև դեմ վիճեյիր։ Ինչպես ուրիշներն՝ այնպես ել մենք։ Ստիպված եյինք ի հարկե մենք ել նույնն անել։

*
* *

Հայրս ինձ ուղարկեց կառավարչի վրանը տեղեկանալու, թե առհասարակ ինչ չափով և ինչ տեսակի ուտելիք ու մթերք են ուղարկում նրան, վորպեսզի մենք էլ մեր հերթին նույնպիսի պատրաստություն տեսնեյինք։ Ես գնացի և տեղեկացա։ Այդ օրը մեր հարևաններից մեկի հերթն եր։ Ահա նրանք ի՞նչ եյին ուղարկելու կառավարչի վրանը։

Նախ և առաջ մի մարդ, վոր ամբողջ օրը կառավարչին ծառայի։ Այնուհետև մի շալակ վառելափայտ, մի հավ, տասը հատ ձու, մի բաթման հաց, մի գրվանքա կովի յուղ, հինգ ֆունտ շաքար, յերեսուն մսխալ թեյ, իսկ մածուն և չորացրած պանիր վորքան վոր պահանջի։

Այդ բոլորը միայն ճաշի համար։ Ընթրիքին մեր հարևանը պիտի տար մի աքլոր, մի բաթման բրինձ, հինգ ֆունտ շաքար, կես ֆունտ թեյ, տասը ֆունտ յուղ, մի բաթման հաց։ Բացի դրանից էլ, մի բաթման գարի ու դարման ձիու համար։

Հայրս կալսում եր, իսկ յես ուշադրությամբ հետևում եյի այդ թալանին։

Մոբաշիր-կառավարիչը տեղից վեր կացավ, դուրս յեկավ վրանից, գնաց նայելու, թե ինչպես են կալսում։ Նա շրջեց բոլոր կալերը, իր դիտողությունները արեց և մի քանիսին էլ հրամաններ արձակեց այս կամ այն պատրվակով։

— Մաքուր կալսիր,—բղավում եր նա,—ղայիշը ձգիր, յեզների դունչը սեղմիր, վոր ամուր տրորեն,—հրահանգում եր նա։

Շրջագայելով հասավ մեր կալին և նկատեց, վոր հայրս յեզների դունչը լավ չի սեղմել։ Սկսեց գոռգոռալ հորս վրա։

— Անլեզու հայվաններին ինչո՞ւ իզուր տեղը չարչարենք,—ասաց հայրս,—աստծու հակառակ բան է կենդանուն չարչարելը։

Սա արդեն «հանդգնություն» եր հորս կողմից։

Կառավարիչը բարկացավ, հայհոյեց և մի քանի փայտի հարվածներ հասցրեց հորս։ Նա նույնիսկ ուզեց հորս կալանավորել, բայց մյուս գյուղացիները միջամտեցին և ասացին,

վոր դա խեղճ մարդ է, նոր է յեկել մեր գյուղը, դեռ լավ չգիտե այստեղի կարգ ու կանոնները։ Գյուղացիների միջնորդությունը փրկեց նորա։ Նա պարանը բերեց և , ուս ու փուս պինդ կապեց յեզների վզները։

Հինգերորդ օրը կառավարչին կերակրելու հերթը հասավ մեզ։ Վառելափայտ, գարի, դարման և յուղ մենք ունեյինք։ Բրինձը հարևաններից փոխ առանք։ Թեյի, շաքարի, հալի և մյուս բաների համար փող եր հարկավոր, վոր առնեյինք. մենք չունեյինք։ Այծերի կաթից պատրաստած մի քիչ յուղ ուներ մայրս։ Այդ յուղից մի բաթման ծախեցինք, վորպեսզի կառավարի՛ի ընթրիքի հոգսը քաշենք։ Վերջապես, պարտքով, բանով այդ էլ արեցինք։

*
* *

Հազիվ չալթուկը կալսել եյինք, վրա հասավ ձմեռը։ Անձրև ու ձյուն տեղաց, գետինը ցեխ դառավ։ Հետագա աշխատանքները ձգձգվեցին և դրա հետ կառավարիչին կերակրելու հոգսը ծանրացավ մեզ վրա։ Յուրաքանչյուրիս մեկի փոխարեն մի քանի անգամ հերթ ընկավ այդ ձրիակերին ուտեցնելու և խմեցնելու համար։ Համարյա մինչև Նովրուզի տոները յես ու խեղճ հայրս գիշերներ ենք անցկացրել քոլիկում, վոր պահպանենք չալթուկը։

Դժվար է պատմել, թե ինչպես եյինք թրջվում, չորանում և նորից թրջվում անձրևի ու ձյունի տակ։ Միայն նա կհավատա այս բաներին, ով վոր նմանը փորձել է իր կաշու վրա։ Գիշերներ են յեղել, վոր մենք նստած տեղներս ուղղակի սառել ենք ցրտից։

Վերջապես հասավ նաև այն օրը, յերբ հաջողվեց մեզ կալսելը վերջացնել և չալթուկը փռել։

Մոբաշիրն յեկավ և գլխից պահանջեց իր աշխատավարձը։

— Յեթե գյուղացիներից մեկն ու մեկը ձգձգի աշխատավարձս, ամբողջ գյուղի հացահատիկը կթողնեմ այնպես գետնին, չեմ ընդունի,— հայտարարեց նա։

Ինչպես ճաշն ու ընթրիքը, այնպես էլ կառավարչի ռոճիկը պիտի հոգայինք գյուղի քսան չալթուկատերերս։ Ինչ

խոսք, վոր հայրս էլ իր բաժինը պիտի տար։ Բացի յուղից, այծերից մեկն էլ ծախեցինք, վոր կարողանանք մեր բաժինը վճարել։

Առավոտյան կառավարիչը յեկավ կալերը և յուրաքանչյուր թեղից վերցրեց յերեք քառորդ մասը, իսկ մի քառորդը տվեց տ՛րոջը։ Բացի դրանից նա վերցրեց նաև աղայի հարկահավաքի (զաբիթ), աշխատանքի վերակացուի (պաքարա) բաժինները, «վրանի» և ջրի տուրքը։

Այս անգամ էլ յերևացին բերքի բաժանքի մեր ընկերները։ Չես իմանում՝ վորտեղից յեկան, հավաքվեցին, ասես գետնի տակից, ինչպես վոգիներ։ Առածն ասում է, թե «կույրն իր գործի մեջ լավ տեսնող է»։ Այդ մարդիկ այնպես լավ գիտեյին, թե ինչ է կատարվում մեզ մոտ, վոր կարելի յեր կարծել, թե դրանք խորհրդավոր ճանապարհներով ու մեզ համար անիմանալի միջոցներով իրար իմաց են տալիս, վոր այսինչ կամ այնինչ տեղը բերքի բաժանք է կատարվում։

Նրանցից մեկը բղավում եր.—«Հու-հա՛հ» աստծու սիրուն, մյուսն աղաչում եր վողորմություն անել իրան «Հազրաթ Աբբասի խաթեր», յերրորդը մի յերգ եր ծոր տալիս Իմամ Հյուսեյինի մասին։

— «Յեփրատի ափերին, ծարավից տոչորված շրթունքներով յես զոհ դարձա անհավատներին»։

Մուրացկանները, թափառաշրջիկները, ձեռնածուներն ու ոձերի թովիչները չորս կողմից վրա թափվեցին։

— Մեզ էլ տվեք, մեզ էլ տվեք,—ասում եյին նրանք,— դուք միայն մեզ բրինձ տվեք, այնուհետև մենք այնպես կանենք, վոր ձեր բոլոր դառնությունները կչքանան, ձեր ցավերն այլոց վրա կթափվին, այնպես վոր նրանք հաց անգամ չկարողանան ուտել և իրենց կանանց չկարողանան մոտենալ։

Դա ավազակների իսկական հարձակում եր, բայցևայնպես վոչ վոք չհամարձակվեց մերժել նրանց, և նրանք էլ անողոքաբար կողոպտեցին բոլորին։

Այս բոլորից հետո մեզ հիսուն բաթման բրինձ մնաց։ Այդ յեղավ մեր ամբողջ տարվա աշխատանքի և դառն չարչարանքի արդյունքը։

Միակ ճարն այն էր, վոր աղալից փոխարինաբար մի խալվար ցորեն վերցնեյինք։ Թեև ցորենի խալվարն առնում-ծախում էյին վեց թումանով, բայց մեր աղան տասը թումանից էլ պակաս չէր բաց թողնում ցորենը։ Լսել էյին, վոր Քիրմանշահում նորից նահանգապետը փոխվել է, և ցորենն սկսել է կրկին թանգանալ։

Այսպես թե այնպես աղալից փոխարինաբար ցորեն վերցրինք։ Բայց ինչ փոխարինաբար, կատարյալ կաշի քերթել։ Բաց թողած ցորենի դիմաց աղան մեզնից վերցրեց իսկական պարտքի ստացագիր, հետո էլ պահանջեց յերկու ղռան «շտեմարանի տուրք»։ Սովորաբար ովքեր կանխիկ դրամով չեյին առնում ցորենը, «շտեմարանի տուրքը» վճարում էյին հացահատիկով։ Հայրս փող չուներ, դրա համար էլ աղան յուրաքանչյուր ղռանի դիմաց յետ պահեց յերեք բաթման ցորեն։ Յերբ ցորենը տուն բերինք, նոր միայն իմացանք, թե վորքան կեղտոտ ցորեն է։ Մաքրելուց և լվանալուց հետո՝ յեռեսուն բաթման պակասեց։

Ցորենի մի մասը յետ դրինք սերմացուի համար, իսկ մյուս մասը պիտի աղայինք, վոր հաց թխեյինք։

Ցորենը տուն բերելուց հետո հայրս այծերն առավ գնաց քաղաք—Քիրմանշահ, իսկ յես մնացի տանը՝ մեր առորյա գործերին նայելու՝ մինչև հորս գալը։

*
* *

Յերբ հայրս Քիրմանշահից վերադարձավ, մեզ հետևյալը պատմեց.

— Յերբ յես մոտեցա Թեփե-Սալամին, դեմ ու դեմ առաջս յեկան յերկու այծավաճառ և ուզեցին այծերը գնել։ Լավ էլ գին տվեցին, բայց յես չծախեցի։ Եհ, ասացի, յերևի սրանք ուզում են ինձնից ոգտվել։ Քաղաքն էլ հեռու չէր, ասացի ավելի լավ է ինքս տանեմ քաղաք, գուցե ավելի թանգ գնով ծախեմ։ Այսպես մտածելով, այծերն առաջս արած՝ քշեցի դեպի սպանդանոցի մոտերքը։ Այնտեղ չորս կողմից գնորդներ վրա թափվեցին։ Մտքումս ասացի. «էս լավ յեղավ»։ Բայց ինչ...

Կարծես բոլորն էլ պայմանավորվել եյին իրար հետ։ Գնորդներից առաջինն ավելի պակաս գին ավեց՝ քան Թեփե-Սալամում հանդիպողները։ Ի հարկե յես չտվեցի։ Յերկրորդ գնորդն առաջինից ավելի պակաս գին ավեց։ Ի՞նչ անեի․․ վորոշեցի մի քիչ սպասել։ Մոտեցավ յերրորդ գնորդը։ Ահա վերջապես, հիմա լավ գնով կծախեմ, մտածեցի յես։ Ի՞նչ եք կարծում... դա ավելի պակաս գին ավեց՝ քան յերկրորդը, կարծես սատանաներ լինեյին, ինչ մարդիկ եյին, տեր աստված, այնպես եյին խոսում իրար հետ, այնպես եյին վերաբերվում մարդու, վոր դժվար եր նրանցից գլուխ հանել կամ մի բան հասկանալ։

Այս բոլորից հետո, ինչ գլուխներդ ցավեցնեմ, յերկու այծը յերեք թումանով ծախեցի։

Բազարում մի հավ առա, գնացի ուստա Ալու մոտ. հավն էլ տարա փեշքաշ։ Ի հարկե, ներողություն խնդրեցի, վոր ավելի թանգ բան չկարողացա տանել։ Նա էլ ինձ լավ ընդունեց։ Կարծես եսկի քաղաքայի չլիներ, ինչպես մի պարզասիրտ քոչվոր լինի, այնքան լավ մարդ ե այդ Ալին։ Ամեն ինչ հարցուփորձ արեց։ Յես նրան պատմեցի, թե ինչպես ծախեցի այծերս։ Ելի չեյի կարողանում մոռանալ այն սատանաներին։

Ուստա Ալին գլուխը թափ տվեց ու ասաց.

— Ախ, Ալլադատ, Ալլադատ, այդ դեռ ինչ ե։ Եթե դու իմանաս, թե այժմ ինչ ե կատարվում Քիրմանշահում։ Այս մոտ ժամանակներս այստեղ նահանգապետ ե նշանակվել Ֆերման-Ֆերմանը—«Կովկասին տիրող» հայտնի Աբբաս Միրզայի թոռը։ Վոր իմանաս, թե դա ինչպես ե քիրմանշահցիներին պլոկում, կպշես։ Ի՞նչ են այստեղի վաճառականներն նրա առաջ, հեչ, ինչպես ուղտի մոտ մի ճանճը։ Թեև այդ վաճառականներն էլ շատ ճարպիկ սատանաներն են, բայց նոր նահանգապետի առաջ մի շատ չնչին բան են։

Ապա խաներին ինչ որը գցե՜ց...

Այնպիսի քաղաքագետն ե, այնպիսի խորամանկը, վոր վստահ կարելի յե ասել ավելի խորամանկ ե քան Հնդստանի առևտրական վողջ ընկերությունը։

Հենց վոր յեկավ իր պաշտոնատեղը—Քիրմանշահ, հավաքեց բոլոր խաներին և սկսեց նրանց ակնարկներով հասկացնել,

թե ինքը շատ սիրով կուզենա նրանց գավառներում նահանգապետի ոգնականներ նշանակել։

Այդ ակնարկը բավական էր։ Այստեղ արդեն սկսվեց նրա առատ հունձը։ Աչքդ բարին տեսնի։ Խաներն սկսեցին մրցել իրար հետ։ Ամեն մեկն ուզում էր ավելի շատ ընծա տանել նահանգապետին։ Կանխիկ փող էր, որ բերում, թափում էյին նրա առաջը։ Այսպիսով նա խաներին մի լավ պլոկեց ու տկլորացրեց։ Հետո նույնպես վարվեց վաճառականների և ապա մյուս կարգի մարդկանց հետ։

Ամենից առաջ յերկու կառավարիչ նշանակեց մսագործների և հացագործների վրա։ Այդպիսով ժողովրդական սննդի գըլխավոր յերկու աղբյուրները ընկան իրա ձեռքը։

Այդ կառավարիչները լուր բաց թողին, թե իբր Արաբըստանում սով է, բոլորովին հաց չկա, իսկ Քրդստանում խիստ թանգություն է։ Մեկ էլ լուր էյին տարածում, թե Ֆարսում մորեխը ոչնչացրել է ցանքսերը, մեկ էլ թե Ղումում ցորենի խալվարը բարձրացել է քսանհինգ թումանի։ Հանկարծ մեկ էլ լուր էյին տարածում, թե իբր արանում տոթից ու շոգից հարյուր հազար գլուխ ոչխար է սատկել, և իբր թե հրամայված է Քրդստանի ու Լուրիստանի բոլոր ոչխարները քշել Թեհրան ծախելու, և իբր թե Անվազից էլ մարդիկ են ուղարկված Փոշթեկի կառավարչի մոտ ոչխարներ գնելու։ Մի խոսքով, ի՞նչ ասեմ, հացը օրեցօր թանգանում է, միս էլ չկա և Ով գիտի, մինչև յերբ չի լինելու։

Ինչ խոսք որ այս բոլորը նահանգապետի սարքած բաներն են, և ինքն էլ անպաշտոն կերպով, առանց մեջ խառնըվելու, նրանց հետ ընկեր է։ Ցերեկանց ցույց է տալիս որ իբր թե բնակչության սրտացավ մարդ է, խստություններ է բանեցնում, հրամանագրերով մունետիկներ է ուղարկում այս ու այն կողմը, որպեսզի իբր թե հացի ու մսի գներն իջեցնեն։ Կամ թե չէ մի քանի անմեղ առևտրականներ է կալանավորում, հրամայում է ծեծել, տուգանել, ականջները կտրել. բայց ինչ... այդ բոլորը դատարկ բաներ են, մարդկանց աչքերը թող փչելու համար է անում, ուրիշ ոչինչ, այդ իսկ ժամանակ ինքը փող է որ դիզում է։

Ցեվ իսկապես, հաց շատ կա, միս էլ կա առատությամբ, բայց մսագործների և հացագործների օգնությամբ այնպես է անում, որ չերբ իրեն հարկավոր է, այդ մթերքներն իսկույն չքանում են շուկայից, իսկ ինքը ծախում է բնակչությանը իր կալվածքներից ստացած հին ցորենը մի քանի անգամ թանգ գնով։

Ինչ որ աշխատում է իր նահանգապետությունից, ուղարկում է ուրիշ շրջաններ՝ այնտեղ իր համար նորանոր հողեր ու կալվածքներ գնելու։ Այժմ Իրանում հազիվ թե գտնվի այնպիսի վայր, որտեղ Ֆերման Ֆերմանը կալվածք կամ որևէ անշարժ գույք չունենա։ Ցես կարծում եմ, որ ինքն էլ չգիտե, թե ինչքան կալվածքներ ունի այս ու այնտեղ։ Նա իսկի իր կալվածքներին նայում է որ։

Այստեղ պատմեց ուստա Ալին։

*
* *

Գիշերը նրա մոտ մնացի, առավոտյան գնացի բաղար, այծերի փողով ահա առա այս շորերը և ճանապարհ ընկա տուն։

*
* *

Հորս բերած կիսամաշ շորերով մենք շատ ուրախացանք։ Մանավանդ քույրս—Շիրինը— այնքան էր ուրախացել իր համար բերած կարմիր դեյրայով, որ ուրախությունից խեղճը թռչկոտում էր։

Այդ օրն անձրև յեկավ։ Դուրսն աշխատել չէր կարելի։ Կովը ուղարկեցինք նախիրը, որ տանեն արածացնելու մյուս տավարի հետ։ Այդ օրն էլ, որ քաղաքից խաները յեկել եյին մեր շրջակայքում վարազ որսալու։ Զոմ-Զոմալում դրանցից շատ կային։ Կրակելով վարազների վրա, նրանց հալածել եյին դեպի գյուղի նախիրը։ Առ քեզ բախտ... Կարծես շատ անհրաժեշտ էր, որ փախչող վարազը հանդիպի մեր կովին, և հատկապես մեր կովին, ժանիքներով խփի կովի փորին, ապա փախչի, գնա։

Զորանը հավարը գցեց տուն։ Մենք բոլորս վազեցինք դեպի նախիրը և ակնատես յեղանք մեր նոր դժբախտության։ Կովին բժշկել ի հարկե, այլևս չեր կարելի։ Վորպեսզի մի բան փրկած լինենք, կովը մորթեցինք։ Մեր տունը նորից լցվեց լացով ու արտասուքով։ Ամենաքարասիրտ մարդն անգամ կըզ-գացվեր՝ տեսնելով մեր վողբալի կացությունը։

Կովի միսը ծախեցինք յերեք թումանով, կաշին տվինք մի թումանով։ Այդ չորս թումանն էլ հանձնեցինք աղայի կառավարչին պարտք վերցրած ցորենի հաշվին։ Բայց կառավարիչը պահանջում եր, վոր հենց հիմա վճարենք ամբողջ պարտքը կամ յերաշխավոր ներկայացնենք։ Յերաշխավոր էլ վորտեղից գտնեյինք։ Հիմա արդեն կով չունեյինք, ուրեմն վարկ էլ չունեյինք։ Ո՞վ յերաշխավոր կդառնար տկլոր գյուղացու համար։ Մյուս կողմից էլ, չե՞ վոր մենք այս գյուղում յեկվորներ եյինք, ոտարականներ։

Մենք հիսուն բաթման ցորեն ունեյինք։ Այդ ցորենը մաք-եցինք և տվինք կառավարչին, վոր մեր պարտքը լրացնենք։ Մի թուման մնաց պակաս մեր պարտքից, այն էլ կառավարիչը «ներեց» և վերադարձրեց հորս տված պարտքի ստացագիրը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱԼԼԱԴԱԴՆ ԸՆՏԱՆԻՔՈՎ ԳՆՈՒՄ Ե ԱՇԽԱՏԱՆՔԻ

Մենք անգործ նստած եյինք։ Կարծես սպասում եյինք, թե բախտն ինչ կուղարկի մեզ։

Մի անգամ մեր գյուղը յերեք մարդ յեկան, վորոնք նման եյին միջնորդների կամ գործակատարների։ Դրանց նման մարդկանց յես մի քանի անգամ տեսել եյի Քիրմանշահում։

Նրանք գնացին քեթխուդի մոտ, և շուտով մենք տեսանք, վոր նրանք կանգնած են մի տան առաջ և բան են պատմում գյուղացիներին։

Հայրս ու յես էլ մոտեցանք հավաքվածներին և սկսեցինք ականջ դնել նրանց խոսակցությանը։ Նրանցից մեկը վառ գույներով նկարագրում եր գյուղացիներին բախտիարների լեռնե-

րում մարդկանց ազատ կյանքը, որտեղ մարդիկ չեն իմանում, թե ինչ բան է քրտնաթոր աշխատանքը, որտեղ դաշտերի միջով անց են կացված առուներ, որոնցով ցորենի արտերն առատորեն ջրվում են և որտեղ յերկինքն առատորեն պարգևում է մարդկանց անձրևի ադամանդյա կաթիլներ։

Այնտեղ մարդիկ չեն իմանում, թե ինչ բան է յերաշտը, որտեղ խոտը բարձրանում է մինչև մարդու կուրծքը ու որտեղ լեռնալանջերին արածում են առողջ ու գեր ոչխարներ ու կովերի հոտերն ու նախիրները։ Նա պատմում եր լեռնային հրաշալի աղբյուրների, քարանձավների, հովիտների և լեռնային բարձունքների մասին, որտեղ բուսնում է թանգարժեք «գյավանը», որից ստացած թանձր խեժը կատարյալ հարստություն է մարդկանց համար։ Այդ պատճառով բազմաթիվ ձեռներեց ոտարերկրացիներ են գալիս Իրան, որոնք ուրախությամբ առնում են այդ խեժը տեղացիներից և փոխարենը վճարում են արծաթ դրամ։

Այդ խեժը պնդանալով ոդի մեջ, դառնում է դեղնագույն, ամուր մի նյութ, որը կոչվում է «քեթիրա» կամ «գումի—դրահանտ»։ Հավաքելով մեծ քանակությամբ՝ այդ խեժն՝ արկղներով Իրանից ուղարկում են Ռուսաստանի, Անգլիայի, Հնդկաստանի և հեռավոր Նոր Աշխարհի[1]) գործարանները, որտեղ նրանից չիթ են պատրաստում, և այդ չթից մենք այսօր մեզ համար շապիկներ, չադրաներ ու այլ տեսակ հագուստեղեն ենք կարում։ Մենք լավ ծանոթ եյինք «քեթիրային», քանի որ հաճախ եյինք տեսնում, թե ինչպես մեր աչքի առաջ ձիերով ու ջորիներով այդ քեթիրան տանում եյին Քիրմանշահ կամ Համադան, բայց մենք չգիտեյինք, որ այն խշխշան և հոտավետ գույնզգույն չթերը, որոնք ռուսական կամ հնդկական պիտակներ ունեն իրանց վրա և առատությամբ վաճառվում են Քիրմանշահի չիթեղենի խանութներում՝ պատրաստվում են «քեթիրա»-ից։ Մենք չգիտեյինք նույնպես, որ ամառներն ամբողջ Իրանում հարյուր-հազարավոր տղամարդիկ, կանայք ու յերեխաներ թափառելով լեռնալանջերին ու լեռնագագաթներ-

---

[1]) Հյուս. Ամեր. Միացյալ Նահանգները։

Ծանոթ. հայ. թարգմ.

րին՝ հավաքում են քեթիրան, վաճառում են և հենց դրանով ել ապրում։

Կարծես թե այս մարդկանց գալով բախտը մեզ հաց, կյանք ու փրկություն եր ուղարկել։

— Ցերևակայեցեք,—ասում եր նրանցից մեկը, վորի անունն եր Փեհլևան Նաղի,—յես ինքս ել առաջ յեղել եմ արտելում սոսկ աշխատող, հասարակ քեթիրա հավաքող, իսկ այժմ, փառք աստծու, դարձել եմ արտելապետ։

Փեհլևան Նաղիին լաողներն ել չքավոր, կարիքավոր մարդիկ եյին ինչպես և մենք։ Այլևս բան չեր մնում գյուղացիներին անելու, բայց յեթե թողնել իրենց տուն ու տեղերը ու գնալ այնպիսի մի տեղ, վորտեղ կարելի յե հաց աշխատել ու ապրել։

Փեհլևան Նաղին իր արտելի համար այդ օրը բավականաչափ մարդ ցուցակագրեց։ Սրա հետ յեկողի անունն ել Ղուլամ-Վայիս եր, վորը նույնպես արտելապետ եր։

Նրանց ասելով յուրաքանչյուր արտել պիտի բաղկացած լինի մոտ հազար հոգուց, վորոնք պիտի բաժանված լինեն մի շարք խմբերի, ամեն մի խումբն ունենալով իր ղեկավարը։ Բայց արտելի մեջ աշխատելուց, կարելի յե աշխատել նաև անհատորեն, վորոշ աշխատավարձով։ Աշխատողներն ստանալու յեն սնունդ, աշխատավարձ և վորոշ գործիքներ։

Հավաքած «քեթիրան» աշխատողները հանձնելու յեն տիրոջը, այսինքն այն մարդուն, վորը կապալով վերցրել ե հողը և կազմակերպել ե քեթիրա հավաքելու գործը։ Հիմա ովքեր համաձայնում են մտնել այդ գործի մեջ, պիտի խմբեր կազմած գնան բախտիարների մարզը, այնտեղ արտելապետը կապալով հողաբաժին կվերցնի ու կբաժանի իր արտելի մարդկանց մեջ և այդպիսով աշխատանքն ընթացք կստանա։ Արտելի յուրաքանչյուր անդամ կամ աշխատակից արտելապետին վճարելու յե հողի կապալավարձից իրեն հասանելիք մասը կամ բաժինը։ Արտելից դուրս, կարող են լինել նաև այնպիսի աշխատողներ, վորոնք կապալավարձից ազատ են, որական աշխատավարձ չեն ստանում, սակայն աշխատում են 3/5 մասն ստանալու հիմունքով։ Դա նշանակում ե, վոր քեթիրա հավաքողը իր հավաքածի 3/5 մասը վերցնում ե իրեն, իսկ 2/5 մասը հանձնում ե արտելապետին։

Բոլոր աշխատողներն էլ ապրում են բաց դաշտում, սարերում, հատուկ պատրաստած ճամբարներում։

* * *

Ցուցակագրողներն այնպես գեղեցիկ ու վառ գույներով նկարագրեցին այդ գործի օգտավետությունը, վոր հայրս վոգևորվեց։ Թեև դժվար էր թողնել գյուղական աշխատանքը, բայց ինչ արած, ուրիշ ճար չկար։ Գոնե այստեղ մի յելք կար։ Կարելի չէր աշխատել և ազատվել սովամահությունից։

— Յես մեծ ուրախությամբ կգայի ձեզ հետ,—ասաց նրանց հայրս,—բայց բանն այն է, վոր յես ընտանիք ունեմ—կին, փոքր աղջիկ—ինչ անեմ նրանց։

Փեհլևան Նաղին նայեց հորս ու զարմացած հարցրեց.

— Դու վորտեղացի չես, բիձա... Ինչ անտեղյակ մարդ ես։ Մեզ մոտ—ճամբարում մինչև յերկու հարյուր կին ու յերեխա յեն հավաքված լինում։ Նրանք էլ են աշխատում։ Նրանց ներկայությունը նույնիսկ անհրաժեշտ է։ Կանայք արտելի անդամների համար հաց են թխում, կերակուր են յեփում, վորի համար նրանք հատուկ վարձատրություն են ստանում, իսկ մանր յերեխաները նույնպես գործ ունեն, նրանք էլ հասկեր են հավաքում և որական վաստակում են տասը շահուց մինչև մեկ ղրան։

Մեր չքավոր դրության պայմաններում այդ գործը մեզ համար շատ ձեռնտու բան էր, ուստի հայրս խոստացավ, վոր ամբողջ ընտանիքով կգնա նրանց հետ։ Փեհլևան Նաղին ու Ղուլամ Վայիսը հորս յերկու թուման կանխավճար տվեցին, փոխարենը հորից ստացական—պարտավորագիր վերցրին, վոր յեթե աշխատանքի չգնա, պայմանազանց լինի, պարտավոր է ամեն մի թումանին վճարել հինգ թուման։

Այս բոլորից հետո ցուցակագրողները գնացին, իսկ մենք այնուհետև սպասում էինք, թե յերբ են մեզ կանչելու։ Մի քանի որից հետո արտելապետները Բիսհիթունից մեկնեցին դեպի աշխատանքի վայրը։ Նրանց սուրհանդակները յեկան գյուղերն ու ցուցակագրվածներին իմաց տվին, վոր հավաքվեն և ճանապարհ ընկնեն։

Մենք էլ հավաքեցինք մեր տեղաշորն ու տան մանր-մունր իրերը և ճանապարհ ընկանք տարագնաց աշխատանքի։

Հորս և մյուս գյուղացիների անունով փաստաթուղթ կազմեցին և պահանջեցին մեր կնիքը, որպեսզի մեզ մատյանի մեջ անցկացնեն։

Մենք անձնական կնիք չունեինք։ Ես առաջ եկա և հպարտությամբ հայտնեցի, որ ես գրագետ եմ կարող եմ ստորագրել, կնիքի կարիք չկա։

Զուր չէին ասել, թե «գրագիրը գրելով է կերակրվում»։

Իմ հայտարարությունը շատ ուրախացրեց Ղուլամ-Վալիսին։ Ինքն անգրագետ էր, և իրա հավաքած մարդկանց մեջ չկար մի հատիկ գրագետ մարդ՝ բացի ինձանից։ Նա իսկույն առաջարկեց ինձ գործավարություն և մատենավարություն, կամ ինչպես ինքն էր ասում, լինել իրա կաբինետի վարիչը, որի համար նա ինձ նշանակեց բանվորի աշխատավարձ, պարեն և հագուստ։ Բացի դրանից, ես կարող էի փող աշխատել նաև ուրիշների համար ստացականներ գրելով ու հաշիվներ կազմելով։ Ես ու Ղուլամ-Վալիսը միմյանց մեջ պայմանագրություն փոխանակեցինք, որից հետո ես անցա պարտականություններիս կատարմանը։

Այդպիսով, այն գիտությանը, որին ես կպել էի հոգովսրտով, արդեն տալիս էր իր արդյունքը։ Ես կարծես մեծ մարդ դարձա։ Հայրս այդ առթիվ հիացած էր և սրտանց հրճվում էր։

Ուրեմն մեր ընտանիքն ամբողջովին աշխատանքի կպավ. հայրս որպես արտելի անդամ, մայրս մյուս կանանց հետ տնային-տնտեսական աշխատանքներ ստանձնեց, իսկ Շիրին քույրս ցուցակագրվեց որպես «հասկ հավաքող»։

Այդ ձևով կարգավորելով մեր գործն ու աշխատանքը, մենք մեկնեցինք դեպի գործատեղը։ Մենք դանդաղ էինք գնում ճանապարհը։ Անցնում էինք կայանե կայան և ամեն մի կայանում հանգիստ էինք առնում։ Մեր այդ աշխատանքային երթը նման էր մի բանակի կամ քոչվոր ցեղի, որը շարժվում է դեպի ամառային արոտները, այն տարբերությամբ միայն, որ մենք շատ քիչ անասուններ ունեինք։ Երեկոյան հասանք

մեր առաջին կայանը։ Այնտեղ կանգ առանք, դաշտի մեջ ճամբար սարքեցինք։ Գիշերային խարույկներն արդեն ճարճատում եյին ուրախ, վորոնց վրա կաթսաներ եյին դրված՝ ընթրիք պատրաստելու համար։ Խարույկների շուրջն էլ նստոտած եյին մարդիկ և հանգստանում եյին ուղվա հոգնածությունից։ Յեվ իսկապես մեր այդ «բանակի» ճամբարում ավելի կարգ ու կանոն կար, քան իրանական հին զորամասերում։

Անցանք Սինեջն ու Քեննհավերը։

Ճանապարհին յես անգործ չեյի մնում։ Վոչ մի մոլլայի կամ ախունդի չեյի բաց թողնում, ամեն առթիվ աշխատում եյի նրանցից մի բան սովորել, ավելի զարգացնել ու խորացնել գիտելիքներս։ Յես ավելի շատ ուշք եյի դարձնում գրելու և հաշվելու վրա։

Յես դեռևս շատ անփորձ եյի, և սկզբնական շրջանում մեծ ջանք եր հարկավոր, վոր հաղթահարեյի մի շարք դժվարություններ, մինչև վոր կարողացա տիրապետել գործիս։

Մի քանի որից հետո մենք հասանք «քեթիրա» հավաքելու գլխավոր վայրը։ Այնտեղ Ղուլամ-Վայիսը կապալով մի հողամաս վերցրեց։ Հողաբաժինի առանձին մասերը վիճակահանությամբ բաժանեց աշխատողների մեջև։ Դրանից հետո բանվորները խումբ-խումբ ցրվեցին իրանց վիճակված հողաբաժիններն աշխատելու։

Հողն ամբողջովին ծածկված եր «գյավանի» թփերով, վորոնց մենք տեղական լեզվով ասում եյինք «փուշ», թեև գյավանի փշերն ավելի խոշոր են՝ քան մեր սովորական, հանդի փուշը, վոր մենք հավաքում և գործ եյինք ածում վորպես վառելիք։

«Գյավանի» հավաքն այսպես եր կատարվում.—գյավանի թուփը բանվորը արմատահան եր անում, հետո արմատը լավ մերկացնում եր, այնուհետև դանակով կամ կացինով արմատի վրա մի քանի տեղից կտրվածքներ եր անում, հետո թողնում եր այդ ու անցնում մյուս թփին։

Այդ ձևով աշխատանքն շարունակվում եր վեց որ՝ առավոտից մինչև յերեկո։ Յոթերորդ որը բանվորը գնում եր «գյավանի» արմատների վրա արված կտրվածքներից դուրս յեկած

խեժը հավաքելու։ Այս արդեն հեշտ աշխատանք էր, վորտեղ կարողանում էին աշխատել նաև կանայք ու աղջիկներ։

Յերբ հիմնական բերքահավաքը վերջանում էր, նույն տեղըն էին գալիս աղջիկներ, կրկին անգամ հետազոտում էին նույն թփերը և հավաքում էին մնացած քեթիրան, յեթե պատահմամբ աչքաթող էին արված բանվորների կողմից։

Հավաքած ամբողջ քեթիրան բանվորները քաշով հանձնում էին արտելապետին, և յուրաքանչյուր մի բաթման քեթիրայի դիմաց իրենց ոգտին մատյանի մեջ գրանցվում էր միայն յերկու սեր քեթիրա։

Այս բոլորը յես ճշտությամբ և մանրամասնորեն նշանակում էի իմ հաշվեմատյանում։ Ամսավերջին հավաքված քեթիրան վաճառականները գալիս, առնում էին որվա գներով։

Յեթե արտելի անդամները պարտք էին վերցրած լինում արտելապետից, յուրաքանչյուր ամսավերջին հաշվեհարդար էր լինում։ Պարտքերը վճարում էին դրամով, իսկ տոկոսի փոխարեն պահանջում էին նատուրայով վճարել՝ այսինքն քեթիրայով—յուրաքանչյուր թումանի դիմաց հինգ սեր։ Միս, ալյուր և այլ մթերքներ ստացողները նույնպես իրենց պարտքերը վճարում էին դրամով։ Այդ վճարումներից ազատել էին մնում միայն որավարձով աշխատողները։ Անշուշտ բանվորների մթերքները բաց էին թողնում կրկնակի գներով։ Բացի դրանից էլ, արտելի անդամները պարտավոր էին ամսվա մեջ մի որ աշխատել արտելապետի ոգտին, այսինքն մի որվա հավաքած քեթիրան պարտավոր էին ամբողջովին հատկացնել նրան։

Մի խոսքով, յերբ հաշվում էինք, արտելի անդամների բոլոր կարգի վճարումները, ապա պարզվում էր, վոր իրենց աշխատանքի դիմաց իրենց համարյա բան չէր մնում։ Այդ պատճառով էլ խեղճերը ստիպված էին լինում արտելից դուրս գալ և աշխատել, վորպես սոսկ որավարձով աշխատողներ։

Առհասարակ բոլոր չարքաշ աշխատողները ժամանակի ընթացքում վարժվում են համբերատարության, յերբ ձախորդության մեջ են ընկնում։ Խեղճ հայրս էլ այդպես էր, նա այլևս վոչ մի բանի վրա ուշադրություն չէր դարձնում։ Նրա համար

կարծես ամեն բան մեկ եր։ Վաղ առավոտ արևը ծագելուն պես՝ մի քանի կտոր հաց եր դնում դաստախունի մեջ, կապում եր գոտկին, վերցնում եր ջրի կուժը, տակը դնելու փալասը, ձեռքի կացինը և գնում եր սարը։ Իր համար մի հարմար տեղ եր ընտրում, փալաս—փուլասով ու փայտերով չադիր եր շինում, ջրի կուժը դնում եր չադիրի շվաքում, հացը ջրի կողքին ու ինքը կպչում եր աշխատանքի։

Իսկապես դժվար աշխատանք եր։ Այնպիսի հոգնածություն եր զգում մարդ աշխատանքից հետո, վոր կարծես ամբողջ որը քար է ջարդել։ Հորս առավելապես տանջում եյին գյավանի փշերը, վորոնք ծակում, անցնում եյին հագուստը և խըրվում եյին մարմնի մեջ։ Յեվ այդ ծանր ու հոգնեցուցիչ աշխատանքի ընթացքում ինչ եր նրա կերածը, վոչինչ—չոր հաց և խմածը գաղջ ջուր։ Խեղճ հորս ձեռն ու վոտը դրանից թուլացել եյին։

Այդպես որերն անցնում եյին որերի յետևից, ծանր ու տառապալից, իսկ հայրս աշխատում եր, հա աշխատում։ Դեռ լավ եր, վոր յես գրասենյակում բարենպաստ դիրքի մեջ եյի, և հայրս ազատ եր մնում մի շարք չարքաշություններից, վորոնցից ազատ չեյին մյուս աշխատողները։

Մայրս ել եր աշխատում։ Բացի իր աշխատավարձից, նա ստանում եր վորոշ քանակությամբ պատրաստի հաց, վորը մեզ համար զգալի օժանդակություն եր։ Քույրս ել վորպես խեժի մնացորդներ հավաքող՝ որական մի բան ել նա յեր աշխատում։

Ընդհանրապես մեր բանը լավ եր համեմատած մյուսների հետ, այնպես վոր յերբ մենք վերջացնելով մեր աշխատանքը, վերադառնում եյինք տուն, մեզանից ամեն մեկս մի ձեռք նոր հագուստ ուներ հագին, մի հատ եշ առանք և յերեսուն թուման ել փող ունեյինք։

Սակայն մենք բացառություն եյինք։

Մեր «բարեկեցությունը» բացատրվում եր նրանով, վոր մենք մի տանից աշխատում եյինք չորս հոգի։

Յես մենակ մի բանվոր-արտելի անդամից ավելի եյի աշխատում։ Մյուսները վերադարձան տուն առանց կոպեկի,

դեռ պարտքի տակ, պատառոտած հագուստով, ճղղված վերմակով ու գլխի հին թաշկինակ—փաթաթանով։

Հասնելով Ցերսֆեջին, մենք ճանապարհներս ծռեցինք և ուղևորվեցինք Ռուդավեր գյուղը, վորտեղ ծնվել եր Շիրազի Հաֆըզ բանաստեղծը։ Այդտեղի բնակիչների մեծ մասը զբաղված ե լինում վոսկեբեր ավազ լվանալով։ Հորս ասացի,—վորպեսզի անգործ չմնանք, արի այստեղ մի գործի կպչենք մինչև գարուն։ Դեռ ձմեռ ե, հողագործության մասին մտածել դեռ շուտ ե։ Վարձվիր այստեղ և աշխատիր վորպես հողափոր, իսկ յես կզբաղվեմ հնավաճառությամբ։

Հայրս համաձայնեց։ Իր համար մի բահ առավ և մտավ աշխատանքի որական տասը շահով։ Այդ գյուղում մի փոքր խրճիթ տվեցին մեզ։ Մայրս, առաջվա պես, դես-դեն ընկավ, տան տնտեսության համար անհրաժեշտ պարագաներ ձեռք բերեց, իսկ յես զանազան մանրուք ապրանքներ առա Թուսիրգանում և սկսեցի մանրավաճառությամբ զբաղվել գյուղերում։

Այսպես մենք մի վորոշ ժամանակ ապրեցինք։ Հանկարծ, մի որ ել այս շրջանում ապրող ցեղի մի քանի տոհմերի մեջ խլրտումներ ծագեցին։ Ռուդավերի բնակիչները թողին իրենց աշխատանքները և զինվեցին, ամրություններ շինեցին, դիրքեր փորեցին և պաշտպանողական դիրք բռնեցին։

Պարզվեց, վոր այդ ցեղի մեջ վաղուց փոխադարձ անհամաձայնություններ ու թշնամություն ե յեղել։ Իրանական կառավարությունը մի քանի անգամ կազակներ եր ուղարկել նրանց դեմ՝ հանգստացնելու թշնամի տոհմերին, բայցևայնպես անկարգությունները չեն դադարել։ Պաշտոնյաների կաշառակերության հետևանքով տոհմերի փոխադարձ թշնամություններն ավելի զարգացել ու խորացել եյին, և այժմ այդ թշնամությունն արտահայտվում եր վորպես իսկական պատերազմ։

Թշնամի տոհմերը այլևս չեյին լսում նահանգապետին, չեյին ճանաչում կառավարության իշխանությունը և հարձակվում եյին իրար վրա։ Ամենուրեք սպանություն, կողոպուտ։ Լեռնային կիրճերում, ձորերում ու հովիտներում վորոտում եյին համազարկերը, արշավում եյին ձիավոր զորամասեր, գյուղեր ու ավաններ եյին կործանվում ու ավերվում, հարյու-

բավոր մարդիկ եյին սպանվում ու կոտորվում միանգամայն անմիտ կերպով ու աննպատակ, բայցևայնպես. այս բոլորից հետո չկար մեկը, վոր դուրս գար ու վերջ տար այդ անկարգություններին, դադարեցներ արյունհեղությունը:

Մի անգամ գիշերը Ռուզավերի բնակիչները պաշարման շղթան պատռեցին և հարձակվեցին հարևան գյուղի վրա, վոր հակառակորդ տոհմի գյուղերից եր՝ բնակված Աջիլ-բեկի տոհմացիններով:

Հաջողությունը ռուզավերցիների կողմն եր: Աջիլ-բեկի մարդիկ շատ սպանվածներ ու վիրավորներ տվեցին, մնացածներն ել թողին գյուղն ու փախան և թագնվեցին լեռներում: Ռուզավերցիները մտան գյուղը, բոլոր տները հրդեհեցին: Հաղթահարելով թշնամուն, և համարյա վոչնչացնելով նրան, ռուզավերցիները վերադարձան իրենց տեղերը և նորից անցան իրենց սովորական աշխատանքներին:

* * *

Այդ կռիվներից հետո, մի անգամ մի աղջիկ ինձ մոտ արծաթի նման սպիտակ մետաղի մի կտոր բերեց և խնդրեց փոխարենը տալ իրեն իմ շարժական «խանութից» մի քանի մանր մունր գործածական իրեր: Յես չմերժեցի, վորոշ չափով մանրուք տվեցի և մի քանի ղռան ել փող: Յերեկոյան տանը խարտոցով ուզեցի փորձել և իմանալ, թե իրոք այդ մետաղի կտորը արծաթ ե՝ թե վոչ: Պատահմամբ ձեռքիցս սահեց և ընկավ թոնրի մեջ: Մայրս բահը վերցրեց և կրակի միջից դուրս բերեց մետաղի կտորը: Սակայն յես զարմանքով տեսա, վոր իմ սպիտակ «արծաթի կտորը» դեղնել ե կրակի մեջ և դարձել ե ավելի փայլուն: Սկզբից կարծեցի, թե դա բրոնզ չե, իսկ հետո յերբ համեմատեցի վոսկու ավազի հետ, և ուշադրությամբ դիտեցի, տեսա, վոր դրանց մեջ վոչ մի տարբերություն չկա: Ուրեմն դա վոսկի յեր, իսկ յես այդ բանում գլխի չեյի ընկնում, թեև համաղանցիք ինձ հետ այդ մասին շատ եյին խոսել:

Այսպես, կյանքը մարդու շատ բան ե սովորեցնում: Այն

ժամանակ, յերբ հայրս յերազում եր հողի և հողագործության մասին, յես յերազում եյի վոսկու մասին։ Բացի վոսկուց, յես առնում եյի ամեն տեսակ քարեր, վոսկու ավազ։ Հենց վոր բերում եյի մորս, առիթը չեյի բաց թողնում, անպայման առնում եյի և փոխարենը իմ «խանութից» տալիս եյի զանազան մանրուք ապրանքներ։

Վերջապես ամբողջ ապրանքիս պաշարն սպառվեց և յես համադանցի վոսկեվաճառների հետ միասին ուղևորվեցի դեպի Համադան։ Այդտեղ յես տեղավորվեցի Իջևանում, գիշերեցի և առավոտյան դուրս յեկա շուկա։ Շուկայում իսկույն մի գնորդ վաճառական պատահեց։ Յես արդեն բավական փորձառություն ունեյի առուծախի մեջ, ուստի այդ վաճառականին հազիվ թե հաջողվեր խաբել ինձ և եժան գնով առնել ինձանից արծաթն ու վոսկին։ Բացի դրանից, մի քանի գունավոր, թանգարժեք քարեր ել ունեյի, իսկ դրանցից յես բան չեյի հասկանում և հեշտությամբ կարող եյի խաբվել և եժան գնով ձեռքից տալ, դրա համար միանգամից բարձր գնից բռնացրի, ուղղակի յերեք անգամ ավելի գին պահանջեցի, քան յես հույս ունեյի ծախելու։ Այսպես թե այնպես յես գիտեյի շուկայի սովորությունները, այդ պատճառով ել վորոշեցի առևտուրիս մեջ խիստ ձև մտցնել, բայց ինձ հանդիպած վաճառականը առաց մի խոսք ասելու և առանց սակարկության վճարեց իմ պահանջած գինը և նույնիսկ վորպես հավելում ինձ մի դաստա ել թուղթ նվիրեց։ Դեռ ավելին, այդ վաճառականը խնդրեց վոր այսուհետև ել, նման քարեր ձեռքս ընկնելիս՝ բերեմ և վաճառեմ իրեն լավ գնով։

Այժմ յես բավական կարողություն ունեյի։ Յերբ հաշվեցի, դուրս յեկավ հիսուն թուման։ Ուրախությանս չափ չկար։ Անմիջապես գնացի շուկա, ինձ համար գրքեր գնեցի, մըկրատ ու որացույց առա։

Բայց վո՜րքան կոպիտ մարդիկ եյին շուկայի առևտրականները և ինչպիսի ատելությամբ ու արհամարհանքով եյին խոսում ինձ հետ և ինձ նմանների հետ։

— Եշ գեղըցի, քո՛ւրդ, լո՛ւ,— ասում եյին նրանք։

Նրանց վերաբերմունքն այնպես եր, վոր կարծես նրանք մեզ մարդ չեն համարում։ Կեղտոտ հայհոյանքներով նրանք

հրում էյին գյուղացիներին, մանավանդ այն խեղճ ու կրակ-ներին, վորոնք քաղաք են բերում ծախելու զանազան մը-թերքներ—վառելափայտ,ածուխ, պանիր, շոռ, յուղ, բուրդ և այլն։

Փոխանակ հյուրասիրություն ու գուրգուրանք ցույց տալու, գռեհիկ խոսքերով հայհոյում էյին, բոթում, բշտում, հրում, ծեծում և այլն։ Մարդավայել վերաբերմունքի վոչ մի նշույլ։ Քաղաքի գնորդներն ամեն կերպ վիրավորվում ու ստորացնում էյին այդ խեղճ մարդկանց և օգտվելով իրենց անպատասխա-նատվությունից, շահագործում էյին այդ մարդկանց չքավորու-թյունը, խեղճությունը, և նրանց մթերքները համարյա թե վոչ թե առնում էյին, այլ կարծես թե կողոպտում, թալանում էյին, շպրտելով նրանց շատ չնչին գին։ Իսկ յերբ նույն գյուղացիները ուզում էյին նրանից մի վորևե բան առնել, նրանց հրամցնում էյին ամեն տեսակ փտած, կեղծված ու փասպանդա ապրանքներ և սաղացնում էյին շատ թանդ գներով։ Ցեվ այս բոլորն անում էյին նրանք առանց խղճի խայթ զգալու։ Միթե զզվելի չէ քաղաքացիների նման վերաբերմունքը։

* * *

Առևտուրս վերջացրի, վերցրի եշս ու Շահրիստանի լեռ-նանցքով ուղևորվեցի տուն։ Լեռնանցքում հասա քարաշեն պահականոցին։ Մի քանի զարասուրաններ ճանապարհս փակե-ցին և պահանջեցին վճարել մեկ ղռան։ Ինձ հետ գնում էյին նույնպես մի քանի գյուղացիներ՝ պարկերն ուսերին։ Նրանցից էլ պահանջեցին տաս-տաս շահի։

Ցես հարցրի բարկացած.

— Սա ինչ բռնություն է։ Չէ՞ վոր այդ մարդիկ անասուն չունեն իրանց հետ. ինչու համար եք դրանցից փող պահանջում։ Տեսնում եք մարդիկ իրենց ծանրոցները շալակով են քաշ տա-լիս։

Պահակը բացատրեց, վոր դա վաղուցվա սովորություն է։ Այդ սովորությունը համարյա օրենք է դարձել և վաղուց գոր-ծադրվում է։—Առաջ Թուսերւանից շատ մարդիկ էյին անցնում

այս ճանապարհով,— ասաց պահակը,— վորոնք քաղալակներով խաղող եյին տանում ծախելու։ Ղարասուրանները նրանցից ճանապարհատուրք եյին վերցնում մեկական ղռան՝ հաշվելով նրանց յուրաքանչյուրին վորպես մի բեռնակիր անասուն։ Յերբ հանգուցյալ շահը Թուսերղանով Քյալբալա յեր գնում, այս շրջանի մրգավաճառները դիմեցին ողորմածիկ շահին և խնդրեցին, վոր իրենց ազատի այդ ծանր տուրքից։

Աստված արդարամիտ, ժողովրդասեր շահի հոգին լուսավորի, նա հրաման արձակեց, վոր այսուհետև Թուսերղանից յեկող-գնացող շալակավորների յերկուսը հաշվեն մեկ անասուն։ Այդ օրվանից մենք յուրաքանչյուրից տասը շահի յենք վերցնում, իսկ առաջ ամեն մեկից մի-մի ղռան եյինք առնում։

Այդ պատմությունը վոր լսեցի, ակամա հառաչեցի։ Այդ մասին պիտի գրքերում գրել, վոր մինչև հավիտյան հիշատակ մնա... Ահա ձեզ մարդը— արարչության թագն ու պսակը։

Պահակի պատմության մեջ խոսքը չեր վերաբերում ի հարկե շահին, նրա մինիստրներին, սարդարներին, թագաժառանգներին և վոչ էլ վաճառականներին կամ քաղաքի յերևելիներին։ «Արդարադատ» շահը հրամայել է յերկու աշխատավոր գյուղացու հաշվել մեկ անասուն, ահա խոսքն ո՛ւմ եր վերաբերում։ Շատ մտածեցի ու խորհեցի այդ մասին և նորից վերհիշեցի, թե ինչպես եյին համադանեցիք ծաղրում և արհամարհում գյուղացի մարդկանց։

— Գնալ, գնալ. հեռանալ,— ասում եյի ինքս ինձ,— գնալ բնակություն հաստատել մի վորևե քաղաքում, դառնալ քաղաքի բնակիչ. «գյուղացի» անունը վայր գցել վրայից, գուցե այն ժամանակ մարդու տեղ դնեն մեզ։

Այդ մտքերով պաշարված՝ գնում եյի ճանապարհս և չիմացա, թե ինչպես հասա տուն։ Մերոնք շատ ուրախացան, վոր տեսան ինձ։ Նրանք ինձ ժամեժամ սպասելիս են յեղել։ Շատ եյին անհանգստացել, թե մի բան պատահած չլինի ինձ։ Իսկույն եշը գոմն արին, բեռը քաշ տվին տուն։ Սկսեցինք զրույց անել։ Նրանք շարունակ պատմում եյին գյուղի կյանքից, իսկ յես նրանց պատմում եյի իմ տեսածներից ու լսածներից։

* * *

Դեռ գարունը չէր բացվել, որ հողագործություն անեյինք, մյուս կողմից էլ, իմ մանրավաճառությունը հաջողություն չէր ունենում, որովհետև բոլոր գյուղերում էլ համարյա խանութներ կային, իսկ գնորդները շատ քիչ էին։

Հորս առաջարկեցի միասին գնալ Լուրիստան մանրավաճառություն անելու։ Այդ շրջանի մարդիկ մեզ ցեղակից էին և խոսում էին նույն լեզվով և բացի դրանից պատմում էին, որ այնտեղ ապրանքի պահանջ շատ կա, կարելի յե բավական փող աշխատել։

Այդպիսով բարձեցինք մեր ապրանքներն ավանակին՝ ճամբա ընկանք դեպի Լուրիստան։ Շուտով հասանք Ալիշթար և ապա Խավա։ Շրջելով գյուղից գյուղ՝ մենք ծախում էինք մեր ապրանքները—հնոտի հագուստներ, թել ասեղ և այլն։ Բայց այստեղ էլ բնակչությունն այնքան աղքատ էր, որ մեր եժանագին ապրանքները շատերի համար անմատչելի էին։

Այդ շրջանի մարդիկ չքավոր էին և ամեն տեսակետից կարիքավոր։ Գյուղացիներից մեկի ասելով իրենց կառավարում էր Մեհր-Ալիխան անունով մեկը, որը հարկ ու տուրքի անվան տակ՝ ամեն տարի նրանց կողոպտում էր մինչև վերջին կոպեկը։ Այդպես էին վարվում նույնպես մյուս խաները։ Լուրիստանի գյուղացիները համարվում են իրենց հողի ու ջրի տերերը. և յեթե այդ խաների անորինակ շահագործություններն ու ճնշումները չլինեյին, գյուղացիք կարող էին Իրանի ամենաբարեկեցիկ գյուղացիները լինել։

— Բայց ի՞նչպես եք հանդուրժում այդ խաների շահագործությանը,— բացականչեցի յես, ինչու չեք գանգատվում։ Դիմեցեք կառավարությանը, թող նա զբաղվի այդ հարցով և վերջ տա ձեր ճնշումներին։

Մեզ պատմող մոլլա Մանուչարը յերբ լսեց ինձ, ձեռքերը շփեց, ժպտաց ու ասաց.

— Կառավարությո՞ւն... Կառավարությունն ինքն է մեր տները քանդում. նա յե մեզ մատնում կողոպուտի։

Յեվ նա բացատրեց մեզ, թե ինչպես է այդ բանը կատարվում։

— Ամեն տարի կառավարությունը Լուրիստան է ուղարկում մի նոր նահանգապետ։ Այդ նոր նահանգապետը պաշտոնի մեջ նշանակվում է մի քանի թանգարժեք նվերներ Թեհրան տանելով։ Առանց դրան չի կարելի։ Բարձր պաշտոնն առանց մեծագումար կաշառքների և թանկարժեք ընծաների վոչ վոքի չի տրվում։ Յերբ այդ ճանապարհով նորեկը նահանգապետ է դառնում և գալիս է իր պաշտոնատեղին, նա արդեն վոչ մի բանի մասին չի մտահոգվում բացի այն բանից, թե ինչպես յետ վերադարձնի իր տված կաշառքների և ընծաների համար արված ծախսերը։ Ժողովրդի մասին վոչ վոք չի մտածում։ Նորեկ նահանգապետը կանչում է խաներին և նրանց հետ սկսում է մի կատարյալ առևտուր, թե նրանցից ով ավելի շատ կաշառք ու ընծա կտա իրեն, դրա համաձայն էլ սրան կամ նրան գործուղում է այս ու այն շրջանը գավառապետի պաշտոնով։

Գավառապետ նշանակված խանը նահանգապետին ընծաներ է տալիս՝ նայելով իր կարողության ու նահանգապետի հեղինակավորությանը։ Յերևակայեցեք, վոր ամեն գավառապետ միջին հաշվով վճարում է քսան հազար թուման։ Դրանից հետո խանը մտածում է «մալիաթը»՝ այսինքն հողային հարկը և այնուհետև անասունների հարկը։ Ինքը վորքան ասես կարող է ժողովրդից գանձել։ Ո՞վ է նրա ձեռքը բռնողը կամ արգելողը։ Չե՞ վոր նրան գավառապետ նշանակելիս նրան ասել են—«Նըստիր գավառում քեզ համար հանգիստ ու կառավարիր, վոչ վոք չի համարձակվի քեզ ձեռք տալ, միայն ճշտորեն ու ժամանակին մուծիր հարկերը»։ Գավառապետ-խանն էլ այդպես է անում։ Ինքը կառավարության հասնելիքը տալիս է, իսկ այնուհետև ինքը գիտի, թե վորքան կկորզի ժողովրդի ջանից։

Բացի դրանից, խաները մի յեկամուտ էլ ունեն իրենց գավառում—դա հողային տուրքի տարեց տարի մնացած ապառքներն են, վորոնց գումարն մի տարվա հարկի գումարից շատ ավելի գերազանցում է։ Իսկ ինչ է գավառապետ նշանակված խաների նպատակը,—փող դիզել ու հարստանալ։ Այդ նպատակին հասնելու համար, նրանք վոչ մի բանի առաջ կանգ չեն

առնում։ Վորքան ընծա ու կաշառք ասես, տալիս են գավառապետին, միայն թե վորևե շրջանում գավառապետ նշանակվին ու «մալիաթի» ապառքների գանձման իրավունքը ձեռք գցեն։ Այդպես էլ լինում է։ Նշանակվում են գավառապետ, ընթացիկ տարվա տուրքը գանձում են և հանձնում կառավարությանը, իսկ անցյալ տարիների ապառքները հավաքում են և կես են անում նահանգապետի հետ։

Աչքդ բարին տեսնի... սկսվում է մի անխնա թալան ու կողոպուտ։ Այդպես է ամբողջ Իրանում, հետևաբար այդպես է նաև Լուրիստանում, բայց միայն լեռնային շրջանում այդպես չէ։ Լեռնային շրջանը, վորտեղ մենք ենք ապրում,—շարունակեց մոլլա Մանուչարը,—իսկապես մի լեռնաստան է։ Այդտեղի ժողովուրդն ազատասեր է, քաջ և ուժեղ։ Նա ճնշումներ չի սիրում և յեթե նահանգապետը մի քիչ սեղմում է, ժողովուրդը վոտքի յե կանգնում, ապստամբվում է։ Յեվ իրոք, ով կարող է հանդուրժել այդ տեսակ կամայականությունը։

Ճիշտ է, ժողովուրդն ապստամբվում է, բայց ապստամբությունններն էլ չեն օգնում։ Իշխանությունը լավ գիտե, թե ինչպես պետք վարվել նման դեպքերում։ Նա սկսում է խաներին միմյանց դեմ լարել ու բանը հասցնում է զինված ընդհարման, իսկ վորտեղ կա ընդհարում կամ պատերազմ, այնտեղ լինում է նաև հաղթող, իսկ հաղթողն էլ այնպես է կողոպտում գյուղացիներին, վոր արյուն էլ չի մնում նրանց յերակների մեջ։

Այդպես ենք ապրում։ Դա կյանք չէ, այլ կատարյալ դըժբախտություն։ Հացի փոխարեն անտառներից կաղին ենք հավաքում, ուտում։

Մոլլա Մանուչարն այս խոսքերով վերջացրեց իր պատմությունը։

* * *

Մենք անցանք Լուրիստանով և հասանք մինչև Շուշտար— Հին Սուզային—վոր հին ժամանակներում Իրանի յերկրորդ մայրաքաղաքն է յեղել։ Բալրաքվենդ ցեղի հողերով մենք անցանք դեպի հյուսիս, հասանք Բուրուջերդին։ Մենք անցնում

էյինք Լուրիստանի լեռնալանջերով, սքանչելի անտառներով ու դաշտերով։ Հայրս, որ տակավին չէր մոռացել իր հայրենի հողը, շարունակ բացականչում էր.

— Ա՛յ, հողե՛ր, ա՛յ, ինչ եմ ասում, ա՛յ թե վո՛րտեղ պիտի մարդ ապրի և աշխատի։

Հայրս հատկապես հիացած էր գյուղացիների ագարակներով ու հողերով, որոնք պատկանում էյին գյուղացիներին, բայց միշտ էլ կարող էյին ձեռքից ձեռք անցնել, քանի որ Լուրիստանում գյուղացու կյանքն ու գույքը շարունակ կապված է կողոպուտի և հազար ու մի վտանգների հետ։

— Հարուստ գանձը ընկած է գետնին,—շշնջում էր հայրս,—բայց ի՜նչ արած, հրեշը նստել է նրա վրա և պահպանում է այդ գանձը. Ո՞վ կարող է նրան ձեռք տալ։

Այսպես մենք առևտուր անելով՝ յեկանք հասանք Բուրուջերդ։ Մենք արդեն ունեյինք մի քանի ոչխար և մի բեռ յուղ։ Բուրուջերդում էլ անմիջապես գնորդ պատահեց։ Դա տեղական վաճառականներից էր, անունը Հաջի-Ջաֆար, մի բարեհամբույր մարդ, մոտ քառասուն տարեկան։ Նա իսկույն վերցրեց մեր ոչխարներն ու յուղը և ուղարկեց իր խանութը, իսկ մեզ առայժմ տվեց մեր ապրանքի արժեքի կեսը որպես կանխավճար։

Հետևյալ առավոտ մենք գնացինք Հաջի-Ջաֆարի խանութը, որպեսզի մեր հաշիվները փակենք։ Հարգանքով բարևեցինք, հարցրինք առողջությունը և խնդրեցինք փակել մեր հաշիվները։ Հաջին անցավ իր խանութի խորքը և այնտեղից վերադառնալով՝ մեզ մի կտոր յուղ տվեց, որի հետ այծի ճարպ էր խառնած։

— Ահա ինչպիսի յուղ է ձեր յուղը,—ասաց Հաջի-Ջաֆարը,—յուղը կեղծված է. հավանորեն ոչխարներն էլ գողանովի յեն։ Փողս յետ տվեք, ստացեք ձեր յուղը։

Ի զուր յես ու հայրս յերդում կրակն ընկանք, թե այդպիսի բան չկա, յուղը լավն է, մեր կողմից ոչ մի կեղծիք չի յեղել։ Հաջի-Ջաֆարն այն աստիճանի լկտի դիրք էր բռնել, որ ոչինչ չէր կարելի հասկացնել և հավատացնել նրան։

Հայրս նրան ասաց.

— Մենք առհասարակ յուղի առևտուր չենք անում և չենք էլ իմանում, թե ինչպես են յուղը կեղծում, և բացի դրանից, մենք խարդախությունների սովոր մարդիկ չենք։ Այդ դուք եք ուրիշ, դուք եք ամեն կեղտոտ բան խառնել յուղին։

Այս ասելուն պես՝ տեսնենք Հաջի-Ջաֆարն ու իր գործավարը թռան նստարանի վրայից ու հարձակվեցին մեզ վրա ու ինչով ասես՝ տուր թե կտաս։

— Ախ դու, երվածի զավակ,—ասում էր Հաջին հորս,— դու ինձ խարդախ ես անվանում։ Դե հիմա ես քեզ խարդախ ցույց կտամ։

Ասում էր ու գործակատարի հետ միասին հարվածում էին հորս։ Մյուս վաճառականներն էլ դուրս թափվելով իրենց խանութներից, նրանք էլ սկսեցին վորը կոշիկով, վորը բռունցքով թակել թե հորս և թե ինձ։ Գոնե մի ազնիվ մարդ դուրս գար և մեզ պաշտպանություն ցույց տար։

Վերջապես մի քանի քուրդ բեռնակիրներ միջամտեցին և հազիվ ինձ ու հորս կիսակենդան դուրս կորզեցին նրանց ձեռքից։

— Ի՞նչ եք ասել Հաջուն, վոր նա այդպես ձեզ վրա բարկացել է,—հարցրին քուրդ բեռնակիրները։—Ի՞նչ եք գլուխ դնում նրա հետ։ Չգիտե՞ք, վոր այնքան փող ունի նա, այնքան հարուստ է, վոր բոլոր վաճառականները նրա ձեռները լիզում են։ Երբ Հաջին ձեզ խփում է, բոլորն էլ պիտի խփեն, և իսկի չեն էլ հարցնելու, թե բանն ինչումն է, հենց էնպես, կխփեն ձեզ, վորպեսզի նրան դուր գան։

Ես քուրդ բեռնակիրներին պատմեցի վոչխարների և յուղի մասին։ Մեր բարբառից բեռնակիրներն իմացան, վոր մենք իրենց հայրենակիցներն ենք, քրդստանցի չենք, ուստի սկսեցին մեզ կարեկցել ու հանգստացնել։

— Հաջի աղան,—ասացին նրանք,—սուրբ մարդ է։ Այստեղի հոգևորականները Հաջուն իրենց աջ կողքին են նստեցնում։ Նեջեֆի մուշտեյիդներից մինչև իսկ նա թուղթ ունի, վոր հավատացյալ մուսուլմանները կարող են նրան հանձնել դատական տուրքերն ու իմամի ոգտին գանձվող վճարները, վոր նա իր հերթին հասցնի Նեջեֆ։

Նահանգապետներն անգամ նրան ոգնում են։ Յեվ ինչպես կարող են չօգնել, յերբ նրանք Թեհրանից գալիս են նման են լինում քաղցած գայլի։ Ագահի պես աչքները գցում են նրա ունեցվածքին և մտածում են, ինչպես անեն Հաջուց փող պարտք վերցնեն։

Հաջին բոլոր հարկահավաքներին, աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին իր ձեռքի մեջ է պահում։ Այս բոլորից հետո՝ դուք ինչ եք նրա առաջ։ Գոհ յեղեք, վոր նրա ձեռքից վողջ-առողջ դուրս պրծաք։

Բեռնակիրների ավագը գնաց Հաջու մոտ և ամեն տեսակ ստորացուցիչ ձևերով խնդրեց, վոր նա խղճա մեզ գոնե և մի քիչ ել փող տա։ Պետք է ասել, վոր մասամբ հաջողվեց, բայց մեծ մասամբ այդ անվանի հարուստ Հաջին մեր փողի մի մասը կուլ տվեց ու մարսեց այնպես դյուրին կերպով, ինչպես ծծում, կուլ է տալիս ու մարսում է մանուկը իր մոր կաթը։

Ի՞նչ կարելի յեր անել։ Իրանում այդպես են վարվում ամենուրեք աշխատավորների հետ, մանավանդ յեթե այդ աշխատավորն անզգուշությամբ ել քուրդ է, կարծես բոլորն ել պարտք են համարում նրան բշտել, վիրավորել։

Հոբս հետ այդտեղից հեռացանք։

Մտանք շուկան, անցանք խանութներով, մի քանի անհրաժեշտ ու կարևոր բաներ առանք, բարձեցինք ավանակին և շարժվեցինք առաջ։ Անցանք Բուրուջերդից Նեխավինդ, Նեխավինդից Թուսերղան, անցանք գյուղե գյուղ, ամեն տեղ ել առաջարկեցինք մեր ապրանքները։ Վորոշ քանակությամբ իրեր ճանապարհին փոխանակեցինք յուղի ու բրդի հետ։ Այսպիսով վերջապես յեկանք, հասանք տուն։

* * *

Յերբ տուն յեկանք, մայրս ու քույրս պատմեցին, վոր մեր բացակայության ժամանակ կալվածատիրոջ ծառան յեկել է մեր տունը, այն ել մի քանի անգամ, և պահանջել է վճարել հարկը, իսկ իրենք խնդրել են վորոշ ժամանակ հետաձգել մինչև մեր վերադարձը։ Յերեկոյան դեմ կալվածատիրոջ ծառան իմանալով, վոր մենք վերադարձել ենք, ինքն յեկավ։ Ի հարկե,

ինչպես հարկն էր, մենք նրան հյուրասիրեցինք։ Նա կերավ, խմեց և ասաց.

— Դե՛, ինչ վոր տալու յեք տվեք, յես գնալու յեմ։

Յես ասացի,—խնդրեմ, միայն թե մենք հիմա տնտեսություն չունենք, վոր հողային տուրք տանք։ Յեթե մեր բնակած տան համար մի բան պիտի վճարենք, ասացեք, վորո՛նք պիտի վճարենք, պատրաստ ենք վճարելու։

Նա գլուխը տարավ—բերեց։

— Վո՛չ,—ասա՛ց նա,—մեզ մոտ—Թուսերղանում որենքն այնպես է, վոր հարկը վճարվում է ըստ ծխի և շնչի։ Ձեզ յերկու տուն ունեք, ուրեմն ձեր տնից յերկու ծուխ է դուրս գալիս, կնշանակի ծխերի համար դուք վճարելու յեք մեկական թումանի հաշվով—յերկու թուման։ Դուք չորս շունչ եք, մի շունչ էլ եշը՝ ընդամենը հինգ շունչ։ Յուրաքանչյուր մարդու համար պիտի վճարեք հինգ ղրան, ուրեմն չորս հոգու համար յերկու թուման, իսկ ավանակի համար պիտի վճարեք յերեք ղրան։ Ի միջիայլոց, ձեր եշը եգ է, շուտով քուռակ է բերելու, հետևաբար, չպետք է հաշվել մեկ եշ, այլ յերկուսը, ուրեմն վճարելու յեք եշերի համար վեց ղրան։ Բոլորը միասին անում է չորս թուման, վեց ղրան, իսկ յերկու հավի համար տալու յեք քսան ձու—տասական ձու յուրաքանչյուր հավից։

Մենք մնացել էյինք ապշած այս տեսակ հաշվարկումից։

— Ի՛նչպես թե, վրա տվինք մենք կարծես բոլորս միասին,—նախ մեր տունը մի ոջախ է վառվում։ Յերկրորդ՝ հայտնի չէ, եշը ծնելու յէ թե՝ վոչ, կարող է իսկի չծնի։ Իսկ հավերը... գուցե վաղը մենք հավերը մորթում ենք։ Յեվ վերջապես վճռեցինք վճարենք այդքան փողը։

Այստեղ կալվածատիրոջ ծառան արդեն բարկացավ։

— Ափսոս վոր դուք Թեմա-Ոլ-Մուլքի ճանկը չեք ընկել,—ասաց նա,—այն ժամանակ դուք այդպես չէյիք խոսի։ Նա յերկաթի մի ողակ էր շինել տվել։ Բերած ձուերը նա դնում էր ողակի վրա. յեթե ձուն ողակով անց էր կենում, նա յետ էր տալիս, չէր ընդունում։—Դե, տար և խոշոր ձու բեր, ասում էր նա։—Յեվ գյուղացին գնում էր խոշոր ձու փնտրելու։ Ա՛յ, քեզ կալվածատեր։ Նա այնպես էր սարքել բանը, վոր տարվա մեջ մի որ չկար, վոր գյուղացու փող չմտներ նրա գրպանը։ Յեթե

փող չէր ստանում, անասուն էր ստանում, անասուն չէր ստանում, յուղ էր ստանում, այդ էլ չէր ստանում, բուրդ էր ստանում, կամ փալաս, կարպետ, պանիր պաստեղ և այլն և այլն։ Դուք պիտի շատ գոհ լինեք, վոր ընկել եք ազնիվ ու բարեխիղճ կալվածատիրոջ ձեռք։

Էլ ճար չկար։ Իրոք գոհ յեղանք, վոր այդպես «բարեխիղճ» մարդու ձեռքի տակ ենք գտնվում։ Սուս փուս վճարեցինք այնքան, վորքան մեզնից պահանջում էր կալվածատիրոջ ծառան։

***

Ինձ մոտ մի քանի թանգագին քարեր կային և մի քիչ էլ վոսկու ավազ։ Ուզում էյի ծախել։ Քարերի մեջ մի լավ ալմաստ ունեյի։ Հորս հետ գնացինք Համադան, այնտեղ գտանք իմ ծանոթ հրեայի խանութը, ներս մտանք և առաջարկեցինք մեր ապրանքները։ Հրեան խանութը փակեց և մեզ տարավ իր տունը։ Այնտեղ նա ուշադիր ու մանրազնին կերպով քաշեց վոսկու ավազը և որվա գնով վճարեց նրա արժեքը։

Հետո յես տվեցի նրան թանգագին քարերը։ Նա դրանք էլ գնահատեց և արժեքները վճարեց։ Բայց ալմաստը յես չտվեցի նրան։ Յես չգիտեյի, թե վորքան արժե նա, և վախենում էյի հրեան խաբի ինձ։ Վերջապես յես նրան ասացի, վոր յեթե խոսք տա ինձ հետ արդարացի ու բարեխղճորեն վարվել, յես իրեն կտամ մի շատ լավ և թանգագին իր։ Նա յերդվեց Մովսեսով ու Մուհամմեդով, վոր այդպես էլ կանի։ Այդ ժամանակ յես գրպանիցս հանեցի ալմաստը և ցույց տվեցի նրան։

Հրեան յերկար ու մանրազնին դիտեց ալմաստը. շուռ ու մուռ տվեց ձեռքում, յերկար մտածեց և առաջարկեց հիսուն թուման։

Յես սարսափեցի։ Հիսուն թումանը ահագին կարողություն էր։ Յես ինձ այնպես զգացի, վոր կարծես թե մի ծանր հանցանք էյի գործել և այդ հանցանքի համար անպայման պիտի պատիժ կրեյի։ Քիչ էր մնում հրաժարվեյի այդ փողից։ Բայց անմիջապես յես մտաբերեցի մեր չքավորությունը, հիշեցի, թե ինչպես բախտը մեզ միշտ հալածել է, թե վորքան անարգար

վերաբերմունք են ցույց տվել մարդիկ դեպի մեզ։ Պատկերացրե՛ք, թե ինչ մռայլ ապագա կա մեր առաջ։ Հիշեցի նույնպես, թե հայրս ու մայրս ինչ զրկանքներ են կրել, ու փոքրիկ խեղճ քույրս ցնցոտիների մեջ է մեծացել։ Ինքս ինձ ասացի, «չէ՞ որ դա մեր բախտն է, որ այդ թանկարժեք բանն ընկել է իմ ձեռքը»։ Ճիշտ է, այդ ալմաստը յես շատ եժան գնով եյի ձեռք բերել։ Ընդամենը նրան մի քանի թուման փող եյի տվել, բայց յես նրա գինը չեյի իմանում, նրան վճարել եյի այնքան, որքան կարող եյի տալ. ինձ թվում եր նույնիսկ, թե շատ եմ տվել։ Այդպիսով յես ինձ հանգստացրի և ինձ ներշնչեցի, որ իրոք յես ոչ մի հանցանք չեմ գործել, հետևաբար ինձ ոչինչ սպառնալ չի կարող։

Այժմ յես մտածում եյի, թե մի գուցե վաճառական հրեան ինձ խաբի, բայց ոչ, նա կարծես իմ միտքը կարդաց և ինձ հանգստացնելու համար փողերը հանեց։ Բայց այստեղ յես սկսեցի սակարկել, և այնքան սակարկեցի համառորեն, որ ստիպեցի հրեային ալմաստի գինը բարձրացնել մինչև յոթանասուն թումանի։

Հրեայից դրամներն ստացանք, այդտեղից գնացինք շուկա, մի քանի բաներ առանք և ուղևորվեցինք տուն այն ուրախ տրամադրությամբ, թե այսուհետև լավ պիտի ապրենք։

Ահա մենք տանն ենք։ Բայց ի՜նչ տեսանք, յերբ հասանք տուն։ Մեր տունը դատարկված եր, և ոչինչ չեր մնացել այնտեղ, ամեն ինչ կոտրտված ու ջարդուփշուր եր արված։ Շատ բան տնից տարված եր։ Մայրս ու քույրս մնացել եյին չոր տափին։ Նրանք լաց եյին լինում։

Մեր բացակայության ժամանակ Աջել-բեկ գյուղի բնակիչները հարձակվել եյին Ռուղավերի վրա, գնդակոծել եյին ժողովրդին, մտել եյին գյուղը, կողոպտել եյին տներն ու գնացել։ Մեր տունն էլ եյին կողոպտել։ Խեղճ մայրս ու քույրս յերկու որ քաղցած եյին մնացել։

Սարից փուշ ու չալու բերեցինք, կրակ արինք և ամբողջ գիշերը նստեցինք կրակի շուրջը։ Առավոտյան յես գնացի Թուսերղան. յերկու վերմակ, մի քեչա ու մի ջեջիմ առա, որովհետև ամեն ինչ թալանել եյին ավազակները։ Յերբ յես վերադարձա քաղաքի շուկայից, հայրս ու մայրս ինձ հայտնեցին,

վոր աղային մեկն ասել է, վոր իբր թե յես մի ալմաստով մատանի յեմ գտել և տարել, շարունակ ծախել եմ, դրա համար էլ աղան բարկացել է, ուզում է տուգանել և կալանավորել ինձ։

Մենք վորոշեցինք փախչել Ռուդավերից հենց նույն գիշերը և բնակություն հաստատել մի ուրիշ տեղ՝ Քիրմանշահի շրջանում։ Այդպես էլ արինք։ Էշը բարձեցինք և ճանապարհ ընկանք։

Ճանապարհին ինձ պաշարել եր այն միտքը, վոր յես մի սարսափելի բան եմ արել, այսինքն՝ ընդդիմացել եմ ճակատագրին, վորը մեզ այնքան համառորեն ու դաժանորեն հալածում է և աշխատում է մեզ պահել չքավորության ու դառն աղքատության ճիրաններում։

Ուրեմն, խուսափելով ճակատագրի հալածանքներից, յես գտնում եյի, վոր ծանր հանցանք եմ գործել և այժմ յես փախչում եմ նրա դատաստանից ինչպես մի չարագործ։

Մենք հասանք Քենհավեր, այնտեղից անցանք Սեննա և վերջը մտանք Բիսհիթուն։ Ճանապարհին մենք հինգ տեղ փող վճարեցինք ղարասուրաններին։

Բիսհիթունում կարող եյինք գյուղատնտեսությամբ զբաղվել, վորովհետև հիմա արդեն փող ունեյինք։ Մենք կարող եյինք մի զույգ լավ յեզ առնել, մի քանի այծ, կարող եյինք սերմացու ցորեն առնել, և հայրս հնարավորություն ուներ իր առաջվա զբաղմունքը շարունակել, վորից նա յերկար ժամանակ դաժանորեն կտրված եր։ Սակայն բանից դուրս յեկավ, վոր հայրս այժմ բոլորովին ուրիշ մտքեր ուներ։ Նա ուզում եր իրականացնել իր վաղուցվա ցանկությունը—ուխտ գնալ Քյալբալա։ Համադանից մեկնելու օրվանից՝ նա անընդհատ այդ մասին եր խոսում, մանավանդ վոր հիմա բավականաչափ փող ունեյինք—մոտ հարյուր թուման։

— Այդ փողերը մեզ աստված է ուղարկել, - ասում եր նա, —տար ինձ այդ փողերով Քյալբալա. հանգստացրու ծերության օրերը, թույլ տուր մեղքերս քավել, այլապես քեզ ինձ վորդի չեմ համարի։

Դժվար եր ինձ համար առարկել հորս։

Սկսեցինք պատրաստություն տեսնել։ Գնացինք Բիսհիթունի մոտ՝ Հերուլի-խանի գյուղը։ Այնտեղ տուն վարձեցինք։ Յեվ վորպեսզի մեզ հաջողվեր անպայման տուն վարձել, վաղորոք այդ գյուղի քեթխուդին մի գլուխ շաքար տարանք։ Մորս ու քրոջս տեղավորեցինք այդ տանը, ձմեռվա պաշար առանք

նրանց համար, իսկ յես ու հայրս մեր փողերից հիսուն թու-մանը թաղեցինք գետնի տակ, հիսուն թումանը վերցրինք հետ-ներս, նորից վերադարձանք Բիսհիթուն, այսինքն Տաճկաստա-նի սահմանը տանող գլխավոր ճանապարհի վրա, վորտեղից պիտի մեկնեյինք Քյալբալա՝ սրբազան քաղաքը։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԱԼԼԱԴԱԴՆ ՈՒ ԲԱԽՏԻԱՐԸ ՃԱՆԱՊԱՐՀՎՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐԸ

Առավոտյան մենք դուրս յեկանք Բիսհիթունից և ուղևոր-վեցինք դեպի Քիրմանշահ։ Մեզ ուղեկցում եյին չարվադարներ, վորոնց վարձել եյին ուխտավորները Թավրիզում ու Թեհրա-նում։ Մեզ պաշարել եր մի առանձին հուզմունք և ուրախու-թյան զգացում. կարծես թև եյինք առել ու թռչում եյինք։

Քիրմանշահում մենք իջևանեցինք «Թեսքերխանա»-յում —անցագրերի գրասենյակում,—վորտեղ արդեն բազմաթիվ ուխ-տավորներ եյին հավաքվել՝ անցագրերը ձևակերպելու։ Ի հար-կե, այդ բանի համար պիտի փող վճարենք և վճարեցինք։

Ճանապարհի պատրաստությունն տեսնելու համար մենք դեռ յերկու օր պիտի մնայինք այդտեղ։ Այդ յերկու օրը մենք շուկայում անցկացրինք։ Յերրորդ օրը, առավոտ արշալույսին, բոլոր ուխտավորները հավաքվեցին նշանակված տեղը—Գյա-բըռ Աղայի գերեզմանատան մոտի իջևանում։

Դա ինչ պատկեր եր, տեր աստված։

Մարդիկ, ձիերը, եշերը, ջորիները խառնվել ու խճճվել եյին իրար իջևանի ընդարձակ բակում, վորոնց աղմուկն ու աղաղակը մարդու ականջներ եյին խլացնում։ Մյուս կողմից, հագուստնե-րի ու տարազների ինչ խայտաբղետ տեսարան եր։ Շագանակա-գույն աբայով վաճառականներ՝ նստած իրենց սպիտակ եշերի վրա, գյուղացիների կապույտ չուխաները, քաղաքացիների սև «սեր-դարիները» իրոք վոր խայտաճամուկ խառնուրդ եյին կազմում։ Վորքան բազմապիսի մարդիկ կային իրանց բազմագույն գլխա-շորերով ու գլխազարդերով։ Քրդերի վոչխարի մորթենու

բոմբ փափախները՝ սև ու սպիտակ Թաշկինակներով փաթաթ-
ված, քաղաքացիների փոքրիկ գլխարկները, գյուղացիների
գմբեթաձև գդակները, մի կատարյալ տեսարան։ Ապա այս
բազմության մեջ «չալչիները» — Թեյավաճառները, — վորոնք
արագ-արագ անցնում-դառնում եյին մարդկանց արանքներով
Թեյ եյին առաջարկում ուխտավորներին, չարվադարներին։
Սեյիդների կանաչ չալմաները, տաճկաստանցիների կարմիր ֆե-
սերը, արաբների գլխից մինչև ծնկներն իջնող Թաշկինակները,
և այդ բոլորի մեջ հպարտորեն դեսուդեն որորվող մոլլաների
«ամամեները» — գլխի փաթթոցները, վորոնք իրենց ձևով կա-
ղամբի գլուխ եյին հիշեցնում։

Ապա մի մանկահասակ տղա՝ ձեռքերը խողովակ շինած ու
բերանին դրած՝ բղավում եր վորքան ուժ ուներ. մյուս կողմից,
չարվադարներն հայհոյանքները սրա կամ նրա հասցեյին,
նրանց գոռոցները, Թավրիզցիների Թուրքերեն հայհոյանքները,
վաճառականների կանչվռտոցը, եշերի զռոցը հավերի սուր կչկչո-
ցը, վորոնք ճարպկորեն անցնում եյին անասունների վոտ-
ների արանքներով ու փորերի տակով՝ իրենց քուջուջն անե-
լու, այս բոլորը միասին միախառնվել եյին իրար և առաջաց-
նում եյին մի անասելի աղմուկ։

Վերջապես քարավանի ծայրը դուրս յեկավ իջևանի դար-
պասից։ Մարդիկ սկսեցին շարք կանգնել գերեզմանատան յեր-
կարությամբ, վորի առաջ կանգնած եր չավուշը կարմիր դրո-
շակով՝ շրջապատված մի խումբ զինված ձիավորներով։ Արևն
արդեն բավական բարձրացել եր, համարյա Թե կեսօր եր, յերբ
չավուշի ձիավոր խմբի հետևից շարժվեց ուխտավորների յերկար
շարանը։

Չավուշը նստած եր ձիու վրա։ Ծերունի ուխտավորները
գնում եյին մանրաքայլ եշերով, կանայք բազմել եյին ուղտե-
րին։ Սրանց հետևից գնում եյին ջորիները ճռճռացող արկղնե-
րով, վորոնց մեջ խնամքով դրված ու մեխված եյին մեռելներ։
Մեռելներ, վորոնք գնում եյին իրենց վերջին այցելությունը
տալու սրբազան վայրերին, վորտեղ հանգչում են շիաների պան-
ծալի նահատակները։ Յուրաքանչյուր ջորի ուներ իր մեկ կամ
յերկու ուղեկիցը։ Դրանք հատուկ վարձատրությամբ հանձն
եյին առել այդ մեռելները տեղ հասցնել և սրբազան վայրերում

հանձնել հողին։ Մեռելների հարազատները այդ ուղեկիցներին վճարել եյին նրանց ճանապարհածախսը և դրանով իսկ մի յերջանիկ առիթ եյին տվել այդ ուղեկիցներին դառնալ քյալբալա, վոր ամեն մի մահմեդականի յերազանքն ու բարձր նպատակն է։

Կանաչ դրոշներով ու կանաչ չալմայով սեյիդ մոլլան գերեզմանատան այցելուների համար բարձրաձայն կարդում եր «Ֆաթհան»—Ղուրանի առաջին սուրահը, վորի բառերը կրկնում եր յերկյուղած ու կրոնասեր բազմությունը։ Հետո հնչեց «Ցեմ ալլահ»—«տեր ընդ ձեզ», բացականչությունը, և մենք առաջ շարժվեցինք։

Դեռ չեյինք դուրս յեկել գերեզմանատնից, մեկ էլ տեսանք, սեյիդների մի ահագին բազմություն շրջապատեց մեզ։ Նրանք, այդ սեյիդները, «ճանապարհ ընկնելու» փող եյին պահանջում։ Վորքան ուժ ունեն, բոլորը միասին բղավում եյին.

— Իմ պապը թող ոգնի ձեզ (այսինքն Մոհամմեդը), թող ձեզ պահի, պահպանի, վոր ձեր դրամները ավազակների բաժին չդառնան։ Տվեք, ինչ վոր արժան է մեզ տալու։ Մոհամմեդի որենքով մեր «Հոմսը»[1]) տվեք։

Աներևակայելի իրարանցում առաջ յեկավ։ Հեծյալ ուխտավորները կանգնեցրին ձիերին, էշերին, հետևից յեկողները թափվեցին կանգնողների վրա, և սկսվեց ընդհանուր հրհրոցը։ Ուխտավորները ձեռքները տարան գրպաններն ու ծոցները փող հանելու։ Առաջարկում եյին սեյիդներին վորը մի ղրան, վորը տասը շահի, բայց սեյիդները չեյին համաձայնվում այդքան քիչ «հոմս» վերցնել, նրանք պահանջում եյին վարվել իրենց հետ «արդարությամբ», այսինքն պահանջում եյին լինել առատաձեռն։ Ցեվ գազազած ու ագահությամբ լցված՝ նրանք բռնել եյին ձիերի սանձերից ու ասպանդակներից։ Ձիավոր ուխտավորները, մանավանդ թեթև բեռ ունեցողները, աներես սեյիդների ճանկերից ազատվելու համար փախան զանազան կողմ, իսկ սեյիդներն էլ իրենց հերթին նրանց չեյին ուզում ձեռքից

---

[1]) Հոմս—վողորմություն։ Ներկա դեպքում «հոմս» կոչվում եր այն տուրքը, վոր գանձվում եր Մոհամմեդի և առաջին խալիֆների որոք «հնգից մեկ» բերքատուքը։

բաց թողնել․ վազում եյին ահագին տեղ նրանց հետևից և վերջապես հույսները կտրած՝ ճարահատյալ սուր հայհոյանքներ եյին տեղում ուխտավորների հասցեյին։ Հետևակ ուխտավորներն ել փախան, ով վորտեղ կարողացավ, բայց նրանցից մի քանիսն ուղղակի ընկան սեյիդների ճանկը։

Վերջապես, յերկու-յերեք ժամից հետո, յերբ բոլոր հաշիֆները վերջացան, այսինքն, յերբ ուխտավորներն բավականաչափ կողոպտվեցին, վորքան վոր հնարավոր եր, նոր միայն մեր քարավանն առաջ շարժվեց։

Յես ու հայրս չեյինք կարող մեր եշը թողնել ու փախչել կամ թաղնվել սեյիդներից, դա մեզ համար անհնարին եր։ Ըստիպված եյինք մի ղուռն տալ այդ աներեսներին։ Միաժամանակ ցանկացանք նրանց հավատացնել, յերդում ուտել, վոր մենք—յես ու հայրս—առանձին—առանձին ուխտավորներ չենք, այլ հայր ու վորդի յենք, համարվում ենք մեկ ուխտավոր և ավելին տալ չենք կարող։ Հազիվ կարողացանք մի բան հասկացնել և մեկ ղռանով պրծնել այդ ագահների ձեռքներից։

Արդեն արևմուտ եր, վոր հասանք Մահիդիշտ։ Ուխտավորները ցրվեցին գյուղը գիշերվա համար ոթևան ճարելու։ Մենք բացի եշից ուրիշ բան չունեյինք, դրա համար ել հեշտությամբ տեղավորվեցինք մի տան անկյունում։ Եշը կապեցինք գոմում, առաջն ածեցինք մի մաղ դարման, մենք ել ջիջիմը փռեցինք տակներս ու պառկեցինք հանգստանալու։

Ուխտավորներից շատերը դեռ յերկար ժամանակ տեղ չեյին գտել գիշերելու համար։ Շատերն ստիպված բացօթյա գիշերեցին։ Բավական ժամանակ մենք դեռ լսում եյինք նրանց փնթփնթոցը։

Կես գիշերին, յերբ մենք խոր քնի մեջ եյինք, մեկը մեզ կոպիտ կերպով զարթեցրեց և պահանջեց ոթևանի հաշիվը վճարել։

Զուր եյինք նրան համոզում, թե հիմա մենք քնել ենք ուզում, առավոտը կվճարենք, բայց նա մեզնից պահանջում եր այժմ հենց այս րոպեյիս վճարել։ Մենք ստիպված վեր կացանք և հարցրինք, թե վորքան պիտի վճարենք։ Դուրս յեկավ, վոր յերկու մաղ դարմանը մեզ վրա հաշվել են յերկու բաթման,

բաթմանը հինգ շահի, մի գավաթ գարին՝ տասը շահի, մի բաթման հացը՝ մեկ ղռան, վառելիքը մեկ ղռան, գոմի վարձը մարգագլուխ մեկ ղռան։ Քիրմանշահի գների հետ համեմատած՝ այստեղ մեզնից վերցրին կրկնակի չափով, չնայելով վոր այստեղի չափերը յերկու անգամ փոքր եյին Քիրմանշահի չափերից։

Ուրիշ յելք չկար, պիտի վճարեյինք ու վճարեցինք։

Լույսը բացվելուն պես՝ առաջ շարժվեցինք։ Հինգ տեղ մեզնից ճանապարհատուրք պահանջեցին։ Ամեն անգամ ել մեզ կանգնեցնում եյին, վորից հետո սկսում եյին յերկար վեճերն ու սակարկությունները։

Ցերեկոյան դեմ յեկանք Հարունաբադ, վորտեղ կրկնվեց նույն պատմությունը, ինչ վոր Մեհիդեշտում։ Այդտեղից անցանք Քերանդ, հետո Միանթաղ, Սերփոլ ու Ղասրի — Շիրին։ Ամեն տեղ ել գներն նույնն եյին և նույնիսկ ավելի թանգ։ Վորքան հեռանում եյինք Քիրմանշահից, այնքան ավելի անխիղճ ու անգութ եյին դառնում իշխանավորները և ճանապարհի պահնորդները և նույնքան ավելի եյին կողոպտում ուխտավորներին։

Ղասրի-Շիրինում իրանական մաքսատան ծառայողներն յեկան մեզ մոտ և հայտնեցին, վոր զենք ու թութուն Տաճկաստան ներմուծել արգելվում ե։ Նրանք մեր իրերը խուզարկեցին և խուզարկության համար ել մեզնից վարձ առացան, կարծես թե մենք եյինք խնդրել, վոր մեր իրերը խուզարկեն։ Խուզարկությունից հետո գնացին։ Հետևյալ որը մենք պիտի հրաժեշտ տայինք Իրանին և վոտք դնեյինք այն յերկիրը, վորի մասին ամբիոններից խոսելով՝ պատմում ու նկարագրում են հավատացյալ մուսուլմաններին ամեն կարգի մոլլաներն ու քարոզիչներն։

Առավոտյան մենք սահմանն անցանք և մտանք տաճկական հողը։ Շուտով հասանք Խանեքին։ Այստեղ մեզ շրջապատեցին մեզ անծանոթ համազգեստով և տաճկական ֆեսերով զինվորներ և մեզ տարան մաքսատուն։

Սկսվեց անցագրերի և մեր իրեղենների ստուգումը։ Ամենից մանրակրկիտ ստուգման յենթարկեցին մեռելների արկղները։ Հրամայեցին ղազաղների կափարիչները վերցնել, վորից

հետո յերկար ու բարակ սկսեցին տնտղել արկղները, հանանց թե տղամարդկանց դիակները շուռեշուռ եյին տալիս՝ ստուգելու համար, թե վորևե արգելված բան չեն թագցրել մեռելների տակ։ Այդ մեռելների պատճառով ճանապարհից մեզ մի քանի ժամ յետ պահեցին։ Յես ու հայրս կասկածելի վոչինչ չունեյինք մեզ հետ՝ բացի մի փոքրիկ կապոց թութունից, վորի համար խսկի չխոսեցին էլ, այդ պատճառով մենք մյուսներից ավելի շուտ ազատվեցինք մաքսատնից ու գնացինք մեր ոթևանը։

Յերեկոյան, այստեղ ել, ինչպես իրանական հողում, մեզանից փող վերցրին թե ոթևանելու և թե մթերքների համար, սակայն համեմատաբար ավելի եժան գներով քան թե մեզ մոտ՝ Իրանում։

Հետևյալ որը Խանեքենից դուրս յեկանք դեպի Ղըզըլ—Ռաբադ։ Ճանապարհին վոչ մի տեղ մենք չպատահեցինք ղարասուլանների ու վոչ մի տեղ մեզնից ճանապարհատուրք չպահանջեցին։

Ղըզըլ—Ռաբադից վոչ հեռու մեզ հանդիպեց ականջները կտրած մի պարսիկ, վորը մի քանի ձիավորներով յեկել եր դիմավորելու ուխտավորներին վորպես Իրանի արտաքին գործոց մինիստրության ներկայացուցիչ։ Մեր քարավանից մի քանի ուխտավորներ բարևեցին այդ մարդուն, վորի անունն եր Հաջի Մելիք։ Յես զարմացել եյի, թե. դա ինչ հաջի յե՝ ականջները կտրած, քանի վոր, ինչպես հայտնի յե բոլորին, գողերի ականջներն են միայն կտրում։

Հենց վոր հասանք Ղզըլ—Ռաբադ, ուխտավորները ցրվեցին զանազան իջևաններ։ Մենք դեռ չեյինք տեղավորվել մեր իջևանում, յերբ նույն Հաջի-Մելիքի ուղեկցությամբ մի արաբ յեկավ մեզ մոտ և սկսեց ուխտավորներին խուզարկել։ Նրանք ամեն կերպ ջանք եյին անում վորևե առիթով փող կորզել ուխտավորներից։ Մեզ մոտ էլ յեկան։ Նրանք վերցրին հորս մոտի քառորդ ֆունտ թութունը և ձեռքիս «Զիարեթ Նամե»[1]) գիրքը, վորը պարունակում եր իր մեջ ուխտագնացության որենքներն

---

1) Զիարեթ Նամե—ուխտագնացության գիրք, վորն իր մեջ պարունակում և ուխտագնացության վերաբերյալ հրահանգներ ու կանոններ։

Ծանոթ. Հ. Թարգ.

ու սովորությունները։ Խուզարկու արաբը հայտնեց, որ այդ գիրքը մաքսանենգ ապրանք է։

Որքան էլ մենք աշխատեցինք ապացուցել, որ մաքսանենգության բան չկա այստեղ, այդ գիրքը Ղասրի-Շիրինում ու Խանեքենում տեսել և թույլատրել են հետները տանելու, ոչինչ չօգնեց, չուզեցին անգամ լսել։ Յես հատկապես վիճում էի գրքի առթիվ։ Յեվ իրոք, ի՞նչ մաքսանենգություն կարող էր լինել, քանի որ Միջագետքում այդ գրքից հարյուրներով են ծախում ուխտավորներին։

Արաբն սկսեց հայհոյել.

— Այդ գիրքը աղանդավորական գիրք է,—ասում էր նա, —դրա մեջ աղանդավորական հայհոյանքներ կան։

Բնականորեն յես էլ բարկացա։

— Ի՞նչ հիմար բաներ եք ասում,—ասացի յես,—ո՞ւր է դրա միջի հայհոյանքը, ապա ցույց տվեք։

Արաբն արագությամբ բացեց գիրքը, գտավ «Ուխտագնացություն Աշուրի ժամանակ» գլուխը, մոտեցրեց աչքներիս, ցույց տվեց այն տողերը, որտեղ գրված էր—«Նզովվիր տե՛ր, Մոաբի և Ալ-Զիադի որդի Յեզիդին մինչև վերջին դատաստանի օրը»

—Սա ի՞նչ է, ինչ բան է սա, ապա սա հայհոյանք չէ՞, ա՛խ, դո՛ւք, պիղծ հերետիկոսներ։

Յես ասացի, որ այդտեղ խոսվում է մարդասպանների մասին, դա ի՞նչ կապ ունի խալիֆների հետ։ Ի՞նչ ընդհանուր բան կա մարդասպանի և սուրբ ու ճշմարտախոս մարդու մեջ։

Արաբը բացականչեց,—Թշվառ հերետիկոս, չէ՞ որ նրանք ազգականներ են։

Յես գլխի ընկա, որ դժվար է դրանից յախա թափել։ Ականջները կորած Հաջի Մելիքը մի կողմ կանգնած՝ ծիծաղում էր։ Յերևում էր պարզ, որ նա յէ այս բոլոր վեճն ու տարաձայնությունը սարքել։ Որքան էլ խնդրեցինք, աղաչեցինք, չեղավ. մի թուման փողները առան, մեզ թողին, անցան ուրիշների ջանին։ Ի՛նչ գլուխներդ ցավացնեմ, արաբն ու Հաջի-Մելիքը ուխտավորներին մի լավ պլոկեցին ու հետո հեռացան։

Հետևյալ օրը մենք ուղևորվեցինք Բաքունե։ Այնտեղից դուրս գալիս՝ մենք պիտի անցնեյինք մի նեղ կամուրջով։ Ուխտավորները յերկար շարան կազմած՝ անցնում եյին։ Մեկ ել տեսանք, կամուրջի մյուս ծայրին մեր դեմն յելան մի խումբ մարդիկ և սկսեցին ուխտավորներին հայհոյել ու փայտերով խփել՝ յետ տալով նրանց կամուրջի հակառակ կողմը։

— Չենք թողնի, կամուրջով անցկենալու վճարը տվեք, ապա անցեք։

Փող եր, վոր ուխտավորների գրպանից անցնում եր արաբների գրպանը։

Վերջապես, մի կամուրջ ել անցանք, ու հասանք «որհնյալ» Ղազմեյնը։ Այդտեղ մենք կանգ առանք Իջևանում։ Ավանակը կապեցինք ախոռում, առաջը խոտ ու դարման գցեցինք, կարգի բերինք մեր ոթևանը, ապա գնացինք մեր ուխտագնացության պատրաստությունը տեսնելու։

«Արքայության բանալիներ»-ի մեջ տրված կանոնների համաձայն, ուխտագնացությունից առաջ պետք ե բաղնիս գնալ և մաքուր սպիտակեղեն հագնել։ Հորս հետ գնացինք շուկա, մի-մի զույգ նոր սպիտակեղեն գնեցինք, բաղնիս գնացինք, լողացանք աղի ջրում, մաքրվեցինք։ Այս բոլորից հետո, խորին հավատով մենք շարժվեցինք դեպի ուխտատեղին։ Նախորոք հետներս վերցրել եյինք մի տուփ մեղրամոմ։

Ուխտատեղու դռների մոտ և բակում մեզ վրա հարձակվեց պարսիկ մուրացկանների մի ամբոխ։ Նրանք ձեռները մեզ պարզելով, բղավում եյին.

— Ողորմություն արեք հանուն սրբերի, մենք քաղցած ենք, ուտելու բան չունենք։ Մեր ձեռքին յեղած մանր դրամը տվինք այդ մուրացկաններին և ապա մտանք «քլաֆշկենը», այսինքն սեփական վոտնամանները հանելու և մաքուր հողաթափեր հագնելուն հատկացրած նախասրահը։

Այստեղ մենք հանեցինք մեր սեփական քոշերը և հագանք մաքուր հողաթափեր։

Կանաչ «ամամեն» գլխին, բավական լավ հագնված մի բարձրահասակ սեյիդ յեկավ և մեզ առաջնորդեց ներս։

Մենք գնացինք նրա յետևից։

Հետո դարձավ նա մեզ ու ասաց.

— Ես ձեզ համար կկարդամ ուխտի գիրքը—ուխտավորների աղոթքը։

Սրբատեղու մուտքի մոտ սեյիդը բարձրաձայն ուխտավորների համար ներս մտնելու թույլատվություն հայցեց՝ պատվիրելով, որ մենք էլ կրկնենք նույն բառերը։ Մենք էլ, ինչ խոսք, բարձրաձայն կրկնում էինք արաբական բառերը, իսկ ներս մտնելուց հետո՝ արտասանում էինք «ուխտի գրքի» աղոթքները, անշուշտ աղավաղելով արաբական լեզուն, այնպես, ինչպես կարող է աղավաղել քուրդ գյուղացին, այնպես որ իմամների փառաբանության փոխարեն դուրս էր գալիս մեր լեզվի արտասանությամբ բաղնիսների փառաբանություն։

Այնուհետև նա մեզ տարավ սուրբ գերեզմանների մոտ աղոթք կարդալու։ Նա մեզ չոգեցրեց վոսկեզօծ կանթեղներով լուսավորված դամբարանի առաջ, ձեռները դրեց մեր գլխին ու սկսեց արաբական բառեր արտասանել։ Մենք առաջվա պես նորից կրկնում էինք նրա արտասանած բառերը։ Այնուհետև սեյիդը կարդաց «մեղքերի թողությունը»։ Մեր սրտերը համակվեցին մի սրբազան զգացումով, խանդաղատանքով ու դողով։

Հենց այդ խորհրդավոր պահին աղոթարար սեյիդը բացականչեց.

— Հանուն յերկու մեծ իմամների, հանուն աղոթարարների, ձեռներդ տարեք գրպաններդ։

Մենք կատարեցինք նրա պատվերը—ձեռքներս տարանք մեր գրպանները։

— Այժմ, համաձայն ուխտավորաց խոստման՝ յուրաքանչյուրդ հինգ ղռան շնորհեցեք։

Այդ վեհ ու սրբազան րոպեյին, սրբապատկերների ու կանթեղների խորհրդավոր լույսերի առաջ չէր կարելի առարկել։

Պրպրեցինք ու դատարկեցինք մեր գրպաններն, ընդամենը ինը ղռան փող ունեյինք մեզ մոտ, այդ բոլորն էլ տվինք աղոթարար սեյիդին, միաժամանակ հազար անգամ ներողություն խնդրեցինք, վոր պահանջածից մեկ ղռան պակաս է։

Նույն ձևով վճարեցին նաև մյուս ուխտավորները։

Հետո մենք վոտքի յելանք ու շրջեցինք սուրբ գերեզման-

ների շուրջը։ Մեր մոմի տուփը տվեցինք լուսարարին։ Նա մոմերից մեկը միայն վառեց, իսկ մնացածները գցեց իր արկղը։ Մի քանի րոպեից հետո հանգցրեց նաև վառվող մոմը։ Բոլոր ուխտավորներն էլ լուսարարին տուփերով մոմ էին տալիս, բայց նրանք րոպեյապես չքանում էին խորհրդավոր արկղներում։

Ամեն բան վերջացած էր։ Հարկավոր էր հեռանալ։ Ցերեկոյան նամազն էլ կատարեցինք այդտեղ ու գնացինք տուն։

Նախասրահում մեր քոշերը չգտանք։ Հարցրինք պահապանին, նա մեզ պատասխանեց, վոր իր մոտ վոտնամաններ չկան, յերևի մենք սխալվում ենք, գուցե իրեն պահ չենք տվել, այլ մի ուրիշի. գուցե մենք ուրիշ դռնով ենք ներս մտել և պարզապես շփոթում ենք մուտքերը։

Մենք շրջեցինք և ստուգեցինք ուխտատեղու բոլոր մուտքերը, սակայն ամեն տեղ էլ նույն պատասխանն տվին։ Նորից յեկանք առաջվա տեղը։

Այժմ արդեն մեր քոշերը չէյինք պահանջում պահապանից, այլ խնդրում, աղաչում էյինք, վոր գտնի, մեզ տա, վորովհետև բոբիկ էյինք մնացել, չէյինք կարողանում փողոց դուրս գալ։ Մեր քրդական քոշերը նկարագրեցինք, վորից հետո պահապանը մի կույտ վոտնամանների մեջ փնտրեց և գըտավ մեր քոշերը և տվեց մեզ։

Ինչպես յերևում էր, այստեղի սովորությունն այդպես էր. յեթե փայլուն և թանգարժեք կոշիկներ լինեյին, ավելի ուշադիր կլինեյին դեպի կոշիկները և հարգանք ցույց կտային տերերին, իսկ մենք ծվ էյինք, ի՞նչ էյինք վոր...

Մենք հագանք մեր կոշիկները և ուզում էյինք գնալ, յերբ հանկարծ պահապանը մեր հետևից բղավեց.

—Ե՛յ Նուրիստանի էշ, փողը տուր, փողը։

—Աղա՛,—ասացինք մենք,—ինչու՞ ես հայհոյում, հիմա մոտներս դրամ չկա, վաղն անպատճառ գալու յենք, կբերենք, կտանք։

—Ի՞նչպես թե վաղը,—զայրացավ նա,—այդպես բան չկա, այս րոպեյիս մարդագլուխ մի ղրան վճարեք։

Մենք իրոք մոտներս փող չունեյինք, բոլորը տվել էյինք սեյիդին, բայց այդ մարդը մեզ չէր հավատում ու մեզ ձեռքից բաց չէր թողնում։ Վերջապես հորս թողեցի նրա մոտ «գրավա-

կանչ», ինքս շտապ գնացի տուն, յերկու ղռան բերի ու տվի։ Նոր միայն ազատվեցինք նրա ձեռքից ու գնացինք տուն։

***

Զավուշներն ասացին, վոր ուխտավորները գնացին Սամար՝ պահապան հրեշտակներին ծնրադրելու, յերկրպագելու հավատի նահատակ զինվորներին։

Զավուշների ասելով՝ անապատով անցնող ճանապարհը անապահով է և շատ յերկյուղալի, ուստի ուխտավորներն իրենց ապահովության համար պիտի աշխատեն բոլորը միասին գնան, յեթե ուզում են արաբ ավազակներից ազատ մնալ։

Մենք ել միացանք ուխտավորների քարավանին։ Եշն առինք առաջներս, սկսեցինք հետևից քայլել։ Ճանապարհի համար մի քանի թուման փող վերցրինք հետներս։

Մինչև Սամար յերեք կայան եր։

Ամեն ինչ առայժմ բարենպաստ եր մեզ համար բացի այն բանից, վոր ուտելիք դժվար եր ճարվում, յեղածն ել շատ թանգ եր։

Սամարի մոտերքին մենք պիտի անցնեյինք Շատ—Ել—Արաբը։ Կամուրջն ավրված եր, և մենք ստիպված պիտի անցնեյինք լաստերով կամ տկերով։ Ամեն մեկից մեկական ղռան առան և յերկուական ղռան ել անասունների համար։

Գետը վարար եր և արագահոս։

Ինչևիցե, տեղավորվեցինք լաստի վրա, բայց միանգամից այնքան լցվեցինք, վոր լաստը քիչ եր մնում սուզվի ջրի մեջ։ Ջուրն արդեն թրջում եր մեր վոտները, և մենք ահով ու դողով սահում եյինք գետի կատաղի ալիքների վրայով։ Յերեսներս հառած հակառակ ափին՝ անհամբեր սպասում եյինք, թե յերբ վերջապես կհասնենք մյուս ափը ու կազատվենք այս ծանր տագնապից։ Մանավանդ գետի մեջտեղում ջրի պղտոր ալիքները չորս կողմից կատաղորեն զարկվում եյին մեր լաստին և սպառնում եյին կլանել մեզ։ Մեր չորս կողմը միայն կատաղած գորշ տարերքն եյին տեսնում, և թվում եր, թե հրաշքով միայն կարող ենք ցամաք դուրս գալ։ Սարսափ պատեց մեզ բոլորիս։ Բնազդորեն մենք իրար եյինք կպել և ամեն վայրկ-

յան մեր գերեզմանն էինք տեսնում կատաղած գետի հորձանուտ ալիքների մեջ։ Մենք անհամբեր հրաշքի էինք սպասում լաստատեր արաբից, վորը մեզ պիտի փրկեր վերահաս վտանգից ու մեր կյանքը մեզ շնորհեր, վերադարձնելով մեզ մեր սիրելի ընտանիքի գիրկը։ Սակայն, Թարսի պես, հենց այդ պահին, արաբը դադարեց թիավարելուց, այդ պատճառով էլ լաստն սկսվեց որորվել և արագ առաջ սուրաց հոսանքի ուղղությամբ։

Արաբը կանգնեց թե՝ ձեռացափող տվեք։

Կյանքն ավելի թանգ էր, ինչ արած, ուխտավորները փող հանեցին։ Ամեն մեկն ուրախությամբ յերկու-յերեք ղռան էր տալիս արաբին։ Իր հունձն անելուց հետո, արաբը մեզ ցամաք հասցրեց։ Ափ իջնելիս արդեն մենք վճարեցինք իսկական փոխադրության վարձը, վորն անհամեմատ քիչ էր, քան իրեն տրված ձեռացափողը։ Ահա այդ ձևով անցանք գետը և ափ իջանք։ Ափ իջնելուն պես՝ ուղևորվեցինք Սամար։

Սամարի բնակիչները չորս կողմից շրջապատեցին մեզ։ Նրանք մեզ առաջարկում էին ոթևան և ամեն տեսակ հարմարություններ, սակայն վոչ վոք հնարավորություն չունեցավ հանգստանալ սամարցիների «հարմարությունների» մեջ, վորովհետև մեզ անմիջապես առաջ քշեցին դեպի ուխտատեղի։

Սկզբից մենք պիտի հայտնի իմամներ— իմամ Ալի Նաղուն և Իմամ Հասան Ասկյարուն արժանանայինք։ «Ուխտի գըրքի» ընթերցող սեյիդը կանգնեցրեց մեզ դռների մոտ։

Պարզ էր իհարկե, վոր նա մեզանից փող է պահանջում։

Մենք էլ ասացինք,— յերբ դուրս գանք, բոլորը կտանք։ Նա չհամաձայնեց, այլև այնպիսի հայհոյանք տվեց, վոր անհարմար է կրկնել նրա խոսքերը։

Ցուրաքանչյուրից յերկու ղռան առավ։

Այդտեղից դուրս յեկանք, գնացինք ծունր դնելու Հազարաթ—Իմամ—Զիմանին—շիաների մեծ իմամ Մեհթուն, վորը շիաների հավատալիքով աներևույթացել է մեր տեսանելի աշխարհից և այժմ ապրում է ծածուկ ու ընդհատակյա վիճակում բայց, պիտի մի որ հայտնվի աշխարհին ու իրա հետ մարդկությանը բերի կատարյալ ու մշտնջենական

արդարադատություն 1)։ Սկզբից մեզ տարան մի խոր ջրհորի մոտ, վորը կոչվում եր Հազարաթ Մարիամի կամ Սուրբ կույս Մարիամի ջրհոր, մեզ ասացին, վոր Մարիամի ստինքներից կաթ է թափվել այս ջրհորի մեջ, վորը ջրի մեջ արտացոլվում է լուսնի կերպարանքով, ով վոր նայի այս ջրհորի մեջ, ասում եյին նրա աչքերը յերբեք դժոխքի կրակ չեն տեսնի։

Հայրս, վորն իր հոգու փրկության համար վոչ մի «սուրբ» բաց չեր թողնում, և այնպես ծարավի յեր դեպի նման բաները, իսկույն համաձայնեց մի տաճիկ ուխտավորի հետ գլուխը կոխել ջրհորի մեջ։ Ջրհորի պահապան արաբը—մի իսկական սատանա, իսկույն մի ձեռքով բռնեց հորս վզից, մյուս ձեռքով տաճիկի վզից՝ մինչև նրանց գոտկատեղը ներս խոթեց ջրհորի մեջ ու ասաց․

—Հանուն Հազարաթ Մարիամի՝ տվեք ինձ հնդական դրամ։

Կրոնական այդ «խաղը» այն աստիճան վախեցրեց հորս, վոր նա սարսափած գոռաց․

— Ինչ ուզում ես կտամ, միայն բաց թող ինձ։

Տաճիկ ուխտավորն ել մյուս կողմից հուսահատորեն բղավում եր։

---

1) Խոսքը վերաբերում է շիաների հավատալիքին Մեսիայի գալստյան վերաբերմամբ։ Ժխտելով Ալիից հետո մուսուլմանական աշխարհում թագավորող բոլոր խալիֆներին, շիաները իրանց վրա տեր ու հրամայող են համարում միայն Ալիից անմիջապես սերված հաջորդներին, վորոնց անվանում են իմամներ։ Գրեթե նրանք բոլորն ել վոչնչացել են խալիֆների հետապնդումից։ Հասան Ասկյարի վորդի 12-րդ իմամ Մոհամմեդով իմամների տոհմը ընդհատվում է (Հիջրայի 225-265 թ)։ Բայց շիաների, գլխավորապես պարսիկ ժողովրդի հավատալիքով 12-րդ իմամը չի մեռել, այլ խորհրդավոր կերպով չքացել է՝ իջնելով Սամարի դատարկ ջրհորը։ Վորոշյալ պահին, յերբ չարիքն ու բռնությունը կ·աճեն իրենց չափին ու սահմանին, չքացած ու աներևույթացած իմամը, վորին անվանում են նաև Մեհդի, կամ Մեսիա, այլ և ժամանակների տեր, վերստին կերևա, և այն ժամանակ աշխարհում կտիրապետի իսկական արդարադատությունը այլևս չեն լինի հարուստներ ու աղքատներ, այլ բոլորն ել կլինեն հավասար ու յերջանիկ։

Սոցիալական արդարության գալիքի այն հավատքը, վորը կապված է Մեհդու անվան հետ, դարերի ընթացքում գյուղացիական ապստամբությունների իդեոլոգիական հիմքն է կազմել, իսկ 19-րդ դարի կեսերում Մեհդու անունը ծառայում եր վորպես նշանաբան այն ապստամբության համար, վորի գլուխն եր անցել Ալի—Մոհամմեդի հետևորդ Բաբան, վորն իրան հայտարարել եր իմամ Մեհդի։

—Ո՜վ սուրբ Մարիամ,—ասում էր տաճիկը,—ազատիր ինձ այս ջրհորից, վորքան կուզես փող կտամ։

Մենք միայն տեսնում էինք ջրհորից դուրս ցցված չորս վոտներ և մեր ականջներին հասնող ահռելի ձայներ, մերթ աղաչական, մերթ ցասկոտ... Մի տարօրինակ տեսարան էր, իսկ մենք այդ տեսարանի առաջ կանգնած՝ գլուխներս կորցրել էինք, չէինք հասկանում, թե ինչ է կատարվում։ Մենք վախենում էինք օգնության հասնել նրանց, իսկ յեթե սեյիդը նրանց բաց թողներ, նրանք կթռչեյին ցած, ջրհորի խոր անդունդի մեջ կնահատակվեյին...

Ճար չկար, պիտի վճարեյինք, ինչ վոր պահանջում էր սեյիդը։ Մենք վճարեցինք հնգական ղռան ու ազատեցինք խեղճ հորս ու տաճկին։

Նրանց դեմքերը նման էյին պարանով խեղդվողի դեմքերին. կատարելապես կապտել, սևացել էյին նրանց դեմքերը։

Մի կերպ այդ փորձանքից ազատվեցինք և ուղևորվեցինք մեծ իմամի ստորերկրյա ավազանին ծնրադրելու։ Ավազանը խորքումն էր, դրա համար քարե սանդուղքներով իջանք գետնի տակ։

Սահմանված կարգի ու սովորության համաձայն՝ աղոթարարը կարդաց «ուխտի գիրքը», վորի ընթացքում մեր աղոթքն արինք ու նամազը կատարեցինք։

Խոր ջրհորի բերանին նստած էր ջրհորի «լիազորը», այն ջրհորի, վորտեղ նքացել էր մեծ իմամ Մեհթին։ Այդ լիազորը հավատացյալներին հրավիրում էր իջնել ջրհոր։

— Ցած իջեք մուսուլմաններ, — ասում էր նա, — ձեր բախտին քարեր վերցրեք. ով վոր ջրհորի պատերից քարեր պոկի և դնի իր քսակը, յերբեք նրա քսակը դատարկ չի մնա, միշտ փողով լիքը կլինի։ Հազրաթ իմամն ինքը ձեր քսակները փողով կլցնի։

Մարիամի ջրհորի սարսափը դեռ չէր անցել, դեռևս նրա ծանր տպավորության տակ էյինք, և հիմա մահվան չափ սարսափում էյինք այս «սրբազան» ջրհորից։ Այս մեկն ավելի սոսկալի ու զարհուրելի յեր Մարիամի ջրհորից։ Յեթե այնտեղ մարդիկ գլուխները մի քիչ կոխում էյին ջրհորի ներսը և ահագին սարսափներ էյին ապրում, ապա ինչ կլիներ, յեթե մարդիկ

մտնեյին այս ջրհորը և իջնեյին մինչև նրա ահռելի և զարզանդ ազդող հատակը։

Համենայն դեպս, այստեղ էլ մի Թեհրանցի գայթակղվեց և ջրհորի պատունկները համբուրելով, իջավ ներքև։ Ցեղունգներով ու դանակով քարի մի քանի փշրանքներ պոկոտելով՝ տվեց վերևում կանգնածներին և ուզեցավ ինքն էլ վեր բարձրանալ, դուրս գալ ջրհորից, բայց ջրհորի պահապանը կռացավ նրա վրա, ձեռքերով ու մարմնով փակեց ջրհորի բերանը։

—Թող դուրս գամ,—բղավեց Թեհրանցին։

Բայց սեյիդը չթողեց, նա փող էր պահանջում։

— Թո՛ղ,—կրկնեց Թեհրանցին,—ազնիվ խոսք, գլխովդ եմ յերդվում, և այն ամենով, ինչ վոր թանգ է քեզ համար, յերդվում եմ իմամով, վոր դուրս գամ և վճարեմ, ինչ վոր ուզում ես։

Ջրհորի պահապանը անողոք մնաց։

Խեղճ Թեհրանցին, հագին վոտները հենած ջրհորի պատին՝ ձեռքը տարավ գրպանը, մի քանի դրամ դուրս բերեց, տվեց պահապան սեյիդին ու ասաց.

— Դե՛, առ, վերցրու։ Յերդվում եմ նույն սրբի անունով, վոր քանի դուք եք պահպանում նրա ջրհորը, նա այնտեղից յերբեք դուրս չի գա։ Ընդհակառակը, ձեր ագահության յերեսից նա էլ ավելի խորը կերթա, կթաղնվի։

— Ա՛խ, դու, հանդուգն, անեծք քո հորը,—ասաց սեյիդը և անտարբերությամբ ավելացրեց,—այդ ավելի լավ, վոր սուրբը չհայտնվի յերբեք, այլապես մենք ինչով պիտի ապրենք։

Այս բոլորից հետո, այլևս ի՞նչ կարելի յեր ասել այդ մարդկանց։ Հենց առաջին որերի դիտողությունն ու շփումը ցույց է տալիս, վոր «սուրբ վայրերի» մարդկանց մեջ առաքինություն ասած բանը բոլորովին գոյություն չունի։ Նրանց մեջ տիրում է միայն անթափանց մութն ու խավարը։

*
* *

Յերկու որ մնացինք մենք այդ սրբատեղերում։ Յերրորդ որը բոլոր ուխտավորները յետ դարձան։ Նորից նստեցինք տըկերով պատրաստած լաստի վրա և անցանք Շատ—Էլ—Արաբը ու յերեկոյան դեմ հասանք առաջին կայանին։

Առավոտյան պիտի ուղևորվեյինք դեպի Խան — Ջոլ։ Այդ ճանապարհը շատ վտանգավոր էր համարվում, ուստի ուխտավորներից վոչ վոք սիրտ չեր անում ճանապարհ ընկնել, բայց չավուշները հայհոյելով ու գոռգոռալով հազիվ կարողացան ուխտավորներին հավաքել ու ճանապարհ ընկնել։

Ճանապարհին չաուշներն ամեն կերպ աշխատում եյին ուխտավորներին խրախուսել ու սրտապնդել, մանավանդ զենք չունեցողներին, և հորդորում եյին իրենց հույսը դնել միայն Հազարաթ Աբբասի վրա։ Ջաուշները բազմության առաջից եյին գընում վորպես պահակներ, իսկ մենք աջ ու ձախ, յետ ու առաջ նայելով գնում եյինք ահը սրտներումս, մինչև վոր ճանապարհի կեսն անցանք։ Մեկ էլ հեռվում, բլուրների վրա, մենք նշմարեցինք սև ու սպիտակ բծեր, վորոնք արագորեն մոտենում եյին մեզ։

Դրանք Բեդուիններ եյին՝ հեծած իրենց արագավազ ձիերը։ Քիչ հետո՝ մենք նկատեցինք նրանց յերկար տեգերը և գլխներին ծածանվող սպիտակ Թաշկինակները։

Նրանք բոլորն էլ զինված եյին։ Բացի տեգերից, նրանք ունեյին նույնպես ատրճանակներ, սրեր, իսկ վոմանք էլ հին տեսակի յերկարափող հրացաններ ունեյին։

Դեռ հեռվից նրանք սկսեցին մի առանձին սպառնալից ձայներ արձակել։ Նրանք ձեռքի ափով զարկում եյին իրենց շըրթունքներին և ականջ ծակող սուր ձայներ եյին արձակում։ Դրա հետ միասին, անսպասելի կերպով սկսեցին մեզ գնդակոծել։

Ուխտավորներն աղմուկ բարձրացրին ու խուճապի մատնըվեցին։

—Յա Ալի, յա Հազարաթ Աբաս, — բղավում եյին ուխտավորները

Անյերևակայելի խուճապ սկսվեց։ Արաբները մրրիկի պես հարձակվեցին մեզ վրա։ Սպանեցին մի ուխտավորի, մի քանի մարդ էլ վիրավորեցին, ծառաներից էլ վերցրին ձիեր, ջորիներ, էշեր ու զանազան իրեղեններ ու դրամ։ Մեր խեղճ ավանակն էլ բաժին դառավ ավազակներին, ավանակի հետ հափշտակեցին մեր փալասը, վերարկուները, գլխարկները և այն ամենը, ինչ

վոր հետներս վերցրել էյինք Սամար գնալիս։ Դեռ լավ էր, վոր մենք վողջ մնացինք։

Ցերեկոյան դեմ հասանք Խան—Զոլ։ Դա ինչ կայան էր, այն ինչ չենքեր էյին այնտեղ.—ցուրտ ու խոնավ իջևան, մյուս կողմից էլ հոգնած, տանջված ու կողոպտված ուխտավորների ամբոխ։

Փող էլ չկար, վոր գոնե վառելափայտ առնեյինք, ցուրտ ոթևանը տաքացնեյինք։ Սնունդի մասին խոսելն էլ ավելորդ էր։

Ցրտից դողալով, յես ու հայրս ման յեկանք իջևանի չորս բոլորքը, մի քիչ փուշ ու դարման գտանք, հավաքեցինք ու կրակ վառեցինք։ Սովատանջ ու ցրտահար ուխտավորները հավաքվեցին կրակի շուրջը տաքանալու, բայց նրանք այնքան շատ էյին, վոր բոլորը չկարողացան տեղավորվել, շատերը միայն հեռվից էյին նայում կրակին և կրակի տեսքով էյին «տաքանում»։ Թարսի պես, յեղանակն էլ մի կողմից վատացավ, կարծես նա էլ իր կողմից էր ուզում մեր դրությունը վատթարացնել։ Սկսեց անձրև գալ։ Այս անգամ արդեն կորանք, մտածեցի յես։ Դրություններս իրոք վոր հուսահատական էր։

Հանկարծ բախտը կարծես թե ժպտաց մեզ։

Ուխտավորների մի նոր խումբ հանկարծ մտավ իջևան։ Դրանք պարսիկներ էյին, Աֆշար ցեղի խաները։ Նրանք իսկույն սկսեցին խնամք տանել ուխտավորներին, մանավանդ շատ թալանվածներին։

Վառելափայտ առան, հաց առան ու բաժանեցին բոլորին, ամեն մեկին էլ մեկական ղռան փող նվիրեցին։

Բոցավառվող խարույկներից, կենդանիների շնչառությունից ու ազբի գոլորշիացումից իջևանը տաքացավ բաղնիքի պես։

Մի կերպ գիշերն անցկացրինք։

Առավոտյան շնորհակալություն հայտնեցինք պարսիկ ուխտավորներին և շարժվեցինք դեպի Հաղմեյն։

Ցերեկոյան հասանք այնտեղ։

Այդտեղ թագցրած փողերը հանեցինք ու յես ու հայրս գնացինք շուկա, մի հին վերմակ առանք, մի ներքնակ և յերկու հատ էլ հնոտի շոր հագնելու համար։

Այստեղ—Հաղմեյնում — կողոպտված ուխտավորները գնացին իրանական դեսպանատուն և խնդրեցին, վոր դեսպանա-

տունը միջոցներ ձեռք առնի իրենց թալանված իրերը վերադարձնելու համար։

Դեսպանը խոստացավ անձամբ գնալ Բաղդադ վալու մոտ և ընթացք տալ այդ գործին։ Դեսպանը մեզ պիտի վճռական պատասխան տար հետևյալ որն իսկ։

Հենց հետևյալ որը մենք բոլորս միասին նորից գնացինք դեսպանատուն։ Դեսպանը մեզ հաղորդեց, վոր Վալին պատրաստ է մարդիկ ուղարկել՝ հետապնդելու ավազակներին, բայց վալին փող չունի, վոր հատուկ ջոկատ ուղարկի ավազակներին բռնելու համար,—յեթե կարող եք,—ավելացրեց դեսպանը,—փող հավաքեցեք, հանձնեք ինձ, յես վճռական միջոցներ ձեռք կառնեմ։

Յես հիշեցի Քիրմանշահում լսածս առածը, վորն ասում ե—«Մերկը մերկի կողքով անցնելիս ասաց—յես սրան կհագցնեմ»։

Հորս ձեռքը բռնեցի, դուրս բերի ամբոխի միջից, վորը միամտորեն զուր հույսեր եր դնում դեսպանի վրա։

Դուրս յեկանք փողոց և ուղևորվեցինք մեր օթևանը։

Առավոտյան շարժվեցինք դեպի Քյալբալա։ Այն ուխտավորները, վորոնց հետ մենք հիմա ճանապարհ եյինք գնում, մեծ մասամբ թավրիզցիներ եյին, Ադրբեջանի թուրքեր, վորոնք իրենց հետ տանում եյին արկղների մեջ ամփոփված մեռելները։

Մենք ողջ և առողջ հասանք Քյալբալա—«Վշտի դաշտը»։ Այստեղ ե նահատակվել Շիմրի ձեռքով յոթանասուն շիաների և Յեզիդի բազմաթիվ զորքի միջև տեղի ունեցած արյունալից կռվից հետո իմամ Հուսեյինը [1]։

Հիմա այդ տեղում կառուցված ե մի փառավոր դամբարան-
վորի շուրջը մարդաշատ ու աղմկոտ քաղաքն ե։

---

[1] Խոսքը վերաբերվում ե այն միջցեղային պատերազմներին, վորոնք տեղի յեն ունեցել հիջրայի 40-ական և 50-ական թվականներին (մեր թվականության VII դար) մահմեդական աշխարհում գերագույն իշխանություն ձեռք բերելու համար (խալիֆաթ)։ Այդ պայքարը տեղի յե ունենում մի կողմից արաբ ցեղի—Ումայանների և մյուս կողմից, շիաների—այսինքն Մոհամեդի փեսա Ալու—Բեն—Աբու-Թալիբի և նրա վորդիներ Հասանի և Հուսեյինի միջև։ Այդ պատերազմը միաժամանակ մի պայքար եր, վորը մղվում եր իսլամական աշխարհի յերկու մասերի միջև՝ տնտեսական և քաղաքական գերիշխանություն ձեռք բերելու համար Ասորիքի և Իրանի վրա։ Հաղթող հանդիսացան Ումայանները,

Քալբալայում գամբարանի այցելության կարգը նույնն էր, ինչ վոր մյուս սրբատեղերում։ Ինչպես ամեն տեղ, այստեղ էլ ուխտավորների վրա հարձակվում եյին գիրացած ու ճարպակալած արաբները, ավելի ագահ ու անխնա քան անապատի բեդուինները։

Աստվածաբանները, աղոթարարները, հողաթափերի հսկիչները, լուսարարները, սուրբ աղբյուրների պահապանները, սրբազան գամբարանների պահապանները, ահա ձեզ մարդկանց ստվար մի բազմություն—բայց իրոք իսկական կողոպտիչ—թալանիչներ։ Յեվ յեթե դարերի սրբագործված սովորությունը չլիներ, վոչ վոք չէր գնա ուխտի ու ծնրադրության, այնքան եյին վախենում մարդիկ այդ ավազակաբարո թալանչիներից։

Իրենց ժառանգական գույքերի պես տիրապետելով այդ «սրբատեղերն», այդ մարդիկ անխնա կողոպտում են ժողովրդին այնպես, ինչպես իրանական շահի պալատականները կողոպտում են Իրանի անմռունչ խեղճ ու կրակ ռայա ժողովրդին։

Այս բոլորի հանդեպ մենք էլ մեր հերթին ամեն կերպ աշխատում եյինք այն ուղղությամբ, թե ինչպես խնայենք ու փրկենք մեր աղքատիկ կոպեկները գիշատիչների ճանկերից ու յերախից։

Մենք աշխատում եյինք հնարավորության չափ կրճատել մեր ուխտագնացության ժամանակամիջոցը։ Այդպես էլ արինք։

Հոգևոր շահն-շահի ընտրությանը հատկացրինք միայն յերկու օր։ Բացի դրանից, ննջեցյալների ուղեկցող ուխտավորներն շտապում եյին գնալ Նեջեֆ, վորպեսզի մեռելները թաղեն այնտեղի գերեզմանատանը։

Մենք միացանք նրանց։

Բայց Քյալբալայի բնակիչները մեզ բավական յետ գցեցին ճանապարհից։

— Տեսեք,—ասում եյին նրանք,—ճանապարհը կտրված է,

վորոնց գլխավորը, Դամասկոսի կառավարիչ Մոավեն, զրավեց խալիֆաթը, հետապնդեց Ալուն, վորից հետո նրա վորդի Յեզիդը հետապնդեց նրա վորդիներին, ըստ վորում Հուսեյինը շրջապատվեց Յեզիդի զորքերով անապատում, գերի ընկավ նրանց ձեռքը և սպանվեց, Հուսեյինի սպանությունը սգում են բոլոր շիաները Մոհարրեմի առաջին տասն որին (Աշուր)։

Շատ-Էլ-Արաբի պատնեշը ջուրը տարել է, գետը չենք կարող անցնել; ավելի լավ է մի քանի որ մնալ այստեղ։

Ուխտավորները նրանց չլսեցին ու առաջ շարժվեցին։

Մի քանի փարսախ դեռ չեյինք անցել, վոր մեր առաջ բացվեց մի զարմանալի տեսարան։ Մեր առաջ լայն փռվող տափաստանը հեղեղված էր ջրով և նմանվում էր մի ընդարձակ լճի։ Բարեբախտաբար մի արաբ պատահեց, վորը գիտեր, ճանաչում էր ծանծաղուտները։ Ուխտավորները յերկու թուման փող տվին նրան, և նա խոստացավ ջուրն անցկացնել մեզ։

Բավական յերկար ժամանակ գնում եյինք մենք հեղեղված դաշտով գետի յերկարությամբ, իսկ մեր առաջնորդ արաբն ուշադրությամբ փնտրում էր ծանծաղուտը, վոր մեզ անցկացնի։

Վերջապես մի տեղ, վորտեղ իր ասելով պիտի ծանծաղ լիներ, վերարկուն հանեց, մտավ գետը։ Ուխտավորները, չարվադարները, վորը վոտով, վորը ձիով, հետևեցին նրան։

Գետը շատ էլ խոր չէր, բայց ջուրն այնքան տիղմ էր բերել, վոր մեր վոտքերը խրվում եյին մեջը և դժվարացնում քայլելը։

Ձիերն ու ջորիներն ամեն րոպե կորցնում եյին իրենց հավասարակշռությունը և վայր եյին ընկնում ու նրանց հետ էլ ջուրն եյին թափվում մեռելների արկղներն ու պարկերը։

Խեղճ չարվադարներն ուժից ընկան, մինչև նրանց նորից դուրս հանեցին ջրից ու տիղմից։ Յես ու հայրս էլ ոգնում եյինք կարիքավորներին ինչպես կամ ինչով կարողանում եյինք։

Վերջիվերջո, անհագին չարչարանքներից հետո, շատ իրեր կորցնելով ու մեռելների արկղների ջրի ու տիղմի մեջ թողնելով, մի կերպ կարողացանք ցամաք դուրս գալ։ Արդեն արեվմըտոտ էր։

Արևն էլ մտավ, և յեղանակն սկսեց ցրտել։ Յերկինքը պատած էր գորշ, թանձր ամպերով։ Շուտով ամպերն իրենց արցունքները թափեցին խեղճ ու կրակ ուխտավորների վրա։ Անձրեվը հորդացավ, իսկ մինչև կայանը դեռ շատ ճանապարհ կար։

Թե մարդիկ, թե անասուններն այլևս ուժ չունեյին առաջ շարժվելու, դրա համար էլ վորոշեցինք կանգ առնել հենց անապատի մեջտեղում և հանգստանալ։

Չարվադարները ննջեցյալների արկղները դարսեցին իրար

վրա, չորս կողմից յերկար ձողեր խփեցին գետնի մեջ, վրանների ծածկոցներով չարդախ կապեցին, իրանք էլ մեռելների հետ միասին պատսպարվեցին չարդախի տակ։ Ձիերն ու ջորիները կապեցին չարդախի կողքերին։

Մնացած ուխտավորներն ուղղակի պառկեցին խոնավ գետնի վրա, խուրջինները դրին գլխատակներին, վերմակներն առան վրաները և աշխատեցին հանգստանալ՝ սպասելով լուսաբացին։

Յես ու հայրս էլ, վոր առանձնապես սովոր և պահանջկոտ չեյինք հարմարությունների նկատմամբ, հանգիստ քնեցինք մեր հին վերմակների տակ։

Ամենավատ վիճակը ձիերինն ու ջորիներինն եր։ Այդ անլեզու, խեղճ անասունները տանջվում եյին քաղցից։ Ամեն բույս կապները կտրում, թափառում եյին դես ու դեն խոտ փնտրելու։ Բայց խոտ վորտեղից եր։ Քաղցած անասունները մի բան տեսնում եյին թե չե, դնչով խփում եյին, կարծելով, թե ահա խոտ կամ դարման են գտել, սկսում եյին ագահաբար ծամել։

Մի քանի անգամ գիշերը յես զարթնեցի և տեսա, թե ինչպես ձին յորղանիս տուտը բերանն առած՝ քաշ եր տալիս։

Կես գիշերին հայրս զարթնեց, մի քանի քայլ հեռացավ մի կողմ բնական պահանջի համար ու վերադարձավ ասաց.

— Զարմանալի բան. ականջովս այնպիսի ձայներ են ընկնում, վոր կարծես թե ձիերը գարի յեն ուտում։

Յես տարակուսում եմ։ Ախար վորտեղից կարող եյին ձիերն այս անապատում գարի ճարել։ Հայրս նորից տեղից վերկացավ, գնաց ստուգելու։ Ի՞նչ տեսնի... Ձիերից յերկուսը դունչները կոխած մեռելների արկղների մեջ, նրանց միսն եյին ծամում։ Այնքան եյին կերել ու կրծել, վոր համարյա թե հասել եյին վոսկորներին։

Այդ տեսարանը և՛ զզվելի յեր, և՛ սարսափ ազդող, սարսռեցուցիչ։

—Չե, յես յերբեք իմ մեռելները չեմ ուղարկի սուրբ յերկիր,—ասում եյի ինքս ինձ։

Այս դեպքն ինձ առիթ տվեց խորհելու մարդկանց և նրանց սովորությունների մասին... Յեղկելի մարդիկ, վոր ձեր մեռելներն ուղարկում եք շատ հեռու, անծանոթ վայրեր, վոր-

պեսղի ճանապարհին նրանց ջուրը տանի, կամ թաղվեն տիղմի մեջ և՛ կամ քաղցած ձիերը նրանց միսն ուտեն։ Վորքա՜ն ծաղր կա ձեր այդ սովորությունների մեջ։ Մի մարդ, վոր իր կենդանության որով հազար ու մի չարիք է գործել, իր հարստության շնորհիվ կարող եր կտակել իր կենդանի հետնորդներին իրեն թաղել Նեջեֆի «սուրբ հողում», և այնուհետև ինքը մաքուր է, անմեղ, անարատ, թեկուզ և նա իր կենդանության որով լիներ ամենապիղծ և հանցավոր արարածը։

Այդ մտորումների մեջ յես մի կերպ գիշերն անցկացրի իմ ցուրտ ու խոնավ տեղաշորի մեջ։

Առավոտյան իրարանցում սկսվեց։ Պարզվեց, վոր ձիերն ու ջորիները շատ մեռելներ են կրծոտել ու կերել։

Մեռելներ կային, վորոնք տարվում եյին պարկերի մեջ. ամենից շատ հենց այդպիսիններն եյին տուժել։

Տուժած մեռելներին ուղեկցող ուխտավորները կպել եյին չարվադարների յախից և պահանջում եյին իրենց ննջեցյալներին։

Այն ուղեկցողները, վորոնք մեռելների արկղները կորցրել եյին նախընթաց որը գետն անցնելիս, դեռևս հույս ունեյին, թե մի կերպ տիղմի միջից դուրս կբերեն, ու ստիպում եյին չարվադարներին գնալ փնտրել և անպայման գտնել։

Նրանք բղավում եյին, հայհոյում չարվադարներին։

— Սա ի՞նչ բան է,—ասում եյին նրանք,—յերեկ ձեր քոսոտ յաբուներն ազատելու համար մեր մեռելները թողինք ջրի ու տիղմի մեջ, մեզ ել մխիթարում եյիք նրանով, վոր միևնույնն է, այստեղն ել սուրբ է, այստեղ ել նրանք սուրբ որհնության կարժանանան։ Հիմա ի՞նչ պատասխան եք տալու, յերբ մեռելներին ձիերը կերան, համարյա վոչնչացրին։ Ձեր կարծիքով այդ ել որհնություն է։

Չարվադարների ավագը յետ չմնաց մեռելատերերից. նա ել իր հերթին սկսեց հայհոյել և մեղադրել ուղեկցողներին։

Իսկ ո՞վ է յերաշխավորել, վոր ձեր տարած մեռելներն անպատճառ դրախտ կերթան։ Յես այդ մասին իսկի չեմ ել մտածում։ Ինձ համար միևնույնն է, թեկուզ նրանք դժոխք ել գնան։ Մյուս կողմից, մի՞թե յես մեղավոր եմ և պատասխանատու։ Իրանում դուք եք ձեր ադրբեջանցիների առաջ։ Նրանք են իրանց

մեռելները ձեզ հանձնել, դուք էլ պատասխանատու յեք նրանց առաջ։ Դուք միայն նրանցից փող եք պոկել, փոխարեն կարողանաք ուխտ գնալ և հոգալ ձեր սննդի ու ճանապարհի ծախսերը։ Յերկու-յերեք մեռել ճխտել եյիք մի պարկի մեջ—կին թե տղամարդ—այնպես վոր նրանց վոսկորներն էլ խառնել եյիք իրար և հավատացած եյիք, վոր նրանք անպատճառ դրախտ կերթան։ Վոր այդպես է, յես էլ կհայտնեմ մեռելատերերին, թե ինչպես եյիք տեղավորել նրանց ննջեցյալներին պարկերի մեջ և թե վորքան անուշադիր և անփույթ եյիք դեպի մեռելները։

Զարվադարների ավագի այս խիստ ու կտրուկ պատասխանը մեռելների ուղեկիցներին զգաստացրեց, վորից հետո բոլորն էլ լռեցին ու հանգստացան։

Բոլորն էլ յեկան այն համաձայնության, վոր մեռելների հետ պատահած դեպքի մասին վոչ վոք վոչինչ չպիտի ասի վորևե մեկին։ Կատարյալ գաղտնապահություն։ Իսկ յերբ կհասնեն Նեջեֆ, գերեզմանատան վերակացուներին մի բան կտան, նրանցից մի թուղթ կվերցնեն, վոր հիրավի մեռելները բերված և թաղված են Նեջեֆի գերեզմանատանը։

Ընդունված կարգի և կանոնի համաձայն թղթի մեջ կնշանակվի մեռելի անունը, ազգանունը, կոչումը և այլն։

Այս պայմաններով վիճողների միջև հաշտություն կնքվեց։ Այնուհետև ճանապարհ ընկանք ու շուտով հասանք շիաների սրբազան դամբարանները։

Մի ամբողջ շաբաթ մենք անցկացրինք խոշորագույն հոգևոր լուսատուի—մարդկանց և վոգիների մեծ իմամ Ալու գերեզմանի մոտ։

Մի որ նվիրեցինք Քուֆա քաղաքի մեջիտի ուխտագնացությանը։ Մենք յերկրպագեցինք բոլոր մարգարեներին։ Թեև ճիշտ է, մեզ բացատրեցին, վոր մարգարեներն այնտեղ աներևույթ են, բայց դա միևնույնն էր մեզ համար, յեթե մենք մուսուլմաններ ենք, պարտավոր ենք ամեն բանի հավատալ—թե տեսանելի և թե աներևույթ սրբին։

Այստեղ մենք արաբի ղեկավարությամբ կատարեցինք պատշաճ ծեսերն ու աղոթքները, վորից հետո գնացինք Սեհլեյի մեջիտը, վորտեղից հանկարծ դուրս պրծան մի խումբ ուխտավորներ՝ համարյա առանց հագուստի։

Նրանք վրդովված բղավում եյին.

— Արաբները մեջիտում մեզ բոլորովին կողոպտեցին, ներս մի՛ մտեք, ձեզ էլ կմերկացնեն։

Այս որ լսեցինք, մենք հրաժարվեցինք մեջիտները շրջագայելուց։ Այստեղից վերադարձանք Նեջեֆ, այնտեղ գերեզմանների վրա մեր աղոթքներն արինք և ապա գնացինք մեր կացարանը։

Առավոտյան մենք հրաժեշտ տվինք ուխտատեղիներին և սրբազան վայրերին, ջարդված սրտով ճանապարհ ընկանք դեպի մեր վաթանը։

Քյալբալայում պատահեցինք մի խումբ քիրմանշահցի ուխտավորների, որոնք նույնպես տուն էին վերադառնում, միացանք նրանց և միասին շարունակեցինք մեր ճանապարհը։

* * *

Ուխտավորների մեջ սովորություն կա, որ ուխտից վերադառնալիս, իրենց ծանոթների և բարեկամների համար սրբավայրերից նվերներ են տանում։ Մենք էլ մեր բարեկամների ու ծանոթների համար թաղբեհ ու դրոշմներ առանք, հետո գնացինք հրաժեշտ տալու ուխտատեղուն։

Ուխտատեղու աղոթարար նույն սեյիդը կանգնած էր դռների մոտ։ Մենք ցանկություն հայտնեցինք մի անգամ էլ աղոթել, թերևս վերջին անգամը, որպես հրաժեշտի աղոթք։ Աղոթարար սեյիդը արտասանում էր աղոթքի արաբերեն բառերը, մենք կրկնում էինք։ Ուշի ուշով հետևելով աղոթքի բառերին, ես կարողացա ջոկել մի շարք բառեր, որոնք արաբերեն չէին, այլ պարսկերեն բառեր էին, և որպես պարսկերեն բառեր՝ նրանց իմաստը հասկանում էի։

Օրինակ սեյիդն արաբերեն ասում էր.

—Սալամ ալեյքում, յա բեն թասուլ ալլահ։ Ե՛յ, աղջիկ, իսկ դու վճրտեղայի չես։

Մենք էլ կրկնում ենք միևնույնը։

Հետո։ — Լան ալլահ ամեյի — հաթալեք, լան ալլա ամեյի —ղոլմեթեք։—Թող բոլոր մարդասպաններն անիծվեն, ոչինչ, քույրիկս, մենք քեզ համար մարդ կգտնենք։

Հետո։—Լան ալլահ... անիծիր սատված բոլոր ճնշումներն

ու բռնությունները։ Ասացեք խնդրեմ, վճռել է ձեր բնակարանը։

Ես ամեն կերպ աշխատեցի իմանալ, թե բանն ինչումն է, բայց չկարողացա։

Ինչևիցե, մենք վերջնականապես հրաժեշտ տվինք, թողություն առանք և շարժվեցինք դեպի Ղազմեյն։ Ճանապարհին մեզ հետ միասին գնում էր մի քիրմանշահեցի հաջի, որը շատ սիրալիր էր և հաճախ հորս նստեցնում էր իշի վրա։ Ես այդ հաջուն հարցրի «Ջիարեթ նամեյի» մեջ մտցրած այն պարսկերեն բառերի մասին։

— Դա շատ հասարակ բան է, որդիս,— ասաց հաջին,— աղոթք ընթերցողներն այնքան ագահ ու փողասեր մարդիկ են, որ աղոթքի մասին իսկի չեն մտածում։ Նրանց ուշ ու միտքը միայն ուղղված է այն բանին, թե ինչպես փող պոկեն մարդկանցից։ Քեզ հասկանալի բառերը նա այն կանանցն է ուղղել, որոնք կանգնած են յեղել գերեզմանի մյուս կողմում։ Այստեղ, սրբատեղերում, նրանց մոտերքում, շատ անապաստան կանայք կան, որոնք պոռնիկությամբ են զբաղվում, իսկ աղոթք կարդացողները նրանց համար միջնորդություններ են անում, նրանց համար մարդ են ճարում։ Քանի դեռ ուխտավորների քարավանները կանգնած են ուխտատեղում, այդ կանայք յերկու-յերեք անգամ սրա-նրա կինն են դառնում՝ որոշ պայմաններով։

* * *

Ղազմեյն գալուց յերկու օր հետո մենք լուր առանք, որ Մուզաֆֆեր-Եդդին շահը վախճանվել է և հետո ջուրը Բաղդադի մոտերքի պատնեշը քշել, տարել է, և Բաղդադից մինչև Բաքուբեն ջրով հեղեղված է։

Այսպիսով մեր ճանապարհը շարունակելը մի առժամանակ հետաձգվում էր։

Մեզ թվում էր, որ այդ շրջանի արաբները դեռ չեյին կշտացել ուխտավորների խմբեր թալանելով։ Հենց իրենք դիտմամբ եյին քանդել պատնեշը, որ յերթևեկությունը խափանեն, ուխտավորներին յետ պահեն Միջագետքում և կողոպտեն նրանց մոտ մնացած փողերը։

Պարզվեց, վոր հենց այդպես էլ է։

Հեղեղումը մեզ յետ գցեց ճանապարհից ամբողջ քսան օր։ Ուխտավորների մեծամասնությունը մնաց Ղազվեյնում, Բաղդադում, իսկ հարուստները նորից վերադարձան Քյալբալա՝ կրկնելու իրանց ուխտը, մինչև վոր քանդված պատնեշը կվերականգնեն։

Ինձ ու հորս հաջողվեց մի կերպ դուրս պրծնել այդ դրությունից։ Մեզ հետ ծանոթացած հաջին բավական հարուստ էր, նա յերկու թուման փող տվեց մի լաստատիրոջ, և մենք մի քանի օր դեգերելով ջրի վրա, հազիվ ջուրն անցանք, դուրս յեկանք ցամաք և ուղևորվեցինք դեպի Իրանի սահմանը։

Անցանք Խանեքինի և Ղասրեշիրինի մաքսատան ուղեկալները՝ Միջագետքի թալանչիների ճանկերից ազատած մի քանի կոպեկներն էլ իրենց՝ այսինքն հայրենի թալանչիների ճանկը ձգեցին։

Այդպես, մի կերպ հասանք Քիրմանշահ։

Մենք մեր մտած քաղաքները չեյինք ճանաչում։ Շատ բան էր փոխվել։ Քաղաքի հրապարակում վրաններ եյին խփած։ Այստեղ հավաքվել եյին քաղաքի ազնվականները, վաճառականներն ու արհեստավորները։ Ամեն դաս իր վրանում հավաքված՝ խոսում, վիճում եյին։ Դրանք ժողովուրդի ներկայացուցիչներն եյին, պահանջում եյին սահմանադրություն։ «Մաշրութթի»[1]) բացականչություններով բռնված էր ամբողջ քաղաքը։

Յես չեյի հասկանում նոր գործածվող բառերն ու նոր խոսակցությունները։ Չեյի հասկանում, թե ինչ է նշանակում «մաշրութթե», և առհասարակ չեյի հասկանում, թե ինչ բան է ազատությունը։

Խառնվելով ամբոխին, լսում եյի մարդկանց խոսակցությունները, հարց ու փորձ եյի անում սրան-նրան, վորպեսզի իմանամ, թե բանն ինչումն է, ինչու յեն մարդիկ իրար անցել։

Ինձ բացատրեցին, վոր «մաշրութթե» նշանակում է— ամեն բան պիտի այսուհետև լինի այնպես, ինչպես հրամայել է մեծ մարգարեն, վոր այսուհետև մարդկանց հետ պետք է վարվել օրենքով, վոր օրենքը պիտի ամենքի համար էլ լինի հավասար,

1) Մաշրութթե—սահմանադրություն, սահմանադրական կառավարություն։

առանց խտրության, որենքի առաջ կանգնած լինի շահը՝ թե մի հասարակ գյուղացի։

Կային մարդիկ էլ, վորոնք ասում էյին, թե «մաշրութթե» նշանակում է թալան։

Թալան, սպանություն, մի խոսքով ազատություն միայն բոլոր բաբիների[1]) համար։

Մի քանի որ մնացինք Քիրմանշահում, բայց յես վոչինչ չեյի կարողանում հասկանալ։ Յես քուրդ էյի, բռի գյուղացի և քաղաքական ու հասարակական խնդիրներից գլուխ հանել չեյի կարողանում։

Վերջապես մենք ճանապարհ ընկանք դեպի տուն։

Մայրս ու Շիրին քույրս յեկել, հասել էյին Համասիար դեպի ափը մեզ դիմավորելու։ Վորքան ուրախ էյին նրանք, վորքան յերջանիկ։ Իսկապես թե՛ մայրս ու քույրս և թե՛ յես ու հայրս կարծես այդ պահին աշխարհում ամենայերջանիկ մարդիկն էյինք։

---

1) Բաբիստները կամ բաբիական աղանդավորները Ալի Մոհամմեդ բաբիի հետևորդներն են, վորոնք Իրանում վորքան կրոնական, նույնքան էլ քաղաքական նշանակություն ունեյին։ 1848 թվին մի շարք քաղաքներում հերոսաբար պաշտպանվելուց ու ջախջախվելուց հետո, 1852 թվին նրանք մահափորձ կազմակերպեցին Նասր-Եդ-Դին շահի դեմ, վորպիսի ձեռնարկությունը սակայն չհաջողվեց և վորին հաջորդեց գազանաբար հատուցումը։

60-ական թվականներին նորից մի շարք քաղաքներում տեղի ունեցան բաբիստների յելույթները, վորոնց ընթացքում շատ բաբիստներ սպանվեցին։ Հաստատում են, վոր Նասր-Եդ-Դին շահին սպանող Միրզա Ազա Քիրմանին էլ Բաբիստ է յեղել։

Բաբիստների շարժումը ղեկավարվում էր առևտրականների և աղանդավոր հոգևորականների կողմից, վորոնք հենվում էյին մանր բուրժուազիայի՝ այսինքն՝ քաղաքային արհեստավորության և գյուղացիության վրա, վորոնք քայքայվել էյին ֆեոդալական Իրանի և օտարերկրյա կապիտալի մրցակցության ազդեցության տակ։ Հետագայում բաբիզմը էվոլյուցիայի յենթարկվելով՝ վերացվեց բեհայիզմի, վորը լայն կերպով ծավալվեց վոչ միայն Իրանում, այլև ուրիշ յերկրներում, վորոնց թվում նաև յեվրոպական յերկրներում և Ամերիկայում։ «Բաբի» կոչումը հետազոտողների և շիա հոգևորականների բերանում համազոր է հայհոյանքի, այսինքն՝ համանիշ է ապստամբ, քարոզիչ և նույնիսկ հեղափոխական հորջորջման։

ԹՅԱԼԲԱԼԱ ԱԼԼԱԴԱԴԻՆ ՈՒ ԲԱԽՏԻԱՐՆ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Անցավ մի քանի օր։ Հայրս նորից սկսեց մտածել իր վարուցանքի մասին։

Մենք հիսուն թուման փող ունեյինք տանը պահած։ Երեսուն թումանով մի զույգ յեզ առանք, տասնհինգ թումանի սերմացու ցորեն ու գարի առանք, իսկ հինգ թումանն էլ, ինչպես ասում են, պահեցինք սև օրվա համար։

Մենք, կարելի չէ ասել, լավ էյինք ապրում։ Մայրս ու քույրս հաց էյին թխում, իսկ ես տանում էյի Բիահիթունի ճանապարհի վրա ծախում էյի յեկող-գնացող ուխտավորներին։ Բացի հացից, ձու էլ էյի ծախում և այդպիսով օրական մեկ-յերկու ղրան փող էյի աշխատում։ Հայրս էլ աշնան վար ու ցանքն էր անում։

*
* *

Այնպիսի ժամանակ էր, վոր ժողովուրդը հուզումնալից օրեր էր ապրում։ Համարյա ամեն տան մեջ էլ խոսակցություն ու վեճ էր լինում «մաշրութթեյի» մասին։

Իրանի ամբողջ ժողովուրդը բաժանված էր յերկու հոսանքի կամ կուսակցության — սահմանադրականների և միապետականների։ Ընդհանրապես՝ միապետության կողմնակիցներն էյին՝ խոշոր հարուստները — հողատերերը, դրամատերերը, ինքը շահը, նահանգապետները և նման կարգի մարդիկ, իսկ մնացած բնակչությունը մաշրութթականներ կամ սահմանադրականներ էյին։

Սահմանադրական անցուդարձի նկատմամբ գյուղացիները շատ էյին զարմանում, թե այդ ինչպես է, վոր մարդիկ այնպիսի համարձակությամբ հայհոյում են շահին ու կառավարությանը։ Լուրեր էյին տալիս, վոր Թեհրանի, Թավրիզի և մյուս քաղաքների բնակիչները վերջնականապես ապստամբել են շահի դեմ, իսկ Մահմեդ-Ալի շահը իբր թե հեռագիր է ուղարկել բոլոր մարզերի ու նահանգների պետերին և խստիվ հրամայել ու կարգադրել է, վոր յեթե մեկը համարձակվի սահ-

մանադրության մասին խոսել՝ առանց այլևայլության թնդանոթին կապել ու կրակել, իսկ գույքն էլ հարքունիս գրավել։

Անշուշտ ժողովրդի ու սահմանադրության կողմնակիցներն էլ քնած չէին կամ ձեռները չէին ծալել ու նստել։ Սահմանադրականների հռետորներն էլ իրենց հերթին շրջում էին ամեն տեղ և բնակչությանը վոտքի էին հանում շահի իշխանության դեմ։ Յերկու ուժերն էլ պայքարում էին միմյանց դեմ, և դրա հետևանքով յերկրում ամենուրեք տիրում էր խառնակություն և անիշխանություն։

Քաղաքների առևտրականների դրդումներով վոտքի յելան քոչվորների ցեղապետները։ Սրանք նույնպես ապստամբեցին կառավարության դեմ, սակայն սրանց ապստամբությունը կարծես միայն թալանի ու կողոպուտի համար էր։ Այդ թալանը նույնիսկ նրանք անվանում էին «մաշրութթե», այսինքն՝ սահմանադրություն, այնպես վոր յերբ ավազակները թալանում էին հասարակ ժողովուրդին, վերջիններն ասում էին—«մենք մաշրութթեյի յենթարկվեցինք»։

Կարծես թե ճակատագիրը ցանկանում էր ժողովուրդին վոչնչացնելու նորանոր ձևեր գտնել կամ հնարել։ Խաները, յերևելիները, նահանգապետերն ու նրանց գավառապետները, զինված ձիավոր խմբեր էին կազմում, անարգել կերպով հարձակվում էին գյուղերի վրա և կողոպտում ու թալանում էին խեղճ գյուղացիներին։ Ճանապարհների վրա, գյուղերում այնպիսի խառնակչություն էր տիրում, վոր առանց զենքի չէր կարելի տնից մի քանի քայլ անգամ հեռանալ։

Գյուղացիները մի վորևե անհրաժեշտ կարիքի համար գյուղից-գյուղ գնում էին միայն զինված խմբերով։ Նույնիսկ մենակ մի զինված մարդն էլ սիրտ չէր անում ճանապարհ գնալ, այնքան անապահով էր դրությունը։ Յեթե մարդ հավաքի ու դրի անցկացնի այն բոլորն, ինչ վոր մարդիկ այդ ժամանակներում տեսան ու ապրեցին, կստացվի կոտորածների, արյունահեղությունների մի սարսռեցուցիչ, մարդու մարմինը փշաքաղող պատմություն։

Այդ ժամանակներում կարծես Իրանը նման էր մի ահագին գազանանոցի, վորտեղից կարծես մեկը վանդակներից հանկարծ բաց է

թողել ամենակատաղի գաղաններ, մարդկանց հոշոտելու համար։

Այդպիսի սարսափով ու չփոթությամբ էր բռնված ամբողջ ժողովուրդը։

Շատ տեղերում խեղճ գյուղացիները թողին իրենց բնակավայրերը և փախան լեռներն ու պատսպարվեցին կիրճերում ու քարանձավներում, ավազակների ու միապետականների հարձակումներից զերծ մնալու համար։

Մենք ապրում էինք Բիսհիթունից դեպի արևմուտք։ Մեր տերերը Բուքավինդ ցեղի խաներն էին, այդ պատճառով էլ մենք չփախանք սարերը, բայց հետագայում այդ խաներն էլ չենթարկվեցին անօրինակ բռնությունների ու ճնշումների։

Սովորական հողային և այլ տեսակի հարկերի հետ միասին՝ այժմ մենք հարկադրված էինք վճարել նաև հարկեր ավազակների օգտին։

Ճար չկար, պիտի վճարեյինք։

Բուրդ ժողովուրդը չի սիրում լքել, հեռանալ իր բնակավայրից։ Նա գերադասում էր հաշտվել ամեն բանի հետ, դիմանալ տանջանքների ու զրկանքների։

***

Ցես էլ գնում էի Բիսհիթունի ճանապարհի վրա հաց ու ձու ծախելու։ Ճանապարհով անցնող «աթթարներից» լրագրեր էի առնում կարդալու համար, թեև այդ լրագրերն աթթարները գնում էին ապրանք փաթաթելու համար իրենց խանութում։ Ցես կպա լրագիր կարդալուն։ Ցես կարդում էի «Սուր-Ե-Իսրաֆիլ», «Հաբլ-Ոլ-Մատին»[1]) և այլ թերթեր, վորոնց ընթերցումն իմ միտքը զարգացրեց, մտավոր հորիզոնս ավելի ընդարձակեց և իմ առաջ բացեց մի նոր աշխարհ։

Ինձ սրտանց ուրախացնում էր այն հանգամանքը, վոր լրագրերը խոսում էին գյուղացիության վերածնության և բոլոր

---

1) Հաբլ-Ել Մատին—«ամուր կապ»—ազատագրական շարժման մեջ մեծ դեր խաղացած թերթ է։ Այժմ հրատարակվում է Իրանի սահմաններից դուրս—Կալկաթայում։

Սուր-Ե-Իսրաֆիլ—հայտնի քաղաքական օրգան է։

աշխատավորների ազատության մասին։ Խորասուզվելով ընթերցանության մեջ, ինքս ինձ ասում եյի, վոր մոտ ե արդեն այն ժամանակը, յերբ պիտի դադարեն ու վերանան ամեն տեսակի ճնշումներն ու կամայականությունները, վոր շուտով գալու յեն ընդհանուր յերջանկության որերը, վոր բոլոր մարդիկ կապրեն՝ բոլորի համար միատեսակ ու հավասար որենքի պաշտպանության և հովանավորության տակ։

***

Այդ ժամանակներում եր, վոր հորս մեջ մի միտք հղացավ։ Նա յերկար ժամանակ չեր տեսել իր հարազատներին, չեր յեղել իր ծննդավայրում։ Ուզում եր անպայման գնալ այնտեղ։

Մի քանի նվերներ առավ յուրայինների համար և ճանապարհ ընկավ Քրդստանի—իր ծննդավայր գյուղը։

Յես մնացի տանը։ Հետևում եյի տան տնտեսությանը, խնամք եյի տանում մորս ու քրոջս, մինչև հայրս վերադառնար։ Միաժամանակ շարունակում եյի իմ առևտուրը Բիսհիթունի ճանապարհի վրա։

Ապրում եյինք մեզ համար առայժմ խաղաղ վիճակում և որ ավուր սպասում եյինք հորս վերադառնալուն։

Հորս վերադառնալու ժամանակն յեկավ, անցկացավ, բայց հայրս դեռ չեր յերևում։ Մենք սկսեցինք անհանգստանալ։ Մենք ինքներս մեզ եյինք մեղադրում, թե ինչու իր ժամանակին հորս չհամոզեցինք դրության այս խառը միջոցին տանից չհեռանալ։ Ե՛լ սպասեցինք մի քանի որ, բայց հայրս չկար ու չկար։ Հատկապես մայրս շատ եր անհանգստանում, ինչպես ասում են, վրան ել հալ չկար։

Վորոշեցինք, վոր յես գնամ ու փնտրեմ հորս։ Առանց ժամանակ կորցնելու, մի խումբ Թավրիզցի ուխտավորների հետ ճանապարհ ընկա Բիջարի վրայով դեպի Քրդստան։

Մեր քարավանը թեև շատ լավ զինված եր, սակայն մենք ել չկարողացանք անարգել ու անվտանգ անցնել կայանները։

Ճանապարհին մեր ուխտավորներին մի քանի տեղ լավ պլոկեցին։ Իզուր եյին ուխտավորները ճանապարհի թալանչի պահապաններին աղաչում, պաղատում, վոր արդարամիտ լինեն դեպի

իրենց, իրենց ուժերից վեր տուրքեր չբռնագանձեն։ Ո՞վ եր լսողը։

— Ախար մենք ապրանքատեր չարվադարներ չենք, մենք ուխտավորներ ենք, մենք գնացել եյինք մեծ նահատակների շիրիմներին յերկրպագելու, — ասում եյին ուխտավորները։

— Յեթե դուք չարվադարներ լինեյիք, մենք ուղղակի ձեզ կկողոպտեյինք, — պատասխանում եյին նրանք, — քանի որ դուք ուխտավորներ եք, այդ պատճառով մենք ձեզնից վերցնում ենք միայն ճանապարհին անցնելու համար սահմանված տուրքը։

Վաղուց եր, որ յես այս կողմերում չեյի յեղել, և ինձ տարօրինակ եր թվում տեսնել նախկին ծաղկած ու բարգավաճ վայրերի, մարդաշատ գյուղերի փոխարեն տխուր ավերակներ, հրդեհված տներ և դատարկ, անմարդաբնակ փողոցներ։

Յես իմացա, որ այդ տեղերում համարյա ամեն օր տեղի եյին ունենում կոտորած ու ավեր և այդ պատճառով ել բնակիչները փախել, ցրվել են զանազան կողմ։

Ուխտավորների հետ հասա մինչև Սիրաբ։ Այդտեղ յես նրանցից բաժանվեցի, ճանապարհս թեքեցի և ուղևորվեցի դեպի հորեղբորս տունը, որը գտնվում եր ճամբաբաժանից յերկու փարսախ հեռավորության վրա։

Յերբ մոտեցա տանը, տեսա հորեղբորս՝ կանգնած տան յետևում։ Տեսնելուն պես՝ նա ինձ ճանաչեց։ Մենք համբուրվեցինք։ Տանեցիք բոլորն ել իմացան իմ գալու մասին. ուրախացած դուրս պրծան ինձ դիմավորելու։

Հորեղբայրս, իր տղան ու աղջիկը, բոլորն ել դուրս յեկան և շրջապատեցին ինձ։ Այդ միջոցին յես հայացքով փնտրում եյի հորս, մտքումս հարց եյի տալիս, թե ո՞ւր ե հայրս։ Նա չեր յերևում։

— Ո՞ւր ե հայրս, — անհամբերությամբ հարցրի յես։

Հորեղբայրս զարմացավ։

— Մի՞թե նա ձեր տանը չի։ Նա մի քանի օր մնաց մեզ մոտ ու գնաց։ Տուն գնաց։ Նա հիմա տանը պիտի լիներ։

— Նա տանը չե, — անհանգստացած ու սրտնեղած ասացի յես։

Մեր հանդիպման ու տեսակցության ուրախությունը փոխ-

վեց տխրության և անհանգստության։ Դժվար է նկարագրել մեր անհանգստությունը։

Վորոշեցինք առավոտյան շուտ վերկենալ և հորեղբորս հետ գնալ փնտրել հորս՝ գլխավոր ճանապարհի վրա հարց ու փորձ անելով գյուղացիներին։

Գիշերն անցկացրի հազար ու մի յենթադրությունների ու սիրտ մաշող մտածմունքների մեջ։ Հազիվ եր լուսացել, վոր հորեղբորս հետ տանից դուրս յեկանք, ընկանք գյուղե գյուղ և ամեն տեղ հարցրինք հորս։

Մի տեղ ասացին, վոր մի քանի որ առաջ նրան տեսել են, թե վոր կողմի վրա յե գնացել։ Նույնիսկ ցույց տվին ճանապարհի ուղղությունը։ Մի քանի տեղ ել՝ իսկի տեղեկություն տվող չեղավ։

Մի տեղ ել մեզ ասացին, այս քանի որս մի քանի գյուղացիներ են սպանվել։ Մենք շրջագայեցինք այն բոլոր տեղերը որտեղ գյուղացիների ասելով, կատարվել եյին սպանությունները։ Մենք նկարագրեցինք հորս նշանները—նրա շորերը, գդակը, վոտնամաններն և այլն, բայց նրանց նկարագրությունն ել չեր համապատասխանում հորս արտաքին նշաններին կամ հագուստի տեսակին։ Յերբ մենք յեկանք Հենզենահլա գյուղը, մեզ ասացին, վոր այնտեղ մի քանի որ առաջ Նոլյայի հաջի Նամի խանը յերկու մարդ է սպանել—մի սեյիդ և մի հասարակ գյուղացի։ Մենք խնդրեցինք այդտեղի գյուղացիներին նկարագրել հասարակ մարդու նշանները։ Նրանցից մեկը դարձավ իր մոտ կանգնած յերկու գյուղացիներին և ասաց.

— Դուք արդեն մի բարություն արել եք, թաղել եք նրանց, այժմ ել արեք յերկրորդ բարությունը. նրանց իրերից մի քանի բաներ մնացել են ձեզ մոտ, բերեք այդ իրերը, թող սրանք տեսնեն, գուցե դրանով մի բան պարզվի։

Մենք վստահացրինք այդ մարդկանց, վոր մեր կողմից վորևե վտանգ չի սպառնա իրենց, ընդհակառակը, մենք իրենց ըսպանվածների արյան տակ ընկած չենք համարի և վրեժառու չենք լինի դրա համար։

Դրանից հետո նրանք գնացին ու բերին մի կույտ մաշված քոշեր, մի գդակ, մի վերարկու և մի ձեռնափայտ։ Մենք անմիջապես ճանաչեցինք հորս իրերը։

Մեզ ցույց տվեցին նույնպես, թե վորտեղ է թաղված հայրս․ ցույց տվին նրա հողաթումբը։

Յես ու հորյեղբայրս յերկար լաց յեղանք հորս գերեզմանի վրա։

Դրանից հետո յես հորյեղբորս յետ դարձրի իրենց տունը, վորովհետև չեր կարելի տունն ու ընտանիքը մենակ թողնել այն սարսափների մեջ, իսկ յես մինակ ճանապարհ ընկա դեպի տուն՝ շատ ծանր տրամադրության մեջ։

Յերբ տուն հասա և կատարվածի մասին պատմեցի մորս ու քրոջս, նրանք գլխներին տվին, սկսեցին մազերը փետտել, յերեսները չանգռել, ինչպես անում են սովորաբար կանայք մի ծանր վշտի ու կսկիծի ժամանակ։

Հարևաններն ու հարևանուհիներն իսկույն հավաքվեցին։ Կարդացին ու արտասանեցին սգի աղոթքները։

Վորքան էլ մենք չքավոր եյինք, այնուամենայնիվ յերկու վոչխար մորթեցինք․ թեյ, շաքար գնեցինք, հորս համար արժանի հոգեհաց պատրաստեցինք՝ հրավիրելով գյուղի հարևաններին և հարևան գյուղերի մոտիկ ծանոթներին։

Անցավ մի քանի որ։ Մի անգամ գյուղի քեթխուդան մեզ մոտ յեկավ մի քանի գյուղացիներով՝ հետներն առած սափրիչին։

Սովորության համաձայն ինձ սափրեցին, պատառոտած շապիկիս ոձիքը կարեցին, այդպիսով ինձ սգահան արեցին ու մխիթարեցին։ Դա նշանակում եր, վոր սուգը վերջացավ։

Աստված չի պատվիրում իրեն այդպես տանջել,—ասաց քեթխուդան,—ինչ արած, այդպես է կյանքը, բոլոր կենդանի արարածները մեռնելացուկ են։ Փառք աստծու, այժմ դու մեծ ես, կարող ես արդեն հայր լինել, տան կառավարչությունն առնել քո ձեռքը։ Շատ դարդ մի անի։ Կամաց-կամաց սկսիր ըզբաղվել քո աշխատանքով։ Աշխատանքի մեջ վիշտդ կթեթևանա, հետո կամաց-կամաց կմոռացվի։

Անցան սգի, մխիթարանքի և այցելության որերը։ Յես անցա իմ սովորական կյանքին։

Հորս համար վոր հոգեհաց տվինք, վորոշ չափով պարտքի տակ ընկանք։ Յեզներից մեկը ծախեցի և պարտքերիս հաշիվը փակեցի հարևաններիս հետ։

* * *

Ժողովուրդի մեջ շատ էյին խոսում Քիրմանշահի նոր նահանգապետ Ռոկի-Էդ-Դովլեյի մասին, վոր իբր թե նա շատ արդարամիտ, արդարադատ և ժողովրդասեր մարդ է։ Նրա հայրը նույնպես այդպիսի հռչակ է ունեցել իր ժամանակին Խորասանում նահանգապետ յեղած ժամանակ։ Պատմում էյին, վոր թուրքմեն հանցագործներին կախաղան եր բարձրացնում, դատապարտված հանցագործներին դաղում եր շիկացած յերկաթով։ Բավական եր մի գանգատ, վոր նա անմիջապես հանցագործին տուգաներ և բանտարկեր։

Ասում էյին, վոր վորդին ավելի լավ մարդ է։ Սա, ասում էյին, այնպիսի կատաղին է, վոր այժմ ազատության ու սահմանադրության որերին ստիպված է որական յերկու սիր հաշիշ, հինգ մսխալ ոպիում ծխել, վոր հանգստանա, վախենում է, թե քիրմանշահցիք իր բարկությունը բորբոքեն։

Պատմում էյին նույնպես, վոր նոր նահանգապետը իր կողմն է գրավել Քիրմանշահի դատարանի նախագահին (Ռայիս—ադլիե), վորն ինչպես հայտնի յե, հենց ինքն արդարությունն է վոր կա։

Յես հուզվում, վոգևորվում էյի նման խոսակցություններով և ինքս ինձ ասում էյի.

—Եվ ինչու յեմ լռում, միթե յես այնքան համարձակություն չունեմ, վոր գնամ այդ մարդու մոտ և հորս արյան հատուցումը պահանջեմ։

Յեկա մորս մոտ ու ասացի.

— Գիտես մայր, վորդին, վոր հոր վրեժը չի լուծում, նա վորդի չի, նա իր հարազատ հոր սերունդը չի։

Մայրս համաձայնեց ինձ հետ։ Յես նրան ասացի.

— Յես կերթամ Քիրմանշահ, գանգատ կանեմ նորին բարձրության Ռոկե-Էդ-Դովլեյին և դատարանի նախագահին։ Թող փնտրեն ու գտնեն հորս սպանողին ու հրապարակով կախեն ժողովրդի առաջ։ Ո՜, այդ որը մեզ համար յերջանիկ որ կլինի։

Եվ գործը չհետաձգեցի։ Մոտս մնացած յերկու թումանը վերցրի և ուղևորվեցի Քիրմանշահ։ Հասա քաղաք, անցա հրապարակը և գնացի ուղիղ նախագահի պաշտոնատունը։

Պահակատան մոտ փառաշներն ինձ կանգնեցրին։

— Ե՛յ, քրդի մութթ, ու՞ր ես խցկվում, քարվանսարա՞ն յէ, ինչ է։

— Ձեր ինչ գործն է,— բարկացած ասացի յես։ Հիմա շահի ժամանակները չեն, վոր հասարակ այցելուներին չթողնեք մտնեն պաշտոնատուն։

Փառաշն ինձ հայհոյեց. անշուշտ հիշատակեց նաև հորս անունը։

— Տեսա՞ր դու սրան,— ասաց փառաշը,— եդ դնչով դա էլ է ուզում սահմանադրական դառնալ, ազատություն է ուզում...

— Ե՛, — մտածեցի յես,— այստեղ հոտն անգամ չկա այն բոլորի, ինչի մասին այնքան գրում են թերթերում։ Այժմվա նահանգապետությունը վոչնչով չի տարբերվում նախկինից։

Հենց այդ րոպեին, քաղաքի յերևելիներից մեկը մոտեցավ դռներին և ուզում էր թեքվել դեպի նահանգապետի ընդունարանը։

Յես լաց յեղա և պաշտպանություն խնդրեցի այդ մարդուց։ Այդ մարդը կարեկցեց ինձ և իր հետ ինձ էլ ներս տարավ։

Մտնելով նահանգապետի գրասենյակը, ընկա նրա վոտները, երեք անգամ համբուրեցի գետինը և նկարագրեցի հորս սպանության պարագաները Կոլյայի խանի ձեռքով։

Նահանգապետն իսկույն կանչեց իր ոգնական Էմիր-Էլ-Ոմարին[1]) և ինձ հանձնարարեց նրան։ Սա իսկույն ինձ տարավ իր սենյակը, հարցրեց գործիս մանրամասնությունները և շատ կարեկցեց ինձ։

Յես շատ ուրախացա, վոր ինձ լսեցին, հավատացին ու կարեկցեցին։ Հիմա յես հավատացած եյի, վոր մարդասպանն այլևս ազատվելու չի, նա իր արժանի պատիժը կրելու յէ։

Նահանգապետի ոգնականն ինձ հրամայեց հետևյալ որն անցնել իր գրասենյակը և ստանալ գործիս վճիռը։

Հետևյալ որը յես մոտեցա նահանգապետի դռներին, ինձ հայտնեցին, վոր այսոր ուրբաթ է, գրասենյակում պարապմունք չկա։ Յետ դառա, հետևյալ որը նորից գնացի։ Այդ որն էլ ասացին, թե սգի որ է, խանութներն ու շուկան փակ են։

1) Էմիր-Էլ-Ոմար—միջնադարյան տիտղոս է, «իշխանաց իշխան» իմաստով։

Յերրորդ որն ասացին, վոր Ճեև ազի որն անցել ե, բայց հիմա ազի հաջորդ որերն են, այսինքն աղոթք են կարդում սուրբ նահատակների հիշատակի համար։ Այդ որերին պաշտոնատներն ու խանութներն փակվում են, ժողովուրդն զբաղված ե աղոթքներով և իր կուրծքը ծեծելով։

Վերջապես, հինգերորդ որը, յերկար սպասելուց հետո, ահագին կռվով ու աղմուկով կարողացա գրասենյակ մտնել, բայց հենց դռների մոտ առաջս կտրեց դռնապանը։ Այդտեղ այնքան խիստ եյին պահպանում պաշտոնատան դռները, վոր քեթխուդան անգամ չեր կարող ներս մտնել, ուր մնաց ինձ պես մի հասարակ, խեղճ ու կրակ գյուղացի։

Գրպանիցս հինգ ղռանանոց մի դրամ հանեցի և տվի դռնապանին, վոր ինձ ներս թողնի գրասենյակ։ Ներս մտա։ Մինչև գոտիս կռացա, գլուխ տվի և հայտնեցի, վոր իր հրամանի համաձայն յեկել եմ գործիս վճիռն իմանալու։

Փոխնահանգապետը միայն բարեհաճեց հարցնել, թե յես վորտեղացի յեմ և ի՞նչ գործով եմ յեկել իր մոտ։

— Ի՞նչպես,—զարմացած հարցրի յես,—յես այն մարդու տղան եմ, վորին առանց առիթի սպանել են։

— Իսկ ո՞վ ե սպանողը,—հարցրեց փոխնահանգապետը,—կառավարության կողմնակից ե, թե՝ հակառակորդ։

Յես վստահ կերպով պատասխանեցի, վոր անշուշտ կառավարության հակառակորդ ե, քանի վոր նա մարդասպան ե, կառավարության կողմնակիցը միթե կարող ե մարդասպան լինել։

—Ուրեմն դու ճիշտ տեղեկություններ չունես,—ասաց նա՝— այն ժամանակ գնա դատարան և գանգատ տուր։ Սրանից հետո փոխ-նահանգապետի ծառաներն ինձ անմիջապես դուրս շպրտեցին գրասենյակից և թույլ չտվին այլևս խոսք փոխանակել նրա հետ։

Յես գնացի դատարան։ Ուզեցի մտնել դահլիճ, յերբ դատարանի դռնապանը ձայն տվեց ծանոթ բառերով։

— Ի՞նչ ե, քարվանսարա՞մ չե այստեղ, ինչ ե։

— Աղա,—ասացի յես,—գանգատ ունեմ, մի հորն սպանել են։

Նա ինձ առաջնորդեց մի սենյակ։

— Նստիր այստեղ,— ասաց նա,— խնդիր գրիր, տուր դատավորին, նա հետո գործդ կքննի։

Այդ սենյակում, գրասեղանի մոտ մի մարդ կար նստած։ Յերևի հենց խնդիր գրող էր։ Նրան էլ պատմեցի գործիս մասին, նա խնդիրը գրեց ու տվեց ինձ։

Ուզեցի գնալ դեպի դատավորի սենյակը, այդ մարդն ինձ կանգնեցրեց.

— Իսկ փողը...

— Վո՞րքան պիտի վճարեմ,— հարցրի յես։

— Հինգ ղռան,— պատասխանեց նա։

Վորքան էլ խնդրեցի, նա չհամաձայնվեց պակաս վերցնել։

— Յերկու ղռան գլոշմանիշի համար, մի ղռան թղթի համար, յերկու ղռան էլ խնդիրը գրելուն։ Ի՞նչ է, կարծում ես քեզանից ավելի՞ յեմ վերցնելու,— ասաց նա։

Յես վճարեցի հինգ ղռանը։

Նա հրամայեց ղուլմաններին վերևի հագուստս հանել, ապա թույլ տալ դատավորի մոտ անցնել։ Յեղանակը ցուրտ էր, առանց վերևի հագուստի կմրսեյի, կհիվանդանայի։ Ձեռքս տարա գրպանս, փող հանեցի, տվեցի ղուլամներին, «բանը յոլա տարան», իսկ յես խնդիրս ձեռիս մտա դատավորի մոտ։

Դատավորը հրավիրեց ինձ իր մոտ, աթոռ հրամցրեց և առաջարկեց նստել։ Խնդիրս առավ ձեռքիցս և սկսեց ուշադիր կարդալ։

Գրագիրը խնդիրս գրանցեց։ Այնուհետև դատավորն ինձ հարցրեց.

— Ի՞նչ փաստաթուղթ ունես, վոր քո հայրն սպանված է։

Յես չհասկացա, թե փաստաթուղթն ինչ բան է, ասացի.

— Փաստաթուղթ չունեմ։

Դատավորը հարց ու փորձը շարունակեց.

— Ի՞նչպիսի փաստացի ապացույցներ ունես, վոր իրոք քո հայրն սպանված է։

— Վոչ մի փաստաթուղթ չկա,— ասացի յես,— ահա նրա հագուստն ու գլխարկը, վորոնք թաթախված են արյունով։

Դատավորն աչքերը հառեց յերեսիս։

— Կարող է պատահել, վոր դու յես հորդ սպանել,— ասաց դատավորը։

Ինձ սարսափ պատեց։

— Ի՞նչ եք ասում,— սարսափած գոչեցի յես,— յերդվում եմ ձեր գլխով... Յեվ բացի դրանից, յես Բիսհիթունում եյի, իսկ հորս սպանել են Սեննհորից այն կողմը։

— Իսկ ով է վկան, վոր իրոք հորդ հաջի Կոլյայեն է սպանել։ Ո՞վ է տեսել սպանությունը։

Ի՞նչ կարող եյի պատասխանել յես։

— Ինչ վոր մի սեյիդ է յեղել հորս հետ, նրան են էլ սպանել։ Ուրիշ մարդ չի յեղել, վոր տեսած լինի։

— Սեյի՞դ... իսկ դու սեյիդի ժառանգների կողմից լիազորություն ունե՞ս, վոր խոսում ես նրա սպանության մասին,— հարցրեց դատավորը։

— Վո՛չ, վո՛չ, յես սեյիդի անունը տվեցի այն պատճառով, վոր նա հորս հետ միասին է յեղել։

— Է՛հ, յերբ դու վորեվե փաստաթուղթ և որինական հիմքեր չունես, յես քո գործը քննել չեմ կարող։

— Աղա,— ասացի յես,— ի սեր աստծու, ի սեր մարգարեյի, դուք մարդ ուղարկեք այդ գյուղը, թող այդ մարդը հարց ու փորձ անի, քննի, բոլորն էլ կհաստատեն այդ սպանությունը։

Դատավորը նորից իր ուշադիր հայացքը սևեռեց վրաս։

— Լավ,— ասաց նա,— յեթե դատարանն իսկապես մի լիազոր ուղարկի տեղում քննություն կատարելու՝ դուք այդ բոլոր խնդիրների հետ կապված հանգամանքների պատասխանատվությունը վերցնում եք ձեզ վրա։

Յես ամենայն պատրաստակամությամբ ասացի.

— Այո, վերցնում եմ։

Յես անշուշտ չեյի հասկանում, թե ինչ եյին նշանակում «խնդիրների հետ կապված հանգամանքներ» բառերը։ Յես մտածում եյի այսպես, վոր իբր թե յես պատասխանատու եմ իմ գանգատի ճշտության և արդարացիության համար։ Յես չեյի իմանում, թե հետո ինչ փորձանք պիտի բերի գլխիս «խնդիրների հետ կապված հանգամանքներ» արտահայտությունը։

Մեր ամբողջ խոսակցությունը գրագիրն արձանագրեց

մատյանում։ Հետո արձանագրությունը տվեց ինձ կարդալու, վորից հետո հրամայեցին ստորագրել։

Այնուհետև դատավորը հրամայեց.

— Վաղն արի, մենք վերոշում կկայացնենք և մարդ կուղարկենք այնտեղ։

Յես դուրս յեկա։ Ուրախությունից սիրտս տրոփում էր, մանավանդ յերբ մտաբերում էյի, թե ինչպես դատավորն ինձ նստեցրեց աթոռի վրա։

Մինչ այդ յես դեռ աթոռին նստած չկայի, աթոռի վրա... Դատարանի նախագահի ներկայությամբ... Դատավորն ինձ հետ զրույց էր անում... Ո՜, ինչ ժամանակներ են։ Թող սատված ամուր ու հաստատ պահի սահմանադրությունը... Թող կործանվի միապետությունը։

Ամբողջ գիշերը յես անցկացրի յերազանքների մեջ, թե ինչ փայլուն ապագա ունենք մեր առաջ և սրտանց ուրախանում էյի, վոր վերջապես խեղճ աշխատավոր ժողովուրդի ազատության ժամը հնչեց, այսուհետև պիտի վերջ լինի նրա տառապանքներին։

Առավոտյան, ինչպես հրամայված էր ինձ, յես նորից գնացի դատարան։ Սկզբից իհարկե, ինձ ներս չթողին։ Վորպեսզի ներս մտնեյի դատավորի մոտ, հարկավոր էր յերկու ղռան տալ դռնապաններին։ Այդպես էլ արի։ Ներս մտա։

Ներս մտա առանձին հպարտությամբ, պատշաճորեն ու վայելչաբար և գլուխս բարձր պահած և պահանջեցի տալ ինձ գործիս վորոշումը, և միաժամանակ հարցրի՝ մարդ ուղարկե՞լ են, թե՝ վոչ։

Ինձ պատասխանեցին, վոր վորոշումը պատրաստ է։ Քըննիչը նշանակված է և հենց հիմա գնալու յե քննություն կատարելու։

— Աշխատեցեք մուծել տասը թուման,—ասացին ինձ,— վորպես ճանապարհածախս գնալ-գալու համար, ինչպես վոր պարտավորվել եք։

— Ի՞նչպես թե պարտավորվել եմ, յե՞րբ,—բացականչեցի յես։

— Ի՞նչպես թե չեք պարտավորվել, ահա ձեր գործը, ահա և ձեր ստորագրությունը,—ասացին ինձ ու ցույց տվին այն

տեղը, վորտեղ գրված էր—«խնդիրների հետ կապված հանգամանքներ» և վորի տակ ես ստորագրել էյի։

Վորքան էլ ես յերդվեցի, թե ես պարզապես չեմ հասկացել ինչի մասին է յեղել խոսքը, դատավորը լսել անգամ չուզեց։ Նա բարկացավ և հրամայեց ֆառաշին.

—Կալանավորեք այդ մարդուն։ Պահեցեք կալանքի տակ, մինչև վոր կվճարի տասը թումանը։ Առ քեզ շանվորդու մեկը։ Ոյին է ուզում խաղալ մեզ հետ։

Ինձ տարան մի կիսամութ, խոնավ սենյակ և փակեցին այնտեղ։ Ձմռան ցրտից ես ուռի տերևի պես դողում էյի։ Վորքան ես ափսոսում էյի ինձ, նույնքան էլ անիծում էյի բախտըս և հայհոյում էյի ինձ։

— Ինչի՞ համար ես գանգատ սկսեցի.—մտածում էյի ես,—մարդասպանն այժմ հանգիստ նստած է իր տաք սենյակում, իսկ ես, սպանվածի վորդիս, մեռնում եմ բանտում ցրտից։

Ես նստեցի մինչև յերեկո առանց ուտելու և խմելու։ Յերեկոյան մի սեյիդ յեկավ մոտս և ասաց.

— Ա՛խ, խեղճ տղա, խեղճ տղա... Բանդ վատ է։ Վորքան կարող ես, այնքան տուր, ես քեզ ազատել կտամ։

— Յերդվում եմ պապիդ անունով, — ասացի ես, — ինձ մոտ միայն մի թուման փող կա, էլ ուրիշ վոչինչ չունեմ։

Նա գլուխը տարավ-բերեց։

— Չէ, դրանով բան չի դուրս գա,—ասաց նա ու հեռացավ Մի քիչ անց նորից յեկավ։ Այժմ արդեն սեյիդն սկսեց սպառնալ և պահանջում էր, վոր ես առանց թաքցնելու, ասեմ «վողջ ճշմարտությունը»։ Վորովհետև ինձ մոտ իսկապես մնացել էր մի թուման, հանեցի գրպանիցս և ասացի.

— Ահա վերցրու, էլ վոչ մի կոպեկ չկա մոտս։

Նա վերցրեց մի թումանը և գնաց։ Էլ չիմացա ինչու և ինչպես, ինձ կալանքից ազատեցին։

— Կորիր այստեղից,—ասացին ինձ,—այլևս չգաս այստեղ, թե չէ նորից կկալանավորենք։

Ինչպես ասացի, իսկապես ինձ մոտ էլ վոչ մի կոպեկ դըրամ չկար։ Ուտել էյի ուզում։ Ցուրտ էր։ Հանեցի գլխիս թաշկինակը, տարա շուկա, ծախեցի տասը շահու, նրանով կես բաթ-

ման հաց առա, նստեցի մի տեղ ու կերա, քաղցս մի քիչ հագեցրի։

Գիշերը գնացի բարձրացա բաղնիսներից մեկի կտուրը, կծկվեցի և քնեցի մինչև առավոտ։ Առավոտյան էլ դուրս պրծա քաղաքից և ուղևորվեցի տուն՝ անիծելով յերկրի սահմանադրությունն էլ, արդարությունն էլ։

Մենակ յես չեյի անիծում, մենակ յես չեյի վրդովվում նոր կարգերով, նրա դատարաններով, նրանց վարմունքով և վերաբերմունքով։ Այդ ամենից դժգոհ եյին բոլորն անխտիր և ամենից առաջ աշխատավորները։ Բոլորն էլ իրենց խաբված եյին զգում։ Յեվ այդ ընդհանուր հիասթափությունն էր, վոր վերջիվերջո Իրանի դռները բաց արեց վտարված շահի—Մամեդ-Ալիի և նրա յեղբայր Սալար-Եդ-Դովլեյի առաջ[1])։

Նույն թվականի գարնանը լուր ստացվեց, վոր Սալար-Եդ-Դովլեն իր մարդկանցով մտել է Քրդստան և գտնվում է շեյխ Ալա-Եդ-Դինի տանը։ Սալար-Եդ-Դովլեն ցանկանում է վոչնչացնելով սահմանադրությունը։

Բոլոր քուրդ ցեղապետները հավաքվել են նրա շուրջը։

Քիրմանշահի յերևելիներն էլ իրենց հերթին ուղարկել են իրենց ներկայացուցիչները և հայտնել են հնազանդության և հպատակության հավաստիացումներ։

Սալար-Եդ-Դովլեն գրավեց Քիրմանշահը։ Վռնդեց նահանգապետին, նրա փոխարեն նշանակեց Դավուդ-խան-Քյալխորին և այնուհետև սկսեց հաշիվ տեսնել այն արհեստավորների հետ, վորոնք կողմնակից եյին սահմանադրության։ Դավուդ խանի մարդիկ ուղղակի կողոպտեցին նրանց առանց պատասխանատվության։ Բացի դրանից, Սալարի զորքերն ու խանի թալանչիները պիտի կերակրվեյին նույն առևտրականների հաշվին։

Յես ուզում եյի գնալ Քիրմանշահ արդարադատություն փնտրելու հորս սպանողների դեմ, բայց փորձված ու խելքը գլխին մարդիկ փեշս քաշեցին։ — Իզուր ես գնում,—ասում եյին ինձ,—հիմա ժամանակը վատ է։ Սալար-Ուդ-Դովլեն ուզում

---

[1]) Խոսքը 1910-11 թվականների հակահեղափոխական այն յելույթի մասին է, յերբ գահընկեց շահը ցարական սպաների ողնությամբ ձգտում էր վերադարձնել իր իշխանությունը, և հենվելով քոչվոր ցեղերի վրա, արշավեց Թեհրան։

է, ինչ գնով էլ լինի, վերականգնել իր նախնիքների գահն ու իշխանությունը, ուստի նա չի ուզենա ցեղերի խաներին իր դեմ լարել։

Յես ակամայից համակերպվեցի, սպասելով ավելի հարմար ժամանակի։

Սալար-Ուդ-Դովլեյի արշավանքի առնչությամբ նույն գիշերը մեր գյուղում պիտի իջևաներ իր վեցհարյուր ձիավորներով Բաղի խանը, վորը հայտնի եր նաև Լորե-խան անունով։ Նա միանալու եր Սալարի զորամասերին։ Այդ գիշեր գյուղացիք ուզեյին չուզեյին պիտի բնակարաններ հատկացնեյին այդ վեցհարյուր ձիավորներին։ Գյուղացիք պիտի դուրս գային իրենց բնակարաններից ու տեղավորեյին ձիավորներին։ Բացի դրանից, նրանց ձիերի համար գարի պիտի ճարեյին, դարման, վառելափայտ և ինչ վոր անհրաժեշտ եր այդ «զորամասի» համար։

Շուտով զորքերն յեկան։ Գյուղերը լցվեցին ձիավորներով։ Գյուղացիները պարտավոր եյին «հյուրասիրել» նրանց։ Նրանցից մի քանիսն էլ մեր տանը իջևանեցին։ Ձիավորներից մեկը Լորե խանի մերձավոր բարեկամներից եր։ Յես նկատում եյի, վոր այդ մարդը միշտ աչքը գցում եր քրոջս վրա։ Քույրս այդ ժամանակ արդեն հասած աղջիկ եր։

Յերեկոյան, այդ մարդը հանկարծ դուրս պրծավ տանից, ձին նստեց և սրարշավ գնաց Լորե-խանի մոտ։ Մի ժամից հետո նա վերադարձավ յերկու ձիավորների հետ միասին։

— Ահա թե ինչ, Բախտիար աղա,—ասաց նա ինձ,—խանն ուղարկեց ձեզ իր բարևը և խնդրեց ձեր քրոջն ուղարկել իրեն կնության։ Նա ձեր քրոջը տեսել է և շատ է հավանել։ Մենք հիմա ձեր քրոջ հետ կերթանք Բիսհիթուն։

Կարծես գլխիս քարով խփեցին։ Յես չիմացա, թե ինչ անեմ, միայն այսքանը թոթովեցի։

— Ի՞նչ եք ասում աղա, իմ քույրն այդ պատվին արժանի չե... Յեվ ինչու հենց հիմա, յեթե այդպես անհրաժեշտ է, յես ինքս վաղը նրան կտանեմ և կներկայացնեմ խանին։

— Ասացինք հիմա, նշանակում է հիմա, այս րոպեյիս,—բարկացած բղավեց այդ մարդը,—խանը դիտմամբ ձիավորներ է ուղարկել նրան տանելու։ Տուր քրոջդ այս րոպեյիս, թե չե... Լավ իմացիր, քեզ կսպանենք։

Անպատվության միտքն այնպես պաշարեց ինձ, վոր յես այլևս չկարողացա համբերել ու բացականչեցի.

— Ի՞նչ է, ինչ եք չափից անցնում. Իրանը տեր չունի ինչ է, թե՞ կարծում եք ձեզ համար ամեն բան թույլատրելի յե. Շահը չկա, բայց կա նրա եղբայրը — Սալար-Եդ-Դովլեն. Յես կհայտնեմ նրան, նա ձեր խանին կպատժի, նույնիսկ կվոչնչացնի, նրա հորն էլ գերեզմանից կհանի.

Այս խոսքերից հետո յես բղավեցի, մարդիկ կանչեցի օգնության, քեթխուդին դիմեցի.

Այդ ժամանակ ձիավորները հարձակվեցին վրաս ու ինձ ծեծեցին փայտով, հրացանի կոթով. Յերևի ծեծելով կսպանեյին, յեթե մի քանի ծերունիներ և քեթխուդան չմիջամտեյին և ինձ մի կողմ չհրեյին՝ հեռացնելով կատաղած ձիավորների մոտից. Ծերունիներն ու քեթխուդան ականջիս փսփսում եյին.

— Տո խեղճ անբախտ, չես իմանում խանի դատաստանը. Միթե կարելի յե նրան հակառակել. Նա վոր ուզեց մեկն ու մեկի քրոջը կամ նույնիսկ կնոջը, պետք է անխոս տալ. Այդպիսի դեպքեր միթե քիչ են պատահել. Սալար-Եդ-Դովլեն նրան ինչ պիտի անի, վոր հույսդ նրա վրա յես դնում. Այստեղի շահըն էլ, ամեն ինչն էլ հիմա նա յե.

— Վո՛չ, — ասացի յես, — յես թույլ չեմ տա ինձ անպատվել. Առաջ թող ինձ սպանեն, հետո քրոջս տանեն, գոնե անպատվությունն իմ արյունով կլվացվի.

Մինչդեռ մենք այսպես վիճում եյինք, խանի ձիավորները Շիրին քրոջս տանից դուրս հանեցին. Շիրինը բղավում ու թպրտում եր նրանց ձեռքերին. Նրան ձեռքերի վրա տարան դեպի ձին. Յես ուզեցի հարձակվել նրանց վրա, քրոջս խլել նրանց ձեռքից, քեթխուդան ինձ բռնեց.

— Խելքիդ ինչ է փչել, խեղճ վողորմելի. — ասաց նա, — մահդ ես ուզում, ինչ ես. Խղճա գոնե պառավ մորդ, յեթե քեզ չես խղճում.

Այդտեղ պիտի խելքով շարժվել. Յեթե չես ուզում խայտառակվել ամբողջ նահանգում, հենց հիմա գնա Բիսհիթուն՝ ղազիի[1]) մոտ, ընկիր նրա վոտները և խնդրիր, վոր քրոջդ պատ-

---

1) Ղազի-մոլլա, դատավոր.

կի խանի հետ, պրծավ, գնաց։ Գոնե դրանով ազատված կլինես անպարտավորությունից։

Քեթխուդայի այս առաջարկը վատ չեր։ Իսկապես յես ինչ կարող եյի անել իմ ներկա դրությամբ

Յես համաձայնեցի, և քեթխուդան խնդրեց ձիավորներին, թույլ տալ ինձ իրենց հետ գնալ Բիսհեթուն,

Ձիավորները առաջ շարժվեցին, իսկ յես վոտքով սկսեցի քայլել նրանց հետ։

Քրոջս նստեցրել եյին ձիու վրա, գոտիով կապել եյին թամբին, վոր իբր թե չկարողանա ցած ցատկել։ Քույրս բղավում եր ուլալիս, և մինչև Բիսհիթուն յես լսում եյի նրա լացն ու աղաղակը։

Բիսհիթունի մոտերքին ձիավորներն իմ առաջը տվեցին և քրոջս հետ սլացան հեռու։ Ո՞ւր գնացին, չիմացա։

Յես ինձ շտապ գցեցի ղազու մոտ ու ընկա նրա վոտները։ Պատմեցի յեղելության մասին և հայտնեցի խնդիրքս։

Ղազին մի քիչ մտածեց, հետո թուղթ հանեց և գրեց «աղթնամեն» այսինքն՝ ամուսնական պայմանագիրը և հետո կանչեց խանի մերձավորներից մեկին։ Ղազին այդ մարդուն յերկար ժամանակ խնդրում ու աղաչում եր ամեն տեսակի քաղցրալեզու, կեղծավոր բառերով,

—Խնդրում եմ ձեզ, այս բանն արեք իմ խաթեր,—ասում եր ղազին այդ մարդուն,—ինձ համար անհարմար ե գնալ։ Այժմ գիշեր ե և բացի դրանից խանը հարբած ե։ Դուք գնացեք, այս թուղթը տվեք իրեն թող ստորագրի։ Այս տղայի վրայից հարկավոր ե վերջապես անպատվությունը վերացնել։ Ի՞նչ կլինի, վոր խանն ուղղակի ստորագրի այս թուղթը, մի բան, վոր իրենից փող չեն պահանջում։ Այս գրվածի տակ թող դնի իր դրոշմը, իսկ վաղը նույն կարգով կկատարենք ամուսնալուծությունը։ Դրա համար խանը վոչինչ վճարելու չե։

Ղազին նույնիսկ այդ մարդուն իր գրպանից մի թուման փող տվեց, վորից հետո նա համաձայնեց և թուղթն առավ, գնաց խանի մոտ։ Քիչ հետո մարդը վերադարձավ և խանի ստորագրությամբ վավերացրած քրոջս ամուսնական պայմանագիրը բերեց, հանձնեց ղազուն։

Դժվար ե նկարագրել, թե ինչպիսի գիշեր անցկացրի յես

այդ օրը՝ վորպիսի անհամբերությամբ սպասում էյի լուսաբացին։

Առավոտյան խանն իր ձիավորներով շարժվեց դեպի Քիրմանշահ, իսկ քրոջս բերին ղազու տունը և պահանջեցին ամուսնությունը լուծել։

Այդ օրը մայրս էլ յեկավ Բիսհիթուն։ Քրոջս վերցրինք և վերադարձանք տուն։

Ամեն տեղ խոսում էյին, վոր խանն ամուսնացել է քրոջս հետ։ Բայց այդ բանն կարող էր ինձ մխիթարել, հանգստացնել. կարող էր հանգցնել կրծքիս տակ վառվող կրակը։

*
* *

Ցանքս ծախեցի հարևաններից մեկին, վերցրի տանը մնացած մեկ յուղը, հավաքեցի տան իրեղենները և մորս ու քրոջս հետ փոխադրվեցի Բիսհիթուն։

Քաղաքում յուղը ծախեցի տասը թումանի։ Յերկու թումանը վճարեցի ղազու պարտքը, մի թումանը տվեցի ձիավորներից մեկին, վորից փոխարինաբար վերցրել էյի նախընթաց օրը։ Մնացած յոթ թումանով մենք քոչեցինք Քիրմանշահ։ Քաղաքի ծայրին, սպանդանոցի մոտ, մի բնակարան վարձեցինք և սկսեցինք այդտեղ ապրել։

Հետևյալ օրը, մենք չորսով, յես, մայրս ու Շիրին քույրս, գլուխներիս ցեխ քսեցինք, շալիկներիս օձիքը պատառոտեցինք ու միասին գնացինք նահանգապետի մոտ գանգատ։

Մենք մտանք գրասենյակի բակը, վորտեղ մեզ ասացին, թե Դավուդ խանը յուր ընդունարանումն է գտնվում։ Գնացինք այնտեղ, վոր մեր խնդիրն անձամբ հայտնենք իրեն։

Մի մարդ մեզ առաջնորդեց նահանգապետի առանձնասենյակը։ Մենք պատմեցինք նրան մեր գլխի յեկածը։ Բայց փոխանակ գործը քննելու, նահանգապետն ուղղակի իր մարդկանց հրամայեց, վոր մեզ դուրս անեն։

Մեզ անմիջապես դուրս արին գրասենյակից և այն էլ կոպիտ կերպով հրմշտելով ու բոթբոթելով։ Յերբ մեզ դուրս արին, Դավուդ խանի մոտից մի պառավ կին դուրս յեկավ և մոտեցավ մեզ։ Հավանորեն այդ կինը կարեկցել էր մեզ և էլի նա յեր,

վոր ազատեց մեզ խանի մարդկանց ձեռքից, վորոնք շատ կոպիտ կերպով եյին մեզ հետ վարվում։

Պառավը մեզ մի կողմ տարավ և հարց ու փորձ արեց մեզ՝ իմանալու, թե ինչումն եր կայանում մեր գանգատը։

Յես պատմեցի, թե Լորի խանը մեր նկատմամբ ինչ բռնություններ ե բանեցրել։

Պառավը գլուխը տարուբերեց և ասաց.

—Ե՛հ, վորդիս, իզուր ես դես ու դեն ընկնում։ Ավելորդ բան ե նման գործերով սրան-նրան դիմել։ Զարժե։ Յեթե յես առաջուց իմանայի, վոր դուք այդպիսի գործով եք յեկել, իսկի չեյի թողնի նահանգապետի մոտ գնայիք։

Այդպիսի բաներով ամենից շատ ինքը Սալար-Եդ-Դովլեն ե զբաղվում։ Այստեղ ամեն որ նրա մոտ աղջիկներ են բերում—վորին զոռով, վորին փողով, վորը կամովին ե գալիս, հիմա դու ինչ ես պահանջում մյուսներից։ Մեծը վոր անում ե, փոքրն ինչու չպիտի անի, ո՞ւմից պիտի վախենա։

Շուտով մեզ համար պարզվեց, վոր այդ պառավը պարզապես քաղաքի միջնորդ կանանցից մեկն ե, և հենց նման բաներով ե զբաղվում միշտ։ Հենց նա յե Սալար-Եդ-Դովլեյի հարեմի համար կանայք հայթայթում։

Մի քանի որից հետո այդ նույն պառավը մեզ մի նողկալի առաջարկ արեց։

Նա մի ակնարկով ուզեց մեզ հասկացնել, վոր Շիրին քույրս իր ներկա դրությամբ ընավ չի կարող իրեն ապահով զգալ նորանոր բռնությունների հանդեպ, ուստի ավելի լավ կլինի նրա «ամոթը ծածկելու» համար ամուսնացնել նրան Սալարի հետ, վորն անպայման կսիրի և կկապվի քրոջս հետ, քանի վոր, պառավի ասելով, Շիրինը Սալարի բոլոր կանանցից ել գեղեցիկ ե։ Միաժամանակ պառավը յերաշխավորում եր, վոր Շիրինի անցյալը, այսինքն նրա մի գիշերվա կենակցությունը Լորի խանի հետ, Սալար-Եդ-Դովլեյի բարկությունը չի գրգռի։

Պառավը մոտներիցս չեր հեռանում և շարունակ ակնարկներ եր անում, վոր այդ բանը գլուխ գա։

Մի կողմից չքավորությունը, մյուս կողմից մեզ պես մարդկանց կյանքի սարսացուցիչ տիրապետող պայմանները

հարկադրում եյին մեզ համաձայնել պառավի առաջարկին։ Մենք ակամա տվինք մեր համաձայնությունը։

Շիրինի համար շուտով գեղեցիկ հագուստներ ու զարդեր գնեցին։ Ամուսնական պայմանագիրը կամ «աղդնամահ» գըր-վեց։ Յեկավ «մոթալեն», այն կինը վոր հագցնում ու զար-դարում է հարսին։

Քրոջս հագցրին, զարդարեցին, դարձրին հարս, տարան Սալար-Եդ-Դովլեյի տունը։ Քույրս դարձավ Սալարի կանան-ցից մեկը։

Շիրինի բախտից, Սալար-Եդ-Դովլեն նրա հետ կապվեց։ Շիրինը նրա դուրն եկավ։

Վորպեսզի համ վորոշ աշխատանք անեյի և մյուս կողմից էլ քրոջս մոտիկ լինեյի, յես մտա նույն Սալար-Եդ-Դովլեյի պալատը ծառայության։

Յես ընդունվեցի խոհանոց։ Վորովհետև, ինչպես ընթեր-ցողը հիշում է, յես այդ բանում մի քիչ փորձառություն ունե-յի։ Մի վորոշ ժամանակ ծառայել եյի մեր կալվածատեր Շոհ-վեթ Միրզայի խոհանոցում, այնպես վոր լավ գիտեյի, թե աղաների և ընդհանրապես յերևելի մարդկանց համար ինչպիսի կերակուրներ են հարկավոր, մի խոսքով ծանոթ եյի նրանց ճաշակին։

Այդպես, աշխատում եյի խոհանոցում,—ամաններ եյի լվա-նում, սրբում, ղալիան եյի պատրաստում և սրանց նման աշ-խատանքներ եյի կատարում։

Այդ ճանապարհով յես ընկա այն թալանչու «շքախմբի» մեջ, վորն ուզում եր շահերի գահը գրավել։ Յես այնպես լավ եյի աշխատում, վոր մի քանի որից հետո խոհարարապետը հիա-ցած եր իմ «ընդունակություններով» ու շնորհքով։

Ինձ հանձնեցին ամբողջ բուֆետի բաժինը ղեկավարել։

Սակայն յես մի անհարմարություն եյի զգում այդ ամբողջ սարք ու կարգի մեջ՝ դա այն եր, վոր շորերս հին եյին և կեղ-տոտ, ու շատ անպատշաճ բան եր այդպիսի շորերով յերևելի մարդկանց դահլիճը կամ սեղանատունը մտնել և նրանց վորևե բան մատուցել։

Խոհարարապետը փող տվեց ինձ, վոր ինձ համար հարմար

ու պատշաճ հագուստ առնեմ։ Մնացած փողով համ հագուստ առա ինձ համար, համ էլ մորս օգնեցի։

Խոհարարապետն անգրագետ մարդ էր, վոչ գրել գիտեր և վոչ էլ հաշիվ պահել, դրա համար էլ յերեկոյան պահերին «մունշին» էր (գործավար-գրագիր) գալիս նրա մոտ կերակուրների ցուցակ կազմում կամ հետևյալ օրվա համար նոր պահանջագիր գրում։

Լավ առիթ էր գիտություն ցույց տալու համար, ուստի առանձին ինքնաբավականությամբ ասացի.

— Ես գրագետ եմ, իզուր տեղն ինչո՞ւ եք հաշվետարին փող տալիս, քանի վոր ինքս կարող եմ հաշիվները վարել։

Խոհարարապետը շատ ուրախացավ։ Պաշտոնս փոխեց։ Ես դարձա հաշվետար, վորի համար էլ ռոճիկս ավելացրին։

Հանաք բան չի հաշվետար լինել։

Պալատական ծառայողների շրջանում արդեն ահագին հարգանք էյի վայելում։

Այսպիսով սննունդս ապահովվեց։ Հագուստի համար փող չէյի ծախսում, այնպես վոր իմ ռոճիկով վոչ միայն մորս էյի պահում, այլ և մի բան յետ էյի գցում «սև օրվա համար»։

Կարճ ժամանակից հետո պաշտոնս էլի բարձրացրին։ Ես դարձա տնտեսական մասի գործավար, վորի համար պիտի վորոշ համազգեստ հագնեյի, այսպես ասած «պատվավոր խալաթ»։

Այսպիսով կյանքը մեզ բերեց, հասցրեց այնտեղ, վոր գյուղացու մի հասարակ տղա դարձավ պալատական, ուրիշ խոսքով մի պնակալեզ, իսկ գյուղացի աղջիկը՝ պալատական հարճ կամ պալատականի կին։

Այս բոլորը տեսնելով՝ ինչ կասեր հայրս, վոր վոչ մի բան չէր սիրում այնպես, ինչպես իր յեզները, հողը և գյուղացու հալալ աշխատանքը։

Մխիթարականն այն էր, վոր այս բոլորը յերկար չտևեց։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍԱԼԱՐ-ՈՒԴ-ԴՈՎԼԵՅԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԹԵՀՐԱՆԻ ՎՐԱ

Շուտով պարզվեց, վոր Սալար-Ուդ-Դովլեյի «փառապանծ զորքերը» արշավում են Թեհրանի վրա։ Հարկավոր էր շտապել։

Արդեն լուրեր եյին պտտում, վոր Իրանի մյուս ծայրից եկ դահընկեց Մամեդ Ալի շահը դուրս է յեկել Բենդերգյազ և հավաքելով իր շուրջը Թուրքմեն ցեղերին, նույնպես արշավում է Թեհրանի վրա։

Մի անգամ յերեկոյան իշխանության ներկայացուցիչները Սալար-Ուդ-Դովլեյի նախագահությամբ դիվանխանեյում զինվորական խորհրդի հավաքվեցին։ Զինվորական խորհուրդը վորոշեց, վոր Սալարի զորքերը պիտի դուրս գան արշավանքի։ Մյուս զորամասերի հրամանատար Ալի-Ռիզա խան բիջարուն հեռագրով կարգադրություն արվեց, վոր նա մնա իր տեղում, մինչև Սալար-Ուդ-Դովլեյի առաջխաղացումը։

Վորքան ել շտապում եյին, այնուամենայնիվ պատրաստությունները մի ամիս տևեցին։

Վերջապես «զորքերն» առաջ շարժվեցին։

Դա ինչ տեսարան եր։

Անվերջ շարքերով, աղմուկով ու դղրդոցով գնում եյին բազմապիսի ու բազմազան ձիավոր խմբերը, վորոնք խիտ փոշու ամպեր բարձրացնելով, ծածկում եյին փոշու տակ մարդկանց ու ձիերին։ Վոչինչ ջոկել չեր լինում։

Տարբեր հագուստներով ու տարբեր գույնի ձիեր հեծած այդ «զորականները»—կեղտոտ ու գզգզված—բնավ զորքի նմանություն չունեյին։ Ավելի շատ նրանք նման եյին վայրենի հորդաների կամ ավազակախումբերի։ Մի խոսքով, դրանք ամեն բանի նման եյին, բայց վոչ կանոնավոր զորամասերի, վորոնք ունենում են իրենց զորային կարգ ու կանոնը։

Այդ բազմաթիվ ձիավոր խմբերը «կազմակերպված եյին» ցեղական սկզբունքով։ Ամբողջ «զորքը» բաժանված եր զորամասերի՝ համաձայն զորականների ցեղային պատկանելության։ Այդ զորամասերն ել իրենց հերթին բաժանվում եյին ավելի փոքր միավորների՝ համաձայն տոհմային պատկանելության։

Այդ ամբողջ հորդայանման զանգվածը լցված եր ճանապարհները, առաջ եր շարժվում գյուղերով, անդաստաններով։

Այդ խառնիճաղանջ ամբոխը հազար ու մի կարգադրող ու հրամանատար ուներ, վորովհետև ամեն մի տոհմի մարդիկ միայն իրենց տոհմի մեծերին եյին ճանաչում վորպես հրամանա-

տար և չեյին ուզում ճանաչել մի ուրիշ տեր կամ հրամայող՝ քան իրենց տոհմապետն էր կամ ասենք, ցեղապետը։

Այդ բաժան-բաժան հրամանատարական խառնիխուռն ամբոխն էլ իր հերթին միայն մի ղեկավար էր ճանաչում և ենթարկվում էր նրան — դա Սալար-Ուդ-Դովլեն էր կամ նրա մերձավորը։ Դա մի հինավուրց ցեղական կարգ էր, որով հավանորեն առաջնորդվում էին նաև Կյուրոս Մեծի զորքերը։

«Զորքերի» մատակարարումը հասարակ ձև ուներ. հագուստը, ձին ու զենքը ձիավորն ինքը պիտի հայթայթեր։ Ուտելիքն ու սնունդը հայթայթվում էր թալաններով, իսկ հացն ու անասունների կերը պարտավոր էին հոգալ գյուղացիները՝ գլխավորապես ճանապարհի վրա ընկած գյուղերի բնակիչները։

Այս ամբողջ «զորքի» ու արշավանքի ղեկավարն ու առաջնորդը — Սալար-Ուդ-Դովլեն — փաստորեն ոչ մի հրամանատարություն չէր անում, ոչ մի հարցում նա իսկի իր կարծիքն ու տեսակետը չէր արտահայտում։ Ամբողջ գործը նա հանձնել էր Դավուդ խան Քյալհուրին, Լորե խանին, Շեյխ Ալա-Եդդինին և սրանց մերձավորներին ու պալատական զանազան շառլատաններին, իսկ ինքն զբաղվում էր միայն նրանով, որ այդ մարդկանց պահանջով տեղական հարուստներից հսկայական գումարներ էր քամում ու բաժանում էր այդ օգնականներին առանց կարգի ու կանոնի և առանց հաշվի ու հաշվառման։ Սարսափահար գյուղացիներն էլ ձրիապես հայթայթում ու մատակարարում էին պահանջված պարենը։

Դա զորք չէր, այլ մի թալանչի հրոսակախումբ, մի քաղցած գայլերի վոհմակ, որ մորեխի պես վրա էր տալիս գյուղերին, և որտեղ նա կանգ էր առնում, իրենից հետո բան չէր մնում։

Չկար մի «զինվոր», որ Քիրմանշահից Համադան հասնելով իր տունը մի իշաբեռ կամ ձիաբեռ իրեղեն ուղարկած չլիներ և այդ բոլորը ո՞րտեղից և ո՞ւմից — անշուշտ խեղճ գյուղացիներից։ «Զորքն» առաջ էր շարժվում, իսկ հակառակ ուղղությամբ շարժվում էր նրանց թալանչիների քարավանը, որը տանում էր գյուղացիներից կողոպտված բարիքները։

Սալար-Ուդ-Դովլեն կարծես իրեն նպատակ էր դրել կենսագործել կյանքում «Իսկյանդար Զուլ, քարնեյնի» գրքի ամ-

բողջ յոթն մասերի պատմությունը կամ այն ավանդությունը վոր վերաբերվում է Ալեքսանդր Մակեդոնացուն և իրանական ամազոնուհիներին։

Յուրաքանչյուր հանգստավայրում Սալարն իր համար նոր կին էր առնում և այդ առթիվ քեֆեր էր սարքում ու ամեն տեղ էլ յերկու-յերեք օր յետ էր ընկնում։ Գյուղացիներն էլ ուրախությամբ ու առանց դժգոհության տրամադրում եյին իրենց կանանց և աղջիկներին ու շատ էլ գոհ եյին մնում, վոր գոնե իրենք վողջ ու առողջ մնացին, իսկ Սալար-Ուդ-Դովլեն յերազում էր, վոր իր «համաշխարհային» տիրապետության դժվար րոպեներին հալբած իր զորքերին օգնության կհասնեն անսանձ ու անընտել ամազոնուհիներին իրենց հովազի մորթիներով խողակոլջու զրահով և... չադրաներով[1]։

Սարսափելի յէ նույնիսկ պատմել, թե ինչպիսի բռնություններ ու ճնշումներ եյին գործադրվում գյուղացիների նկատմամբ այդ օրերին։ Մարդկանց ընտանեկան պատիվը վոչինչ էր համարվում։ Սպանություններն ու կողոպուտները որենքի ուժ եյին ստացել յերկրում։ Մարդկային կյանքը վոչ մի արժեք չուներ։ Պատահում էր, վոր վորևէ ընտանիքից կողոպտված տեղաշորի միջից խեղդված յերեխա յեր վայր ընկնում։

Վորքան վոր Թալանչիների հորդան Քիրմանշահից առաջ էր շարժվում դեպի Սավա, այնքան էլ ձիավորների թիվը բազմանում էր, և յերբ այդ հորդան կանգ էր առել արդեն Սավայի շրջակայքում, նրանց թիվը հասնում էր քառասուն հազարի։ Սավայի շրջանում «զորքերը» վրաններ խփեցին և մոտ չորս ամիս մնացին այդտեղ։

Միաժամանակ մենք իմացանք, վոր հեղափոխական մուջահիդների[2]) և բախտիարների[3]) ձիավորները, վորոնք գնացել

1) Հեղինակն ըստ յերևույթին ի նկատի ունի Իրանում տարածված «Իսկյանդար» վեպը, վորն արտացոլում է Ալեքսանդր Մակեդոնցու մասին պատմվող ավանդությունները՝ Ասիայում պատահած նրա արկածների մասին և նրա հանդիպումները Իրանական ամազոնուհիների հետ։

2) «Մուջահեդներ» նրանք եյին կոչվում, վորոնք պարտավորություն եյին հանձն առնում սրբազան պատերազմ վարել—«ջհադ»։ Այսպես եյին անվանում իրենց «արդարադատության» համար մղվող պատերազմին մասնակցողները։ Հոգևորականության ազդեցության տակ՝ այդպես եյին անվանում իրենց

էյին Աստրաբադ Մամեդ Ալի շահի դեմ, գլխովին ջարդել են նրա զորամասերը և այժմ արշավում են Սալար-Ուդ-Դովլեյի ուժերի վրա։

Սալարի «զորքերը» պատրաստվեցին և սպասեցին հակառակորդի հարձակմանը։

Հենց այդ օրերին էր, որ Քյալխորի և Կոլյայի ջոկատները, որոնք ցրվել էին շրջակա գյուղերը թալան անելու, վերադարձին, իրար թշնամու տեղ դնելով, հարձակվեցին իրար վրա և սկսեցին միմյանց կոտորել ու ջարդել։ Երկու կողմերն էլ անհագին թվով սպանված ու վիրավոր տվեցին այդ անմիտ ընդհարումների ընթացքում։ Քյալխորականներն էլ առիթը բաց չթողին. նրանք էլ Կոլյայականներին մի լավ թալանեցին։

Սալարի բազմահազար զորքի ճանբարն իր վրաններով, ձիերով, ջորիներով, էշերով, բարձած սայլերով, գողացված գույքերով—փռված էր մի քանի փարսախ ձգվող տարածության վրա՝ անկարգ, ցաք ու ցրիվ, առանց տեր-տիրականի, առանց պահպանության։

Այդ ճամբարի կենտրոնում էր գտնվում մի քանի հազար ձիավորներից բաղկացած Դավուդ խանի զորամասը։

Մի օր, առավոտյան, դիմացի բլուրի լանջին ինչ որ զորքեր յերևացին։ Դավուդ խանը հրամայեց ձիավորներին հետախուզություն կատարել և պարզել, թե ինչ մարդիկ են յերևացողները։ Ձիավորները բլուրից ցած իջան և փռվեցին դաշտի վրա ու սկսեցին դանդաղորեն առաջանալ յերևացող մարդկանց ուղղությամբ։ Հենց այդ ժամանակ դիմացի բլուրի վրայից գնդացիրներ ճռճռացին։

Դա թշնամին էր—այսինքն հեղափոխական զորքերն էյին։

նույնպես հեղափոխական զորքերի կամավորները։ Այդ կամավորները կոչվում էյին նմանապես «ֆիդայիներ»—այսինքն՝ «զոհեր»։

1) «Բախտիարները» ինչպես և քրդերը, Իրանական հին ցեղերից են, որոնք բնակվում են կենտրոնական Իրանի և հարավ-արևմտյան Իրանի մեջ—Իսպահանի և Քարուն գետի միջև ընկած յերկրամասում։ Թե բախտիարները և թե քրդերը մինչև հիմա էլ ապրում են տոհմատիրական-ցեղային կենցաղով 1909 թվին բախտիարները իրենց ցեղապետ Սարդար Ասադի գլխավորությամբ մասնակցեցին Թեհրանի գրավմանը և Մահմեդ Ալի շահի գահընկեցությունը, իսկ 1910—11 թվերին խոշոր մասնակցություն ունեցան հակահեղափոխության դեմ մղվող պայքարում։

Դավուդ խանի հեծյալ գունդը հարձակման դիմեց անմիջապես։ Այդ հարձակման իսկ րոպեյին, հակառակ կողմից թնդանոթը վորոտաց, հետո յերկրորդը, յերրորդը և այնուհետև առաջ շարժվող ձիավորների վրա շրապնելներ թափվեցին։ Ձիավորների առաջին շարքերը քայքայվեցին, բայցյեվայնպես նրանք շարունակում եյին կրկին առաջ գնալ։ Հակառակորդի գնդացիրներն ու ռումբներն այնպես եյին հնձում Դավուդ-խանի ձիավորներին, վոր առաջավոր շարքերն այլևս չդիմացան կրակին, և հապճեպ կերպով ձիերի սանձը շուռ տվեցին դեպի յետ ու նահանջեցին։ Հետևից յեկող ջոկատներն այս վոր տեսան, կայծակի արագությամբ յետ փախան։ Ամեն մեկն աշխատում եր ճամբարում թողած իր թալանը փրկել։

Ահա ինչպիսի հարձակում եր «ղոչաղ հերոսների» հարձակումը։

Թնդանոթների գնդակներն ընկնում եյին ուղիղ ճամբարի վրա և թույլ չեյին տալիս ձիավորներին բարձել ու փախցնել իրենց թալանը։ Ճամբարում մի քանի րոպե նկատվեց շփոթ ու իրարանցում, վորից հետո տիրեց սարսափ և ահաբեկում։

Շուտով Սալար-Ուդ-Դովլեյի «բանակը» առանց գնդակ արձակելու և առանց թշնամու յերեսը տեսնելու, դիմեց անկարգ, արագ և անարգ փախուստի։ Ամբողջ ռազմական գույքն ու թալանը մնացին մուջահիդներին ու բախտիարներին։

Հռոմի ռազմական հրամանատար Կեսարն ասում եր.— «Յեթե թշնամու բոլոր բանակներն Անտիոքոսի բարակների պես լինեյին, պատերազմի ավարն ու ռազմի փառքը մարդկանց ձրի կտրվեր»։

Բայց Կեսարին համենայն դեպս հարկավոր եր յեռեսուն հազարանոց զորք, վորպեսզի Անտիոքոսի հարյուր հազարանոց բանակը ջարդեր, իսկ այստեղ, ընդամենը հազար հինգհարյուր մուջահիդներ մի ժամվա ընթացքում ջարդեցին ու փախուստի մատնեցին քառասուն հազար հոգի։

Այն ճանապարհը, վորը մեր «հերոսները» արշավանքի ընթացքում անցան չորս ամսում, նահանջեցին «ճղեցին» յերեք որում։ Չորրորդ որն արդեն նրանք իրենց տեղերումն եյին, միայն Սալար-Ուդ-Դովլեն մի քանի որ բանդ յեղավ Լուրիստանում, բայց հետո նա էլ յեկավ Քիրմանշահ։

Սալարն այստեղ նորից զորք հավաքեց, նորից նրա շուրջն սկսեցին հավաքվել «հերոս առյուծները»։ Այս անգամ սկայն Սալարը միտք չուներ հարձակվելու, այլ հարկավոր էր միայն պաշտպանվել։

Այդ ժամանակ լուրեր էյին շրջում, թե քրդական խան Ցար Մոհամմեդը Թեհրանից ուղարկված է Քիրմանշահը գրավելու, և արդեն նա Համադանումն է, զորքեր է հավաքում, վոր առաջ շարժվի։

Այս լուրը Սալար-Ուդ-Դովլեյի զինվորներին չէր անհանգստացնում. նրանք միայն թունոտ կերպով ծիծաղում էյին, հեգնում էյին Ցար Մոհուամմեդին։

— Հը՞, Ցար Մոհուամմեդ,—ասում էյին նրանք.—նա ինչ կարող է անել մեր դեմ... Զորքե՞ր է հավաքում... Դրանք զորք չեն, այլ ջորի հավաքող, նրանք միայն յերազում կարող են տեսնել Քիրմանշահը, իսկ գրավել՝ չեն կարող։

Հենց այդ ժամանակ լուր յեկավ, թե Ցար-Մոհամմեդը մտել է Սեննե։

Տեսնեյիք թե ինչ յեղան Սալար-Ուդ-Դովլեյի սարդարները[1], ինչպես նրանք վախեցան և գլուխները կորցրին։

***

Այդ շփոթ դրությունից օգտվելով, յես սկսեցի հետևել Լորե խանի բարեկամին, վորը հանցավոր էր քրոջս անպատվության գործում։ Իմացա, վոր նա գիշերում է Ջալ Հասան խանի իջևանում։ Հետո յերկու քուրդ ծանոթ տղերք վերցրի, գիշերն զգուշությամբ նրա սենյակը մտա և քնած տեղն սպանեցի։ Ընկերներիս օգնության կարիքը չզգացի, վորովհետև յես մենակ կարողացա մտադրությունս իրականացնել, և յերկրորդ՝ գնալիս և վերադառնալիս ինձ հետևող չեղավ և վոչ վոք չտեսավ։

***

Ցար Մոհամմեդ խանի ճանապարհը կտրելու համար Քիրմանշահից Սեննե ձիավորների մի ջոկատ գնաց։ Մի քանի որից

---

1) Սարդար—պետ, հրամանատար, զորավար։

հետո ջոկատը վերադարձավ անկարգ ու քայքայված վիճակի մեջ, մի տեսակ խուճապի մատնված։

Նրանք պատմում էին, վոր Ցար Մոհամմեդ խանը մի քանի հազար մուջահիդներ ունի և այնպես է զինված, վոր վոչ մի բանակ նրան չի կարող դիմանալ։

Նորից սկսվեց փախուստը։ Ինչ վոր հնարավոր էր վերցնել, վերցրին և Սալարի զորքերը նահանջեցին դեպի Քյալխոր, իսկ Ցար Մոհամմեդն առանց վորևե դժվարության և նույնիսկ դիմադրության, Քիրմանշահը գրավեց։

Բանից դուրս յեկավ, վոր Ցար Մոհամմեդն ընդամենը յերկուհարյուր զինվոր է ունեցել իր տրամադրության տակ։

Կենտրոնական կառավարությունը նրան թողեց Քիրմանշահում բոլորովին մենակ, և չնայած նրա մի շարք դիմումներին, վոչ մի ոգնական ուժ չուղարկեցին նրան։ Ցար Մոհամմեդը մի քանի մարդկանց պատժի յենթարկեց և այնուհետև սկսեց տեղական գործերով զբաղվել և զորք հավաքել։

Սալար-Ուդ-Դովլեն լրտեսների միջոցով տեղեկություններ հավաքեց և տեսավ, վոր Ցար Մոհամմեդը զորքով թույլ է և բացի դրանից էլ, քաղաքի բնակիչները չեն ուզում ոգնել նրան, վորոշեց այս անգամ ինքը նախահարձակ լինել։ Բոլոր հրամանատարները հավաքվեցին Մահիդեշտում և յերդվեցին այսուհետև գործել միաբանաբար ու համերաշխ։

Սալարի զորքերը չորս կողմից պաշարեցին Քիրմանշահը։ Մի քանի ընդհարումներից հետո Ցար Մոհամմեդը տեսավ, վոր ռազմի դրությունն իր համար աննպաստ է, մուջահիդների մի ջոկատով, գիշերը, հակառակորդի շղթան պատռեց և դուրս յեկավ քաղաքից։ Մուջահիդների մեծ մասը մնաց Քիրմանշահում։ Յերբ Սալար-Ուդ-Դովլեյի զորքերը նորից գրավեցին քաղաքը, սկսվեց մուջահիդների գլխովին կոտորածն ու վոչնչացումը։

Քիրմանշահի գրավման հետևյալ որը Սալարի «պալատը» ներկայացավ Սարդար Մոջիլլալը, վորը գահընկեց շահի գլխավոր խորհրդականներից մեկն էր անցյալում և հայտնի էր իր բռնություններով ու ճնշումներով այն աստիճան, վոր ամբողջ ժողովուրդն իր դեմ էր գրգռել։ Նա Սալարից ստացավ «Մոթեմեթ-Եդ-Դովլե» տիտղոսը, վոր նշանակում է «պետության հույս»։ Այդպիսի տիտղոսներ հնում տալիս էին յերկրի կա-

ռավարիչներին արտակարգ ժամանակ։ Մոթեմեթ-Եդ-Դովլեն սկսեց կառավարել գործերը։ Այդ փորձված դահիճն անմիջապես քաղաքի հրապարակում յերկու կախաղան կանգնեցրեց և ուրական մի քանի մուջահիդներ եր կախել տալիս։

Սակայն ի՛նչ եյին յերկու կախաղանները վո՛ր... Մինչև իսկ քաղաքի հրապարակի ծառերն ել պարապ չմնացին։ Մուջահիդներին կապել եր տալիս ծառերին և գնդակահարում։

Ջմռան ձյունն յերկա՛ր ժամանակ ներկված մնաց ազատության զոհերի արյունով։

Սանձարձակությամբ ու անտարբեր կերպով գնդակահարում ու կախում եյին Սալարի դահիճները տասնյակ ու հարյուրավոր մարդկանց, և դա բավական չեր, այդ գազանները ծաղր ու ծանակի եյին յենթարկում սպանվածների դիակները և այնպիսի նողկալի արարքներ եյին թույլ տալիս իրենց, վոր հիշելիս մարդ սարսափում ե։

Ազատության զոհ դարձավ Աղիմ-Եդ-Դովլեն և նրա յերիտասարդ վորդին Ֆահիմ-Ես-Սալթանեն — Զինգյանա ցեղից — և նրանց հետ շատ-շատերը։

Այս բոլոր գազանությունները շատ եյին ազդել քրոջս վրա և նա մի որ պարզապես Սալար-Ուդ-Դովլեյին ասել եր.

— Ինչու յեք այդ խեղճերին սպանում։ Այստեղ ձեզ ատում են հենց նման բռնությունների պատճառով։

Դա բավական եր, վոր Շիրին քույրս վերջիվերջո դուր չգար Սալարին։

Հետևյալ որը Սալար-Ուդ-Դովլեն կանչում ե մոլլային և հրամայում ե իրենց ամուսնությունը լուծել։ Հետո կանչում ե ինձ ու ասում ե.

— Դուրս կորեք յերկուսդ ել այստեղից։

Քրոջս ու մորս վերցրի ու միասին գնացինք մեր հին բնակարանը։

*
* *

Շուտով լուր տարածվեց, վոր Թեհրանից վերստին ձիավոր բախտիարներ ու մուջահիդներ են ուղարկված վերջնական հաշիվ տեսնելու «նորին բարձրության» Սալար-Ուդ-Դովլեյի հետ։

Ժողովրդի մեջ նույնիսկ խոսում եյին, վոր շատ կարճա-

տել է լինելու Սալարի տիրապետությունը Քիրմանշահում։

Այդ խառնակ օրերին էր, որ համադանցի մի սեյիդ, լսելով քրոջս ամուսնաթողությունը, ցանկություն հայտնեց ամուսնանալ նրա հետ, հավանորեն ուզենալով օգտվել ղաջարների տան սեղանի փշրանքներից և բարեկամական կապ հաստատել շահերի հետ։

Այդ համադանցին լավ մարդ էր, դրա համար էլ ես չհակառակեցի։ Բայց դրանից, յես վաղուց էի ուզում ազատվել Սալար-Ուդ-Դովլեյի հետ ունեցած կապերից։ Ես ուզում էի հեռանալ, գնալ մի խաղաղ անկյուն, որտեղ մեզ ոչ ոք չէր ճանաչի և կարող էինք ապրել մեզ համար խաղաղ ու ականջներս դինջ։

Շիրինին նշանեցինք Սեյիդի հետ։ Այնուհետև Քիրմանշահը թողինք ու քոչեցինք Համադան։ Մտադիր էինք Համադանում էլ կայացնել հարսանիքը։

Ես միքիչ տնտեսած փող ունեի, որը պահ էի տվել սառաֆներին։ Այդ փողով զանազան ներկեր ու դեղաբույսեր առա, շուկայի մի լուռ ընկած անկյունում մի փոքր խանութ վարձեցի և սկսեցի աթթարություն անել։

Մորս ու ինձ համար յերկու սենյակ վարձեցի, առևտուր անելով մի քիչ կանոնավորեցի մեր ընտանեկան դրությունը, որից հետո տեղի ունեցավ Շիրինի հարսանիքը։

***

Թեհրանից ուղարկված մուջահիդների և բախտիարների ջոկատը Համադանից անցնելիս հանդիպում է Սալար-Ուդ-Դովլեյի զորքերին։ Հակառակորդ ուժերն ընդհարվում են։ Դավուդ-խան-Քյալխորին իր որդու հետ կռվում սպանվում են, իսկ Սալարը փախչում է։ Սալարն այժմ զբաղված էր նրանով, որ շարունակ նահանջում էր ու փախչում, որի համար նրան անվանեցին ոչ թե Սալար-Ուդ-Դովլե, այլ Ֆերար-Ուլ-Մուլք» որ նշանակում է «յերկրից փախչող»։

Սակայն Սալարը մի կարճ ժամանակ մի փոքր հաջողություն ունեցավ։ Մուջահիդների հրամանատար Յար Մոհամմեդը դժգոհելով կենտրոնական կառավարության վերաբերմունքից, անցավ Սալարի կողմը և կամավորական մի ջոկատ

կազմակերպելով՝ պաշարեց Քիրմանշահը, բայց Սալար-Ուդ-Դովլեյի «անորինակ» բախտից՝ սա էլ սպանվեց կռվի մեջ, որից հետո Սալարի ռազմական կայանը, կամ ավելի ճիշտ է ասել, ավազակաբույնը, ընդմիշտ. պոկվեց իր տեղից, Նահանջից ավելի հեռու, դեպի արևմուտք և ընդմիշտ անհայտացավ ու չքացավ ասպարեզից։

Այժմ ամեն տեղ, անբաժան ու լիակատար իշխանությամբ, տիրում էր սահմանադրական կարգը։ Ամբողջ Իրանում հնչում էին ազատության յերգերը։ Քաղաքում հայտարարություններ փակցրեցին մեջլիսի ընտրությունների մասին։

Սակայն, մեր մեջ ասած այդ բոլորը խոսքեր էյին միայն, իսկ իրականության մեջ վոչ մի բան նման չեր ազատության։ «Դեբասանները» միայն իրենց զգեստներն էյին փոխել, բայց շարունակում էյին խաղալ նույն կատակերգությունները։ «Բեմում» կանգնած էյին մեր առաջ միապետության միևնույն հավատարիմ ծառաները, ղաջարների «բարձր» տան միևնույն բարեկամները, նույն պալատականները և գահի պաշտպանները։

Տարբերությունն այն էր, վոր այժմ այդ մարդիկ կոչվում էյին «ազատամիտներ», «ժողովրդի ծառաներ» և «Իրանի բարեկամներ»։

Այդ մարդիկ ձգտում էյին միայն պատգամավոր ընտրվել և այնուհետև հասնել մինիստրական աթոռին, վորի համար ագմկում էյին, ամբոխավարություն էյին անում, կուսակցություններ էյին կազմակերպում, սակայն իրականապես խաբում էյին հասարակ ժողովրդին։

Քաղաքների ու գյուղերի անգրագետ, խեղճ ժողովրդին վոչխարների պես քշում էյին դեպի ընտրական տուփերը, իսկ ընտրող խեղճ ժողովուրդը ընտրական թերթիկն առնելով իր ձեռքը, առանց հասկանալու իր անելիքը, ձայն էր տալիս, անշուշտ ուրիշի թելադրանքով, այնպիսի մարդկանց, վորոնց վոչ տեսել էր, վոչ ծանոթ էր և վոչ էլ գիտեր իր ընտրյալի լավն ու վատը։

Թեև յես պատմություն չեմ գրում, բայց այս բոլորը յես գրի յեմ անցկացնում իմ հիշատակարանում, վորովհետև այդ ամբողջ անցուդարձին յես ինքս ականատես եմ յեղել։

Այսպիսով մենք ազատվեցինք այն կատաղի փոթորիկից,

վորը կոչվում եր Սալար-Ուդ-Դովլեյի արշավանք։ Այդ արշավանքը սրբեց, ավլեց ու տարավ հազարավոր ընտանիքներ, վորից հաղիվ մենք գլուխ պրծացրինք։

Յերևի մեր բախտը ցանկացել եր մի քիչ հանգիստ տալ մեզ—ինձ ու իմ ծերունի խեղճ մորս։ Յես ականջս դինջ, զբաղվում եյի իմ գործով։ Ազատ ժամերիս յես առաջվա պես լրագիր եյի կարդում։

Ահա մի որ ել թերթերը լուր բերին, վոր պետությունների մեջ մեծ պատերազմ ե սկսվել։

Պարսիկների համակրությունը գերմանացիների կողմն եր։ Ռուսաստանը, վորին բոլորն ել ատում եյին Իրանում, զորամասեր ուղարկեց Իրան և գրավեց Ղազվինը։ Միաժամանակ գերմանացիների դաշնակից թյուրքական կառավարությունն ել իր հերթին Ղասրի—Շիրինի վրայով, Հյուսեյին Ռաուֆ բեյի հրամանատարությամբ չորս հազարանոց զորամաս մտցրեց Իրան, վորպես հակակշիռ ռուսական ուժերի։

Ճիշտ ե, թյուրքական այդ ջոկատն իսկույն կոտորվեց սահմանամերձ ցեղերից կազմված կամավորական գնդերի կողմից, բայց դրանով բանը չվերջացավ։

Պատերազմն անդիմադրելի կերպով շարժվում եր դեպի Իրան և հետզհետե թափանցում եր յերկրի խորքը։

Կարճ ժամանակից հետո գերմանական կոնսուլն յեկավ Քիրմանշահ։ Նա իր հետ վոսկու մեծ պաշար եր բերել, վորն սկսեց աջ ու ձախ, առատությամբ ցրել ժողովրդի մեջ՝ կամավոր զինվորներ հավաքելու նպատակով։

Հրապուրված ու շլացած այդ վոսկով՝ կարճ միջոցում, չորս կողմից կոնսուլի շուրջը մարդկանց ստվար բազմություններ հավաքվեցին։ Առաջ յեկան մեկը մյուսի յետևից կամավորական գնդեր «Սահաբ-Ոզ-Զաման», «Նադերի» և այլ անուններով։

Այդ տարերային շարժումն առիթ տվեց Ռուսաստանի նորանոր ու այս անգամ, ավելի մեծաքանակ զորամասեր ուղարկել Իրան։ Պատերազմն որ ավուր հրահրվում եր, և նրա ծանրությունն ավելի զգալի յեր դառնում ժողովրդի համար։ Յեվ մի գեղեցիկ որ ել Իրանը պատերազմի թատերաբեմ դարձավ։

Իրանի կառավարությունն իրեն պաշտոնապես չեզոք եր հայտարարել, բայց իրանական կանոնավոր զորքերը յերկու

բանակի եյին բաժանված—«կազակների», որոնց հրամանա-
տարները ցարական սպաներ եյին, ռուսական բանակի համար առաջապահ ջոկատներ դարձան. Մյուսները — «ժանդարմներ», որոնք օգնում եյին գերմանացիներին և տաճիկներին, բաց ա-
վաղ, ոչ այնքան պատվի ու հայրենասիրության համար, որ-
քան փողի ու անձնական շահերի համար, և այդ բոլորը իհարկե, դարձյալ խեղճ ու կրակ, ռանչպար ժողովրդի հաշվին։

Բազմաթիվ գյուղացի ընտանիքներ կոտորվեցին ռուսա-
կան զորքերի կողմից։ Կենդանի մնացածները մեծ զանգվածնե-
րով թողնում եյին իրենց քայքայված տնտեսություններն ու ավերված տները և ապաստանում եյին լեռներում՝ փրկություն գտնելով լեռնային կիրճերում և քարանձավներում։

Ի միջի այլոց ինձ պատմեցին, որ մեր նախկին Զոմ-Զո-
մալ գյուղում էլ ռուսական զորքեր են յեղել։ Գյուղի նախիրն արածելիս է լինում մերձակա բլուրի վրա։ Գյուղացիներից մեկը տեսնելով ռուսական զորքերին, ձայն է տալիս իր հովվին.

— Ե՛յ, նախիրը գյուղ մի՛ քշի։

Դա բավական է լինում։ Ռուսներն այդ ձայնը լսելուն պես՝ գրավում են գյուղը։ Սարսափահար գյուղացիները փախ-
չում են, ով որտեղ կարողանում է։ Փախչողներից չորս հոգու ռուսները բռնում են։ Երկուսին հենց տեղն ու տեղը սրով են սպանում, յերրորդին վիրավորում են, բայց նա մի կերպ դուրս է պրծնում նրանց ձեռքից, փախչում իրեն գետն է գցում, խեղ-
դվում։ Չորրորդը ողջ է մնում, շնորհիվ իր ճարպիկության. անզգա վայր է ընկնում, իրեն ձևացնում է մեռած, ռուսները թողնում, հեռանում են։ Գյուղը գրավելուց հետո՝ զինվորներն սկսում են թալանել ու ինչ որ ընկնում է ձեռները, վերցնում, տանում են։

Նման կողոպուտներ ու սպանություններ ամեն տեղ կա-
տարվում եյին, որտեղ ռուսական զորքը մուտք էր գործում։ Կարճ միջոցից հետո տաճկական բանակը մտավ Իրան՝ Իսհան Ա-
լի բեյի հրամանատարությամբ, իսկ ռուսական զորահրամա-
նատար Բարաթովը նահանջեց։ Տաճիկներն առաջ շարժվելով՝ գրավեցին Համադանը։

Աստված ոչ ցույց տա այն օրերը, ինչպիսի օրեր քաշե-
ցին տաճիկների օրով համադանցիք։

Համատարած կամայականություն և բռնություն…

Տաճիկներն ամեն ինչ պահանջում էյին—սկսած գուլպայից մինչև ձավարով քաշովին։ Մտրակների հարվածների տակ նրանք ստիպում էյին համադանցի վաճառականներին ընդունել տաճկական արժեքազուրկ թուղթ բանկնոտները, վորոնք Իրանում շրջանառություն չունեյին և նրանցով վորևե բան կարելի յեր առնել Ստամբուլի շուկայում։

Այդ որերում անգլիացիները գրավեցին Բաղդադը, իսկ տաճիկները նորից նահանջեցին։ Իսհան Ալի բեյ նահանջելով իր հետ տարավ բոլոր ձիերը, էշերը և բազմաթիվ մարդիկ վորպես դերիներ։ Այդ խեղճ մարդկանց բանեցնում էյին բեռնակիր անասունների պես, ստիպում էյին բեռ շալակել դադարքից-դադարք։

Չեմ մոռանա իմ հանդիպումս ու զրույցը մի հաջու հետ, վորին վիճակվել եր տաճիկների բեռնակիրը լինել։

Նա ցույց տվեց իր ուսերը, վորոնք ծածկված էյին այնպիսի վերքերով, ինչպես ձիերի մեջքերն են լինում։

Մի ուրիշ ծերունի—Մուրադ Աղա անունով—վորին տաճիկներն իրենց հետ տարան վորպես բեռնակիր, այն գնալն եր, վոր գնաց, այլևս նա չվերադարձավ։

Տաճիկների հեռանալուց հետո՝ ռուսները մնացին միակ տեր ու տիրական ամբողջ Իրանում։ Այդ դրությունն այդպես էլ շարունակվեց գրեթե մինչև պատերազմի վախճանը, յերբ վերջապես Ռուսաստանում հեղափոխություն ծագեց, և ռուս ժողովուրդը, վոր մինչ այդ բռնապետության լծի տակ ճնշված հեծում եր, վոտքի յելավ, ապստամբվեց ցարիզմի դեմ։

Ցարն իր ընտանիքով կալանավորվեց և ապա դատի յենթարկվելով սպանվեց յուրայինների հետ միասին ռուս հեղափոխական ժողովրդի կողմից։

Պատերազմը մոտենում եր իր վախճանին։ Բայց այդ բանն, մեզ վրա եժան չնստեց։

Իրանում կանգնած զորամասերն այլևս չեյին լսում իրենց հրամանատարներին, վորի հետևանքով ծավալվեց ինքնիշխանությունը (самоуправство)։

Զինվորներն ինչ ուզում, անում էյին, վոչ մի գյուղ անարատ չմնաց։ Բոլորն էլ կողոպտվեցին և ավերվեցին։ Ցեղները

կովերը, վոչխարները, հացը, ցորենը, դարմանը—բոլորը տարան, և ինչ վոր չկարողացան տանել, հրդեհեցին և վոչնչացրին։

Այդ իսկ միջոցում ռուսական ռուբլու արժեքն այնքան ընկավ, վոր ավելի ցած եր գնահատվում քան տաճկական թղթադրամը, վորի հետևանքով իրանական վաճառականներն ու ընդհանրապես բնակչությունը հսկայական վնասներ կրեցին։

Գյուղացիք դադարեցին ցանելուց, և յերբ ռուսական զորքերը քաշվեցին և նրանց տեղ յերեվացին անգլիացիները, ամբողջ Իրանում սով եր տիրում։ Առողջ ու ամրակազմ յերիտասարդները հյուծվել, կռացել եյին, յերբեմնի կարմրաթուշ աղջիկները քայլում եյին փողոցներով ինչպես ստվերներ՝ դունատ, մաշված։ Հացը կյանքից ավելի թանգ եր, իսկ մնացած մթերքները ծախվում եյին ջրի գնով։ Դաշտի խոտերն դառել եյին գյուղացիների համար մշտական կերակուր, իսկ սատկած անասունների լեշերը, համեղ կերակուր եյին սովյալների համար։

Այս պայմաններում անգամ «ժողովրդի բարեգործները»—Իրանի կառավարիչները—իրենց համար յեկամուտի աղբյուր գտան ու միլիոնավոր սովյալներ զոհեցին իրենց ագահությանը։ Յերկրում կազմակերպեցին «բարեգործական կոմիտեներ», վորոնց ավելի ճիշտ կլինի անվանել մարդ կոտորելու կոմիտեներ։ Այդ կոմիտեյի կառավարիչները քաղաքների չքավորներին իրենց շուրջը հավաքեցին, տեղավորեցին նրանց իջևաններում և սկսեցին նրանց «կերակրել» և նրանց կերակրելու հաշվին ահագին գումարներ դիզեցին։

Նրանց լիազորները շրջում եյին ամբողջ յերկրում և ցորեն ու գարի եյին հավաքում այդ կոմիտեների անունով։ Հացահատիկի տերոջն ստիպում եյին իր սայլով փոխադրել քաղաք, վորտեղ նրան վճարում եյին խալվարին հիսուն թուման, մինչդեռ ցորենի խալվարն արժեր հարյուր թուման։ Մնացած հիսուն թումանն իբր թե գնալու յեր սովյալների ոգտին։ Հետո այդ նույն հացահատիկը լցնում եյին նավթի տակառների մեջ և ուղարկում եյին ուրիշ քաղաք, ավելի թանգ գնով ծախելու, իսկ սովյալներին ամեն որ տալիս եյին ջրի վռիկ՝ առանց հացի։

Յեվրոպացի փորձված քիմիկոսն անգամ չեր կարող վորոշել, թե ինչով և ինչպես եր յեփված այդ վռիկն, յեթե այդ քիմիկոսն անգամ զինված լիներ գիտության բոլոր զենքերով։

Որ չէր անցնում, վոր տասնյակներով մարդիկ չքոչեյին «էն մյուս աշխարհը»:

Ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա ով էր մտածում նրանց կերակրելու մասին: Նրանց իսկի մարդ էլ չէյին համարում: Երբ տեղեկանում էյին, թե այստեղ կամ այնտեղ ցորեն կա, իսկույն նրանց լփագորն ուղարկում էյին այնտեղ, ցորենը բարձում էյին սայլերին կամ անասուններին և փոխադրում էյին քաղաք:

Հիշում եմ, այդ որերին էր, վոր գնացի Քիրմանշահ, վորտեղ յես ծանոթներ շատ ունեյի, հույս ունեյի, վոր նրանք ինձ կաջակցեն մի քիչ ցորեն ձեռք բերելու համար, վորովհետև մենք էլ մատնված էյինք սովի:

Դա ինչ ճանապարհորդություն էր... Գյուղերով անցնելիս՝ յես լսում էյի յերեխաների լացի ձայներ: Նրանք հաց էյին ուզում: Լսում էյի նույնպես նրանց ծնողների վողբաձայն աղաղակները, վորոնք նկարագրում էյին իրենց դառն ու անտանելի վիճակը:

Առանց արտասուքի չէր կարելի լսել նրանց տնքոցն ու գանգատները:

Ընթերցողները կմտաբերեն այդ որերը և գիտեն, վոր յես վոչինչ չեմ չափազանցեցնում, այլ նկարագրում եմ միայն փաստերը:

Այս սոսկալի վայրերը մի կերպ անցնելով՝ յես հասա Քիրմանշահ և ուղևորվեցի ուստա Ալու բնակարանը:

Վատ չէյին ուստայի գործերը: Նրան տարվա սկզբին հաջողվել էր մի քիչ ցորեն ձեռք բերել, վորի շնորհիվ մի կերպ յոլա յեր գնում:

Նա ինձ հարցրեց, թե ինչպես եմ ապրում: Յես նրան պատմեցի իմ գլխով անցածները: Պատմեցի նմանապես, թե ինչպիսի սով է տիրում Համադանում:

— Այստեղ մեզ մոտ էլ լավ չէ,—ասաց նա,—հիմա մեզ մոտ նահանգապետը Ֆերման Ֆերմանի վորդի Սալար Լեշքյարն է: Լսել ես նրա մասին: Վորդին հարյուրապատիկ ավելի վատ է յուր հորից: Նա ամբողջ ցորենը զանազան պատրվակներով կոմիտեների ոգնությամբ փոխադրում է ուրիշ քաղաքներ թանգ գնով ծախելու, իսկ ինքը սովյալների անունով ամեն տեղ ցո-

րեն է հավաքում համարյա կես գնով, և նույնիսկ ավելի պակաս։

Ամենքը գիտեն այդ մասին, բայց լռում են։ Ոչ ոք չի համարձակվում խոսել, ձայն ծպտուն հանել։ Հենց իմանում է մի տեղ ցորեն կա, անմիջապես գրավել է տալիս։ Թեև ամեն տեղ բարեգործական ընկերություններ կա, բայց մարդիկ անընդհատ մեռնում են սովից։ Գյուղացիք տեսնելով այդ բոլորը, սկսել են իրենց ցորենները թաքցնել։ Եղել են դեպքեր, երբ մարդիկ սովից մեռել են, բայց թաքցրած ցորենին ձեռք չեն տվել, չեն հանել, վորովհետև վախեցել են բռնագրավումից։ Շատ ճարպիկ ժուլիկն է մեր նահանգապետը։ Տեսնես ինչպիսի խորամանկություններ է բանեցնում անգլիացիների հետ, ինչպես է քծնում նրանց առաջ, վորպեսզի իրեն չխանգարեն, ազատ թողնեն, վոր ժողովրդին պլոկի։

Իր նահանգապետության կարճ ժամանակամիջոցում ահագին գումար է դիզել։ Չեմ կարող ասել, կհաջողվի՞ այստեղ ցորեն ձեռք բերել, թե վոչ։ Համենայն դեպս պիտի փնտրել։ Կոմիտեյի մեջ ծանոթներ ունեմ, գուցե հաջողվի նրանց միջոցով մի բան անել։

— Արա, ինչ ուզում ես, ուստա Ալի,—ասացի յես,—միայն թե մի քիչ ցորեն ճարիր, մի՛ թողնի, վոր ծերունի մայրս քաղցից մեռնի։

Շատ շնորհակալ եմ ուստա Ալուց։ Նա անմիջապես գնաց քաղաք և ութսուն բաթման ցորեն ճարեց ինձ համար, վորին յես վճարեցի ութսուն թուման։ Վորքա՜ն ուրախ էի, վոր ինձ հաջողվեց այդ ցորենն առնել. դա մի ամբողջ կյանք արժեր։ Կոմիտեյից թույլտվություն վերցրի և ցորենը փոխադրեցի տուն։ Փոխադրության համար էլ վճարեցի քսան թուման։

Այդ իսկ օրերին էր, վոր մի անգամ մեր դռանը յերկու անծանոթ կին մոտեցան։ Նրանք համարյա մերկ էին և այնպես քայքայված, վոր կարծես հազիվ էին կանգնում վոտների վրա։ Նրանք ավելի շատ նման էին կմախքների, քան թե կենդանի մարդկանց։

Դռան ձայնը լսելով՝ յես դուրս յեկա և հարցրի նրանց, թե ինչ են ուզում։

— Գուցե հաց եք ուզում,—հարցրի յես։

Կանայք տնքացին ու լաց յեղան։

—Մի՞թե դու մեզ չես ճանաչում Բախտիար, —ասացին նրանք։

Նրանց ձայները ծանոթ եյին, բայց դեմքերը՝ վո՛չ։ Այդպիսի դեմքով կանայք յես յերբեք չեյի տեսել, բոլորովին չեյի հիշում։ Վորքան աշխատեցի մտաբերել, չկարողացա։

Նրանցից մեկն ասաց.

— Քո մորաքրոջը չե՞ս ճանաչում, Բախտիար։ Յես եմ, քո մորաքույրը, իսկ սա քո մորաքրոջ աղջիկն է։

Յես ճչացի և գլուխս բռնեցի ցավելուց ու ապշանքից։

Ճիշտ է, տարիներ է անցել, յերբ վերջին անգամ իրար տեսել եյինք և այնուհետև բաժանվել իրարից, բայց տարիներն այդպես սարսափելի կերպով չեն փոխում մարդկանց դեմքերը, ինչպես յես այդ որը տեսա։

Հենց այդ րոպեյին մայրս մոտեցավ և ճանաչեց նրանց։

Չի կարելի նկարագրել նրանց հուզմունքը։ Գետի պես հոսում եյին նրանց արցունքները։

Յերբ հանգստացան, նստեցին, մենք սկսեցինք հարց ու փորձ անել յուրայիններից, թե ի՞նչպես է ապրում փեսան, ինչպես է մորաքրոջս տղան։

Նրանք վողբաձայն լաց յեղան։

— Չկան նրանք, չկան... արդեն վաղուց... սովից... աղքատությունից... մեռան նրանք... իսկ մենք..., յեկանք... ճանապարհին սրանից-նրանից վողորմություն եյինք ուզում. բույսերի արմատներ եյինք ուտում... մի կերպ մեզ հասցրինք այստեղ։

Սակայն յերկար ու բարակ հարցուփորձի ժամանակ չեր։ Հարկավոր եր հոգ տանել նրանց։

Մենք քրդերս, թեկուզ և ապրելիս լինենք քաղաքում, միշտ քուրդ ենք մնում մեր կենցաղական ու բարոյական հասկացողությունների խնդիրներում։ Քուրդը յերբեք հաց չի մերժի ու խնայի ուրիշից, իսկ սրանք ես առավել վոր մեր հարազատներն եյին, իսկ աղջիկը համարվում եր նաև իմ նշանածը։

Յերկուսով ել մնացին մեզ մոտ։

Նույն որը յես շուկայում նրանց համար մի քանի կտոր անհրաժեշտ շորեր գնեցի, վոր հագնեն և մի քիչ իրենց կարգի բերեն։

Այնուհետև մենք ապրում էինք չորս հոգով։

Դժբախտաբար իմ գործերն էլ լավ չէին գնում։ Խանութս աստիճանաբար քայքայվում էր, վորովհետև խանութիս ապրանքները այնքան էլ բանուկ ապրանքներ չէին և բարձր գին չունեին, մյուս կողմից էլ, տան ծախսը շատ էր։ Արդեն ամառվա սկզբին սովի պատճառով յես ծախսեցի այն բոլորն, ինչ վոր ունեի և յես նորից չքավորի ու աղքատի մեկը դարձա։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԲԱԽՏԻԱՐԸ ԳՆՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ

Բարեբախտաբար այդ ժամանակ անգլիացիք մեր շրջանով նոր խճուղի էին անցկացնում։ Մի քանի քրդերով գնացինք, մտանք անգլիացոց մոտ աշխատանքի, վորպես քար կրողներ։ Ցես դարձա իմ հետ աշխատողների «մեծը»։ Մարդկանց կարգադրում էի և վորպես կարգադրող ու մեծ ստանում էի յերեք ղրան որական։ Ահա իմ «մեծությունը», հանաք բան չէր։

Ամեն բան կարծես լավ էր, կարելի յեր այսպես մի կերպ յոլա գնալ, սակայն մի բան մեզ շատ էր նեղում և մտահոգում—դա սովի հետևանքով ժողովրդի մեջ տարածված հիվանդությունն էր։ Դա մի համատարած հիվանդություն էր, և ովքեր սովից ազատվել էին, չէին մեռել, այժմ անխտիր տառապում էին այդ հիվանդությամբ։

Որական մի քանիսը մեռնում էին այդ հիվանդությունից։

Մեր «մարդասեր» կառավարիչների մեջլիսի պատգամավորների և մինիստրների շնորհիվ գյուղացիք վոչ մի բժշկական ոգնություն չէին ստանում։ Վոչ դեղորայք և վոչ էլ խնամք բնավ գոյություն չունեին։ Լինում էին դեպքեր, վոր մեկ որվա ընթացքում ամբողջ ընտանիքներ էին մեռնում—մեծից մինչև փոքրը—և նրանցից մեկը գոնե կենդանի չէր մնում, վոր մեռածների գերեզմանի մեջ մի բուռը հող գցի։

Ուրիշ տեսակ էր անգլիացիների մոտ։ Անգլիական բժիշկները պայքարում էին հիվանդության դեմ, իրենց հիվանդներին բժշկում էին, հիվանդին շրջապատում էին ամեն տեսակ

խնամքով, մարդկանց ապահովում եյին վարակի դեմ, խմելու ջուրը՝ զտում եյին և այլն։

Իսկ պարսիկները... Նրանք հլու հնազանդ «ճակատագրին», անմռունչ կերպով մեռնում եյին։ Ամեն որ մի քանի ժամ թողնում եյինք մեր աշխատանքները, գնում եյինք մեռել թաղելու, վորոնք զոհ եյին գնացել Իրանի անսիրտ, տմարդի կառավարիչների անփութության և շահամոլության։ Թաղում եյինք առանց պատանքի, հենց իրենց ցնցոտիներով․ դիակը նետում եյինք շտապ փորված փոսի մեջ ու հողը վրա եյինք տալիս։

* * *

Այս աշխատանքին անցնելիս՝ մենք քաղաքից փոխադրվեցինք գյուղ։ Ճանապարհի վրա ընկած գյուղերից մեկում տուն վարձեցինք ու տեղավորվեցինք, վորովհետև քաղաքից ամեն որ գնալ-գալը դժվար եր հեռավորության պատճառով։

Անցան ամիսներ։

Առավոտից մինչև յերեկո աշխատում եյի, իսկ յերեկոյան ժամերս տանն եյի անցկացնում։

Մի որ լուր ստացանք, վոր քրոջս ամուսին սեյիդը մեռել ե։ Հետևյալ որը մորս հետ գնացինք Համադան։

Փեսայիս տանն արդեն հավաքվել եյին նրա ազգականներն ու բարեկամները։ Քրոջս ամուսին սեյիդը Գյաբարի տոհմի հայտնի շառավիղներից եր․ նրա ազգականները մեծ մասամբ մուշտեյիդներ եյին կամ Համադանի ազդեցիկ սեյիդներ։

Յերբ սովորական կարգով սուգը վերջացավ, նրա ազգականներն ու մերձավորները ժողով արեցին և ցուցակագրեցին՝ հանգուցյալի բոլոր շարժական և անշարժ գույքերը։

Ժողովին մասնակցողները համարվում եյին հանգուցյալի «հոգևոր» ժառանգները, դրա համար ել գույքի մեկ յերրորդ մասը վերցրին իրենց և այն բոլորն, ինչվոր կարելի եր տանել, վերցրին և իրենց տները տարան, բնավ չմտածելով, թե նրա կինը սեյիդի մահից հետո ել այդ տանն ե մնալու և նրան անշուշտ վորևե ապրուստ ե հարկավոր, մանավանդ վոր մոտիկ որերում յերեխա յեր ծնվելու, ինչով պիտի ապրեյին մայրն ու յերեխան։

Բացի դրանից, մնացած գույքի մի մասի վրա ել արգելք

ղըվեց, վորը պիտի էր թե հատկացվեր մեռնողի հոգեհանգըստյան ծիսակատարության, հոգևոր դասի վարձատրության, դերվիշների ապրուստին և զանազան բարեգործական նպատակների։

Տունը, խանութը և տան իրերը դրեցին ազգականներից մեկի խնամատարության տակ, իրերի անկորուստ պահպանությունը հանձնարարելով քրոջս, մինչև յերեխայի ծնունդը։ Դեռ լավ էր, վոր կառավարությունն էլ չմիջամտեց և իր համար «առյուծի բաժին» չպահանջեց։

Մի քանի որից հետո մենք հայտնեցինք սեյիդի ազգականներին, վոր յերեխան ծնվեց, բայց մի յերկու որից հետո էլ, ստիպված յեղանք տեղեկացնել նույն ազգականներին, վոր յերեխան մեռավ։

Յերեխան թաղելուց հետո՝ յես գնացի խնամատար սեյիդից վերցնելու տան և խանութի բանալիները, վորովհետև պարզ էր, վոր բացի քրոջիցս հանգուցյալն էլ ուրիշ ժառանգ չուներ։

Հազիվ էյի բերանս բաց արել, վոր արժանապատիվ սեյիդը բացականչեց.

— Քրդի էշ, դու քեզ էլ ես սեյիդների Քյարբալի տոհմի անդամ կամ ժառանգորդ համարում։ Ուզում ես նրանց գույքերին տեր դառնալ, ինչ է։

— Յես ուրիշի սեփականությանը տեր դառնալու միտք չունեմ,—ասացի յես.—յես ուզում եմ միայն քրոջս հոգսը քաշել, ուրիշ վոչինչ։ Քույրս հենց շարիաթի որենքով համարվում էր հանգուցյալ ամուսնու ժառանգը։ Ընդհակառակը յես կարծում եմ և հավատացած եմ,—ավելացրի յես,—վոր ձերդ արժանապատվությունը կաջակցի քրոջս, վորոշում կգրի քրոջս ոգտին, ինչպես դա թելադրվում է շարիաթի կողմից։

Սեյիդն սկսեց վիճել։ Յես առարկեցի։ Սեյիդն արդեն անցավ հայհոյանքի։

— Անիծյալ հերետիկոս, անհավատ, անպիտան արարած.—ասաց նա ինձ։

Այնուհետև նա ինձ դուրս արեց տնից։ Այդ դեռ քիչ էր։ Նա իր ծանոթ մուշտեյիդների միջոցով Շիրինին վռնդել տվեց իր ապրած սենյակից։ Խեղճ քրոջս թույլ չտվին անգամ իր

համար փոխնորդ շոր վերցնի։ Դուրս անելուց հետո՝ դուռը փակեցին, վրան էլ կնիք դրին։

Այդպիսով մենք մնացինք առանց օթևանի և առանց ապաստանի։ Էլ ուրիշ ճար չկար. գնացի մոտիկ տեղում մի փոքրիկ սենյակ վարձեցի, մի քանի անհրաժեշտ իրեր առա ու մորս և քրոջս հետ տեղավորվեցինք այդ սենյակում։ Խեղճ քույրս այս բոլորից հետո այնպիսի դրության մեջ էր, վոր իսկի պատմելու չէ։

Ցես մտածում էյի, թե ինչ անեմ։

Վորոշեցի ինչ գնով էլ լինի, պաշտպանել քրոջս շահերը։ Բայց ինչպես պաշտպանել։ Այդ աղաղակող բռնության մասին ուզում էյի գրել թերթերից մեկում։ Հարծես սիրտս ինձ ասում էր—գրի՛ր, թերթը ժողովրդի բերանն է, նրա լեզուն է։ Ցեվ իսկապես, էլ ովքեր պիտի պայքարեն արդարության համար, յեթե վոչ մամուլի գործիչները։ Այս բոլորի մասին թող հայտնի լինի մամուլի էջերում, թող բոլորն իմանան, թե ինչ անարդարություններ են կատարվում աշխարհիս յերեսին։ Ի հարկե, այդ բոլորի համար յես պիտի վճարեմ, բայց ինչ կա վոր, գոնե հույս կունենամ, թե մեկը դուրս կգա և կպաշտպանի մեզ, մեր ցավերին դարման կանի։

Բայց սառն դատողությունս բոլորովին ուրիշ բան էր ասում ինձ—Ո՛, վո՛չ, այդպես չէ։ Այժմ էլ սահմանադրության առաջին որերը չեն։ Իսկապես կար ժամանակ, յերբ նորանոր թերթեր էյին լույս տեսնում և դղրդացնում ամբողջ Իրանը իրենց վոգեշունչ խոսքով, կրակոտ հոդվածներով, յերգիծանքով՝ վորոնք ժողովրդի արդար ցասումն էյին գործում։ Վորտե՞ղ մնացին այժմ այդ բոլորը։ Վորտեղ են այժմ այն վոսկե գրիչները, այն անյերկյուղ խմբագիրները։ Նրանցից վոմանք չինովնիկական տաքուկ տեղեր գրավելով կամ ներկայացուցչական կոչման հասնելով, մոռացան իրենց գաղափարական պարտքը, վոր իրենք պարտավոր են դիմակավոր մարդկանց դիմակազերծ անել, հանցավորների հանցանքը մերկացնել և թաքնված հանցավորներին յերևան հանել։ Վոմանք էլ դարձել են վարձու գրչակներ, վորոնք պատրաստ են այսոր իրենց վարձատրողին անվանել Նապոլեոն, Հաննիբալ, Կեսար, իսկ վաղը նույն մարդկանց կարող են ցեխոտել, վոտի տակ տրորել՝ ինչպես փոշի։

Կարող է պատահել, վոր հակառակորդիս հարկադրեն բավարարել իմ պահանջները, իսկ յերբ այդ հակառակորդը «ավելի վճարի» իրենց, իմ պաշտպանները ներողություն կխնդրեն նրանցից, վոր սխալվել են, մերկացումներ են արել և թերևս ինձ էլ կանպատվեն և կանվանեն խարդախների մեկը։

Գուցե կան և ազնիվները նրանց մեջ, բայց յես այդպիսիներին չեմ ճանաչում և հավանորեն ավելի վատերին կպատահեմ, վորոնք մեծամասնություն են կազմում։

Այսպես թե այնպես, սրտիս ու դատողությանս թելադրանքից զատ, յես վորոշեցի գնալ նահանգապետի մոտ և խնդրել նրան, վոր նա պաշտպանի մեր իրավունքները, բայց այստեղ էլ նորից դատողությունս ինձ լետ կանգնեցրեց—«խեղճ վողորմելի, դու ուզում ես գնալ այնպիսի մարդկանցից օգնություն խնդրելու, վորոնք ստրկաբար սպասավորում են ազդեցիկ աղաներին։ Նրանք քեզ պիտի պաշտպանե՞ն։ Նրանք աղայի մի ակնարկով պատրաստ են ամեն տեսակ օրինազանցություն անել, վորպեսզի աղան մեջլիսի ընտրություններին իրենց աջակցի—այսինքն, ընտրողների քվեներ ու ստորագրություններ հավաքի։ Բավական է, վոր աղան մի խոսք ասի, և դու կորած ես։ Ի՞նչ արժե նրանց համար վոչնչացնել մի խեղճ վողորմելու, ինչպիսին դու ես։

Դառնանք իմ ընդհատված պատմությանը։ Յես ասացի, վոր ուզում եյի գնալ դատարան։ Յեվ իսկապես դատարանը դա արդարադատության տունն է։ Բոլորն էլ այն հույսով են համակված, վոր այստե՛ղ միայն կարելի յե արդարադատություն գտնել։ Համենայն դեպս, դատարանը մի վայր է, ուր ապաստան են գտնում բոլորը։ Նա կոչված է մարդկանց պաշտպանությունն ապահովելու և խաղաղ ապրելու հնարավորություն ստեղծելու։ Դատարանն այսպես թե այնպես իրավունքի և կարգի հենարանն է, վորի վրա ինքնագոհ ու հոգեկան հպարտությամբ է նայում ամբողջ ժողովուրդը։

Ճիշտ է, յես այդ րոպեյին հիշեցի, թե ինչ անախորժություն ունեցա Քիրմանշահի դատարանում հորս սպանության գործի առթիվ, բայց յես այսպես եյի դատում, վոր նախ՝ այդ անախորժությունը տեղի ունեցավ խառնակ ժամանակ, և յերկրորդ՝ յես այն ժամանակ բոլորովին մենակ եյի և վոչ մի պաշտ-

պան չունեյի։ Բավական է, վոր յես մի լավ փաստաբան գըտնեմ, արդեն կարող եմ իմ իրավունքները պաշտպանել։ Բացի դրանից, դատարանի նախագահն էլ հիմա առաջվանը չէ. այժմ Եդալեթ-Սալթանեն է, վոր նշանակում է «Կայսրության արդարադատություն»։ Այդ բանը համենայն դեպս հույս է ներշնչում։

Բոլորովին հանգիստ ու վստահ, յես վորոշեցի գանգատ տալ դատարան։ — «Բոլոր ուժերս կլարեմ և քրոջս կվերադարձնեմ իր տունը»,—ասում էյի ինքս ինձ։

Հետևյալ օրն յես արդեն դատարանում էյի։ Բակում, ինչպես միշտ, ահագին ժողովուրդ էր հավաքված — մի ահագին ամբոխ։

Վոչ վոք էլ ուշադրություն չդարձրեց վրաս։ Ե՛հ, ո՞վ պիտի ուշադրություն դարձներ։ Ախար յես մի քուրդ գյուղացի էյի, ո՞վ էր բանի տեղ դնում ինձ։

Դես-դեն ընկա, բայց առանց հետևանքի։ Վերջը, մեկին խնդրեցի՝ ծանոթացնել ինձ մի լավ փաստաբանի հետ։

Բոլոր փաստաբանները ցերևելի և մեծամեծ սեյիդներ էյին—հաստավիզ, կանաչ չալմայով, գլուխները հպարտորեն բարձր պահած։

Պատվելի կլիենտները հազար ու մի տեսակ բաներ էյին պատմում նրանց պաշտպանած գործերի և պերճախոսության մասին—«Այնքան գեղեցիկ լեզու ունի,—ասում էյին նրանք,—վոր ուղղակի զմայլելի յե։ Լեզու հո չէ, այլ, Շիրմի սուրն է, կտրում է թրի պես։ Իսկ վորքա՜ն հեգնանք կա նրա լեզվի և խոսվածքի մեջ, կատարյալ Յեզիդ է։ Դատարանում վոչ վոքի չի խնայում, բոլորն էլ նրանից վախենում են»։

Այնտեղ կային նույնպես սպիտակ չալմայով ախունդներ — գայլի պես քաղցած ու ագահ, սատանայի պես խորամանկ ու խաբեբա։ Վխտում էյին չորս կողմս ակնոցավոր, սպիտակ ոձիքով, յեվրոպական գլխարկներով ու զանազան հագուստներով փաստաբաններ։

Փաստաբան-իրավաբանների մի ամբողջ դաս, վորը կարող է դատարանը ջուր տալ իր ուզածի պես։

Յես յերկար ժամանակ կանգնել էյի մի անկյունում և գլուխս կորցրածի պես, ապուշ կտրած, դիտում էյի այդ բոլոր «ցերևելի» մարդկանց։

Վերջապես ես տեսա մի հատ սեյլիդի, որ դատարանի դահլիճից դուրս եկավ և ուղղվեց դեպի փողոց։ Անշուշտ փաստաբանի կոչում ուներ նա։ Ցանկացա նրա հետևից վազել, կանգնեցնել նրան, բայց կարծես մի բան ինձ ետ պահեց։

— «Ո՞ւր ես ուզում գնալ։ Համենայն դեպս նրա մոտ մի գնա ։ Չէ՞ որ նա էլ մի սեյլիդ է ինչպես քո հակառակորդը»։

Ես բարվոք համարեցի գործիս պաշտպանությունը հանձնել մի հասարակ ախունդի, որ սեյլիդի կոչում չունենա։

Թեև այդ էլ մի բան չէր, բայց ի՞նչ արած, ուրիշ ճար չկար։ Ճիշտ է, որ շունն էլ չախկալի ընկերն է, բայց նեղությունն ու կարիքը մարդու ամեն բան անել են տալիս։

Ինձ ցույց տված փաստաբանին ես անկյունում կանգնեցրի և պատմեցի նրան իմ գործի հանգամանքները։ Ես մանրամասն պատմեցի քրոջս ու հակառակորդիս մասին։ Փաստաբանն ինձ լսում էր ներողամիտ ժպիտով, և կարծես թե նրան շատ քիչ էր հետաքրքրում այն ամենը, ինչի մասին ես այնպես տաքացած ու շահագրգռված կերպով խոսում էի։ Նա անհամբերությամբ ինձ ընդհատում էր համարյա ամեն մի խոսքից հետո։

— Այդ բոլորը դատարկ բաներ են և կարևոր չեն,— ասաց նա,— կարևորն այն է, որ դուք իմանաք, թե ես ի՞նչպես եմ խոսում դատարանում, ի՞նչպես եմ դուրս գալիս հակառակորդներիս դեմ։ Դուք հանգիստ եղեք, իմ դեմ վոչ մի փաստաբան չի կարող պայքարել։

Փաստաբանս գործիս էությունն վայրկենապես ըմբռնեց, կարծես մի տեսակ անբացատրելի ներշնչումով։ Հարկավոր չըհամարեց գոնե խորամուխ լինել գործի մանրամասնությունների մեջ, այլ ուղղակի ասաց.

— Ես բոլորը հասկացա, բոլորը։ Խոստանում եմ, որ մի շաբաթից հետո կվերադարձնեմ ձեր քրոջ գույքը։

Այս բոլորից հետո ախունդ փաստաբանս դարձավ հավատարմագրի և իրա վարձատրության խնդրին։

— Գործը վարելու համար ինձ հասնում է գույքի արժեքի մեկ տասներորդ տոկոսը։ Այս գլխից քսան թուման կանխավճար եք տալու։ Այնուհետև ձեր քո՞ւյրը լիակատար հավատարմագիր է տալու ինձ։ Մնացածը թողեք ինձ։ Կարող եք հան-

պիտի նստել տանը, մինչև որ ինձնից ազդարարություն կըստանաք, այն ժամանակ կգաք և ձեր գույքին տեր կկանգնեք։ Մի վախեցեք, բոլորն էլ ձերը կլինի մինչև վերջին ավելն ու ճրագի թասը։

Ես շատ խնդրեցի ու համոզեցի փաստաբանին, որ նա տասնհինգ թուման կանխավճարով բավականանա։ Այնուհետև հենց դատարանի բակում գրեցինք հավատարմագիրը։ Շուկայում քրոջս անվան կնիք առա, հավատարմագիրը կնքեցի, տարա դատարան, տոմարագրեցին ու վավերացրին այնտեղ, հանձնեցի հավատարմատարին, իսկ ինքս գնացի մերոնց մոտ։

Մոռացա ասեմ, որ հավատարմագրի վավերացման համար նույնպես վճարեցի մեկ թուման։

Վերջին րոպեյին հավատարմատարն ինձ ասաց.

— Անցեք ինձ մոտ վաղը չէ մյուս օրը։

Մինչև որ դատարանը վճիռ կկայացներ, յես այժմ զբաղվում էի հին շորերի վաճառքով։ Օրական յերկու-յերեք ղռան փող էի վաստակում։

Պատվիրված օրը յես գնացի դատարան։

Դատարանի բակում հանդիպեցի իմ «պարոն փաստաբանին»։

Նա ինձ ասաց.

—Պատասխանողին յերկու անգամ ծանուցագիր են ուղարկել, բայց նա չի ներկայացել։ Հիմա պիտի ծանուցագիր ուղարկենք կարմիր թղթի վրա. և յեթե այժմ էլ չներկայանա, ապա իր համար վատ, քանի որ դատարանը բացակա վճիռ կկայացնի մեր օգտին և մենք գործը կտանենք, իսկ պատասխանողը բացի գործը տարվելուց, դեռ վորոշ տույժ կկրի։

Փաստաբանիս այս խոսքերն ինձ շատ ուրախացրին. լավ ու բարի ցանկություններով հրաժեշտ տվի նրան և գնացի տուն։

Մի շաբաթից հետո յես նորից գնացի դատարան։

Պարոն փաստաբանս այս անգամ էլ այսպես ասաց.

— Յերեկ պատասխանողին կանչեցին դատարան իշխանության միջոցով և որենքի ուժով։ Նիստը կայացավ։ Քիչ եր մնում, որ գործը տանեյիր, հենց այդ րոպեյին զանգը հնչեց, այսինքն թե՝ նիստը վերջացավ։ Հույս ասված, հետևյալ նիս-

տին, յերկուշաբթի օրը, անպատճառ գործը կտանեմ։ Դուք լրացուցիչ կերպով պիտի վճարեք յերեք թուման՝ նիստերի ծախսերի համար։

Յես զարմանք հայտնեցի և ուզեցա առարկել, բայց փաստաբանս չթողեց ինձ, վոր խոսեմ։

— Դուք գիտեք, յեթե այդ փողը չտաք, ձեր գործը կարող է տուժել,—ասաց նա։

Յես յերեք թուման վճարեցի։

Հետո նա պահանջեց իմ հասցեն։

— Հանկարծ կարող է պետք գալ. կարող են ձեզ կանչել դատարան,—ասաց նա։

Մի քանի օրից հետո, փոխանակ մեզ դատարան կանչելու, պատվելի փաստաբանս ինքը շնորհ բերեց մեզ մոտ։

Նա շատ ուրախ եր։

— Ե՛հ, Բախտիար,—ասաց նա,—իզուր չէ, վոր քո անունը Բախտիար է, վոր նշանակում է «բախտավոր»։ Իսկապես վոր դու բախտավոր մարդ ես։ Ամեն բանում բախտդ կտրում է։ Յես քո գործով շահագրգռեցի դատարանի նախագահին, և նա խոսք տվեց օգնել մեզ։ Այդ բանի համար յես նրան խոստացա հինգ թուման նվիրել։ Բանը մի բան չի ի հարկե, բայց դա մեր գործին շատ կնպաստի։

Յես պատճառաբանեցի, վոր փող չունեմ և հրաժարվեցի վճարել հինգ թումանը, բայց նա ավելացրեց.

— Ե՛հ, չունես, չունես, բայց իմացիր, յեթե փողի պատճառով գործը տուժի, յես մեղավոր չեմ։ Յես նման եմ բժշկի. իմ գործն է հիվանդին դեղեր նշանակել, պատվերներ տալ, ասել, թե ինչ պիտի անի, վոր առողջանա, իսկ յեթե հիվանդն իմ պատվերները չի կատարում և դրանից տուժում է, այդ արդեն իմ բանը չի, յես պատասխանատու չեմ, իմ խիղճն այստեղ հանգիստ է։

Ստիպված վճարեցի վերջին հինգ թումանն։ Բացի դրանից, ճաշի ժամանակ եր, հարկավոր եր մի բանով հյուրասիրել փաստաբանին։ Տանը վոչինչ չունեյինք։ Յես հարգալից կերպով հարցրի փաստաբանին։

— Պարոն փաստաբան, ինչ կհրամայեք ուտել ճաշին, յես կերթամ և շուկայից կբերեմ։

Նա բարեհոգությամբ ասաց.

— Յեթե ուզում ես եժան և սննդարար լինի, յերկու ղռանի չլավ-քյաբաբ բեր։

Յես վազ տվեցի քյաբաբչու մոտ, յերկու ղռանի քյաբաբ վերցրի փաստաբանի համար, նույնքան էլ մեզ համար ու բերեցի տուն։ Փաստաբանս մի րոպեյում ամբողջ ամանը դատարկեց մեծ ախորժակով և ժպտալով ասաց.

—Կարծես թե վոչինչ չկերա։ Յերևի մի ղռանի էլի առել, հա, Բախտիար։

Վորքան էլ հավատացրի, վոր իրոք յերկու ղռանի քյաբաբ եմ առել, այնուամենայնիվ փաստաբանս մնաց տարակուսանքի մեջ և գլուխը թափահարելով ասաց.

— Ն՛հ, կարծես թե վոչինչ չկերա։ Տես, ինչ խաբդախ մարդիկ են այդ քյաբաբչիները, յերկու ղռանի այնքան քյաբաբ են տալիս, վորքան պիտի տան մեկ ղռանի։

Ճարս կտրված՝ մորս ու քրոջս համար առած բաժինն էլ դրեցի փաստաբանիս առաջը, վոր գոնե դրանով կշտանա։ Այդ բաժինն էլ նույնքան մեծ ախորժակով կերավ։ Հետո թեյ խմեց և վերջապես վերկացավ ու գնաց։

Փաստաբանի նշանակած օրը յես նորից գնացի դատարան տեղեկանալու, թե ինչով վերջացավ դատը։

Փաստաբանը կարծես թե բարկացավ։

— Իսկույն յերևում է, Բախտիար, վոր դու շատ քիչ ես հասկանում դատական հիմնարկություններից և նրանց գործերից։

Մեր գործը դեռ վաղը պիտի լսվի հաշտարար դատարանի ատյանում։ Դու գիտե՞ս ինչ ասել է հաշտարար դատարան։ Չգիտե՞ս։ Վոր չգիտես, դե լսիր։ Ամեն մի գործ հաշտարար դատարանում աշխատում են բանը հաշտությամբ վերջացնել, այնպես վոր այս ատյանում գործը վոչ տանում են, վոչ տարվում։ Յեթե կողմերը չեն համաձայնում, այսինքն, յերբ կողմերի մեջ հաշտություն չի կայանում, և պարզվում է, վոր կողմերը պիտի վիճաբանեն, փաստարկեն, վիճեն, այն ժամանակ վիճաբանություն է բացվում յերկու կողմերի մեջ։ Ուրեմն, մեր գործի յելքը կախված է հաշտարար դատարանի նախագահից. հարկավոր է նրան

յերկու-յերեք թուման տալ և նա գործն այնպես շուտ կտա, վոր մեզ համար նպաստավոր ընթացք կստանա։

Դեռ ելի շատ բան ասաց փաստաբանը և իր խոսակցությունը վերջացրեց նրանով, վոր ինձնից ջգլեց նորից յերկու թուման։

Մի շաբաթից հետո յես կրկին գնացի «որհնյալ հիմնարկությունը»։ Պարոն փաստաբանն ասաց.

— Հաշտարար դատարանում գործը լսվեց։ Հաշտություն չկայացավ։ Պիտի վիճաբանենք։ Գործը կերթա դատարանի առաջին ատյանը։ Այժմ տվեք ինձ ձեր բոլոր փաստաթղթերը։

Յես նրան տվեցի քրոջս թղթերը, նա կարդաց և ասաց.

— Սա ինչ թուղթ ե վոր, սա ապացուցում ե միայն, վոր ձեր քույրը ամուսնացած ե յեղել սեյիդի հետ, իսկ մեզ հարկավոր ե ապացուցել, վոր ձեր քույրն յերեխա յե ծնել, և վոր իրոք, այդ յերեխան մեռել ե։

—Այդպիսի թուղթ յես չունեմ,—ասացի յես,—բայց չե՞ վոր նրանց թաղում բոլոր հարևանները գիտեն։ Թող վկաներ կանչեն։

—Ե՛հ, վոր այդպես ե, դուք վոչինչ չեք ապացուցի,—ասաց փաստաբանս,—վկանե՛ր... Եդ ձվքեր կգան վկայություն տալու։ Մի ոտար մարդու համար ձվ կուզենա աղա Բյարաբիին դայրացնել։ Նրա դեմ դատարանում վկայություն տալ։ Վոչ, այդպիսի մարդիկ չեն գտնվի։ Բացի դրանից ել, բոլորն ել լավ գիտեն, թե ինչ ե նշանակում դատարան և ինչ բան ե վկայություն տալը։ Վորքա՜ն գլխացավանք ու գնալ-գալ... Վոչ վոք չի գա վկայելու, իսկ յեթե գան ել, ապա նրանց ցուցմունքները շատ հեշտ կլինի հերքել։

Յես ապշահար հարցրի.

— Պարոն փաստաբա՛ն, պարո՛ն... Սա ինչ բան ե, ինչպե՞ս թե... Չե՞ վոր փաստ ե, վոր յերեխան ծնվել ե և հետո մեռել ե։ Մի՞թե մի հավատացյալ մահմեդական կգտնվի, վոր գա ու այս կատարված փաստը ժխտի, հերքի։

Յերեխան ծնվել և մեռել ե։ Յեվ յեթե մեր յերկրում ծննդյան վկայականներ չկան, և մատյաններ չեն պահվում, թող գերեզման փորողը կամ մեռել լողացնողը գա, հաստատե այդ բանը։ Նրանք ճիշտը կասեն. միայն թե թող կանչեն ու հարցնեն։

Փաստաբանս ծիծաղեց.

— Ինչպես դու խենթ ես, Բախտիար,—ասաց նա,—դու թաղման մասին ես խոսում, բայց դու յեթե յերեկվա նիստին ներկա լինեյիր, այդպես չեյիր խոսի։ Յերեկ վիճաբանություն կար հաշտարար դատարանի ատյանում. պատասխանողի հավատարմատար փաստաբանը ընդհանրապես նման բոլոր պարագաները հերքեց, ջրեց։ Նա ապացուցում եր, վոր չի կարելի հիմնըվել նորածին յերեխայի ծննդյան ակտի փաստի վրա, քանի վոր ընդհանրապես չկա վոչ մի նորածին։ Ի՞նչ կարող եյի ասել դրա դեմ։ Յես չկարողացա վոչինչ պատասխանել։ Ախար յես վոչ մի փաստաթուղթ չունեմ իմ ձեռքում։ Գործը հետաձգել են հետևյալ նիստին, այնպես վոր, յեթե ուզում ես, շրջիր ձեր թաղում, անցիր բոլորի մոտ, ստորագրություններ հավաքիր և վավերացնել տուր, վորոնք պիտի ապացուցանեն, վոր իրոք յերեխայի ծնունդը յեղել ե։ Իսկ յեթե ինքդ չես ուզում այդ բանն անել, ինձ տասը թուման փող տուր, յես ինքս ազնիվ ու շիտակ մարդիկ կգտնեմ և նրանց միջոցով ձեռք կբերեմ այդ փաստաթուղթը։

Յես չեյի իմանում, թե այլևս ինչ անեմ։ Գնամ և վկաների ցուցմունքներ ու ստորագրություններ հավաքեմ։ Իսկ յեթե համաղանցիք չուզենան աղա—սեյիդի դեմ վկայություն տալ։ Կամ գուցե նպատակահարմար ե, վոր փաստաբանն անի այս բանը, սակայն նա ել տասը թուման ե պահանջում դրա համար։ Յեթե այդ տասը թումանն ել տամ փաստաբանին, այլևս ինձ մոտ վոչինչ չի մնա։ Ստիպված պիտի մուրացկանություն անեմ։

Սակայն ճիշտ ե ասված, թե «Թղթախաղի մեջ տարվողը ուսկից չպիտի վախենա»։ Վերջապես այդ տասը թումանն ել տվեցի փաստաբանին։

Մի շաբաթից հետո յես նորից գնացի դատարան։

Հավատարմատարս ասաց.

—Պատասխանողին կանչել են դատարանի առաջին ատյանը։ Նա իրեն բնավ մեղավոր չի ճանաչում։ Հարկավոր ե գործը փոխադրել յերկրորդ ատյանը, այսինքն գործը տալ վըճռաբեկ դատարանին։ Ճիշտ ե, այդ բոլորը փող արժե, բայց ինչ արած, նման ծախսերի առաջ դու կանգ չպիտի առնես, վորով-

հետև գործը տանելու դեպքում մեծ գումար կստանաս մի անգամից և կազատվես չքավորությունից։

Այդպես ինձ հուսադրեց փաստաբանը և պատվիրեց ինձ, վոր հետևյալ շաբաթվա մեջ հանդիպեմ իրեն դատարանում։ Դրանից յերկու-յերեք որ չեր անցել, վոր ինքը փաստաբանն եր յեկել մեզ մոտ—տուն։ Յես տանը չեյի։ Նա խոսել եր մորս ու քրոջս հետ։ Յերբ յես տուն յեկա, նա արդեն գնացել եր։ Մայրս պատմեց, վոր փաստաբանը իրեն ու Շիրինին խոստացել ե ահագին քանակությամբ թանգարժեք իրեղեններ՝ մոտ յերեք արկղ։

Յես կարծեցի, թե փաստաբանն արդեն գործը տարել ե, շտապ կերպով ինձ գցեցի նրա բնակարանը։ Յես հո չեյի քայլում կամ վազում, կարծես թևավոր թռչունի պես թռչում եյի ուրախությունից։

Ինձ վոր տեսավ, փաստաբանն ասաց.—

— Այժմ վերջ ձեր տառապանքներին, Բախտիար։

Յես ներողություն խնդրեցի՝ վոր իրեն անհանգստացրի իմ այցելությամբ և խնդրեցի հաղորդել, թե ինչ դրության մեջ ե գտնվում գործը։

— Յես շատ եմ մտածել քո գործի մասին, Բախտիար,— ասաց նա,—այժմ կարծում եմ, վոր հարկավոր ե քեզ ազատել ամեն տեսակի դատական ծախսերից։ Վորոշեցի այնպես անել, վոր դու այլևս վոչ մի կոպեկ ծախս չանես։

Յես այնքան ուրախացա, վոր բռնեցի փաստաբանի ձեռքը և համբուրեցի։ Աղոթք շշնջացի նրա համար, իսկ նա ինձ ասաց.

— Ահա թե ինչ եմ մտածել, Բախտիար։ Արի քրոջդ տուր ինձ, այն ժամանակ յես այդ գործը կտանեմ մինչև վերջը, իսկ դու հանգիստ նստիր տեղդ և վոչ մի բանի մասին մի մտածիր։

Յերբ լսեցի այդ խարդախի և սրիկայի խոսքերը, աչքերս մթնեցին, կարծես գիտակցությունս կորցրի։ Ել համբերել չկարողացա, զայրացած կերպով բացականչեցի.

— Ուրեմն այդպես, պարոն փաստաբան, կնշանակի սկզբից դուք ինձնից վերցրիք, կամ ավելի շուտ պոկեցիք, այն, ինչ վոր հնարավոր եր, իսկ հիմա դրամը թողած՝ իմ պատիվն եք ուզում դիպչել։ Վոչ, պարոն, դա լինելու բան չե։

Պարոն փաստաբանը թեթևակի ժպտաց ու ասաց.

— Ա՛խ դու, հիմար, անմիտ քուրդ։ Չէ՞ որ քո քրոջ լիակատար հավատարմագիրն ինձ մոտ է գտնվում, և ահա մի քանի օր է, որ ես շաբաթով նրա հետ ամուսնություն եմ կնքել։ Այժմ նա իմ կինն է, ինչ էլ ասես կամ անես, միջնորդությունն է յես նրան տանելու յեմ։ Մոլլայից հրաման կառնեմ և ոստիկանության միջոցով կտանեմ քրոջդ իմ տունը, իսկ դու հիմա աչքիցս հեռացիր։ Դե, հայդա, շուտ։

Ցեվ փաստաբանն ինձ տնից դուրս արեց։

Գնացի տուն և պատմեցի մորս ու քրոջս մեր այս նոր անբախտության ու անհաջողության մասին։ Նորից մեր տունը սգի տուն դարձավ, նորից լաց ու կոծ բարձրացավ։ Կարծես մեռելատուն լինեի։

Այսպես մենք դառը լալիս էինք, յերբ դուռը ծեծեցին։ Ցես գնացի դուռը բաց արի։ Հպարտությամբ ու գլուխը բարձր պահած՝ ներս մտավ փաստաբանը ոստիկանական յերկու պաշտոնյաների հետ։

Նրանք պահանջեցին քրոջս ուղարկել փաստաբանի տունը։

Ավագ ոստիկանը խիստ կերպով պատվիրեց Շիրինին.

— Շորերդ հագիր, չադրադ գցիր և գնա։

Քույրս կարծես խելագարվեց։ Կատաղածի պես իրեն գցեց հարևան սենյակը, վերցրեց իմ հին դանակը և այնտեղից գոռալով ու հայհոյելով հարձակվեց փաստաբանի ու ոստիկանական պաշտոնյաների վրա՝ անիծելով իրենց դատարանն էլ, դատավորներին էլ։

— Իսկ դուք ինձ հարցրե՞լ եք,— գոչում էր քույրս,— յես իմ համաձայնությունը տվե՞լ եմ ամուսնության համար։ Դուք կարծում եք՝ ինձ հետ կարող եք վարվել այնպես, ինչպես վարվեցիք այն թեհրանցու աղջկա հե՞տ, որին հավատարմատարը բռնաբարեց և բռնությամբ ամուսնացավ հետը։

Վո՛չ, այդ ձեզ չի հաջողվի։

Ցես քրդուհի յեմ։

Ապա ձեռք տվեք ինձ։ Ցերդվում եմ Մոհամմեդի և բոլոր մարգարեների անուններով, որ առաջ ձեզ կսպանեմ, հետո ինձ, գոնե դրանով վերջ կտրվեն մեր դառն տանջանքներին։

Այդ րոպեյին քույրս սարսափելի յեր։ Թեև նրա անունը

Շիրին է, վոր նշանակում է «քաղցր», «քնքուշ» և ինքն էլ իրոք լիքն էր քնքուշությամբ, բայց այժմ նրա խոսքերը դառն էյին ինչպես մաղձ, դեմքը նման էր վորոտալից ամպերի։ Յեվ իսկապես ամպի պես էլ վորոտում է նրա ձայնը։

Փաստաբանն ու վոստիկաններն յետ գնացին։ Նրանք դիմեցին ինձ։

— Այս բոլորը քո սարքած բաներն են,— ասաց փաստաբանը։

Նրանք յերեքով թափվեցին վրաս, կռներիցս բռնեցին և քաշ տվեցին վոստիկանատուն։ Այնտեղ վոստիկանապետին պատմեցին յեղելության մասին, իսկ փաստաբանն էլ իր հերթին լրացրեց ամեն ինչ և ամբողջ մեղքը գցեց ինձ վրա։

Վոստիկանապետը հրամայեց ինձ ձերբակալել։ Ինձ նստեցրին մի մութ, խոնավ ու ցուրտ խցի մեջ։

Դառն վշտից յես գլուխս խփում էյի պատերին, ուզում էյի ազատվել իմ դառն տանջանքներից՝ վերջ տալ իմ վողորմելի գոյությանը։

Բայց բանականությունս,— կյանքիս ամենազոր այդ հրամայողը — խանգարեց, չթողեց իրագործել մտադրությունս և միտքս ուղղեց դեպի ապագան։

Բանականությունս ինձ հանգստացրեց և հիշեցրեց այն իմաստությունը, թե մարդս ամեն բանի ընտելանում է։ Ադամորդու հետ ինչ էլ պատահի, վերջը կանցնի։

Առանց ուտելու և խմելու տասներկու ժամ մնացի բանտում։ Հետո ինձ տարան հարցաքննության։ Իմ անմեղությունն ակներև էր։ Բարեբախտաբար հենց այդ պահին էլ մայրս յեկավ վոստիկանատուն։ Նա վոստիկանապետի վոտքերն ընկավ և կամացուկ նրա բուռը կոխեց հինգ թուման։

Ինձ արձակեցին։

Վոստիկանապետը հրամայեց փաստաբանին հայտնել, վոր ամուսնության վերաբերյալ գործով պիտի դիմել հոգևոր դատարան։ Վոստիկանությունը վորևե բան անել չի կարող։

Մորս հետ վերադարձանք տուն։

Յես սկզբից բարկացա Շիրինի վրա, վոր նա անզգուշություն թույլ տվեց վոստիկանների վերաբերմամբ, բայց հետո

գովեցի նրա քաջությունը և պատվի նախանձախնդրությունը և նույնիսկ համբուրեցի նրա աչքերը։

Այդ ժամանակ արդեն դրամական բոլոր միջոցներս սպառվել էին։ Ինչ որ խճուղու վրա աշխատել էի, բոլորը համարյա տվեցի արիկա «փաստաբանին»։

Քաղցած էի. գնացի շուկա, որ մի բան առնեմ ուտելու համար։ Շատ դես-դեն ընկա, ոչինչ չճարեցի։

Հոգնած, տանջված ու քաղցած՝ գնացի մեջիդ, նստեցի մի անկյունում և սկսեցի դառնորեն լաց լինել ու վողբալ իմ ծանըր ճակատագիրը։

Ես այդ րոպեյին յետ նայեցի, տեսա իմ յետևում մի մարդ է կանգնած։ Նա մի քիչ կռացած էր դեպի ինձ, շշուկով խոսում էր հետս, մխիթարում էր ինձ, համոզում էր, որ լաց չլինեմ։

— Պատմիր ինձ տեսնեմ, ի՞նչ է քո դարդը,—ասաց այդ մարդը։

Ես գլուխս բարձրացրի։ Իմ առաջ կանգնած էր մի բարի ու հեզահամբույր մարդ, որի դեմքի վրա ես կարդացի կարեկցություն և բարություն։ Նրա հագինը հին, մաշված յեվրոպական հագուստ էր։

Ես նրան պատմեցի իմ բոլոր արկածները։

Նա ինձ մեծ ուշադրությամբ լսեց և երբ ես վերջացրի պատմությունս, նա նորից ինձ սկսեց հանգստացնել և մխիթարել։

Նա նստեց կողքիս և ինքն էլ իր հերթին պատմեց իր արկածները։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՇԱՀԶԱԴԵ ՄԱԶԼՈՒՄ ՄԻՐԶԱՅԻ ԿԱՄ ՃՆՇՎԱԾ, ՀԱԼԱԾԱԿԱՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Սկզբից նա հարցրեց իմ անունը։

Ես ասացի։ Նա ծանր հառաչեց ու ասաց.

— Իմ անունը... Բայց ո՛չ, ես քեզ չեմ ասի իմ իսկական անունը։ Ենթադրենք, թե իմ անունն է Մազլում Միրզա։ Դա հարմար անուն է, քանի որ իրոք ճնշված ու անբախտ

մարդ եմ, և յերկրորդ՝ յես ծագել եմ յերևելի տոհմից, վորի անդամներն իրավունք ունեն իրենց անվանը կցել «միրզա» բառը, վորովհետև մեր նախնիքները էմիրներ ու շահեր են յեղել։ Յես շահզադե յեմ—շահերի շառավիղ։

Բայց բանն այդ չէ, այլ բոլորովին ուրիշ բան։ Յես նույնպես մի ճնշված մարդ եմ, ինչպես և դու։ Յես էլ եմ տանջվել այնպիսի մարդկանց պատճառով, ինչպես և դու։

Նարճ ժամանակ սրանից առաջ յես էլ բախտավոր եյի և ուրախ։ Ապրում եյի կնոջս ու յերեխաներիս հետ խաղաղ ու հանգիստ։ Իսկ այժմ... Ե՛հ, ի՛նչ ասեմ... Գուցե ինքս եմ մեղավոր, վորովհետև այս բոլորի սկիզբը յես դրեցի։

Ինչպես յեղավ, մի անգամ գիշերը, յես կնոջս հետ կռվեցի։ Յես նրան վիրավորեցի։

Մենք առաջ էլ եյինք կռվում, բայց յեր բոլոր վեճերն ու կռիվները շուտով մոռացվում եյին։ Ե՛հ, վո՞րտեղ չեն կռվում մարդ ու կին։ Բայց այս անգամ վիրավորանքը շատ խորն եր։ Յես կնոջս ծեծեցի ու խոսքերով վիրավորեցի։ Յես արդարացի չեյի, վորովհետև իմ կինն ազնիվ ու մաքուր կին եր և շատ արժանիքներ ուներ։ Բայց վիրավորանքն այնքան դեր չխաղաց, վորքան այն, վոր վատ ու անպիտան մարդիկ խորհուրդ տվին կնոջս՝ դատարան դիմել և բավարարություն պահանջել ինձանից։ Կինս լսելով այդ սադրանքներին դիմում ե դատարան։

Դե հիմա լսիր, թե այնուհետև ինչ ե լինում։

Կինս գնում ե դատախազի գրասենյակը և պատմում ե նրան մեր միջև տեղի ունեցած անցուդարձի մասին։

Դատախազը-Սեյիդ Հասանը կամ Սեյիդ Հուսեյինը, մարդկանց բարքերի վրա արթուն դիտողն ու հետևողը, հասարակական անդորրության նախանձախնդիրը, բայց փաստորեն գայլ գառան մորթով, մարդ ե ուղարկում հետևիցս, կանչում ե ինձ իր մոտ և առանց վորևե հարցաքննության հրամայում ե կալանավորել ինձ։

Մի քանի ժամից հետո կնոջս կանչում ե իր առանձնասենյակը և իմ բացակայությամբ հարցաքննում ե նրան։ Այնուհետև քննիչ-դատախազը հայտնում ե կնոջս, վոր ժամը մեկին գալու յե տուն և քննություն ե կատարելու հան-

ցանքի տեղում, գործի հանգամանքներն ավելի լավ պարզելու համար։

Հետո ինձ են կանչում քննության։ Երբ ես մտա գրասենյակ, քննիչն իր առանձնասենյակում չէր։ Նույն րոպեին ղատախազություն եկավ մի անծանոթ կին։ Իր արտաքինով ու կեցվածքով նկատելի էր, որ այդ կինը մի ազնիվ, պատվավոր կին է։ Նա եկել էր իր ազգականների դեմ գանգատվելու։ Առանձնասենյակում նստած էր «մունշի»—գործավար—սեյիդը, որն ինձ կալանավորեց։ Սեյիդը հրամայեց ինձ գրասենյակից դուրս գալ։

— Գործը վերաբերվում է կնոջ պատվին, ուստի նրա հարցաքննությունը պիտի կատարվի առանձին և խոր գաղտնապահության կանոններով,—ասաց սեյիդը։

Նա կնոջն առաջնորդեց սենյակներից մեկը և դուռը բանալիով փակեց։

Գրասենյակի ծառան մոտեցավ դռանը և բանալու անցքով ներս նայեց...

Ծառան ձեռքերով խփում էր գլխին։ Ես գլխի ընկա, թե ինչ էր տեղի ունենում սենյակի ներսը, թե ինչպես էյին խաղում կնոջ պատվի հետ պաշտոնական հիմնարկության մեջ։

Երբ կինը դուրս եկավ «քննությունից», նրա շորերն ու գլխի չադրան անկանոն վիճակի մեջ էյին։ Ծառան նրան ինչ որ նշաններ էր անում։ Ամեն ինչ ցույց էր տալիս, որ ես սխալված չէյի։

Այնուհետև եկավ քննիչը։ Կանչեց ինձ և մի անմիտ հարցաքննություն սկսեց։ Հետո նորից ինձ բանտ տարան։ Ես յոթն օր նստեցի։ Շարունակ մտածում էյի կնոջս ու երեխաներիս մասին, թե արդյոք մի բան չի՞ պատահել իմ բացակայության ժամանակ։

Վերջապես ինձ արձակեցին։

Երբ տուն վերադարձա, կինս բաղնիսում էր, տանը մնացել էր միայն մեր պառավ ծծմայրը։ Ես պահանջեցի, որ նա պատմի այն անցուդարձի մասին, ինչ որ կատարվել է մեր տանը իմ բացակայության ընթացքում։

Սկզբից ծծմայրը հերքեց, որ ոչինչ չի պատահել, որ կյանքն ընթացել է մեր տանը սովորական կարգով՝ առանց որևէ արտակարգ դեպքի։

Յես կարծես չհավատացի ծծմոր հավաստիացումներին։ Իմ մեջ ուժեղ տարակուսանք կար, ուստի յես ստիպեցի ծծմորը, վոր նա առանց թաքցնելու ասի վողջ ճշմարտությունը, քանի վոր նա փոխարինել է հարազատ մորս, կերակրել է ինձ իր կաթով, գուրգուրել, փաղաքշել է ինձ վորդու պես, ապա ուրեմն ինձնից վոչինչ չպիտի թաքցնի։

Ծծմայրս պատմեց հետևյալը.—

— Քեզ կալանավորելուց հետո քննիչը յեկավ մեզ մոտ, մի հասուն տղամարդ, նրա հետ մի ֆառաշ և մի մոլլա։

Քննիչը խանումին մի քանի հարցեր տվեց, իսկ նրանից հետո սկսեց սիրաբանություններ անել խանումի հետ։

Այնուհետև քննիչը հայտարարեց պաշտոնապես, վոր «տեղում կատարվելիք քննությունը, վորը վերաբերում է կնոջ պատվո խնդրին, լիակատար գաղտնիք է պահանջում»։ Հրամայեց ֆառաշին կանգնել դռների մոտ, մոլլային կարգադրեց հսկել բակում, իսկ ինքը խանումի հետ մնաց սենյակում։

Մի ժամից հետո քննիչը բաց արեց դռները, դուրս յեկավ ու գնաց։ Յես իսկույն ներս վազեցի, տեսա խանումին գունատ, սփրթնած, տեղաշորը փռած հատակին, անկարգ ու խառն դրության մեջ։

«Յես արդեն հասկացա բոլորը, թե ինչ է կատարվել։ Խանումը տեսավ, վոր յես ամեն բան գիտեմ, սկսեց լաց լինել։ Փաղաքշեց ինձ, խնդրեց, աղաչեց, վոր այդ բոլորը գաղտնիք պահեմ և վոչ վոքի չհայտնեմ։ Յես ել, ի հարկե, վոչ մի կերպ չեյի ասի, չեյի տարածի այս բանը, բայց չէ՞ վոր դու համարյա իմ հարազատ զավակն ես, քեզնից ինչպես թաքցնեմ։

Հետևյալ որն դատախազն յեկավ մեզ մոտ։ Նա մենակ եր։ Գալուն պես խանումին սկսեց հանդիմանել։

— Այստեղ, ձեզ մոտ քննություն կատարելն իմ պարտականությունն եր։ Ի՞նչ հիման վրա այդ հասա հիմարը, այդ քննիչը խառնվում է գործին։ Դա ապօրինի բան եր։ Ինչու, տիկին, դուք նրան չհակառակեցիք։

Խանումն ասաց.

— Ի՞նչպես կարող եյի հակառակել դատարանի պաշտոնական ներկայացուցչին, չէ՞ վոր դրանով կարող եյի մեղադրանք հարուցել իմ դեմ իշխանության դիմադրություն ցույց տալու

համար։ Նրանք յերկար խոսեցին։ Դատախազը դեռ յերկար ժամանակ նստած եր խանումի սենյակում»։

Աշխարհը գլխիս մթնեց, յերբ լսեցի իշխանության նմանորինակ գործողությունների և արարքների մասին։ Ավտոմեքենա վարձեցի, բավականաչափ դրամ վերցրի և սլացա մայրաքաղաք՝ արդարություն փնտրելու։ Թեհրան հասնելուս պես՝ գնացի մինիստրների, դատավորների մոտ ու ամեն տեսակ հիմնարկություններ, բայց ինչ մինիստրություն վոր գնում եյի, ամեն տեղ յես տեսնում եյի միապետական նախկին ծառաներին—Վոսուղ-Եդ-Դովլեյի, Կավամ-Ես-Սալթանեյի, Մուշիր-Եդ-Դովլեյի և Մուստուֆի-Ոլ-Մեմալեքների նմաններին[1])։

Վոչ միայն մինիստրներն եյին այդպես, այլև նրանց շրջապատող պետական բոլոր գործիչներն էլ նույն հին ռեժիմի սրիկաներն եյին։

Թեհրանում, խելագարի պես, այս ու այն կողմ եյի վազում։ Բողոքում եյի, զայրանում, միջամտություն խնդրում, աղաչում եյի օգնել ինձ, բայց վոչ վոք ուշք չեր դարձնում բողոքներիս վրա։

Ինձ ամեն տեղ ասում եյին.

— Ապացույցներ են պետք։ Դուք պիտի ճիշտ ապացույցներ տաք կնոջ անհավատարմության, դավաճանության կամ կնոջը բռնաբարելու վերաբերմամբ։

Յես վորոշեցի մի կերպ ինձ գցել Մեջլիս[2])։ Ձեռք բերի մուտքի տոմս, գնացի ժողովրդական ներկայացուցիչների ժողովին այն հույսով, թե գոնե այստեղ հաջողություն կունենամ։

Ինքս ինձ ասում եյի.

— Իհարկե, արդարադատությունը միայն այստեղ է։ Միայն այստեղի մարդիկ ինձ կհասկանան։ Նրանք լավ են հասկա-

---

1) Հայտնի պետական գործիչների տիտղոսներն են, վորոնք մնացել են հին ֆեոդալական ժամանակներից։

2) Մեջլիս-Ե-Շուրայի-Մելլի—«Ազգային խորհրդակցական ժողով»—Իրանական պարլամենտ, վորը հիմնվեց 1906 թվին Իրանում բռնկված ազատագրական շարժման հետևանքով։ 1908 թվին Մամեդ Ալի շահը ցարական գնդապետ Լյախովի օժանդակությամբ ցրեց այդ պարլամենտը, վորը հետո 1909 թվին նորից բռնկված հեղափոխությամբ վերականգնվեց՝ վերջնականապես գահընկեց անելով Մամեդ-Ալի շահին։

նում, որ այսպես շարունակվել չի կարող, որ այդպես ապրել չի կարելի։

Ի՞նչ տեսա յես Մեջլիսում։

Մեջլիսը լիքն էր նույն մարդկանցով, նույն սեյիդներով, ախունդներով, մոլլաներով, նույն հարուստներով ու հին ռեժիմի հլու հնազանդ սպասավորներով։ Այնտեղ նստած էյին նույն հին մարդիկ, վորոնք դարեր շարունակ տզրուկի պես ծծել են պարսիկ ժողովուրդի արյունը, ճարպակալել, հարստացել են նույն ժողովրդի արյուն-քրտինքով։

Ռուսոֆականներ, վորոնք ժողովրդին պահում են խավարի, տգիտության ու բարբարոսության մեջ. որենսդիրներ, վորոնք հենց իրենք են խախտում և արհամարհում որենքը. պարսիկ ժողովրդի կուլտուրական առաջադիմության ղեկավարներ, վորոնք թույլ չեն տալիս ժողովրդին վերջ տալու արաբականության խավար հասկացողություններին։ Ժողովրդի կեղծ պաշտպաններ, վորոնց ձեռքին է հենց տնքում ժողովուրդը։ Իրանի շինարարներ, վորոնք բացի քանդելուց՝ վոչինչ չեն անում։ «Արդարադատության համար պայքարողներ», վորոնք իրենց գոյությունը պահպանում են բռնությամբ ու ճնշումներով։ Պերճախոս հռետորներ, բայց իրոք գեղեցկաբարբառ շողոքորթներ, վորոնք ոտարերկրացիների առաջ ստորաքարշություն են անում՝ միայն իրանց անձնական շահերի համար։

Ահա դրանք էյին նստած մեջլիսում։

Եվ ի՞նչ կարելի յեր սպասել։ Հենց այդ է մեր բոլոր դժբախտությունների աղբյուրը։ Մեջլիսումն է, վոր ստեղծվում են բոլոր կաբինետները և արդարադատության որգանները։

Մեջլիսում կարդացին դիմումս և ասացին.— դիմեցեք կենտրոնական դատախազության։

Ինչպես ասում են—«Ջուր տափից վերցրին, ցեխի մեջ նստեցրին»։

Նորից գնացի, դես ու դեն ընկա։

Շատ դես ու դեն վազեցի. այնուամենայնիվ ինձ չուզեցին լսել։

Վերջիվերջո, այդքան վազելուց և դես-դեն ընկնելուց հետո, առանձնասենյակից-առանձնասենյակ մտնելով, ահագին ծախսեր անելով, անախորժություններ կրելով, վոչինչ չշահեցի իրանական

արդարադատությունից և տանջված ու խոշտանգված, անպատ-
ված ու ծաղրված՝ յես հեռացա Թեհրանից։

Մի բան էլ վոր յես շահեցի, դա այն եր, վոր դատախա-
զին յետ կանչեցին մեր քաղաքից, բայց իսկույն և յեթ նրան
նշանակեցին Իրաքում նույն պաշտոնի մեջ։

Սակայն այդ ամենի հետ յես շատ բան իմացա։ Ամենա-
գլխավորն այն է, վոր այդ բոլոր զարշանքների և նողկալի ա-
րարքների կենտրոնը Թեհրանն է։

Ո՛, նա բոլորովին նման չէ մյուս յերկրների կենտրոն-
ներին—Լոնդոնին, Փարիզին, Բեռլինին, Ստամբուլին, Մոսկվա-
յին, Լիսաբոնին, և մյուս մայրաքաղաքներին։ Պետության
կենտրոնը նման է օրգանիզմի սրտին, վորը արյան հզոր հո-
սանք է մղում մարմնի բոլոր մասերը։ Յեթե սիրտն առողջ է,
արյան հոսանքն էլ համաչափ է կատարվում, սնում է ամբողջ
մարմինը, թափանցում է նրա բոլոր անկյունները, բուժում է
վերքերը, վերականգնում, ամրացնում է հյուսվածքները։ Այդպես
էլ գործում և աշխատում է վարչությունը, վորն ստեղծում է
քաղաքակրթական բարձր արժեքներ։

Իսկ մեր թույլ, հիվանդ սիրտը—Թեհրանը մղում է մեր
մարմնի բոլոր մասերը միայն վարակ և ամեն տեսակի հիվան-
դություններ և օր ավուր ավելի ևս քայքայում է առանց այն
էլ հիվանդ մարմինը։

Ինչպե՜ս յես սխալված եմ յեղել, յերբ մխիթարում եյի ինձ
այն մտքով, վոր մենք պառլամենտ ունենք։ Ունենք մինիստր-
նախագահ, ներքին ու արտաքին գործոց, լուսավորության և
արդարադատության և ուրիշ-ուրիշ մինիստրություններ. և վոր
ամենից գլխավորն է, ունենք ժուռնալիստներ, կուսակցու-
թյուններ, առաջնորդ—ղեկավարներ։ Այժմ, յերբ ամեն ինչ տե-
սա իմ սեփական աչքերով, յես հիմա գիտեմ, վոր այդ բոլորը
հոգևոր և աշխարհիկ պորտաբույծ-ձրիակերներ են, վորոնք Ղա-
ջարների տիրապետության օրոք նստել եյին ժողովրդի վզին,
աշխատավորության նույն թշնամիներն են, բանվորության և
ամբողջ ազգի թշնամիները, միայն դիմակները փոխած։

Այդպես է յեղբայր։ Յեվ յեթե այդպես է, այլևս դու վոչինչ
չես կարող անել։ Գնա գլուխ տուր աղայիդ և միայն նրանից
պաշտպանություն խնդրիր։

Վերցրու այնքան, վորքան նա կբարեհաճի քեզ տալ, ու դրանով վերջացրու հաշիվները։ Կարճիր գործը և ձեռք քաշիր բոլոր խարդախ մարդկանցից, վորոնք արդարադատության յերդվյալ պաշտպաններ ու ջատագովներ են կոչվում։ Լավ իմացիր, վոր Իրանում միշտ բռնությունն ու կամայականությունն են հաղթանակ տանում արդարադատության վրա։ Չես լսի ինձ, քո բանը վատ կլինի։ Ո՞ւմից ես լավ բան սպասում։ Կյանքիցդ էլ կզրկեն քեզ, խելքդ վո՞րտեղ է։

Սրանով վերջացրեց իր պատմությունը Մազլում Միրզան։

Յես խելքս տվի, տեսա, վոր նա ճիշտ է ասում։ Դա շատ իմաստուն խորհուրդ էր, վոր նա տվեց ինձ։ Յես շնորհակալություն հայտնեցի Մազլում Միրզային, ձեռքը համբուրեցի և գնացի։

Ուղիղ գնացի աղա սեյիդի տունը։ Մտա նրանց գոմը, վորտեղ կապած էր նրանց էշը։ Ընկա այդ էշի վոտները և բացականչեցի.

— Պաշտպանիր ինձ, աղա, վողորմած յեղիր։

Այսպիսով յես աղայի մոտ բեստ[1]) մտա և ինքս ինձ դրի նրա հովանավորության տակ։

Յես գիշերն անցկացրի գոմում։ Առավոտյան աղան վերադարձավ մզկիթից և մտավ գոմը։

Նա ինձ տեսավ, ասաց.

— Հը՛, Բախտիար, դատեցիր, դատվեցիր, հիմա ինձ մոտ բե՞ստ ես մտել

Ա՛խ, հիմա՛ր, հիմա՛ր տղա։ Կարծես թե չգիտեյիր, վոր այդ բոլոր դատարանները մեզ համար արժեք չունեն։ Ի՞նչ են այդ քո մինիստրները, յեթե վոչ մեր հովանավորյալները. Նրանք անում են այն, ինչ վոր մենք ենք թելադրում նրանց։ Շարիաթի բոլոր որենքներն էլ մեր ցուցմունքներով ու ցանկություններով են կազմվում, իսկ դու ուզում եյիր այդ որենքի ուժով փմ գույքը ձեռքիցս խլե՞լ։

---

1) Բեստ—միջնադարից մնացած «ապաստարանի իրավունքն է» վորը գոությունն ունեցավ մինչև 1925 թվականը, թեև մինչև հիմա էլ բոլորովին լուծարքի չի յենթարկվել։ Բեստ մտնելու համար վոչ միայն սրբազան տեղերն եյին ծառայում, այլև ազդեցիկ մարդկանց ախոռները, մանավանդ հոգևորականների ախոռները։

Ես բացականչեցի․

— Ներողությո՛ւն, աղա սեյիդ։ Ես մոլորվեցի... Կերա, ներիր ինձ, յես գլուխս քարին տվի... Ես հիմա կանեմ այն, ինչ վոր դուք ցանկանում եք։ Խղճացեք ինձ։ Խղճացեք ի սեր ձեր նախնիքների։ Չքավորության դուռն ընկա։ Բոլորն ինչ վոր ունեյի, ծախսեցի փաստաբանների ու դատարանների վրա։

«Արժանապատիվ» սեյիդը մի քիչ մորուքը շոյեց ու ասաց.

— Ե՛, Բախտիար, դու չգիտես, թե ինչ ասել ե սեյիդ։ Դու լսե՞լ ես Զիա-Եդդինի աղա սեյիդի մասին։ Նա մինչև իսկ մինիստրների խորհրդի նախագահ դարձավ։ Իրանական բոլոր յերեվելիներին ու մեծամեծներին բանտ նստեցրեց։

Նա ասում ե, վոր ժողովրդի և ամբողջ յերկրի դժբախտությունների պատճառը դրանք են։ Նա ուզում ե հենվել զորքի վրա, ուստի մյուսներից չի քաշվում կամ վախենում։ Բայց ինչ։ Այդ նրա կողմից մի անզգուշություն եր, վոր յերկրի զորավորներին, մեծամեծներին կալանավորեց, վորովհետև ինչել ասեն, նրանք մեր բարերարներն են։ Անմիտ բան եր նրանց կալանավորելը։ Դրանով Զիա-Եդդինը կտրեց այն ճյուղը, վորի վրա նստած եր ինքը։

Հիմա արդեն բոլորը խոսում են այն մասին, վոր Զիա-Եդդինը շուտով իր պոստից կթռչի։ Սակայն նա սեյիդ ե. և այն, վոր նա անուն հանեց, այդ բոլորը մեր ոգտին, մեր փառքին ու մեծարանքին ծառայեց։ Դու հասկանո՞ւմ ես։ Բոլորը մեր ոգտին։ Դե իմացիր։

Հիմա լսիր, Բախտիար, յես քեզ կտամ հարյուր թուման այն պայմանով, վոր քրոջդ հայցի բոլոր փաստաթղթերն ինձ հանձնես, այլապես տես, յես այնպես կանեմ, վոր քեզ այս տեղից կաքսորեն։

Ես ուրախությամբ համաձայնվեցի և նույնիսկ համբուրեցի աղայի ձեռքը։

Նա գրպանից հանեց մի թումանանոց թղթադրամ, ձեռքի մեջ կոլոլեց և տվեց ինձ։

— Վերցրու, — ասաց նա, — այսօր յերեկոյան կծախսես։ Վաղը քրոջդ հետ կգաս այստեղ, արձանագրություն կկազմենք, գործը կձևակերպենք, վորից հետո կստանաս մնացած իննըսունևինը թումանը։

Յես Նարից համբուրեցի աղայի ձեռքը և գնացի տուն։ Ճանապարհին մտածում եյի, վոր քսանչորս ժամ ե մայրս ու քույրս քաղցած են, յերևի կերակրվում են արցունքով։

* * *

Բանից դուրս յեկավ, վոր «փաստաբանս» ելի ձեռք չի քաշել մեզանից։ Նա գնացել ե դատախազի մոտ, նրա միջոցով քրոջս պահանջելու։ Դատախազն ել յերկու ֆառաշ ե ուղարկել, վոր քրոջս բռնի ուժով տանեն փաստաբանի տունը։ Ֆառաշները բռնել են Շիրինին և սենյակից քաշ են տվել բակը։ Նա առանց չադրայի յե յեղել։ Քույրս այդ անպատվությունը չի կարողացել տանել, վերցրել ե դանակը և ուզեցել ե կոխել իր փորը, բայց դանակի հարվածը վրիպել ե և խրվել ե մեջքը։ Արյունն սկսել ե ջրի պես հոսել։ Ֆառաշները թողել փախել են։

Յերբ յես բակը մտա, լսեցի մորս լացի ձայնը։ Անհանգըստացա, գլխի ընկա, վոր մի բան պատահել ե, ինձ գցեցի սենյակը և... Իմ թշնամին թող չտեսնի և չապրի այն, ինչ վոր յես տեսա ու ապրեցի։

Խեղճ քույրս պառկած եր գետնին համարյա առանց գիտակցության։ Դեմքը գունատ եր ձյունի պես։ Կարծես այլևս վոչ մի կաթիլ արյուն չկար նրա յերակների մեջ, այնպես եր արյունաքամ յեղել։ Մայրս ընկել եր նրա վրա, լաց եր լինում ու քրդական վողբի յերգեր եր ասում։

Վոչ մի բժշկական ոգնություն չկարողացանք հասցնել խեղճ քրոջս։ Վոչ մի դեղ ու դարման։ Վոչ մի ոգնություն ու մխիթարություն վոչ վոքի կողմից։ Կատարյալ մենակություն... Յես ել մորս կողքին նստեցի, ու մեր յերկուսի արցունքներն իրար խառնվեցին։

Այնուամենայնիվ հարկավոր եր մի բան անել։ Վեր կացա, գնացի շուկա, աղայի տված թումանով նավթ առա սենյակը լուսավորելու և մի քիչ ել ուտելիք բերեցի։

Բայց ո՞ւմ բերանով հաց կուլ կերթար։ Մայրս ու յես չեյինք հեռանում Շիրինից։

Կես գիշերին խեղճ քույրս արձակեց իր վերջին հառաչանքը և... ազատվեց կյանքի դառնություններից։

Այլես ի՞նչ պիտի անեյի։
Փող էլ չկար դագաղի և պատանքի համար։
Ի՞նչ անեյի, ում դիմեյի...

Նորից դիմեցի աղայի ոգնությանը։ Անմիջապես, հենց գիշերը, գնացի նրա մոտ և խնդրեցի ոգնել ինձ։ Նա խղճաց ինձ, իր բարեկամներից մեկին ուղարկեց, վոր գա և հոգս քաշի թաղմանը։

Անազգական, չքավոր քրդերի թաղման ծիսակատարությունը շատ հասարակ է։ Յերկու դագաղակիր, մեկ գերեզմանափոր և մի մոլլա։ Վաղ առավոտյան ամեն ինչ վերջացած եր։

Թաղումից հետո յես նորից գնացի աղայի մոտ։ Հետո ի հարկե, տարա այն թղթերը, վոր նա պահանջել եր, կնիքովս կնքեցի և հանձնեցի իրան։

Հենց այդ րոպեյին Նահանգապետի ֆառաշը մտավ աղասեյիդի տունը և ասաց.

— Ե՛յ, սեյիդ, փաստաբանը գանգատ է արել, վոր իբր կընոջ—այսինքն Շիրինի սպանության մեջ Բախտիարն է մեղավոր։ Նահանգապետը պահանջում է Բախտիարին։

Աղան զայրացավ։

— Անիծվածներ, անպիտաններ,— ասաց նա,— այս խեղճ մարդու քրոջն սպանեցիք, հիմա էլ ուզում եք սրա՞ն սպանել։ Այն աստիճան նողկալիության եք հասնում, վոր գալիս եք և մտնում իմ տո՞ւնը։ Իմ տունը ուղղափառների ապաստարան է։

Աղան մի լավ անպատվեց ֆառաշին և դուրս արեց։

Հետո աղան ինձ վճարեց յոթանասուն թուման։

—Այստեղ ես մնալու, թե հեռանալու յես քաղաքից,—հարցրեց նա ինձ։

— Չբարկանաս, աղա, յես վոչ մի կերպ այստեղ չեմ մնա, անմիջապես հեռանալու յեմ Համադանից,— ասացի յես։

— Ի հարկե քեզ այստեղ մնալ չի կարելի ասաց աղան,— քանի շուտ է աշխատիր հեռանալ այստեղից։

* * *

Յես մի ձի վարձեցի, մորս նստեցրի վրան և գնացի անգլիացոց խճուղային վարչությունը։

Հազիվ կես փարսախ ճանապարհ եյինք անցել, հանդիպեցինք մորաքրոջս ու իր աղջկանը, վորոնք Համադան եյին գնում։

Նրանք լսեցին մեզ հետ պատահած դժբախտության մասին։ Միասին սուգ արինք հենց ճանապարհի վրա և գնացինք։ Յես նրանց հարցրի, թե ինչո՞ւ նրանք գլխավոր ճանապարհով չեյին գնում, մի՞թե ճանապարհը վտանգավոր ե։ Չե՞ վոր զինվորական պոստեր կան ճանապարհի վրա։

— Հենց այդ ե, վոր մենք վախենում եյինք զինվորական պոստերից։

Այդ ճանապարհով կանայք առանց տղամարդու չեն կարող ապահով անցնել։ Բոլորին ել կանգնեցնում են, մի որ, յերկու որ պահում... Սայլատար ճանապարհով ավելի հանգիստ ե և ապահով։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԲԱԽՏԻԱՐԸ ԿՐԿԻՆ ԱՆՑՆՈՒՄ Ե ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հետևյալ որը փոխադրվեցինք Ասադաբադի մերձակա շըրջանը։ տեղավորվեցինք ճանապարհի վրա ընկած գյուղերից մեկում։ Գնացի անգլիական խճուղային վարչության գրասենյակը՝ նորից խճուղու վրա աշխատանքի մտնելու, բայց հենց այդ որերին ել լուր ստացվեց, վոր մինիստրների խորհրդի նախագահ Զիա Եդդինը անգլիացիների հետ կապած պայմանագիրը լուծել ե և պահանջել ե, վոր անգլիական զորքերը Իրանից հեռանան։

Դրանից առաջ ել միզ մոտ խոսում եյին, վոր ճանապարհի շինարարության աշխատանքները դադարելու յեն։ Շատ շուտով իսկական դրությունը պարզվեց։ Անգլիական զորքերը մաս-մաս սկսեցին հեռանալ։ Պարզ եր, վոր այլևս յես չեյի աշխատելու խճուղու վրա։

Մտածեցի նորից յերկրագործական աշխատանքով զբաղվել. մի զբաղմունք, վորով պարապել են իմ նախնիքները։ Դրանից ել լավ բա՞ն։

Սկսեցի պատրաստություն տեսնել։

Յերկու յեզ առա և սերմացու գնեցի։

Մտադիր եյի չսահմանափակվել միայն ցորենի վարուցանքով, այլ պարապել ավելի արդյունավետ և ժամանակակից ձևի յերկրագործությամբ։ Որինակ—զբաղվել խաշխաշի մշակությամբ, վորից ոպիում կամ թիրյաք են պատրաստում։ Ի հարկե խաշխաշն այնքան աշխատանք ու խնամք է պահանջում, վոր յեթե մենակ մարդն զբաղվի նրանով, յերեսի վրա պիտի թողնի իր տնտեսական մյուս բոլոր գործերը։ Սովորաբար խաշխաշի մշակությամբ զբաղվող գյուղացիք հատուկ մարդ են վարձում դրա համար։

Յես էլ մի մարդ գտա, վարձեցի նրան տարեկան քսան թումանով, բացի դրանից, պարտավորվեցի տալ սնունդը և հագուստը։

Սկսեցինք աշխատել։

* * *

Մեր անջատման ընթացքում մորաքույրս ու իր աղջիկը շարունակ աշխատելիս են յեղել խճուղու վրա մի քանի պարսիկ կանանց հետ միասին վորպես քար ջարդողներ։ Նրանց հաջողվել եր մոտ քառասուն թուման փող տնտեսել։

Ինչպես ա-աջ էլ ասել եյի, յես ու մորաքրոջս աղջիկը վաղուց նշանված եյինք, միայն չքավորությունը, անընդհատ անհաջողությունները ու դժբախտությունները թույլ չեյին տալիս մտածել ամուսնության մասին։

Վերջին ժամանակներս մայրս շարունակ խնդրում եր այլևս չհետաձգել պսակադրությունը։

— Յես արդեն ծերացել եմ,—ասում եր նա,—հազիվ եմ վոտքիս վրա կանգնում, ով գիտի, հետո տեսնեմ, չտեսնեմ ձեր հարսանիքը։

Յեվ իսկապես, խեղճ մայրս հազիվ եր կանգնում վոտքի վրա վոչ այնքան ծերությունից, վորքան քաշած ձախորդություններից ու հոգեկան տառապանքներից, մանավանդ Շիրինի մահը բոլորովին ջլատեց նրա վերջին ուժը։

Յես համաձայնեցի։

Անցանք ամուսնության պատրաստությանը։ Հարսնացուի համար պատշաճ հագուստեղեն առինք—մի զույգ կոշիկ, վոսկեգույն յեզրերով մեկ հատ գլխի թաշկինակ, մի տոպրակ հինա առինք մազերը ներկելու, յերկու կտոր ոճառ լվացքի համար, յերկու սիր ոճառի փոշի գլուխը լվալու համար։ Բացի դրանից, առինք յերկու բաթման բրինձ, մի բաթման յուղ, մի մսացու այծ, թեյ, շաքար, ևս մի գլուխ շաքար, կալվածատեր աղայի հյուրասիրության համար։ Մի խոսքով, առանք այն բոլորը, ինչ վոր հարկավոր ու անհրաժեշտ եր մի պատշաճավոր հարսանիքի համար։

Ուրբաթ որը հարսնացուիս հետ գնացինք Ասադաբադ ախունդի մոտ, յերկու ղռան վճարեցինք նրան, և նա ձևակերպեց ու վավերացրեց մեր ամուսնական դաշինքը—այսինքն՝ «աղըդը»։

Շաբաթ որը հարսին պիտի տանեյին բաղնիք, բայց մեզ մոտ—գյուղում, ինչպես և իրանական շատ գյուղերում, բաղնիք չկար։ Գոմում փոս փորեցինք, օջախ սարքեցինք, մի մեծ պղինձ ամրացրինք օջախի վրա, ջուր տաքացրինք, մի պղինձ ել սառը ջուր բերինք, և հենց այստեղ կանայք հարսին լողացրին և գլուխն ել հինա դրին։

Հետևյալ որը հարսին կրկին տարան նույն «բաղնիքը» և հինան վեր արեցին, աչքերն ու ունքերը սուրմայով քաշեցին և զարդարեցին նոր շորերով։

Մեր տանն ավելորդ սենյակ չկար, մեր միակ սենյակը պիտի տրամադրեյին ինձ ու նորահարսին, այդ պատճառով մայրս ու մորաքույրս այդ որը գնացին հարևանի տունը գիշերելու։

Ինձ ասացին, վոր մայրս փոխանակ ուրախանալու իմ պսակվելու առթիվ, այդ ամբողջ գիշերը լաց ե յեղել՝ հիշելով խեղճ նահատակ Շիրին քրոջս։

Հետևյալ որն ել լացով անցկացրեց մայրս։ Այսպիսով մեր հարսանիքը վողբով, լացով ու արտասուքով անցկացավ։ Սակայն ավելի վողբալի յեղավ մեր դրությունը, յերբ մայրս հիվանդացավ։

Ցերկու որ ու գիշեր խեղճ մայրս տանջվեց տենդից։ Մենք նրան ոգնել չկարողացանք։ Նա այլևս ուժ չուներ հիվանդության դեմ պայքարելու։ Ցերրորդ որը, շարունակ Շիրինի անունը տալով ու արցունք թափելով՝ մեռավ խեղճ

մայրս։ Նորից մեր տունը լցվեց լացով ու հառաչանքով։

Այս գյուղում մենք այնպես մենակ չեյինք ինչպես Համադանում։

Համարյա ամբողջ գյուղացիք—կանայք, տղամարդիկ—յեկան մեզ մոտ՝ իրենց կարեկցությունն արտահայտելու և մեզ մխիթարելու։ Նրանք մեզ օգնեցին ննջեցյալի թաղման հետ կապված սովորույթները կատարելու և մասնակցեցին հուղարկավորությանը։

Մենք տեղական միջոցներով պատգարակ շինեցինք փայտերից ու տախտակներից, մորս դին տեղավորեցինք նրա վրա, մի քանի հոգով պատգարակն առինք ուսներիս ու դիակը տարանք մոտակա առուն, այնտեղ լողացնելու։ Մորս լողացնելու եյին մորաքույրս ու գյուղի ծեր կանայք։

Հարկավոր եր սավան, կամֆորա և «սեդր» ծառի տերևից պատրաստած փոշի—պատանքի մեջ կարելու համար, բայց դըրանք մեզ մոտ չկային, մարդ ուղարկեցինք հարևան գյուղից բերելու, վորտեղ խանութ կար։

Կարգադրեցինք, վոր այնտեղից մի բաթման դոշաբ բերեն, դոշաբից կինս հալվա պատրաստեց, հալվան բաժին-բաժին փաթաթեց լավաշ հացի մեջ և մատուցարանով ուղարկեցինք պատգարակից առաջ տանելու, ինչպես արվում եր մեզնում սովորության համաձայն։

Առվի մոտ մորս լողացրին, օծեցին կամֆորայով և անուշհոտությամբ, վորից հետո պատանքը կարեցին, հանձնեցին կանանց պատանելու։

Նորից մենք, տղամարդիկս գործի կպանք։ Դիակը վերցրինք և փոխադրեցինք թաղման պատգարակի մեջ, վորը գյուղերում փոխարինում է դագաղին։

Յես ինքս եյի մորս վրա Նամազ կարդում։ Մորս դին տեղափոխեցինք գերեզմանատուն, վորտեղ մեր գյուղացիները վաղուց գերեզման եյին փորել մորս համար։

Վորպես ննջեցյալի ամենամոտիկ մարդը, ըստ սովորության, մորս դիակը յես գերեզման իջեցրի, հետո դուրս յեկա փոսից, վերցրի տախտակը և դրի մորս ուսատակը դարձյալ սովորության համաձայն։ Կարդում եյի արաբական աղոթք-

ներ, թաղման կարգը կատարում եյի Նեկերի ու Մոնկերի[1]) բոլոր հարցացուցակով, վորոնց մայրս պիտի պատասխաներ։

Հետո մի-մի բուռ «մոռացման հող» ցանեցինք գերեզմանի մեջ և ապա խմբով արտասանեցինք հավատո հանգանակը և վերադարձանք տուն։

Մորս հոգեհացի համար մի վոչխար առա, հարևաններից պղինձներ վերցրի, կերակուր պատրաստել տվի և հրավիրեցի գյուղի բոլոր տղամարդկանց քելեխի։ Հետևյալ որը նույնպես հոգեհաց պատրաստեցի և այս անգամ հրավիրեցի կանանց։ Քելեխը կերան, ինձ առողջություն ցանկացան ու ցրվեցին իրենց տները։

***

Մորս թաղումից հետո յես անցա իմ վար ու ցանքի աշխատանքներին։

Մոտս յեղած բոլոր դրամը ծախսվեց մորս թաղմանն ու իմ հարսանիքին, այլևս վոչ մի կոպեկ փող չունեյի։ Թեև այդպես աննախանձելի յեր իմ նյութական դրությունը, այնուամենայնիվ շատ չեյի մտահոգվում, խաշխաշի ցանքս շատ լավ եր բուսնել և լավ բերք եր խոստանում։

Հողի մնացած կտորը հերկեցի ծխախոտ ցանելու համար։ Ցորենի ու գարու ցանք ել ունեյի։ Այս հիման վրա յես առույգ և լավատես տրամադրությամբ եյի նայում ապագայի վրա և ներքնապես հանգիստ եյի։ Յես ամբողջովին նվիրվեցի ցանքերիս մշակմանն ու խնամքին։

***

Մեր գյուղում մի շատ լավ յերիտասարդ կար—անունը Հեյդար։ Նա ել ինձ հետ աշխատում եր խճուղու վրա. այդտեղից եյի ճանաչում նրան։ Բավականաչափ ել տնտեսած փող ուներ։ Այդ Հեյդարը սիրահարված եր քեթխուդի աղջկա վրա և

---

1) Մինչ իսլամականությունը, այսինքն արաբական հին հավատալիքով հանդերձյալ կյանքում մեռածին հանդիպում են Նեկեր և Մոնկեր հրեշտակները, վորոնք մեռածին հարց ու փորձ են անում նրա բարի և չար գործերի մասին։ Այդ հրեշտակներին հանդիպելիս՝ մեռածը հավատի վերաբերյալ հարցերին վորպես պատասխան արտասանելու յե մահմեդական դավանանքի հավատամքը։

ինչպես ցերեկում էր, նրանց մեջ վաղուց գոյություն է ունեցել այդ սերը, միայն գաղտնի կերպով։

Մի անգամ քեթխուդան, ինչպես է լինում, տեսնում է, թե ինչպես Հեյդարն ու իր աղջիկը սիրաբանում են իրար հետ. էլ չի համբերում, վրա յէ պրծնում և փայտով մի լավ ծեծում է թե տղային և թե աղջկանը։

Բայց բանը դրանով չվերջացավ։

Առավոտյան կալվածատիրոջ ծառան յեկավ գյուղը և քեթխուդին ու Հեյդարին տարավ աղայի մոտ։ Աղայի մոտ դրանց կալանավորում են, հետո յուրաքանչյուրից տասը թուման են բռնագանձում վորպես տուգանք «գայթակղեցուցիչ» վարքի և հասարակական անդորրությունը խանգարելու համար։

Վորքան էլ քեթխուդան ուզեցել է ապացուցել, վոր այդ յերիտասարդն իր փեսան է, լսել անգամ չեն ուզել։

Մի քանի որից հետո այդ դեպքի մասին լսում է նույնպես Ասադաբադի փոխնահանգապետը։ Նա մի ահեղ հրամանով յերկու ֆառաշ է ուղարկում գյուղ, վոր քեթխուդան ու Հեյդարն անմիջապես ներկայանան Ասադաբադ։ Ֆառաշներն այդ խեղճերի ձեռքերը կապեցին յետևներին, իրենց ձիերի առաջն արին ու քշեցին փոխնահանգապետի մոտ։ Գյուղից մի քանի հոգի, նրանց թվում և յես, նրանց յետևից գնացինք այն հույսով, թե մի գուցե Ասադաբադում կարողանանք դրանց մի կերպ ազատել։

Հեյդարին ու քեթխուդին անմիջապես բանտ նստեցրին, իսկ մենք գնացինք ֆառաշբաշու մոտ և վկայեցինք, վոր իրոք այդ յերիտասարդն աղջկա նշանածն է—քեթխուդի ապագա փեսան, և վոր նրանք վաղուցվա նշանվածներ են։

Ֆառաշբաշուն խոստացանք, վոր հարսանիքին իրեն էլ ենք հրավիրելու։—«Հինգ թուման էլ փող կտանք, միայն թե գնացեք փոխնահանգապետի մոտ և նրանց գործը դզեք»—ասացինք մենք։

Ֆառաշբաշին շատ դես-դեն ընկավ և վերջն այնպես արեց, վոր քեթխուդին ու Հեյդարին արձակեցին, բայց յուրաքանչյուրից բռնագանձեցին քսանական թուման՝ «կարգի խանգարման և գայթակղեցուցիչ վարքի համար»։ Բացի դրանից, հնգական թուման էլ բռնագանձեցին նրանց հետևից յերկու ձիավոր ուղար-

կելու համար, այնպես որ այդ «գործը» խեղճ քեթխուդի ու Հեյդարի վրա նստեց հիսուն թուման։

Խեղճ քեթխուդան այդ անախորժությունների վերջ տալու համար, անմիջապես իր աղջիկը տվեց Հեյդարին։ Այդպիսով աղայի ու փոխնահանգապետի ճնշումներն արագացրին Հեյդարի ու քեթխուդի աղջկա ամուսնությունը։

Այս միջանկյալ դեպքից հետո՝ յես նորից անցա խաշխաշի մշակման աշխատանքներին։

Հարկավոր էր խաշխաշը քաղհանել։

Մի քանի օր յես, կինս, մորաքույրս ու վարձված յերկու մշակները՝ առավոտից մինչև յերեկո աշխատեցինք, հազիվ կարողացանք արտը մաքրել մոլախոտերից։ Դրանից հետո մի եշ վարձեցի և սկսեցի պարարտանյութ կրել արտը։ Քանդված տների հողմնահարված հողը խառնում եյի մոխրի ու անասունների աղբի հետ ու կրում եյի արտը որպես պարարտացուցիչ նյութ։

Պարարտանյութը բահերով լցրինք բույսի արմատներին։

Խաշխաշն առհասարակ շատ ու ծանր աշխատանք պահանջող բույս է։ Կարծես խաշխաշ մշակելը յերկրագործություն չէ, այլ մի նուրբ ձեռագործ է, որը պահանջում է մշակողից նուրբ և մանրակրկիտ աշխատանք։

Յերեք անգամ քաղհանեցինք, հետո պարարտանյութ լցրինք, յերեք անգամ ջրեցինք, մինչև որ վերջապես խաշխաշը հասունացավ և յեկավ կտրելու ժամանակը։

Գեղեցիկ է խաշխաշի արտը ծաղկած ժամանակ։ Նրա կանաչավուն ցողունի վրա քամուց օրորվում են սպիտակ ու կարմիր բաժակներն ու ծաղկեպսակները։ Գեղեցիկ է նա նույնպես այն ժամանակ, յերբ քամին թափում է պսակաթերթերը, իսկ բաժակները տարուբերվում են. կռանում են հյութով լցված և իրենց հետ կռացնում են բույսի ցողունը։

Սակայն դրանից հետո էլ, դեռ շատ ծանր աշխատանք է պահանջում մինչև բերքահավաքը։

Այդ ժամանակ, սովորաբար, դանակավաճառներ են գալիս գյուղերը՝ խաշխաշի մշակման համար անհրաժեշտ գործիքներ վաճառելու։

Յես էլ մի քանի հատ ատամնավոր դանակ ընտրեցի, մի քանի հատ էլ հարթ բերանով դանակներ վերցրի, որոնցով

խաշխաշի բաժակների վրա կտրվածքներ են անում․ Գնեցի նույնպես խաշխաշի հյութը հավաքող գործիքներից չորս հատ։ Այս բոլորից հետո յերկու փորձված մարդ վարձեցի, վորոնք պիտի հյութը հավաքեյին։

Հետևյալ օրը պիտի սկսեյինք կտրվածքներ անել։ Հենց այդ օրը, հանկարծ գյուղն յեկավ վերահսկիչ մի պաշտոնյա յերկու հետևակ զինվորների հետ միասին։ Նրանք ուղղակի գնացին քեթխուդի մոտ։ Մենք էլ մի քանի հոգով շտապեցինք այն կողմը, իմանալու, թե ինչու յեն հյուրերը շնորհք բերել։

Նրանք ճաշեցին, թեյ խմեցին, թիրյաք ծխեցին և այնուհետև պաշտոնապես հայտարարեցին, վոր իրենք յեկել են խաշխաշի ցանքերը չափելու և ստուգելու։

Պահանջեցին մի մարդ նշանակել իրենց հետ, վոր նա մեկ-մեկ ցույց տա խաշխաշի ցանքերը և անվանի ցանքատերերի անունները։

Գյուղացիք վախենում եյին դրանցից։ Յես վորպես գրագետ մարդ, նոր կարգերից քիչ-միչ բան հասկանում եյի, այնպես վոր առանձնապես այդ յեկողներն ինձ համար սարսափելի չեյին։

Վերահսկիչին ու զինվորներին յես իմ աջակցությունն առաջարկեցի այդ գործում։ Հետներս վերցրինք նաև քեթխուդին ու դուրս յեկանք դաշտը։ Վերաստուգիչը մեկ-մեկ քայլերով չափում եր ցանքերը և նշանակում տետրակում։ Այդ աշխատանքը տևեց մի քանի ժամ։ Հետո յերբ վերադարձանք գյուղ, նա իր դիտողությունները հայտնեց։ Ցանքերի հաշվառումն ու ցուցակագրությունը բացարձակապես սխալ կատարեցին և անարդար․ օրինակ—մի հողաբաժին, վորը մշակել եյին յերկու հոգի ընկերովի, նա հաշվում եր յերկու հողաբաժին։ Գյուղում ընդամենը տասը հողաբաժին կար, իսկ այդ սրիկա վերահսկիչը դուրս բերեց յերեսուն հողաբաժին և յուրաքանչյուրից յերկուական ղռան պահանջեց։

Յես առաջ յեկա ու ասացի․

—Ցույց տվեք խաշխաշի վերաբերյալ բոլոր կանոններն ու կառավարական վորոշումները, իսկ մենք օրենքի համաձայն կվճարենք, ինչ վոր պարտավոր ենք վճարելու, այլապես կերթանք Ասադաբադ և կբողոքենք ձեր դեմ։

Զինվորներից մեկը հայհոյեց ինձ, ձեռքը տարավ գրպանը, մի թուղթ հանեց և մեկնեց ինձ.

— Ա՛ռ, կարդա,— ասաց նա,— մենք հո բաներ չենք հնարում մեզնից։

Ես կարդացի թուղթը։

Այդ թուղթը Ասադաբադի զինվորական ջոկատապետի գրությունն էր, որտեղ գրված էր.

— «Շարքային զինվոր Շուքյուրուլլային, դուք գործուղվում եք վերահսկիչ Մահմուդին ուղեկցելու, որը գնում է շրջանները՝ խաշխաշի ցանքերն ստուգելու։ Յուրաքանչյուր հողաբաժնից վերցրեք յերկուական ղռան»։

Ամիս, ամսաթիվ, ստորագրություն։

Ես սկսեցի առարկել։

— Պարոն Շուքյուրուլլա,— ասացի յես,— դա ջոկատապետի հրամանն է, իսկ մենք ուզում ենք, որ մեզ ցույց տաք Իրանի ժողովրդական ներկայացուցիչների խորհրդի որոշումը։

Եվ հանկարծ, այդ Շուքյուրուլլան, որի անունը նշանակում է «փառք աստծու», այդ փառքից փոխվեց անեծքի. միանգամից գազանացավ, կատաղեց, կոպիտ հայհոյանքներ տվեց ինձ և հրացանի կոթով հարձակվեց վրաս։

— Ախ դո՛ւ, քո ըսենց-ընենցը,— ասաց նա,— ուրեմն դու ջոկատապետի հրամանը չե՞ս ճանաչում, ուրեմն դու ներկայացուցչական ժողովի հրամանն ավելի բարձր ես համարում քան նրա՞նը։

Նա որքան ուժ ուներ, բռունցքով մի քանի անգամ ինձ խփեց, հետո հրացանի մեջ փամփուշտ դրեց, մի քանի քայլ յետ գնաց ու նշան բռնեց վրաս։

Քեթխուդան ու գյուղացիներն իսկույն ընկան նրա ոտները, համբուրեցին նրա ձեռն ու ոտը, խնդրեցին ներել և ասացին, որ այո, ինքը ճիշտ է, այս քուրդ տղան ղալաթ է անում։

Բանը վերջացավ նրանով, որ ինձնից մի թուման տուգանք առան, իսկ յուրաքանչյուր հողաբաժնից այնուամենայնիվ յերկուական ղռան ստացան և այդպիսով ամեն բան խաղաղվեց։

Այդ զինվորը հետևակ էր. նրան չէր թույլատրվում ձիով

ճամբա գնալ, բայց վորովհետև նա այժմ ճանապարհ էր գնում վորպես գործուղված, նրան ձի ունենալն անհրաժեշտ էր։ Քեթխուդի լախեն հավաքեց։ Պահանջեց նրա հղի մատակ ձին և վորահսկիչի հետ գնաց ուրիշ գյուղ։ Քեթխուդան նրա հետ մի մարդ ղրկեց, վոր այնտեղից ձին վերադարձնի։ Ցերկու որից հետո նա ձին յետ ստացավ, բայց ձին նման չէր առաջվա ձիուն, խեղճ կենդանին կմախքացել էր, փորը փոքրացել էր, վորովհետև վիժել էր։

*
* *

Խաշխաշի կտրվածքներն անելու ժամանակը հասել էր։ Մենք սկսեցինք զբաղվել այդ աշխատանքով։

Մենք մտնում եյինք խաշխաշի տնկարանը որվա ամենաշոգ ժամանակը և կիզիչ արևի տակ, գլուխներս կռացրած, կտրվածքներն անում եյինք և այնուհետև թողնում եյինք արևին՝ շարունակելու մեր աշխատանքը։ Կտրվածքներից կաթնանման հյութը դուրս էր ծորում և արագորեն էլ ստանում էր դեղին գույն, հետո նա թունդ գույն էր ընդունում և միաժամանակ թանձրանում էր։ Ցերեկոյան դեմ արևից ջերմացած դաշտը կարծես բուրում էր հաշիշի դառնավուն-սուր հոտով։

Առավոտյան տնկարան եյինք գալիս արևի ճառագայթները գետինն ընկնելուն պես։

Նախընթաց որն արված կտրվածքների շուրջը ծածկված էր լինում թանձր, մուգ-դեղին, համարյա շականակագույն խաշխաշի հյութով, վորը մենք զգուշությամբ հավաքում եյինք թիթեղի բահիկներով, այնպես, վոր մի կաթիլ անգամ չթափվի գետնին։

Այդպես հավաքում եյինք խաշխաշի հյութը կամ «շիրան», ամաններով տանում եյինք կալվածատիրոջ ծառայի մոտ, նա ընդունում էր այդ որվա բերքը, ամանների բերանը կնքում էր իր կնիքով և նորից պահ էր տալիս մեզ։

Ամբողջ որն այսպես չարչարվելուց հետո էլ գիշերները պիտի հսկեյինք, վոր գողերը չգան և չթռցնեն տնից թիրյաքը։

Այդ բոլոր աշխատանքներից զատ՝ յես որվա մեջ մի քանի ժամ էլ նվիրում եյի ծխախոտի ցանքին։ Իմ վարձած մար-

ղըն տաւավտանները յեղները լծում էր ու գնում վար անելու, իսկ յերեկոյան ցորենի ու գարու արտերն էր ջրում։

Մի տաս-տասներկու օրից հետո խաշխաշի «շիրայի» հավաքումը վերջացավ։

Շուտով կալվածատիրոջ ծառան գյուղն ընկավ և հայտարարեց, վոր աղան հրամայել է Թիրյաքը տանել իր մոտ, վերահսկիչն ու ոպիումի վարչության պաշտոնյաներն էլ այնտեղ են լինելու։

Թիրյաքի բաժանքն այնտեղ պիտի լինի։

Բոլոր գյուղացիները, ովքեր Թիրյաք ունեյին, թեկուզ շատ չնչին քանակությամբ, վերցրին իրենց ամաններն ու ճամբա ընկան դեպի կալվածատիրոջ գյուղը, վորը գտնվում էր մեր գյուղից կես փարսախ հեռավորության վրա։ Մեղնից առաջ ուրիշ գյուղերից էլ շատերն եյին յեկել իրենց Թիրյաքներով։

Բաժանքն արդեն կատարվում էր։

Կալվածատերն աշխատում էր այնպես բաժանել Թիրյաքը, վոր գյուղացին իր բաժինն էլ թողնի կալվածատիրոջն ունեցած պարտքի փոխարեն և դատարկ ձեռքով վերադառնա տուն։

Մարդ պիտի տեսներ, թե Թիրյաքի բաժանման ժամանակ ինչ խարդախություններ եյին բանեցնում, ինչպիսի կեղծ կշռաքարերով եյին կշռում

Գյուղացիները իրենց Թիրյաքը կնքած ամաններով սկզբից հանձնում եյին կալվածատիրոջ ծառային, վորի ձեռքով էլ կատարվում էր բաժանքը աղայի և մյուսների ներկայությամբ։ Ծառան յուրաքանչյուր ամանից մեկական գդալ վերցնում էր հարկահավաքի օգտին, մեկական գդալ զինվորի և վերահսկիչի օգտին, կես-կես գդալ վերցնում էր կշռելու համար՝ կշռողի օգտին, քառորդական գդալ գործակատարի օգտին, մի քիչ էլ՝ խոհարարի օգտին, մի քիչ էլ ավագ սպասավորի օգտին։ Ամանի հատակին մնացած կամ կողերին կպած Թիրյաքի մնացորդը տալիս եյին կարիքավոր մեկին, վորպեսզի նա էլ ամանը մաքրի։

Ի վերջո այնպես էր դուրս գալիս, վոր կալվածատեր աղան փոխանակ բերքի $\frac{1}{3}$ մասն առնելու, $\frac{2}{3}$ մասը գյուղացուն թողնելու, հակառակն էր ստացվում, գյուղացուն մնում էր միայն բերքի $\frac{1}{3}$ մասը։

Ինչպես քեզ առաջ պատմեցի, կալվածատերն աշխատում էր պարտապան գյուղացիներից վերցնել նրանց ամբողջ թիրյաքը և դրա համար այնպիսի գներ էր սահմանում թիրյաքի համար, վոր գյուղացին իրեն հասանելիք մասն էլ թողնում էր կալվածատիրոջը և դատարկաձեռն վերադառնում էր տուն։

Բանն այն է, վոր ովքեր պարտք չունեյին, նրանք էլ չեյին ազատվում կալվածատիրոջ ձեռքից։ Գյուղացին հնարավորություն չուներ ազատ կերպով իր թիրյաքը վերցնելու և տուն տանելու կամ վաճառքի հանելու։ Զինվորն ու վերահսկիչը թույլ չեյին տալիս։ Սրանց ու կալվածատիրոջ խոսքերը մեկ էր։ Վերջիններս գյուղացուց պահանջում եյին կանխիկ դրամով գրավական։ Յեթե գյուղացին կանխիկ դրամ չունենար, նրանից պահանջում եյին վստահելի յերաշխավոր ներկայացնել, իսկ յեթե այդպիսի յերաշխավոր չճարվեր, գյուղացուն հարկադրում եյին իրա բաժին թիրյաքը ծախել կալվածատիրոջը սովորական գնից շատ ցած գնով, այսինքն այնպիսի գնով, վորպիսին նշանակում էր ի հարկե ինքը կալվածատեր աղան։

Յես հասկացա, թե ի՛նչ պիտի անեմ։

Թիրյաքի ընդունելության և բաժանքի առթիվ յես չեյի սիրտ անում խոսելու, բողոքելու, մանավանդ վոր այնտեղ ներկա չեր կառավարության ներկայացուցիչը։ Բայց յերբ բանը հասավ թիրյաքի ապորինի բաժան-բաժանին, կամ բացարձակ թալանին, և թիրյաքի դուրս տանելուն ու յերբ վերահսկիչն ու զինվորը կպան ինձ, թե յերաշխավոր տուր կամ բաժինդ ծախիր աղային, յես այն ժամանակ պահանջեցի որինականություն։ Նրանք ինձնից պահանջեցին յերաշխավոր և ստորագրություն։ Իսկ յերաշխավոր մատնացույց արի քեթխուդին, վորը ինձ յերաշխավորեց, վաղորոք յեզներս իր մոտ գրավ առնելով։ Մի խոսքով, այնպես արի, վոր իմ բաժին թիրյաքը մի կերպ թալանչիների ձեռքից ազատեցի և տարա Ասադաբադ, վորպեսզի այնտեղից էլ տանեյի Համադան։

Թիրյաքի ամանը փաթաթած էր շորով, շորն էլ կապած էր բարակ պարանով, իսկ պարանի վրա ամրացած էր կապարե կնիքը կամ «պլոմբան»։

Ասադաբադում յես գնացի ֆինանսների մինիստրի լիազորի մոտ և թույլտվություն խնդրեցի թիրյաքը Համադան տա-

նելու։ Վորովհետև յես յերաշխավոր եյի ներկայացրել, ուստի ինձ չմերժեցին։

Թույլտվությունը գրեցին, ինձնից մի ղռան վերցրին և ինձ մի թուղթ տվին ու հրամայեցին։

— Համադան կգնաս միայն կառավարական փոստով, այլապես չի կարելի։

Կառավարական փոստը դա սայլ է։

Յես սկսեցի խնդրել, աղաչել։

— Պարոն լիազոր,—ասացի յես,—ձեր հոր հոգու և ձեր մոր կյանքի խաթեր մի ճնշեք ինձ։ Մինչև վոր սայլով յես քաղաք հասնեմ, սայլի դղկդղկոցից իմ թիրյաքը սայլի մեջ ջուր կդառնա. ել ով կառնի ինձնից այդ ապրանքը։

Լիազորն իսկի ինձ չլսեց, գրասենյակից դուրս արեց, իսկ թիրյաքը ուղարկեց փոստայլին կայարանի գրասենյակը։ Այնտեղ ինձնից պահանջեցին յուրաքանչյուր բաթմանի համար հինգ ղռան։ Թիրյաքը յերեք բաթման եր, ուրեմն պիտի տասնհինգ ղռան վճարեյի, սակայն յես քսան ղռան վճարեցի այն պայմանով, վոր նստեմ սայլի մեջտեղում և թիյրաքն ել վերցնեմ ծնկներիս վրա, վորպեսզի նա սայլի վրա չլղկլղկա։

Այդպիսով մենք գնացինք Համադան։

Ճանապարհին սայլն ամեն մի քարի ու կոշտի դիպչելիս տատանվում ու դղկում եր. սայլը բարձրանում եր սարը և այնտեղից իջնելիս այնպիսի արագ թափով եր գնում, վոր միջին նստողներս իրար եյինք գալիս. մեր գլուխները դիպչում եյին իրար, թիրյաքն ել ամանի մեջ լղկլղկում ու ջարդվում եր։

Յես ամուր բռնել եյի ամանս և յերկու ձեռքով սեղմել եյի փորիս, բայց վոչինչ չեյի կարողանում անել։ Թիրյաքն ամանի մեջ այնպես եր հարվում, ինչպես մածունը խնոցու մեջ։ Այդպիսով ճանապարհին այդ թանձր հեղուկը ջրիկացավ, այնպես վոր ամանի բերանի շորը թրջվեց։ Թիրյաքը համարյա թե փչացավ։

Ուրիշներինն ավելի վատ եր, վորոնք գլխի չեյին ընկել առաջուց, թե ճանապարհի անհարթությունները կարող են վնասել թիրյաքը։

Նրանք նստել եյին սայլի անմիջապես հատակին՝ ձեռնե-րին բռնած թիրյաքի ամանները, և սայլն ամեն մի քայլափո-

խում այնպես եր զգկացնում, վոր կավե ամաններն իրար դիպչելով՝ թիրլաքի հյութն սկսեց դուրս ծորալ ու թափվել։ Սայլը դըղկ հա դըղկ գնում եր առաջ՝ իր հետքից թողնելով թիրլաքի կաթիլներից գոյացած շղթան։

Այդ ձևով մենք հասանք Համադանի մոտ «Կավա-խանա» կոչված տեղին, վորտեղ մեզ կանգնեցրեց մի զինվորական։

Նա թիրլաքի ամանները նայեց, կնիքներն ստուգեց, նրանց մեզ հետ փոստային սայլը և մեզ տարավ ֆինանսների մինիստրության վարչություն։ Այստեղ մեզնից յուրաքանչյուր ամանից վերցրին չերկուական ղռան, վորից հետո մեր թիրյաքն ընդունեցին պետական պահեստը։

Այժմ մենք ինքներս գնորդներ պիտի փնտրեյինք։

Ամբողջ օրը հավաքված եյինք լինում ֆինանսական վարչության մոտ կամ պահեստի մոտերքը։ Սրիկա առևտրականները և ավելի ևս գարշելի միջնորդները իրար հետ խոսքները մեկ արած՝ թիրյաքի գները գցում եյին։ Նրանք շատ լավ գիտեյին, թե ինչպես պետք է կթել մեզ. գիտեյին, վոր գյուղացիք շտապում եյին տուն վերադառնալ, անհետաձգելի դաշտային աշխատանքներ ունեին։

Տասն օրից ավելի չկարողացա դիմանալ

Վերջիվերջո իմ թիրլաքը յես ծախեցի բաթմանը 12 թումանով։ Յուրաքանչյուր բաթմանին մեկական թուման վճարեցի պահեստապետին։ Սա մի ապօրինի բռնագանձում եր, բայց ինչ արած։ Բացի դրանից, բաթմանին մեկական թուման ել վճարեցի կշռար Միրզա ալուն, վորն ի հարկե կշեռքի մեջ ինձ խաբեց։ Այդ դեռ բավական չեր, յես մի բան ել միջնորդներին վճարեցի։ Մի խոսքով, յերբ վերադարձա տուն և հաշվեցի յել ու մուտքս, տեսա, վոր թիրլաքի ցանքն ինձ մեծ վնաս է հասցրել։

Յես յերդվեցի, վոր այլևս թիրյաք չցանեմ։ Թիրյաք կարող են ցանել այնպիսի խեղճ ու կրակ, անգրագետ գյուղացիները, վորոնք առհասարակ յել ու մուտքից և հաշիվներից վոչինչ հեն հասկանում։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԲԱԽՏԻԱՐԸ ԾԽԱԽՈՏ Է ՑԱՆՈՒՄ

Համադանում մի քանի հնամաշ շորեր գնեցի և ճանապարհ ընկա տուն։

Թիրյաքի փողից ինչ որ մնում էր մոտս, գալուն պես նրանով պարտքերս տվի։ Ինձ ասացին, որ վերահսկիչն ու զինվորը յեկել են քեթխուդի մոտ։ Հետաքրքրվեցի, թե ինչու յեն յեկել, ինձ ասացին, որ նրանք մի քանի սեր Թիրյաք են բերել բանդերոլով և պահանջում են, որ քեթխուդան անպայման առնի այդ Թիրյաքը—մսխալը յերկուսուկես ղռանով։

Խեղճ քեթխուդան ասում էր,—«Ախար յես Թիրյաք չեմ ծխում, առնեմ ինչ անեմ»։

Նրանք պնդում եյին, որ յեթե ինքը չի ծխում, հո ճանաչում է գյուղի ծխողներին, թող առնի ծախի նրանց կամ մի ուրիշ տեղ տանի, ծախի։

Քեթխուդան համարյա թե լալիս էր։

— Ախար ով կառնի ինձնից այդ գնով Թիրյաք։ Ծխողներն առնում են առանց բանդերոլի՝ մսխալը տասը շահով։ Էժան Թիրյաքը թողած՝ նրանք ինձնից մսխալը յերկուսուկես ղռանով Թիրյաք կառնե՞ն։

—Կառնեմ, բայց կմնա վրաս։ Ինչո՞ւ յեք ինձ նեղում։

Յերբ յես ներս մտա, վեճի տաք ժամանակն էր։ Ինչ էլ ասում էր քեթխուդան, նրան լսել անգամ չեյին ուզում։

Բանը վերջացավ նրանով, որ մի թուման կաշառք վերցրին քեթխուդից, վաճառելիք Թիրյաքի քանակը պակասեցրին, իսկ մնացածը տարան մի ուրիշ գյուղում սաղացնելու։

Այնուամենայնիվ հինգ սեր կապեցին քեթխուդի վզին և նրանից ստացական վերցրին Թիրյաքի լիակատար արժեքի գումարով։ Այդ հինգ սեր Թիրյաքը քեթխուդան բաժանեց գյուղացիներին, որոնցից ամեն մեկը քեթխուդին վճարեց ով որքան կարող էր։

* * *

Թիրյաքից պրծա, սկսեցի զբաղվել ծխախոտի ցանքի մշակությամբ։ Իմ բախտից ծխախոտը լավ էր աճել, ավելի լավ՝ քան ուրիշներինը։ Ուղղակի բախտս բերում էր...

Այժմ յես հավատացած էյի, որ ինչ կորցրել եմ խաշխաշի ցանքին, բոլորը յետ կբերեմ ծխախոտի ցանքից։

Յես ուրախ ու բախտավոր էյի և առանց հանգստանալու աշխատում էյի, ջրում էյի, քաղհան էյի անում, բկերն էյի տալիս, ցածի տերևներն էյի պոկում ու միշտ մեջքս ծռած՝ արևի տակ ուժասպառ էյի լինում։

Վերջապես ժամանակը յեկավ, ծխախոտը հասավ։ Յերեկոյան ջրեցի և հետևյալ առավոտն սկսեցի քաղել։

Մարդերի մեջ հողը մի թեթև փորում էյի, սաղր փոսեր էյի անում և ծխախոտի թփերը դնում էյի այնտեղ խմորման համար։

Այդ աշխատանքի վրա էյի, յերբ գյուղում ինչ որ աղմուկ լսվեց ու հայհոյանքի ձայներ։

Նույն պահին յես տեսա, որ դեպի իմ կողմն է վազում լեղապատառ հարևանս։

— Ի՞նչ ես նստել այստեղ, — ասաց նա, — շո՛ւտ, վազիր տուն. կինդ ուշաթափվել է։ Գյուղում այնպիսի դրություն է, որ աստված հեռու տանի։

Յես գործս թողի և վազեցի գյուղ։

Իսկապես գյուղում մի անսովոր բան էր կատարվում։ Փողոցներն ու տները լցված էյին զինվորներով և ֆինանսների վարչության խուզարկու պաշտոնյաներով։

Նրանք շրջում էյին գյուղերը, մտնում էյին տնե-տուն, խուզարկություն էյին կատարում ոպիումի վաճառք հայտնաբերելու։ Խուզարկության ժամանակ տան իրեղենները տակն ու վրա էյին անում, տան պատերը, հատակն ու առաստաղը քանդում էյին։ Ամեն կողմից լսվում էյին կանացի լացի ու աղաղակի ձայներ։

Մի տան մեջ խուզարկուները գտել էյին յերկու սիր թիրյաքի «շիրա», իսկ մի ուրիշ գյուղացու տանից վերցրել էյին թիրյաքի մի ձողիկ։

Ինձ լուր տալուց մի կես ժամ առաջ խուզարկուները վայրենի կանչվռտոցներով ու սպառնալիքներով մտնում են մեր տունը։ Կինս սաստիկ վախից ուշաթափվում է։ Յերբ յես տուն հասա նա ուշաթափված՝ ընկած էր գետնին։

Զոքանչիս հետ կնոջս ականջները տրորեցինք, յերեսին

սառը ջուր տվինք, քթին այրված շորի կտոր մոտեցրինք, մի խոսքով, շատ չարչարվեցինք, մինչև վոր կարողացանք ուշքը վրա բերել։ Վերջապես կինս աչքերը բաց արեց։

Յեկյուղն այնքան սաստիկ եր յեղել, վոր խեղճ կինս այդ դեպքից հետո վեցամսյա յերեխան վիժեց։

Այլևս յես համբերել չկարողացա։ Աչքերս մթնեցին, արյունս գլուխս խփեց, սկսեցի այնպես կատաղի ձայնով հայհոյել խուզարկուներին, վոր նրանք ել վախեցան։ Յես անիծեցի ու հայհոյեցի և՛ կառավարությունը և՛ իրանական գարշելի որենքները, դևերի ծնունդ պաշտոնեյությունը և այլն։

Իմ ձայնից զինվորներն ու խուզարկուները նորից ներս խուժեցին բակը։ Յես նրանցից չեյի վախենում, չեյի քաշվում։ Յեվ ինչու պիտի վախենայի, մի բան վոր ինձ մոտ թիրյաք չկար, բան չկար։ Բացարձակապես պարզ եր, վոր յերեխայիս վիժման պատճառը դրանք եյին, ուստի յես համարձակ կերպով հայհոյում եյի և նրանց եյի պատասխանատու համարում։

Հանկարծ խուզարկուներից մեկը վազեց և մտավ մեր սենյակը։ Քիչ հետո դուրս յեկավ սենյակից և ցույց տվեց ձեռքում բռնած մի կապոց, վորի մեջ մոտ հինգ սեր թիրյաք եր փաթաթված։

Սենյակից դուրս յեկավ յեվ ուրախ ձայնով բացականչեց.

— Ահա վո՛րտեղ եր։ Վերջապես գտա։

Ու ձայն տվեց զինվորներին.

— Կալանավորեցեք այդ շուն-շանվորդի Բախտիարին։

Ինձ մի լավ ծեծեցին մտրակներով՝ հետո պարանով ձեռներս կապեցին։

Այդ ժամանակ կինս սենյակի անկյունում ցավից լալիս եր, իսկ նրա մայրը կռացած կնոջս վրա՝ նույնպես լալիս եր ու հեկեկում։

Բանից դուրս բերին, վոր վոչ թե խուզարկուներն եյին որինազանց, այլ յես եյի «ապորինի բան թույլ տվել ինձ»։

Փրկություն չկար։

Ո՞վ կհավատար ինձ, վոր յես տանը թիրյաք չեմ ունեցել, և ինքը խուզարկուն ե դիտմամբ ձգել տան մեջ և հիմա ինձ մեղադրում ե վորպես մաքսանենգ թիրյաք պահող ու թաքցնող,

վորպեսզի ինքն ազատվի յերեխաս սպանելու պատասխանատու-վությունից:

Վոչ վոք չեր ուզում լսել իմ գանգատները, վոչ վոք չեր հավատում ինձ: Այս բանը պարզ հայտնի յեր նաև մեր գյու-ղացիներին, բայց նրանք ինչ կարող եյին անել:

Այն մարդուց, վորի մոտ «չիրա» եյին գտել, հինգ թուման տուգանք առան, իսկ ձողիկ ունեցող գյուղացին վճարեց յերեք թուման: Քեթխուդին նորից հինգ սեր թերյաք տվեցին ծախելու, առաջվա տվածի փողը լրիվ կերպով ստացան: Նախազգուշացրին, վոր այս նոր թերյաքի փողը մինչև ամսի վերջը հավաքի:

Իմ գործը լուրջ եր: Ինձ տարան Ասադաբադ: Անմիջապես ինձ տարան բանտ:

Հետևյալ որը ժողով եր հրավիրված, վորտեղ ներկա եյին անուղղակի հարկերի բաժնի պետը, փոստ-հեռագրատան պետը և մի շարք պետեր, ինձ ել բերին և կանգնեցրին այդ «բարձր» ժողովի առաջ:

— Այդ ինչ անկարգություններ ես անում,— հարցրին նը-րանք ինձ,— ինչու յես առանց բանդերոլի թերյաք պահում:

Յես պատմեցի, թե ինչպես ե յեղել բանը: Պատմեցի, թե ինչպես են վախեցրել կնոջս, վորից նա վիժել ե յերեխան: Յես ասացի, վոր ինձ մոտ յերբեք թերյաք չի յեղել, այլ խուզարկու պաշտոնյան ե իր գրպանից գցել սենյակի մեջ, վախենալով, վոր յես իրենից վրեժ կառնեմ որենքի միջոցով:

Ի՞նչ ասեյին, վոր լավ լիներ...

Ինձ հայհոյեցին, անվանեցին ստոր, անպիտան մարդ, եր-վածի վորդի և այլն և այլն:

— Մի տեսե՛ք, տեսե՛ք, ի՛նչպես ե խոսում դա, իսկի չի ել վախենում,— ասում եյին նրանք:

Խուզարկուները կանգնել եյին այնտեղ, ժողովում, և անդա-դար յերդվում եյին այդ «աղնիվ-աղաներին» կյանքով ու գլխով, վոր յես սուտ եմ ասում, վոր յես դիտմամբ իմ կնոջս փորին քացով խփել եմ, վոր նա վիժի և դրանով շառ գցեմ իրանց վրա.

Վերջապես այսպիսի վճիռ դուրս բերին:

Տասնևհինգ թուման տուգանք և հինգհարյուր մտրակի հարված:

Ինձ այնպես մտրակահար արեցին, վոր ամբողջ մեջքս ու ուսերս վերքերով ծածկվեցին:

Այնուհետև ինձ դեռ բանտ նստեցրին, մինչև վոր իմ փոխարեն տուգանքը կվճարեյին ծանոթներս։ Ցես լուր ուղարկեցի գյուղ, վոր մերոնք յեզներից մեկը քշեն-բերեն Ասադաբադ ծախելու։

Այդպես ել արին։

Ցեզը ծախեցին 16 թումանով, վորից 15 թումանը վճարեցին տուգանքս, իսկ մի թումանը տվեցին բանտապետին, վորից հետո նոր ինձ արձակեցին։

Բանտից դուրս գալիս, ֆինանսների վարչության պետն ինձ ասաց.

— Իսկապես վոր դու մի անտաշ, բռի քուրդ ես։ Ինչի՞ վրա եյիր դու հույս դրել։

Խուզարկու Միրզա Ալին յերբ կառավարության յեկամուտը շատացնելուն ոժանդակում ե, կառավարությունն ել պիտի նրա կողմը պահի, նրան պիտի պաշտպանի։ Խուզարկուն յեթե այդպես վարվի և աշխատի պետության ոգտին, նա առաջ կքաշվի, պաշտոնը կբարձրացվի,և կառավարությունն ել միշտ նրան կպաշտպանի։ Այդ բանը նրա ցուցակ ծառայության մեջ արձանագրըվում ե։

Ցես բարկացած ասացի.

— Այնուամենայնիվ կողոպուտ ե։ Թէկուզ պետության համար ե, դարձյալ կողոպուտ ե։ Ի՞նչ ե, նոր գյուտ ե արել պետության համար, կամ նոր աղբյուր ե գտել այդ ձեր խուզարկուն։ Ուղղակի խեղճ մշակ գյուղացիներին թալանում են զինվորների նիզակների ուժով, ուրիշ վոչինչ։ Այստեղ պետության յեկամուտ ավելացնելու բան չկա։

Ցերկ·ւ յերրորդը իրեն ե վերցնում, իսկ մի յերրորդը տալիս ե պետությանը։ Սակայն այդ ճանապարհով վո՛րքան անտեսություններ են քայքայվում, վո՛րքան վնասներ ե կրում ժողովուրդը։ Ձե՛ վոր այդ ժողովուրդն ե պետության յեկամուտի աղբյուրը։ Ցեթե ժողովրդի անտեսությունը քայքայվի, ել վորտեղից պետությունը կստանա իր յեկամուտները։ Ել ո՞ւր մնաց ձեր խուզարկու պաշտոնյաների ոժանդակությունը պետության յեկամուտներն ավելացնելու գործում։

* * *

Բանտից ազատվելով գնացի տուն—հիվանդ, ջարդված ու վիրավոր մարմնով և միաժամանակ լցված մի բուռն ատելությամբ ու զզվանքով դեպի այդ տիրող կարգերն ու օրենքները։

Տուն հասնելուս պես՝ յես գնացի թութունի արտը նայելու։ Փոսերի մեջ դարսած տերևները, արդեն սևացել էին ու բորբոսնել, այնպես որ բոլորովին փչացել էին խնամք չլինելու պատճառով։

Ինչ որ մնացել էր, հավաքեցի, դրի փոսերի մեջ, հետո փռեցի գետնին, որ չորանան։

Յերբ տերևները չորացան, կնոջս ու զոքանչիս օգնությամբ՝ տերևները կորեցի ու տեսակավորեցի—լավ տեսակն առանձին կարմիր ու դեղին տեսակն առանձին։

Ամեն ինչ պատրաստ էր դուրս տանելու համար։

Ամբողջ ծխախոտը ըստ տեսակների հակավորեցի, մի ավանակ վարձեցի, գործակատարին տեղեկացրի և ծխախոտը տարա ծախելու։

Ասադաբադում ֆինանսների վարչության պետը պահանջեց, որպեսզի յես ծխախոտի արժեքի $30^0/_0$-ի չափով բաժ վճարեմ կանխիկ դրամով։ Դժբախտաբար ինձ մոտ փող չկար, ուստի ստիպված յեղա ապրանքիս $30^0/_0$-ը տալ ակցեզային վարչության որպես տուրք։ Բացի դրանից, այդ պետն իր օգտին պահանջեց ամեն մի եշաբեռից մի բաթման թութուն, ապա նոր թույլ տվեց ծխախոտը ծախելու։

Ծխախոտը տարա Համադան։

Սովորաբար ծխախոտ ունեցողները իրենց ծխախոտը տանում էին Հաջի Ահմեդի իջևանը։ Մեր կալվածատեր-աղան էլ ինձ շատ խիստ կերպով նախազգուշացրել էր բացի այդ իջևանից ուրիշ տեղ չիջնեմ։

Հենց առաջին օրը գնորդ յեկավ և բավական լավ գին առաջարկեց, սակայն Հաջի Ահմեդը չթողեց ծախեմ։ Տված գինը բավարար չէր համարում։ Յես էլ սպասեցի։

Սպասեցի մեկ, յերկու օր, գնորդ չեկավ։

Յերրորդ օրն ինչ որ մի միջնորդ յեկավ, նայեց, շոշա-

փեց ապրանքը և բաթմանին մի քանի ղռան էլ պակաս գին առաջարկեց քան առաջին գնորդը։

Ցես չտվեցի։

Մի տասն օր էլ սպասելուց հետո՝ հազիվ հաջողվեց ինձ թութունս ծախել։ Այդ ստոր արարածները խոսքները մեկ արած՝ մեկը մյուսից պակաս գին եր առաջարկում, այնպես վոր ստիպված յեղա վերջի վերջո բաթմանը յոթուկես ղռանով տալ, մինչդեռ առաջին օրը ապրանքիս առաջարկում եյին 12 ղռան— յուրաքանչյուր բաթմանին։

Կշռողը կշռեց ապրանքը և հանձնեց գնորդին, վորն իսկույն ապրանքն ուղարկեց իր խանութը։

Նույն օրն էլ յես տեսա իջևանատեր Միրզային գնորդիս խանութում։ Միրզան ինչ վոր բան փսփսաց նրա ականջին, ի հարկե, այնպիսի բան, վոր ինձ լսել չեր կարելի։

Բայց շուտով ամեն բան պարզվեց։

Միրզան գնորդին ասաց.

— Այդ հակերն ավելի ծանր են իսկապես քան մենք քաշել ենք։ Ցերկու-յերկու բաթմանով ավելի յեն, այնպես վոր պիտի նորից կշռենք հակերը։ Ավել քաշի արժեքը վճարենք, իսկ յեթե չեք հավատում, նորից կշռեք և ստուգեցեք, անպայման ավել դուրս կգա, քան դուք ընդունել եք ծախողից։ Բացի դրանից էլ, ամեն մի հակից մեկ-մեկ բաթման հասնում ե իջևանատիրոջը։

Գնորդն առարկում եր, չեր համաձայնում։

— Հակերը կշռված են և ընդունված,—ասում եր նա,—ինչ կարիք կա նորից կշռելու։ Ձեր խոսքերին էլ հավատալու անձնապես կարիք չունեմ։

Դրանց մեջ վեճ սկսվեց։

Վաճառականները խանութներից դուրս յեկան, մոտեցան դրանց և ուզեցին միջնորդի դեր կատարել։ Միրզան և գնորդ խանութպանը պատմեցին բանի եյությունը։

Վաճառականները գործը վճռեցին Միրզայի օգտին։

— Միրզան սուտ չի խոսի,—ասում եյին նրանք,—նա իր հոգուն մեղք չի անի, այնպես վոր դուք հակերը նորից պիտի կշռեք և ավելորդ քաշի արժեքը վճարեք Միրզային։

Ցես «պատվարժան դատավորների» ուշադրությունը դարձ-

րի այն հանգամանքի վրա, վոր այստեղ իրոք իմ ապրանքն է թալանվում։

—Չէ՞ վոր իմ ծխախոտն է, հակերը իմն են.—ասացի յես, —յեթե ավելի քաշ լինի, ապա նրա արժեքն ինձ պիտի հանեք։

Դա ինչ բան է։ Ինչպես ասում են—«յերկու անհավատ-ներ կռվում են հավատացյալի գույքի համար»։ Հանուն բոլոր սրբությունների, օգնեք ու պաշտպանեք ինձ։

Իմ այս խոսքերիս վրա «պատվարժան վաճառականները» ծիծաղեցին։

Նրանցից մեկը հարցրեց.

— Այ տղա, վորտեղացի յես։

— Բնիկ Քիրմանշահցի յեմ, պատասխանեցի յես։

— Քիրմանշահեցի՞։ Ուրեմն դու վատ քիրմանշահցի յես—ասում է նա,—կարգը չես իմանում։ Այդ կարգը մեզ մոտ էլ յեկել է Քիրմանշահից։ Սովորաբար ավելորդ քաշը կոչվում է «կափարիչ», իսկ բացի դրանից, Քիրմանշահում գոյություն ունի «մեկ քառորդի» սովորությունը, այսինքն՝ յուրաքանչ-յուր բաթմանից վերցնում են մեկ քառորդը։ Այդ դեռ բավա-կան չէ, արժեքից էլ մի բան վերցնում են, իսկ այստեղ այդ էլ չեն վերցնում, այնպես վոր ձեր բողոքը կամ ձեր պահանջը տեղին չէ, ձեր ապրանքը բոլորովին չի թալանվում, ձեր գան-գատը ցույց է տալիս, վոր դուք առևտրական սովորություն-ներին ծանոթ չեք։

Յես ինչ կարող եյի այլևս առարկել հարգելի հաջիներին։

Ծխախոտի փողը վճարեցին։

Այդ փողից մեկական ղռան յուրաքանչյուր հակի համար ֆինանսների վարչությանը վճարեցի, մեկական ղռան՝ հօգուտ աստվածահաճո գործերի, մեկական ղռան քաղաքային վարչու-թյանը, տասական շահի էլ ժողովրդական լուսավորության օգ-տին։ Դրանով էլ չպրծա. յես վճարեցի նույնպես կշռողի վարձ, վճարեցի միջնորդներին, իջևանատիրոջը։ Հետո էլ մուծեցի կալվածատիրոջ հասանելիք բերքի $\frac{1}{3}$ մասը։ Այնուհետև յերբ յես հաշվեցի, թե դեռ վորքան պիտի վճարեմ եշի վարձը, դրանց վրա ավելացրած նաև իմ քաղաք գալ-գնալու ծախսերը, տեսա

վոր իմ բոլոր ծանր աշխատանքներիս արդյունքը յեղել են վողորմելի կոպեկներ։

Ծառը և հեգնանք…

Դեռ մի քանի որ առաջ եր, վոր յես այնքան ուրախ ու յերջանիկ եյի, ու մեծ հույսերով լցված՝ կրկնում եյի, «ծխախոտ, ծխախոտ»։

Յես հիմա ել եմ կրկնում, — «ծխախոտ, ծխախոտ», բայց միայն տխուր հուսահատությամբ ու հիասթափությամբ։

Յես այլևս վոչ մի հույս չունեյի։ Միայն տխուր և հուսահատեցուցիչ մտքերն եյին պաշարում ինձ իմ բախտի և գալիքի նկատմամբ։

Ճիշտ ե, յես դեռ ցորենի և գարու փոքրիկ ցանքեր ունեյի, բայց դրանց վրա հույս դնել կարելի՞ յեր։ Յես շատ անգամներ եյի ցանք արել ու բերքեր վերցրել, և լավ գիտեյի, թե ինչ ե լինում նրանց վերջը։ Յեթե մի բան ել կարողանում եյինք պըրծացնել մուրացկաններին, դերվիշներին, թափառաշրջիկների ճանկերից ու բնության պատահարներից, միևնույնն եր, տուն բերածը վերջիվերջո հազար ու մի պատրվակով թալանվում եր։

Կալվածատիրոջը տուր, հարկահավաքին տուր, խանության տուր, մրգի կապալառուին տուր, թիրյաքի խուզարկուին տուր, բոլորին, բոլորին ել տուր, տուր հա տուր։

Վո՜չ, ինչպես յերևում ե, պարսիկ գյուղացիներին այդպես ե վիճակված, վոր նրանք մշտնջենապես ստրուկ ու գերի լինեն իրենց սեփական յերկրում։

Ի զուր չե, վոր սահմանադրության տասնյոթ տարվա ընթացքում «գործով ծանրաբեռնված» մեր «ժողովրդասեր ու խղճմիտ» պատգամավորները մեջլիսում նստած՝ մի որենք ել չեն հրատարակել, վորով մազաչափ անգամ թեթևացնեյին գյուղացիության դրությունը։ Ընդհակառակը՝ նրանք «հաստատում» և «ապացուցում եյին», վոր գյուղացիների վրա ունեցած կալվածատերերի իշխանությունը վերացնել՝ կնշանակի «անպատվություն», այսինքն մի ստար գործ ե։ Դրանով ուզում եյին ասել, վոր իբր թե թող, կողոպտեն, թալանեն, ինչպես աղաների՛ սիրտն ե ուզում։

Յեվ նրանք կողոպտում են ու կողոպտում, անվերջ ու անսահման, կարծես թե մի բարիք են գործում, մի բարի գործ, վորն արժանի յե պարգևատրման և վարձահատուցման։

ԲԱԽՏԻԱՐԻ ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ ԵՎ ԴԱՌՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Երբ ես վերադառնում էի տուն, անվերջ քարվանի պես անցնում էին իմ ուղեղով տխուր մտքերը։

Վո՜չ, ես այլևս վոչ մի հույս չունեի։ Ես սուզվեցի մտորումների ծովի մեջ։

Ես հարց էի տալիս ինձ.

— Ի՞նչ պիտի անեմ։ Ի՞նչ է սպասում մեզ ապագայում։ Ի՞նչ պիտի ձեռնարկել։

Ի՞նչպես ապրել։ Ի՞նչպես ապահովել մի կտոր հաց, վոր վոչ վոքի ձեռք չմեկնեմ և վողորմություն չխնդրեմ։

Հողը չցանկացավ մեզ կերակրել. այն հողը, վորն այնքան սիրում էր հայրս, և վորին ես էլ նվիրեցի իմ կյանքի զգալի տարիները, թափելով այդ հողի վրա ազնիվ ու մաքուր աշխատանք։ Այդ հողը չկարողացավ մեզ համար մարդկային գոյության տարրական պայմաններ ապահովել։

Ի՞նչ պիտի անել ուրեմն։

Ազնվության և ազնիվ աշխատանքի համար մեզ մոտ Իրանում, բոլոր ճանապարհները փակված են։ Այստեղ բոլոր ազնիվ ձգտումները վաղորոք մատնված են անհաջողության։

Սակայն վո՜րքան լայն ասպարեզ կա անպատկառության, խարդախության, նենգության, բանսարկության համար։

Ես ինքս իմ մեջ խորհեցի և այսպես վորոշեցի.—կգնամ Թեհրան՝ այնտեղ վորևե մինիստրության մեջ ծառայության կմտնեմ, թեկուզ ցրիչի կամ ձիապանի պաշտոնով. ինչ ուզում է՝ լինի, համենայն դեպս, հո գործի կլինեմ։

Բայց ես անմիջապես պատկերացրի իմ դրությունը, յեթե հանկարծ մինիստրության մեջ փոփոխություն լինի։ Մինիստրական կաբինետներն այժմ տարվա մեջ համարյա թե յերկու անգամ փոփոխվում են, իսկ կաբինետի փոփոխման հետեվանքով՝ փոխվում են նույնպես ծառայողները։ Մեծերը փոխում են իրենց ստորադրյալ ծառայողներին, սրանք էլ իրենց հերթին փոխում են ավելի փոքրերին և այլն։

Բայց յենթադրենք մինչևիսկ, վոր կաբինետն իր ձեռքում

իշխանությունը պահի մի տարուց ավելի. ի՞նչ առաջ կգա դրանից։ Ահա թե ինչ։ Ամբողջ Իրանը այնպիսի կառավարական գարշահոտությամբ կբռնվի, վոր ել ասել չի լինի։ Ներքին քայքայման, կաշառակերության, խնամիության այնպիսի նողկալի փաստեր յերևան կբերի այդ մինիստրության կառավարությունը, վոր անշուշտ նրան կհեռացնեն իշխանությունից, բայց հո դրանով դրությունը չի լավանա, այլ թերևս ավելի կվատանա։

Մինիստրներն ի՞նչ... Նրանց համար ամենամեծ պատիժը աքսորն է Իրանի սահմաններից դուրս։ Նրանց կուղարկեն Յեվրոպա, վորպեսզի հարմար տեղ ունենան գողացած ու կողոպտած փողերը ծախսելու։

Իսկ ի՞նչ կլինի ծառայողների դրությունն այդ դեպքում։

Ինձ նման ծառայողների դրությունը պարզ է—խայտառակություն և քաղց։

Դրա համար ել յես վորոշեցի թողնել Թեհրան գնալու միտքը։

Յես շարունակեցի ե՛լի խորհել։

— «Չմտնե՞մ արդյոք գավառում ֆինանսական վարչության հիմնարկություններից մեկը ծառայելու։ Ուղղակի մտնեմ գողերի ու ժուլիկների շարքը։ Հիմնարկներում մի վորևե սեղան գրավեմ, ինձ համար խաղաղ ու տաքուկ կյանքի պայմաններ ստեղծեմ»։

Բայց այդ ել անհնարին եր։

Մարդիկ հսկայական կաշառքներ են տալիս, վորպեսզի ամենահամեստ մի տեղ գրավեն վորևե հիմնարկության մեջ, և ելի չի հաջողվում, յերկար ժամանակ անգործ են մնում։

Այստեղ ել գոյություն ունի սովորություն դարձած օրենք, վոր մարդիկ պաշտոն են ստանում վոչ թե իրենց ընդունակությունների համաձայն, այլ պաշտոնի յեն անցնում «ծագման» կամ «ծննդյան» իրավունքով, կամ բարձրից յեկած հրամանի ուժով, կամ լկտիության ու այլ նման հատկությունների շնորհիվ։

Վո՛չ, այդ ծրագիրն ել պետք չեկավ։

— «Լինեմ հայրենիքի պաշտպան»,—մտածում եյի յես։

Այս ասպարեզում արդեն վոչ վոքի ճնշումն ինձ համար յերկյուղալի չի լինի։ Ի՛նքս կլինեմ ամենաառաջին ճնշողն ու բռնացողը։ Բայց հիշելով, թե զինվորական իշխանությունն ինչ-

պես է դողանում զինվորների զգեստավորումն ու պարենը և տնասունների կերը, ես սարսափ զգացի այդ մտքից։ Բացի դրանից, եթե գնայի զինվոր, կինս ու զոքանչս մենակ ու անխնամ կմնային։

— «Ահա թե ի՞նչ անեմ,—մտածում էի ես,—արի դառնամ իրավաբան, դատապաշտպան։

Իսկապես դա և՛ հեշտ և՛ շատ արդյունավետ գործ է։ «Դատաքննական կանոնագիրքը» կառնեմ «պորտֆել» կվերցնեմ ձեռքս ու այս «գիտնականի» ու «ազնիվ» անձնավորությամբս արդարադատության բարձր տան սրբազան տաճարը կմտնեմ։ Մի քիչ ճըկուն, ժիր, ճարպիկ ու հարմարվող լինեմ, կարող եմ լավ հարմարություն ստեղծել ինձ համար։ Շրջապատդ լավ ճանաչիր, ցանցդ գցիր, մեկն ու մեկը հալբաթ կընկնի, միևնույնն է, ցանցի մեջ ընկնողը հայցվոր կլինի՝ թե պատասխանող՝ պաշտպան՝ թե մեղադրյալ, անմեղ՝ թե մեղավոր։ Կարևորը վորևե բան վաստակելն է։

Եվ այդպիսով, որական մի բան կվաստակեմ, կապրեմ իմ սեփական բավականության համար, ուրիշի հերն անիծած։

Եթե բանը հասնի դատաքննության, ապա դա հեշտ է. նախ—հակառակորդն ավելի շուտ նույնպիսի դատապաշտպան կլինի, այսինքն «մեր մարդը», և մենք նրա հետ արդեն համաձայնության կգանք, թե ինչպես գործը ձգձգենք, ո՛ւմ վերջիվերջո արդար ու անպարտ դուրս բերենք, ո՛ւմ մեղավոր ու պատասխանատու, մի խոսքով, համաձայնության կգանք, թե ինչպես պոկենք մեր հաճախորդ-կլիենտներին. Չե՞ վոր բոլորը մեր ձեռքին է, և ինքը դատարանի նախագահն էլ վոչինչ չի կարող անել։

Երկրորդ—... ի միջի այլոց, եթե ինքը հայցվորը հանդես գա վորպես հակառակորդ, ե՛, ի՞նչ է հասկանում նա դատաքննություններից։ Նա ի՞նչ գլուխ կարող է հանել այդ բոլոր դատական ճարպիկություններից, հնարագիտություններից, պատըրվակներ ստեղծելու հանգամանքներից։ Նա ի՞նչ կարող է անել փաստաբանների դեմ։ Եվ վերջապես, մինչևիսկ եթե հայցվոր հակառակորդը գործը տանի, այն ժամանակ պատասխանող—պաշտպանյալն ստիպված պիտի լինի իմ փոխարեն վճարել դատական բոլոր ծախսերը և նաև ի հարկե ըստ հայցի։ Այդ

է՛լ ինձ համար վոչինչ, թքած նրա վրա, ինքը պիտի վճարի, ինձ ինչ։ Իմ ոճիրը հո չեն բռնելու։ Դեռ չկա մի այնպիսի օրենք, վորով փաստաբանի ոճիրը բռնեն ու նրան նեղեն։ Եվ ինչու պիտի բռնեն իմ ոճիրը վորպես փաստաբանի, վորովհետեվ անճիշտ և անարդար գործ եմ պաշտպանել, կամ թե չե դատարանում պարզվել է, վոր անարդար գո՞րծ եմ պաշտպանել։ Քա՛վ լեցի։ Այդ առթիվ դատապաշտպանն որենքով պատասխանատվություն չի կրում։

Փաստաբանի գործը «մաքուր» է. դու նրան փող տուր, իսկ գործը խարդախ ու անխարդախ է յեղել, արդարացի՝ թե անարդար, այդ վոչ վոքի գործը չէ։

Եթե յերկու հոգի կռվել են, և բանը հասել է դատարանի, ապա պարզ է, վոր նրանցից մեկը արդար է, մյուսը կլինի անարդար կամ մեղավոր, սակայն փաստաբանները դատարանում պաշտպանում են թե՛ մեկին և թե՛ մյուսին ու պոկում են թե՛ արդարին և թե՛ մեղավորին։ Դրանք գիշատիչ գազաններ են, վորոնց համար միևնույն է «իմամի՝ ուղտը կամ հակաքրիստոսի եշը»։

Պոկում են անխնա, և վոչ վոք չի կարող նրանց մի՛ խոսք ասել, թեև բոլորին էլ պարզ է, վոր նրանցից մեկը պաշտպանել է առաջուց հայտնի և բոլորին պարզ անիրավ մի գործ, հետեվաբար այդ պաշտպանը հենց մի խարդախ, սրիկա ու անպիտան մարդ է։

Այդ զբաղմունքն ինձ շատ դուր յեկավ։ Եթե յես համոզված լինեյի, վոր իմ կրթությունը բավական է այդ գործի համար, անպայման դատապաշտպան կլինեյի։ Դժբախտաբար յես իր ժամանակին այդ դասընթացը չեմ անցել և հատկապես լպիրշության «գիտելիքների» մեջ յես այնպես թույլ եմ յեղել, վոր փաստաբանները մի շաբաթվա ընթացքում ինձ այնպես նեղը կլծեն, վոր չեմ կարող վոչ մի տեղ մարդկանց աչքին յերևալ։

Չե՛, այս է՛լ չեղավ, յեզրակացրի յես։

Այնուհետև յես մտածեցի պաշտոն գտնել անուղղակի հարկերի վարչության մեջ։

Այնտեղ հաշվապահությունն, ասում են, մի կերպ յոլա

տանելու բան է. իմ գիտելիքներն էլ բավական են, կարգին կաշխատեմ և նկատողություն էլ չեմ ստանա։

Կտեղավորվեմ այդ հիմնարկության մեջ վորպես «առանց ռոճիկի խուզարկու» և բացի դրանից, հանձն կառնեմ գյուղացիներին Թիրյաք «մատակարարել»։ Շատ լավ գործ է։

Ման արի, շրջիր քեզ համար Իրանի բոլոր կողմերում։ Զինվորը քո տրամադրության տակ է։ Մի խղճուկ հետևակ, իսկական դաշտամուկ։ Զանը դուրս գա, թող ձիուդ առաջից կամ հետևից քայլե—մեկ-յերկո՛ւ, մեկ-յերկո՛ւ, պատիժն ու հարգանքը անուղղակի հարկերի վարչության խուզարկուինն է։

Հետևակազորի մուկը կլինի նա մինչև առաջին գյուղը, իսկ այնտեղ յես նրան կնստեցնեմ մի բարի գյուղացու ձիու վրա ու նրան կդարձնեմ քաջակորով ու անվեհեր հեծյալ։

Հրաշալի՜ զբաղմունք։

Գալիս եմ մի գյուղ։ Այն ով է այդտեղ։ Խանութպա՞նն է։ Տուր այդ խանութպանին որինական բանդերոլով պետական Թիրյաք և ասա—«ծախիր», խանութպան։ Ի՞նչ է, չե՞ս կարող, վոչ վոք չի՞ վերցնում, ինքդ էլ չե՞ս ծխում։ Դու ծխիր, վոչինչ, բոլորն էլ ծխում են։ Սակայն ինձ համար միևնույնն է դա, միայն թե դու ինձ փող տուր։ Համաձայն չե՞ս։ Ի՞նչպես թե համաձայն չես, բա զինվորիս նիզակն ինչի համար է։

Այստեղ արդեն անմիջապես քեթխուդան ու խանութպանը լաց են լինում և միաժամանակ քսակները բաց են անում։

Այդտեղ Թիրյաքը յես յերկու անգամ ծախում եմ, մի տեղ էլ կաշառք եմ վերցնում, իսկ մի այլ տեղ... պահ, պահ, պահ... այսինչի տանն առանց բանդերոլի Թիրյաք է գտնված...

Պրծավ նրա բանը։—Դու մաքսանենգ ես,—ասում եմ յես նրան։ Ապա արի այստեղ... Այս գործումն էլ բավականաչափ կորզում եմ։

Իսկ ծխողները... Միթե նրանք յեկամուտի աղբյուր չեն։ Հենց այն, վոր այդ ծխողները գիտեն, վոր յես իրենց այնքան Թիրյաք չեմ բաց թողնելու, վորքան իրենք սովորաբար ծխում են։ Քիչ է մնում խելագարվեն։

Ի՞նչ անեն, վոր յես Թիրյաք բաց թողնեմ իրենց կարիքի չափ... Ընծաներ, հյուրասիրություններ, սիրալիրություններ և այլն...

Աչքդ բարին տեսնի…

Ապա թող փորձեն իմ ուզածի պես չանել, իսկույն մի տուգանք… մաքսանենգության համար։

Չէ, սրանց հետ բանը հեշտ է, սրանց հոգին իմ ձեռքին է, իսկ չծխողների բանը հեշտ է ու հեշտ։ Ապա թող համարձակվեն ելլի իմ ուզածի պես չանեն, անմիջապես բղավում եմ։

— Ե՛յ, զինվոր, կամ էլ, պահակ։

Ջանին կքաշեմ տասը-քսան բաժին Թիրյաք ու կասեմ—«փողը հանիր»։ «Հիմա տուր, մենք հետո կտեսնենք»։

Եթե մի վորևէ տուժող վիզը տակ չտա, ճարպիկ գտնվի և գնա Թեհրան գանգատվելու, այնտեղ էլ, դես-դեն ընկնելուց և ահագին ծախս անելուց հետո անգամ ապացուցի իր անմեղությունը և հաստատի իմ կամայականությունը, յես դարձյալ վախ չեմ կրի։ Շատ-շատ նրան մի թուղթ կտան, վորի մեջ գրված կլինի—«Բախտիար, այս մարդուն մի՛ նեղի, մի՛ անհանգստացնի, նա Թիրյաք ծխող չի»։ Իսկ այդպիսի թուղթն ինձ համար գրոշի արժեք չունի, քանի վոր յես լիակատար իրավունք ունեմ վոչ վոքի չվստահել առանց խուզարկության։ Ես կարող եմ այդ գանգատվողին է՛լ ավելի չարչարել իմ խուզարկություններով։ Ամեն որ յես կարող եմ նրա տունը տակն ու վրա անել, մինչև վոր ամբողջ նահանգում նրան խայտառակ չանեմ։ Վերջն ինքը պիտի հնազանդի ինձ։ Դեռ ուրախ կլինի, վոր բերանս քաղցրացնի և բանը հաշտությամբ վերջանա, թե չէ ինձ հետ գործ ունենալը հանաք բան չէ։

Պահեստապետ կամ կշռար լինելն էլ վատ չէ։

Ահա թե վո՛րտեղ կարող եմ գրպաններս լցնել։ Այնպես կգողանամ թե՛ իմ և թե՛ դատարանի նախագահի համար, վոր բոլորն էլ իմ մասին խոսեն։ Այդ էլ հե՛նց հարկավոր է։ Վորքան շատ գողանամ և վորքան շատ խոսեն իմ մասին, այնքան ինձ համար ավելի լավ։ Պատիվ ու հարգանք շատ կունենամ, պաշտոնիս մեջ ավելի կբարձրանամ։ Իսկ յերբ բոլորովին սարսափեն իմ կողոպուտներից, էլ ուրիշ միջոց չի մնա նրանց անել այդ բանի դեմ, բացի կաշառք բերելուց։ Կբերեն հա կբերեն կաշառքը։ Դու միայն վերցրու—փողով, մթերքով, ինչով ուզես։—«Վերցրե՛ք, պարոն պահեստապետ,—կասեն նրանք,—միայն թե

մեզ խղճացեք։ Տուն-տեղդ կլցնեն, կճոխացնեն, կզարդարեն, կշինեն անտակ ծով, իսկ դու մեջը լվլվա...

Պետական ծառայության մեջ լինելն ել առհասարակ լավ ե։ Վորքան շատ գողանաս, այնքան շատ կբերեն տունդ։ Պատասխանատվություն ել չկա։

Որինակ վերցնենք հենց քաղաքապետությունը։ Չե՞ վոր նրանից վոչ մի ոգուտ չկա բացի կեղտից ու խավարից։ Բայց տես թե ինչպես են ոգտվում մարդիկ այդ կեղտից ու խավարից։ Մի խեղճ քուրդ իր եշով քաղաք ե գալիս՝ կալվածատերը նրան ուղարկել ե կոռ, իսկույն նրանից ուղեկալի մոտ տուրք կվերցնեն քաղաքապետության ոգտին, ժողովրդական լուսավորության ոգտին, բացի դրանից, կառնեն ուղեկալի տուրք, և հանկարծ կտեսնես, վոր խեղճի վերարկուն ել ծախվեց։

Այդ դեռ քաղաքապետությունն ե, իսկ յեթե յես կշռար կամ Թիրյաքի պահեստապետ լինեմ, այդ արդեն քաղաքապետություն չի լինի, այլ շատ ավելի մեծ բան։

Չե, այդ բանն ավելի հարմար կլինի...

Բայց այդ ծրագրից ել անհրաժեշտ ե հրաժարվել։

Ի՞նչ իմ բանն ե այդ պաշտոնը։ Այնտեղ հարկավոր են «ճշտորեն կատարող ազնիվ մարդիկ», իսկ յերբ խորն ես թափանցում բանի եյության մեջ, վոր «ճշտորեն կատարելը» առանձնահատուկ նշանակություն ունի, և դա նշանակում ե «պլոկիր գյուղացուն», իսկ «ազնվություն» նշանակում ե «ինքդ կեր, աշխատավորից ել տուր»։ Այնուհետև, պաշտոնի բարձրացումը և լավ ցուցակ ծառայությանը տրվում ե լավ կողոպտողին, մարդ իրոք սարսափում ե։

Վո՛չ, այստեղ հարկավոր ե, վոր մարդ զազրելի արարքների վարպետ լինի, վորին յես ընդունակ չեմ անշուշտ։ Կմտնեմ այդ պաշտոնի մեջ, բայց շուտով կհեռացվեմ պաշտոնից, տունս ել դատարկ կմնա։

Մեկ ել մտածում եյի—ընդունվել խճուղիների վարչության մեջ։ Մտածում եյի նույնիսկ հանձնարարական նամակ տանել վորևե խմբագրության կողմից։ Լավ ծառայություն ե։ Փող սարքիր քեզ համար առանց հոգսի ու չարչարանքի։ Շատերն են դրանով ապրում։

Այստեղ մի ուրիշ միտք առաջացավ իմ մեջ։

— «Բայց մի՞թե ամեն մեկին այդպիսի պաշտոն տրվում է։ Այդպիսի պաշտոնը թանգ արժե։

Թերթի խմբագրության մի վորևե գրչակի նամակին բանի տեղ դնող էլ չկա։ Պարլամենտի պատգամավորի խնդրանքին էլ նշանակություն տվող չկա։

Ուրեմն ինչի՞ յեմ պետք յես, յես՝ վոր վոչինչ չունեմ բացի մի հատ լեզվից։

Վերջիվերջո, այսքան խորհրդածություններից հետո հասկացա, վոր պետական ծառայությունը ինձ պես քրդի բանը չէ։ Յես սկսեցի մտածել այլ բաների մասին, այսինքն այնպիսի բաների, վորոնք ինձանից «նախնական» ծախսեր չեն պահանջի։

Յես վորոշեցի յեզս ծախել և նրա փողով առնել մեծ, սպիտակ չալմա, կանաչ կաբա, սպիտակ գոտի, լայն անդրավարտիկ, վրայի աբա։

Հետո մորուք թողնեմ ու դառնամ գյուղական ախունդ։ Ի՞նչ կա վոր, մի բան վոր յես գրագետ եմ, կդառնամ հոգևոր հովիվ և արդար դատավոր, ինչպես շատերը, վորոնց յես ճանաչում եմ, և վորոնք իրենց հագուստի շնորհիվ կամ ժառանգական իրավունքով այդ կոչումն ունեն և օգտվում են կյանքի բարիքներից ու բավականություններից։

Բայց հետո յես գլխի ընկա, վոր այս գործում էլ պիտանի չեմ լինի։ Յես չգիտեյի արաբական այն բառերն ու վոճերը, վորոնք գործ են ածվում այդ մարդկանց կողմից, յերբ հարկավոր է լինում ցույց տալ իրենց կրթվածությունը։

Բացի դրանից, իմ քրդական բարբառն էլ կարող եր ինձ մատնել։ Հանկարծ պատահեցի մի հաստավիզ «սրբի», նրանք շատ նախանձոտ մարդիկ են, ինձ փչասելու համար, դիտմամբ մի քանի արաբերեն բառեր կասեն, իսկ յես տարակուսած պիտի նայեմ նրա յերեսին։ Հենց դրա համար՝ ինձ կդատեն և կարող են կարգալույծ էլ անել։

Ձե՛, այդ «պատվավոր» կոչումից էլ ձեռք քաշեցի։

Յես կարող եյի լինել նաև դերվիշ։

Ինչու չփորձեմ, հը՞։ Մի տեղից «խերխի» կճարեմ, կամ մի մաշված, գզգզված վերարկու, մի հատ էլ փողահարելու յեղջյուր, կացինն էլ կառնեմ ուսիս, ի հարկե, այդ բոլորը հանուն Ալիի, այսինքն—անփող, անփարաչ ուղղակի ձրիապես։ Ահա և

բոլոր սարքավորումը դերվիշ դառնալու համար։ Ու այդ սարքավորումով կերթամ թափառելու գյուղե-գյուղ, ճանապարհների վրա և քաղաքների փողոցներն ու հրապարակները։ Այնտեղ վոչինչ հարկավոր չէ բացի անամոթությունից և աներեսությունից։ Ման արի և վոռնա անընդհատ՝ ինչպես ասեղ կուլ տըված շուն։ Ու կվոռնամ այնքան, մինչև վոր կհավաքեմ անչափ փող և ուտելիք, վորքան հարկավոր է ագահությունս հագեցնելու համար։

Հետո կհանգստանամ։ Դրամագլուխ էլ հարկավոր չէ դրա համար։ Հենց առաջին անգամ հավաքած փողն արդեն զուտ վաստակ է, յեկամուտ է։

Բայց յերբ յես հիշեցի այն բոլոր իսկական դերվիշներին, վորոնք յերգեր են յերգում, պատմություններ են անում, հեքիաթներ են պատմում, մարդու ապագան են գուշակում, հիշեցի «մյուրիդներին», իրենց «փիրերին» և «մուրշիդներին», մտածեցի, վոր հանկարծ կընկնեմ նրանց ճանկը, ուստի այդ միտքն է թողի։

Յես ինքս ինձ ասացի․

— «Վո՛չ, ավելի լավ է, կերթամ Քիրմանշահ վարպետ Ալու մոտ սովորելու։ Մի տարվա մեջ յես լավ շինարար վարպետ կըդառնամ, կլինեմ ազնիվ բանվոր և որական տասնհինգ ղռանից վոչ պակաս փող կաշխատեմ։

Բայց այստեղ էլ յես հիշեցի պարոն ճարտարապետներին վորոնց մոտ բոլոր բանվորները համարվում են մշտական պարտապաններ, այնպես վոր նրանցից վոչ վոք վորևէ այլ տեղ վարձվել չի կարող, յեթե նրան աշխատանքի դնողը ճարտարապետը չէ։ Հիշեցի նաև այն, վոր իմ աշխատավարձի կեսը պիտի տամ ճարտարապետին, այլապես կմնամ բոլորովին անգործ։

— «Ո՛հ, վերջապես,— բացականչեցի յես,— կերթամ մաքսատուն և բեռնակիր կդառնամ։ Ավելի լավ և ավելի հարմար գործ, մանավանդ վոր մեր քրդերն են մեծ մասամբ վարձվում այնտեղ բեռնակրություն անելու։

Այսպես թե այնպես—գոնե որական մի քանի ղռան կաշխատեմ ընտանիքիս կերակրելու համար։

Բայց այստեղ էլ ձրիակերներ կային։ Որինակ բեռնակիրների պետը, բեռնակիրների ավագը, վորոնք մաքսատանը խոր

արմատներ են գցել, տուրքի ու տալիքի տակ ճնշում են մյուս խեղճ ու կրակ բեռնակիրներին։ Ուրեմն յես մաքսատանը ծառայությունները պիտի կրեմ, իսկ ազատվողները պիտի ուրիշները լինեն։

Այդ էլ չեղավ։

Ապա էլ ինչ։ Յես հո չեմ կարող արջ ման ածել, քաղաքների մեյդանում կոխ պրծնել, խեղկատակություններ անել։

Վերջապես վորոշեցի լեղս ծախել և առևտուր անել։ Առնել-ծախել թաշկինակներ, գուլպաներ և ամեն տեսակ արտասահմանյան մանրուքներ, վորոնցով լիքն են լինում իրանական շուկաները։

Այստեղ էլ յես մտքով այնքան փող աշխատեցի, վորքան պետական ծառայության մեջ։

— Ի՞նչ է վոր... լինել խնայող, մի քիչ էլ ճարպիկ առևտուր անել, կարճ ժամանակում կարելի յե մեծ փող դիզել։ Հարկավոր է վարկ ձեռք բերել, այնուհետև հեշտ է։ Յեվ հանկարծ, յես դառնամ «Մելիք-Եդ-Թուջարների» պես հաստափոր, հարուստ վաճառական — մահուդավաճառ, մետաքսավաճառ և այլն։

Փող ու վարկ լինի, մի հողամաս կառնեմ, մեկ էլ տեսար, փողը տոկոսով եմ տալիս, գրավներ եմ վերցնում, փող եմ տալիս, հողեր եմ գրավ վերցում, վերջն էլ այդ հողերն ու դանազան գրավներն անցնում են իմ ձեռքը։ Այդ բոլորի հետ միասին նորանոր ապրանքներ եմ ներմուծում արտասահմանից։ Փողս օրավուր ավելանում է, փողի ավելանալով էլ շատանում ու ընդարձակվում են կալվածներս։

Վոչ մի կառավարություն ինձ չի կարող ստիպել, վոր յես մի կոպեկ անգամ յերկաթուղու շինարարության կամ գործարանի կառուցման համար փող դնեմ։ Իսկ յեթե յես հաջողություն էլ չունենամ, և յեկամուտս ու ծախսս իրար չծածկեն, այսինքն — ծախսս ավելի շատ լինի քան յեկամուտս, ֆնաս չունի, վարկ հո ունեմ, սրանից-նրանից վարկով փող կվերցնեմ, մի պատկառելի գումար կդրատեմ և մի օր էլ բեստ կնստեմ վորևե ուլեմի մոտ և թուղթ կառնեմ նրանից, թե «այստեղ վաճառականը համաձայն օրենքի սնանկ է համարվում»։

Թող մեկը փորձի՝ վորևե խոսք ասել։

Վոչ մի դատարան չի համարձակվի իմ դեմ վորևե վճիռ

արձակել։ Ամենաբարձր և պատվավոր ուլեմները իմ պաշտպանները կլինեն։

Այսքան տարվեցի մտքերով և շատ հեռուն գնացի։ Բայց իրոք ինչ է հարկավոր ինձ։

Վերջ ի վերջո, ցերազում եմ ունենալ մի խղճուկ խանութ յերկու արշին յերկարությամբ։

Ինձ այդքանը բավական է, միայն թե գյուղից փախչեմ, գնամ քաղաք, վերջապես ազատվեմ ամառվա տապից, գյուղի խրճիթից, վորը նման է գազանի վորջի կամ վայրի անապատի... Շուտ, շուտ, վորքան կարելի յե շուտ...

Գյուղացիներին ինձ մոտ կանչեցի։

Ցես շտապում եյի։

Ծախծխեցի այն բոլորը, ինչ վոր հավաքել եյի, ինչի համար այնքան դես ու դեն եյի ընկել, տանջվել ու չարչարվել։

Իսկ ի՞նչ պիտի անեյի ցանքերս։ Ցանքերս էլ ծախեցի կանաչ-կանաչ։ Շատ շուտով առնողներ գտնվեցին, վորովհետև եժան գին եյի նշանակել, հենց եժան էլ ծախեցի։

Ուզեցի հերկերս էլ ծախել, բայց քեթխուդան միջամտեց և չթողեց։—«Դա կալվածատիրական է, վոչ վոք էլ չի առնի»,— ասաց նա։— Ցեթե մեկն ու մեկն էլ առնի, միևնույն է, կալվածատերը յետ կգրավի։

Այդ մտքից յետ կանգնեցի։

Իրեղեններս եժան-եժան ծախեցի։ Ծախեցի արտս, ցաքանս, բոլոր յերկրագործական գործիքներս, բահերս և այն բոլորն, ինչ վոր տանը կար և ինչ վոր չեր կարելի հետներս տանել։

Վերջապես ամեն ինչ կատարյալ եր։

Հրաժեշտ տվինք գյուղացիներին։ Վերջին անգամ նայեցինք մեր լքված տանը, դուրս յեկանք գյուղից և կնոջս ու զոքանչիս հետ սկսեցինք ճանապարհով քայլել։

Այսպես վերջացավ իմ գյուղական կյանքի շրջանը։ Այդ կյանքի մասին յես վոտանավոր գրեցի և թող արարիչն ինքը ներողամիտ լինի դեպի ինձ.

Մենք աշխատանքի մարդիկ ենք, գյուղացի ռանչպար,
Արևակեզ գյուղացիներ վողջ Իրանի.
Մենք գիշեր ու ցերեկ գրաստի պես աշխատանքի
Ծանր բեռն ենք կրում նույն Իրանի յերկրում,
Մեծ տանջանքն ու չարչարանքն է վիճակված մեզ,
Մեր չարչարանքով ստեղծած արդյունքը գողերի բաժին է
դառնում։

Ջրի կուժն ուսներիս, մանգաղը բզկտված ձեռներիս։
Վոտներս փշահար, արյունոտ ու վիրավոր։
Չոր հացի մի կտոր Թևներիս տակ, միշտ աշխատանքի մեջ,

Աշխատանքի արցունքով ու միշտ արյուն-քրտինք,
Մեր մահիճը միշտ Թաց գետին է յեղել,
Մեր տունը նեղվածք, գերեզմանի պես ճնշող։
Միշտ ճնշել է ինձ այն միտքը, Թե ինչ է լինելու կինս ու յերեխաս,
Ամաչել եմ ցնցոտիներից, ամաչել եմ մարդկանց հայացքից։
Մենք ենք կերակրել հողն ու յերկնքի տակ ապրողներին,
Բայց մենք միշտ քաղցած ենք յեղել. միշտ էլ առանց հաց։
Վողջ ապարանքներն ու պալատները և փարԹամուԹյունը վողջ՝
Ապրում են միասին միայն մեր համառ աշխատանքով։
Շահն իր զորքով և վողջ փառքն Իրանի
Պարլամենտն ու կաբինետները և վողջ փայլը Թեհրանի,
Իսկ այդ փայլի ու փառքի հանդեպ մենք չունենք տուն ու տեղ

Սասանի հողի ժառանգների յերկրում։
Ամբողջ կյանքը, վողջ հարստուԹյունը,
Վողջ արդարուԹյունը բղխում է մեզնից—
Յեվ դատ ու դատաստան, և՛ Շահի հրաման,
Որենք, իրավահավասարուԹյուն իբր վողջ յերկրի համար,
Սակայն այդ բոլորից զրկվածը միայն մենք ենք։
Մեր արյունոտ արտի վրա մեր Թափած աշխատանքից
Ծնվում են կարծես հրեշներ ու չար դևեր[1]),
Մեր կյանքը նման է անդուռ բանտի,

---

[1]) Դև—(արաբերեն—ջին) պարսիկ ժողովրդի նախապաշարումների համաձայն գոյուԹյուն ունեն իբր Թե չար կամ բարի եակներ, սատանաների նման՝ վորոնք կարող են վնասել մարդկանց, կամ ընդհակառակը, ոգնել և ոժանդակել։

Մեր աշխարհը՝ մութ անտառի, լիքն են վորտեղ
Գիշատիչ գազաններ, վորի խորքերում դեգերում ենք
Դարերով, բայց զրկված ենք որենքից
Ու մարդկային իրավունքից։

Այդպես մերկ ու բոկոտն, գիշեր ու ցերեկ
Մեր աշխատող մեջքը կքում ենք հնազանդ,
Յեվ չենք կարծում, վոր դրանից էլ փրկություն չկա,
Վոր մեր աշխատանքը ձրիակերի բաժինն է միայն։

Գիշեր ու ցերեկ մենք բահով ու արորով աշխատում ենք,
Վոր նրանով քեֆ անեն մինիստրն ու պատգամավորը։
Բայց ով էլ Թալանի, մեջլիսն է մեղավոր,
Բանի վոր, ասված է, վորտեղ վատ է հովիվը,

Այնտեղ հոտը կորած է,
Այնտեղ գայլն անպատիժ խժռում ու լափում է,
Վորտեղ ապիկար Թագավորն է,
Ժողովուրդը ճնշված է ու վոտնատակ։

Իսկ մեր ղեկավարներն ու կառավարողնե՞րը,
Մեր պաշտպաններն ու պահապաննե՞րը․․
Բոլորն էլ գայլ են կամ վագր
Իրենց զարհուրելի յերախով,—

Վտանգավոր, գիշատիչ, խորամանկ, հպարտ,
Վորոնց լսողությունն անմատչելի յե
Գանգատի, բողոքի, արցունքի համար։
Անգութ ու դավաճան է հովիվը։

Լացով ու արցունքով տանում են
Ծանր բեռն իրենց աշխատանքի մարդիկ,
Գիշեր ու ցերեկ, միշտ ու հարաժամ։
Յեվ ի տրիտուր տվայտանքներիդ՝

Սպառնանք ու յերկյուղ ընտանիքիդ ու պատվիդ։
Սով․․․ և դրա հետ վհատեցուցիչ այն միտքը,
Թե— ի՞նչ պիտի ուտենք․․․
Որենքներն ու իրավունքները ծանոթ չեն նրան,

Ով հաճախ չի տեսնում ծղոտի խտիտները։
Վրիժդ լուծիր և դաժանորեն պատժիր

Իրանի աշխատավորներին ու չքավորներին
Հասցրած անսահման դժբախտությունների համար

Բոլոր տեսակի բռնավորներին,
Այն արցունքների համար,
Վորոնք թափվում են
Գիշեր ու ցերեկ,

Դու, բարու և արդարադատության աստված . . .

. . . .

. . . .

Կրակ տուր, վառիր, ավերիր ու խորտակիր
Բոլոր գիշատիչ հրեշներին, կեղծավոր առաջնորդներին...
Բայց բավական է, խելագար, ցնորամիտ Ահմեդ,
Իրանի գյուղացիներին փրկություն չկա...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գյուղացիությունը Իրանի միակ աշխատավոր դասակարգն ե· Նա յե այդ յերկրի միակ արտադրող դասակարգը։

Բայց թե վորքան մարդկանց խմբակցություններ են կերակրվում հենց այդ գյուղացիության ձեռքի աշխատանքով, իսկ իրենք վոչինչ չեն արտադրում։

Ահա այդ ձրիակերների ցանկը — ամենափոքրերից սկսած մինչև ամենամեծերը։

Ամենից առաջ — աղքատները։ Յերկրորդ՝ խեղկատակներն ու ծաղրածուները։ Յերրորդ՝ Թափառաշրջիկ ֆոկուսնիկները, արջ ու կապիկ պար ածողները։ Չորրորդ՝ դերվիշները և սրանց նըմանները։ Հինգերորդ՝ սպիտակ չալմավոր մոլլաները և սրանց սպասավորները։ Վեցերորդ՝ սեյիդները։ Յոթերորդ՝ քեթխուդաները, մոբաշիրները, կալվածատերերն ու սրանց մշտական պնակալեզ մարդիկ։ Ութերորդ՝ զինվորականները և սրանց հետ նաև պահակները։ Իններորդ՝ խանութպանները, շուկայի վաճառականները, միջնորդները և մեծագնորդ առևտրականները։ Տասներորդ՝ մսագործները, մեծածախ վաճառականները։ Տասնմեկերորդ՝ խուզարկուները, վերահսկիչները և ամեն տեսակի հարկահավաքները։ Յեվ տասներկուերորդ՝ կառավարությունն իր բազմազան հիմնարկություններով ամբողջությամբ վերցրած։

Ահա տասներկուգլխյան այն հրեշը, վորը կպել ե գյուղացիության մարմնին և ծծում ու լափում ե նրա աշխատանքի արդյունքը, նրա արյուն-քրտինքը, սակայն սրա հետ միասին

գյուղացիությունը Իրանում բնակչության ամենաիրավազուրկ տարրն է համարվում։

Ուրիշ յերկրներում այդպես չէ։ Ճիշտ է, այնտեղ էլ գյուղացիներն աղքատ են, մութ, խավար ու հետամնաց, և հաճախ չեն իմանում իրենց իրավունքները, բայց համենայն դեպս, այնտեղ գյուղացիները հովանավորվում են հավասար որենքով, վորը պաշտպանում է յուրաքանչյուրի կյանքն ու գույքն առանց խտրության։

Իրանում մեզ համար էլ որենք կա։ Բայց ի՞նչ որենք է դա։ Դա մի որենք է, վորից պիտի փախչել, մի որենք, վորի ծանրության տակ տնքում է ամբողջ յերկիրը։

Արդարադատություն կա, դատարան կա, դատարանի նախագահ կա, վորը դատում է նույն այդ որենքով։ Նախագահը ինքն էլ այն ահեղ ու ահարկու «տասներկուքի» անդամներից է. Նախագահ, վորը ստեղծված է միայն, վորպեսզի խեղճերին տանջի։ Ընկար նրա ճանկը, քեզ փրկություն չկա։

Մենք սահմանադրություն էլ ունենք։ Տասնութ տարի յե, վոր գոյություն ունի նա։ Պարլամենտ էլ ունենք, վորն արդեն հինգ նստաշրջան է ունեցել։ Սակայն այդ բոլորի հետ տակավին գոյություն չունի մի ընտրական իրավունք, վորը ժողովրդին հնարավորություն տար ընտրելու ամենալավ մարդկանց, վորոնք կարողանային վերջ տալ այդ բոլոր տանջանքներին ու տառապանքներին[1])։

Ինտրիգների ոգնությամբ, ամեն տեսակ «բլոկների» միջոցով, կալվածքներ ձեռք բերելու ճանապարհով—կալվածների հետ էլ գյուղացիներ—վորոնք ձայնի իրավունք ունեն, պատգամավոր են դառնում միևնույն մարդիկ, վորոնց ոգտին աշխատում են իրենց սեփական «ձայների գնորդները» և ամեն տեսակի ընտրական միջնորդները—միշտ և միշտ միևնույն մար-

1) Իրանական մեջլիսն ընտրվում է «ընդհանուր ձայնատվությամբ» ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկությամբ։ Չնայելով այդ բանին, մեջլիսում չկա գյուղացիական վոչ մի ներկայացուցիչ։ Բուրժուազիան էլ շատ քիչ ներկայացուցիչներ ունի։ Ճնշող մեծամասնություն են կազմում կալվածատերերը, վորոնք ընտրվում են գյուղացիության ձայներով, անշուշտ հարկադրանքի միջոցով, վորոնց ստիպում են ընտրել կամ իրենց կամ ում վոր իրենք կալվածատեր աղաները մատնացույց կանեն։

դիկ։ Դրանք մեր ժողովրդական ներկայացուցիչներն են ծնընդյան իրավունքով, և եթե այդ մարդիկ մի գեղեցիկ օր ցանկանան այնպիսի մի օրենք հրատարակել, վորով պատգամավորական կոչումը դառնա ախունդների, մինիստրների, նահանգապետների և չինովնիկների տոհմական-ժառանգական կոչում կամ սեփականություն, հավատացնում եմ ձեզ, վոր վոչ վոք չի զարմանա։

Ահա ինչ հիմքերի վրա յեն դրված ժողովրդի հույսերը։

Վոչ վոք չկա, վոր բողոքի, վոչ վոք չկա, վոր փրկի ժողովրդին այդ նզովքից։

Այդ է պատճառը, վոր Իրանի լայնածավալ յերկրում գյուղացին չունի վոչ տուն, վոչ ապրուստ, վոչ ապաստան։

Այդ է պատճառը, վոր գյուղացին իր ընտանիքի պատիվը, վոտնատակ չանելու համար ուզում է հեռանալ իր կալվածատիրոջից, ապա նա փախչում է գիշերը միայն, թագուն, վորպես գող։

Օրենքի տեսակետից այդ քայլը կամ գործողությունը կըվորակվեր «մարդկային բոլոր իրավունքների խախտում, ազգային սովորույթների խաթարում»։ Այդ է պատճառը, վոր գյուղացու վողջ կյանքն ու գույքը գտնվում է «տասներկուքի» լիակատար իշխանության ներքո, և այդ գյուղացին յերկու զար հողի սեփականության իրավունք անգամ չունի իր մեռելները թաղելու համար գերեզման փորելու։

Այդ է պատճառը, վոր յուրաքանչյուր կալվածատեր անվիճելի իրավունք է վերապահում իրեն՝ վարվելու գյուղացու հետ իր ուզածին պես։

Գյուղացիների «բարեկեցությունը» հիմնված է կալվածատերերի դրած օրենքների վրա, և ամեն մի հիմնարկության պաշտոնյա կարող է միջամտել գյուղացու գործերին, իսկ գյուղացիները չեն համարձակվի առարկել այդ բանին, այլ ընդհակառակը, այդ բռնությունը նրանք ստիպված են անվանել արդարադատություն—ուրիշ խոսքով, սևին կասեն սպիտակ։

Հեռավոր անցյալում զորավոր կառավարիչները և բռնի ուժի տերերը իրենց գյուղացիներին դարձրել են իրենց ճորտերը, իսկ վորևէ ընդդիմության կամ հակառակության դեպքում՝ նրանց կենդանի-կենդանի թաղել են հենց իրենց ապարանքների շուրջը կամ պատերի տակ։

Այժմ, «ազատության» ու «սահմանադրության» օրերին, առևտրականներից ու դրամատերերից առաջ յեկած կալվածատերերը գյուղացիների առ ու ծախ են կատարում իրենց կալվածների հետ միասին, կամ՝ ծախում են իրենց կալվածները գյուղացիների հետ՝ վորպես անասուններ՝ վորը վաշխառությամբ ձեռք բերած փողով, վո՛րը ապրանքով, վո՛րը կրկնակի տոկոսների միջոցով շահած գումարով։

Իսկ կալվածատիրոջից վիրավորված ու անա[illegible]ած գյուղացին, յեթե ուզեցել են կինը խլել ձեռքից, ցանկանում է փախչել այդ իսկ կալվածատիրոջից մի այլ տեղ ապաստան գտնելու համար, կալվածատերը գրպանից հանում է գյուղացու մատներով դրոշմած ու ստորագրած թուղթ, վոր ամենավավերականն է քան ախունդի, մոլլայի կամ մուշտայիդների կողմից վավերացրած վորևէ վկայաթուղթ, և այդ թղթի հիման վրա ապացուցում է, թե գյուղացին վո՛րքան է իրան պարտ։

Յեվ միշտ պարզվում է, վոր պարտքը տալու համար գյուղացու վողջ կարողությունն էլ բավական չէ։

Ի՞նչ պիտի անի նա։ Մեռնի՞ իր մանր-մունր յերեխաների հետ։

«Դժբախտ սնանկության» մասին օրենքը գյուղացու համար չի գրված։ Իսկ յեթե մի խեղճ գյուղացի ցանկանա օգտըվել օրենքից, Ո՞վ է նրա պաշտպանը։ Գյուղից հեռանալու դեպքում, օրինակ, Ո՞վ է այն մարդը, վոր կոգնի նրան։ Փնտրել այսպիսի մի մարդ, նշանակում է փնտրել «փիլիսոփայական քար»։ Իսկ մենակ նա ի՞նչ կարող է անել։ Ամենաարդարացի գանգատներն անգամ խեղճի բկին է մնում, էլ վո՛րտեղից նա մտածի օգտվել շարիաթի օրենքի «նրբություններից»։

Հիրավի ներկա Իրանի աշխատավորների կյանքը կարելի յե համեմատել հին Հռոմի գյուղացիների կյանքի հետ, 30-ական թվականներին Քր. առաջ Հռոմի աշխատավորների դրությունն էլ նույնն էր, բայց գոնե այնտեղ հանդես յեկավ ազատարար առաջնորդ Տիբերիոսը [1]), վորն իր ամբողջ կյանքը նը-

---

[1]) Խոսելով Տիբերիոսի մասին, հեղինակը հավանորեն ի նկատի ունի Տիբերիոս Գրակքոսին, վորի մշակած օրենքով հողերը պիտի բռնագրավվեյին կալվածատերերից ու բաժանվեյին գյուղացիներին։ Բայց այդ դեպքում պիտի տեղաշարժ անել թվականը—այսինքն 33 թվականը պիտի յետ տանել և հասցնել 130 թվականը Քր. առաջ։

վիրեց Հռոմի գյուղացիության ազատագրության գործին։

Այդ մարդու ջերմ կոչերը, յելույթները և հերոսությունը ջախջախեցին գյուղացիության ստրկական շղթաները։ Մեզ մոտ —Իրանում—չկա մեկը, վոր գոնե մի քայլ անի իր հարազատ յեղբայրների ազատության համար։ Իրանի գյուղացիները վոչ յելք ունեն, և վոչ ել կա մեկը, վորի վրա հույս դնեն։ Չկա և չի կարող լինել այդ մեկը, վորին վորպես առաջնորդ ապավինեն գյուղացիները, վորովհետև «առաջնորդ» համարվածները մտածում են միմիայն և միմիայն իրանց անձի և անձնական բարեկեցության մասին։

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսերեն հրատարակության առաջաբան . . . .
Հեղինակի առաջաբանը . . . .

Գլուխ առաջին

Քրդստանում . . . .

Գլուխ երկրորդ

Ալլահդադն իր ընտանիքով փախչում է Կոլյայի խանի կալվածքը . .

Գլուխ երրորդ

Ալլահդադի հիվանդությունը . . . .

Գլուխ չորրորդ

Քոչվորների մոտ . . . .

Գլուխ հինգերորդ

Բախտիարի ուղևորությունը Քիրմանշահ և դրա հետ պատահած արկածնե

Գլուխ վեցերորդ

Ալլահդադը ընտանիքով գնում է աշխատանքի . . . . . .

Գլուխ յոթերորդ

Ալլահդադն ու Բախտիարը ճանապարհվում են դեպի սրբատեղիները .

Գլուխ ութերորդ

Քյալբալա Ալլահդադն ու Բախտիարն իրենց հայրենիքում . . .

Գլուխ իններորդ

Սալար-Ուդ-Դովլեյի արշավանքը Թեհրանի վրա . . . . . .

Գլուխ տասներորդ

Բախտիարը գնում է աշխատանքի . . . .

Գլուխ տասնմեկերորդ

Շահզադե Մազլում Միրզայի կամ ճնշված, հալածական գահաժառանգի արկածները 187

Գլուխ տասներկուերորդ

Բախտիարը կրկին անցնում է յերկրագործական աշխատանքների . 198

Գլուխ տասներեքերորդ

Բախտիարը ծխախոտ է ցանում 212

Գլուխ տասնչորսերորդ

Բախտիարի բոլոր ծրագրերի խորտակումը և դառն մտորումները . . 221

Եզրակացություն 235

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող վ/ն	Տպված է	Պետք է լինի
15	2 վ.	արտադրություն	արդարամտություն
30	8 վ.	վերգրին	վերցրին
21	3 ն.	ու սկսեցին գլխից	ու սկսեցին
34	4 վ.	փոփոխություն	փոխառություն
69	15 ն.	սերտ էյի	սերտ էր
82	14 վ.	Այսպես	Այստեղ
89	16 ն.	ազատել	ազատ
93	4 վ.	ընկնում էյի մոտս	ընկնում էյին մոտը
97	7 ն.	կկոլչի	կկորչի
101	17 ն.	անզգուշությամբ	ազգությամբ
124	13 ն.	ընտրությանը	ընդունելությանը
134	18 ն.	ժողովրդին	գյուղացիներին
140	1 ն.	Նախագահի	Նահանգապետի (և այլ տեղեր)
147	2 ն.	բաղարձնել	բականգնել
148	19 ն.	մեր ձիավոր բարեկամ-ներից	մերձավոր բարեկամներից
149	5 վ.	Նրա ցեղբայրը	Նրա վորդին
149	6 վ.	Ցես կհայտնեմ նրան, նա ձեր խանին	Ասա նրան, վոր նա ձեր խանին
154	3 ն.	Սալար-ալդ-Դովլեյի	Սալար-եդ-Դովլեյի (և այլ տեղեր)
237	13 ն.	աշխատավորից	մեծամեծներից
237	23 վ.	թալանելու	թողնելու

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038693

Գինը 5ռ.

14

А $\frac{II}{38693}$

АХМЕД ХОДАДАДЕ

УЧАСТЬ КРЕСТЬЯНИНА

АРМГИЗ ЕРЕВАН 1936.